

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ



ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Մ.Թ.Ա. XII ԴԱՐԻ  
ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԳՆԱԺԱՄԸ ԵՎ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

---



---

1999

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

ARAM KOSSIAN

**THE XII CENTURY B.C.  
NEAR EASTERN CRISIS  
AND THE ARMENIAN HIGHLAND**

"ZANGAK-97"

---

YEREVAN - 1999

433 + 947.925 «639»

ԸՆԹԵՐՁԱՄՐԱԶ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

**Մ.Թ.Ա. XII ԴԱՐԻ  
ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐԻՉ**

A II  
825878



«ՁԱՆԳԱԿ-97»

ԵՐԵՎԱՆ - 1999

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
Գիտական խորհրդի որոշմամբ*

*This book is recommended for publication by the Scientific Council  
of the Institute of Oriental Studies, Republic of Armenia*

---

**Մեկենասությամբ  
Արմէն և Բերսաբէ Ճերեճեան Հիմնադրամի - ԱՄՆ**

**This Publication was made possible by  
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. USA**

---

ՊՏԴ 931  
ԳՄԴ 63.3 (0) 3  
Ք 845

**Քոսյան Ա. Վ.**  
Ք 845 Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճզնաժամը  
և Հայկական լեռնաշխարհը. – Եր.: «Ձանգակ-97» հրատ.,  
1999. – 264 էջ:

Ք 0503000000...99  
0003 (01) – 99

ԳՄԴ 63.3 (0) 3

ISBN 99930-2-059-1

© «Ձանգակ-97» հրատ., 1999  
© Քոսյան Ա., 1999

ԵՆԲԱԾՈՒԹՅՈՒՆ .....	8
<b>1. ՄԵՐԶԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ ԵՎ ԷԳԵՅԱՆ ԾՈԿԻ</b>	
<b>ԱՎԱԶԱՆԸ Մ.Թ.Ա. XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ</b> .....	12
<i>ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ</i> .....	12
<i>ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ</i> .....	16
<b>ԽԱԹԹԻՆ ԹՈՒԴԻՆԱԼԻՅԱՍ IV-Ի ՕՐՈՔ</b> .....	18
ԵՒԿԱՐԻՅԱՅԻ ՅԱՎԱՏԱՍԱՐՏԸ .....	19
ԹՈՒԴԱՆԱԼԻՅԱՆ ԱՐԵՎԱՌՏՔՈՒՄ .....	20
ԼՈՒԿԱ ԵՐԿՐԵՐ .....	20
ՍԻՆԱՍՏԵՂԸ ԵՎ ՎԻՆՈՒՄ .....	23
ԹՈՒԴԱՆԱԼԻՅԱՍ IV-Ի ՊԱՅՏԱՆԱԳԻՐԸ ՍԱՌԱԳԱՍՈՒՎԱՅԻ ԴԵՏ .....	28
ԹՈՒԴԱՆԱԼԻՅԱՍ IV-Ի ԱՐՇԱԿԱՆՔԸ ԱՆՍԻՄ (ԿԻՊՐՈՍ) .....	29
ԹՈՒԴԱՆԱԼԻՅԱՆ ԵՎ ԿՈՒՐՈՒՆՏԱՆ. «ՔՐՈՆՁԵ ՏԱՆՏԱԿԸ» .....	30
ԹՈՒԴԱՆԱԼԻՅԱՍ IV-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԽԱԹԹԻՈՒՄ .....	33
ԹՈՒԴԱՆԱԼԻՅԱՍ IV. ԴԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ .....	35
ԱՐՏԱԹԻ ԳՈՐԾՈՆ .....	35
ԵՐԳԹԻ ԳՈՐԾՈՆ .....	36
<b>ԽԱԹԹԻՆ ՍՈՒՊԴԻՆԼՈՒԿՈՒՄԱՍ ԱՒ-Ի ՕՐՈՔ</b> .....	36
ԹԱՐԽՈՒՆՏԱՍԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ .....	38
<b>ԱՐԵՎԱՏՅԱՆ ՓՈՐՔ ԱՍԻՄ. «ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԱՆԸ»</b> .....	43
«ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԱՆԸ» .....	44
ՏՐՈՅԱ-ՉԿԱՄԵԼԿԻ ՈՒՇԱԳՈՆԵՂԱՐՅԱՆ ՃԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	45
ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԱՆԻ ՊԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	46
ՉՈՒՆԻՐԱՅԱՆ ՏՐՈՅԱՅԻ ՏԵՂԱՆԱՅՐՈՒՄԸ .....	46
ԱՆԿԱՐԻՅԱԿԱՎԱՐԻԿԵՆՅԱՆ ԳՈՒՆԱՏԱՆ ԽՆԴԻՐԸ .....	50
ԱՆԿԱՐՅԱԿԱՆ ԽԵԹԱԿԱՆ ՍՐՔՅՈՒՆԵՐՈՒՄ .....	53
ԱՆԿԱՐԻՅԱԿԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՔ ԱՍԻՄՅՈՒՄ.	
ՊԱՏԱՄ-ԴԱՆԳԻՏԱԿԱՆ ԵՏԱԽՈՐՔ .....	59
ՎԻՆՈՒՄ-ԴԱՌՈՆ ԵՎ ՏԱՐԴՐԻՍ-ՏՐՈՅԱ ԽՆԴԻՐ .....	62
ԷԳԵՅԱՆ ԾՈՒԻ ՓԱՏԱՐԿԸ .....	63
ՏՐՈՅԱ ՎՅԻ-Ի ԱՌԵՐԱՆԸ ՍԻՎԵՏԻԼԵՐԻ ԱՆՍՏԱՆԻԿՅ ԼՈՒՆԸ .....	64
ՏՐՈՅԱ ՎՅԻ-Ի ԱՌԵՐՈՒՄԸ ՅՈՒ Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ .....	65
«ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԱՆԸ» ԵՎ ԷԹԵԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐՔԵՐԸ .....	65
<b>ՍԻՎԵՆՅԱՆ ԱՇԽԱՐԴԸ Մ.Թ.Ա. XIII ԴԱՐՈՒՄ</b> .....	67
<b>ԴԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐԴԸ Մ.Թ.Ա. XIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ</b> .....	69
ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐԵՐԸ .....	71
ԴԱՅԱՍԱՆՁՅԻ .....	71
ԴԱՐԴԱՄ .....	72
ԴԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐԴԸ ԽԵԹԱՎԱՍՈՐԵՍԱՆՅԱՆ	
ԴԱՎԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՏՈՒՄ .....	73
<b>ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	77

ԼԵՐՔԱՂԱՋԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	77
ԲԱԿՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՓՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԾ	79
<b>2. ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԳՆԱԺԱՍԸ</b>	<b>81</b>
<b>ԵԳՆԱԺԱՍԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ</b>	<b>81</b>
ԼԵՐՔԻՆ ԵԳՆԱԺԱՍ	87
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՄ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՆ	89
ԲԱԿՎԻՄԱՅՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	90
<b>ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՀԱՐԺԵՐԸ</b>	<b>92</b>
«ԾՈՎԻ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ»	93
ԲԱԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ (ԹՐԱԿԱՑԻԼԵՐ, ՓՈՅՈՒԳԱՑԻԼԵՐ)	100
ՏԵՂԱՀԱՐԺ ԺՄՍԱՆՍԸ	101
ՏԵՂԱՀԱՐԺ ՄԱՍՏԱՄԵԼԵՐԸ	102
ԴՈՐԻԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ	107
ԱՐԱՍԵԱՑԻԼԵՐԻ ՏԵՂԱՀԱՐԺԵՐԸ	109
ԱՅԼ ՏԵՂԱՀԱՐԺԵՐ	111
<b>ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ</b>	<b>112</b>
ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	112
ՏՐՈՂՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	113
ԲԱԿՎԻՄԱՅՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	116
<b>ՄԻԿԵՆՅԱՆ ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ</b>	<b>117</b>
ՄԻԿԵՆՅԱՆ ԱՇԽԱՐԴԸ Մ.Թ.Ա. XII Գ.ԵՐԿՐՈՐԳ ԿԵՍԻՆ	
ԵԳՆԱԺԱՍԻ ՍԿԻԶՐԸ	117
ՄԻԿԵՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ	120
ՄԿԱՍԱՆ ՊԱՏՏԱՈՒԹՅՈՒՆԸ	121
ՄԿԱՍԱՆ ԸՆԹԱՑՐԸ	124
ԱՄՐԱՇԽԵԼՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ ԵՎ ԲԱՆԿԱՌԱՅՐԵՐԻ	
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱԾ	125
ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	126
ՄՊԱԲԵՍԿԵՑՈՒՄ ԵՎ ԲԱԿՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՐԺԵՐ	126
ԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԽՂԱԿԵՍԱԸ	127
ՄԻԿԵՆՅԱՆ ՄՈՆԵՏԻ ԴԵՄՈՆՈՐ ՊԱՏՏԱՈՒԹՅՈՒՆԸ	129
ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	129
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	134
<b>3. ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԸՐ Մ.Թ.Ա. XII-XI ԴԱՐԵՐՈՒՄ</b>	<b>139</b>
<b>ԵՏԽԵԹԱԿԱՆ ԼՈՒՎԻԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ</b>	
<b>ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ (XII-XI ԳԳ.)</b>	<b>140</b>
ԿԱՐԳԱՍԻՄ	142
«ՄԵԾ ԱՐՔԱ» ՏԻՏՐՈՒՄԸ	144
ԿԱՐԳԱՍԻՄԸ ԳՅՈՒՄԱՅԻՆ ԱՐԿԻՄԱՐ ԴԵՔԵՄԵ	145
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՔԻ ԱՍԻԱ ԱՆԼԻԴ	146
«ՅԱՐԻՒԹԱՐԻՆՈՂԱՏԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»	149
ԱՆԼԻԴԸ XII-X ԴԱՐԵՐՈՒՄ	150
ԹԱՐԻՆՈՒՆՏԱՍՍԱՄ «ՆԱՐՏԱՊՈՒՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»	153
ՆԱՐՏԱՊՈՒՄ ԱՐԿԱՆՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	154

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐԴՆԸ Մ.Թ.Ա. XII-XI ԴԱՐԵՐՈՒՄ	155
ԷԹՆՈԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԻՇԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐԴՈՒՄ	157
ԳՐԱՌՐ ԿՐԻՏՈՐԵՐ	157
ՀԱՊԳԻՏԱԿԱՆ ԿՐԻՏՈՐԵՐ	160
ՍՈՒՇԿԵՐՈՒ ԽՆԴՐԻՈՂ	162
ՍՈՒՇԿԵՐՈՒ ԵՐԿՐՈՂ	162

#### 4. ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԳՆԱԺԱՄԸ.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՎՆԱՐԿ	168
------------------	-----

##### ԵԳՆԱԺԱՄԻ ՄԻՋՈՒԳՈՆԱԼ ՓՈՒՍԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳՈՐԾՈՆԸ	168
---------	-----

ՄԻԿԵԼՅԱՆ ԱՇԽԱՐԳ - ՓՈՔՐ ԱՄԻՍ	168
-----------------------------	-----

ՓՈՔՐ ԱՄԻՍ - ՀՅՈՒՄՈՒՍԱՅԻՆ ԲԱԼԿԱՆՆԵՐ	173
------------------------------------	-----

ՓՈՔՐ ԱՄԻՍ - ՍԻՐԻՍ	174
-------------------	-----

ՓՈՔՐ ԱՄԻՍ - ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐԳ	175
---------------------------------	-----

ԵԳՆԱԺԱՄԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻՈՂ	176
-------------------------------	-----

ՓՈՔՐ ԱՄԻՍ	176
-----------	-----

ԵՆԴՐԱՊԱՐԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	177
--------------------------------	-----

ՄՐՏԱՊԻՆ ԳՈՐԾՈՆ	179
----------------	-----

ՄԻԿԵԼՅԱՆ ԱՇԽԱՐԳ	179
-----------------	-----

ԲՆԱՇՈՒԹՅԱՆ ՀՄՐՄՈՒՆԱՐԹՅՈՒՆ	180
---------------------------	-----

ՔՐԻՍՏՈՍՅԱՆ ԱՇԽԱՐԻՑՈՒ ԱՆԿՈՒՄ	182
-----------------------------	-----

ԵԳՆԱԺԱՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	184
-----------------------	-----

ԲԱՊԱՐԱՍԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ	184
----------------------	-----

ԷԹՆՈԿԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ	185
---------------------	-----

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ	186
----------------------------	-----

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	188
-------------------	-----

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	190
--------------------	-----

SUMMARY	224
---------	-----

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	227
-------------------------------	-----

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	249
----------------------	-----

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ	251
-------------------------	-----

ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ	253
--------------	-----

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	253
-------------	-----

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ	258
--------------	-----

ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ	261
-------------	-----

ՀԱՄԱՍՅՐԵՐ ԵՎ ՀԱՊԳԻՏԱԿԱՆ ՇԵՐՏԵՐ	262
--------------------------------	-----



## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Մ.թ.ա. XIII դ. վերջերին-XII դ. ընթացքում Մերձավոր Արևելքի բոլոր երկրները և Եգեյան աշխարհը քաղաքական, տնտեսական և մշակութային խոր ճգնաժամ ապրեցին, որի հետևանքը այս ընդարձակ տարածաշրջանի պետությունների և մանր քաղաքական միավորների մի մասի անկումն էր և մյուս մասի համակողմանի վայրընթաց զարգացումը: Հինարևելյան հասարակությունները ավարտեցին իրենց զարգացման ուշքրոնզեղարյան փուլը և թևակոխեցին վաղ երկաթեդարը: Մասնագիտական գրականության մեջ այս անցումային ժամանակաշրջանը ստացել է «XII դարի ճգնաժամ» անվանումը, որը, սակայն, չի սահմանափակվում միայն XII դարով: ճգնաժամային մի շարք երևույթներ շարունակվում են դեռ երկու-երեք դար, և միայն X դարի վերջերին ավարտվում է մերձավորարևելյան աշխարհի աստիճանական վերականգնումը: Երբ վարագույրը բարձրանում է, հինարևելյան և Եգեյան հասարակությունները այլևս նախկինը չեն: Փոխվում է եթոմշակութային պատկերը, պետությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական կառուցվածքը, առաջ են գալիս զգալի թվով նոր քաղաքական միավորներ:

Ուշքրոնզեղարյան հասարակությունների առաջմ դժվար բացատրելի անկումը, շուրջ երեք դար տևած վերականգնումը և, վերջապես, այդ ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրների սակավությունը պատճառ են դարձել «Խավար դարաշրջան» տերմինի առաջ գալուն, որով բնութագրվում են, մասնավորապես, մ.թ.ա. XII-X դարերի Փոքր Ասիան<sup>1</sup> և XI-IX դարերի մայրցամաքային Չուլնաստանը<sup>2</sup>:

Որ մ.թ.ա. XII դարում իսկապես տեղի են ունեցել այդտալի հետևանքներով հղի ինչ-որ իրադարձություններ, դժվար է վիճարկել, քանի որ մ.թ.ա. XV-XIII դարերի ընթացքում գրավոր և հնագիտական աղբյուրներով վկայված քաղաքական, տնտեսական և մշակութային աննախադեպ վերելքը առաջին հայացքից անսպասելի կերպով փոխարինվում է միանգամայն նոր իրավիճակով: Նվազագույնի է հասնում ճգնաժամի ժամանակ գոյատևած պետությունների ռազմաքաղաքական ակտիվությունը (Եգիպտոս, Ստրեստան, Բաբելոն), խիստ կրճատվում է նախկինում ծաղկում ապրող աշխույժ միջազգային առևտուրը, երբեմնի բարգավաճող քաղաքային կենտրոնների մի մասը կորցնում է իր նշանակությունը և փոխարենը առաջ են գալիս ան-

համեմատ ավելի փոքր նոր կենտրոններ: Եվ, վերջապես, համայն Մերձավոր Արևելքում և Էգեյան ծովի ավազանում նկատվում է բնակչության մեծ շարժունակություն, որը որոշ տարածքներում ընդունում է աղետալի հետևանքներով լի էթնիկական տեղաշարժերի ձև («Ծովի ժողովուրդներ», հյուսիսքալկանյան ժողովուրդներ, արամեացիներ, հրեական ցեղեր, խեթալուվիացիներ, մուշկեր և այլն):

Դատելով առկա գրավոր և հնագիտական աղբյուրներից, մ.թ.ա. XII դարի ճգնաժամը ընդգրկել է նաև Գայկական լեռնաշխարհը, համեմայնդեպս, լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ Լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան շրջանները չեն խուսափել ճգնաժամային դարաշրջանի վայրիվերումներից: Ինչպես և մերձավորարևելյան մյուս երկրներում, այստեղ նույնպես նկատվում է պետական կազմավորումների անկում, նախկինում նորմալ կենսագործունեությամբ բնութագրվող բնակավայրերի ամայացումը և էթնիկական տեղաշարժերը:

Մինչև մեր դարի 80-ական թվականները XII դարի ճգնաժամը ողջ Մերձավոր Արևելքի և Էգեյոսյան ընդգրկմամբ հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել: Առկա ուսումնասիրություններում քննարկվել են այս կամ այն պետության անկման պատճառները<sup>3</sup>, էթնիկական տեղաշարժերը<sup>4</sup>, «Խավար դարաշրջանը»<sup>5</sup> և այլ խնդիրներ: Վերջին մեկ-երկու տասնամյակներում, գրավոր, հնագիտական հնակլիմայաբանական և այլ բնույթի սկզբնաղբյուրների քանակական աճը և նախկինում գերիշխող որոշ առանցքազաղապարների ու տեսակետների վերանայումը պայմանավորել են ճգնաժամի համապարփակ ուսումնասիրության անհրաժեշտությունը: Սույն խնդրին նվիրված նորագույն ուսումնասիրություններում նկատվում է մերձավորարևելյան պետությունների անկման և վայրէջքի գարգացման եղանակի ու աստիճանի վերանայման միտում: Եթե նախկինում «Խավար դարաշրջանի» պատճառները գերազանցապես տեսնում էին ավերիչ միգրացիաների մեջ, ապա այժմ վերջիններիս դերը զգալիորեն նվազեցվում է: Գնաժամը դիտվում է որպես մերձավորարևելյան հասարակությունների ներսում նախորդող դարաշրջանում հասունացող քայքայիչ երևույթների հետևանք: Խեթական պետականության անկման նախկինում «կործանում, ավերում» բնորոշումը այսօր փոխարինվել է «տրոհումով»<sup>6</sup>: Եթե մինչև վերջին ժամանակները «ծովի ժողովուրդներին» և քալկանյան ցեղերին վերագրվում էին XII դարում Փոքր Ասիայում և սիրիա-պաղեստինյան տարածաշրջանում հնագիտորեն գրանցված մեծ ավերածությունները, ապա նորագույն տվյալների լույսի ներքո վերոհիշյալ միգրացիաների ծավալման աշխարհագրական շրջանակները և հասցրած վնասները նշված շրջաններին զգալիորեն նվազեցվել են<sup>7</sup>:

Առաջարկվող ուսումնասիրությունը նվիրված է մերձավորարևելյան ճգնաժամի էթնո-քաղաքական և սոցիալ-տնտեսական ասպեկտի բացահայտմանը իր սկզբնավորման փուլից մինչև տարածաշրջանի համեմատական կայունացումը, այսինքն, մոտավորապես XIII դարի կեսերից մինչև XI-X դա-

րերի սահմանագլուխը: Աշխատությունը ընդգրկում է առկա սկզբնաղբյուրներով առավել լավ վկայված ճգնաժամային գոտիները՝ Փոքր Ասիան, Էգեյան ծովի ավազանը (մասնավորապես, մայրցամաքային Դունաստանը), սիրիա-պաղեստինյան տարածաշրջանը (Լեանտ) և Դայկական լեռնաշխարհը: Ուսումնասիրության մեջ շեշտը դրվում է հատկապես Փոքր Ասիայի և նրան անմիջականորեն հարող տարածքների վրա: Հետազոտության նման կառուցվածքը և տրամաբանական ընթացքը պայմանավորված է մերձավորարևելյան ճգնաժամի մի կարևոր բնորոշ առանձնահատկությամբ: Ճգնաժամային գոտիների մեծ մասը գտնվել է խեթական տերության տարածքում և քաղաքական ազդեցության ոլորտում, ինչպես նաև հարևան երկրների հետ ունեցած կոնտակտային շրջաններում (Պաղեստին, Վերին Եփրատի ավազան): Ասվածից անխուսափելիորեն բխում է հետևյալ ենթադրությունը, խեթական տերությունն է հանդիսացել ճգնաժամից առավել տուժած շրջանը, որի ուսումնասիրությունը կարող է զգալիորեն պարզել «XII դարի մերձավորարևելյան ճգնաժամ» կոչվող երևույթի էությունը: Ելնելով այդ համաձայնեցից, աշխատության մեջ խեթական ժամանակաշրջանի Փոքր Ասիայում ընթացած իրադարձությունները հետազոտվում են առավել հանգամանորեն: Բացի այդ, Փոքր Ասիայում և Միկենյան աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները լուսաբանող գրավոր և հնագիտական նյութերը հնարավորություն են ընձեռում մոտավոր պատկերացում կազմելու ճգնաժամի ողջ ընթացքի մասին: Փոքրասիական և միկենյան տարածաշրջաններում նկատվող ճգնաժամային երևույթների մեխանիզմի համեմատական վերլուծությունը թույլ կտա առաջարկելու դրա ուսումնասիրության աշխատանքային մոդել, որն անհրաժեշտ է ճգնաժամի և ընդհանրապես ուշրոնզեղարվադերկաթեդար անցման փուլի օբյեկտիվ գնահատման առումով:

Երկայացվող աշխատությունը ուսումնասիրության առարկա հանդիսացող խնդրի վերաբերյալ գոյություն ունեցող մասնագիտական գրականության սոսկական վերաշարադրանքը չէ: Այն հենվում է հետևյալ մոտեցման վրա: Օգտագործելով նորահայտ գրավոր, հնագիտական և այլ սկզբնաղբյուրներն ու նյութերը, մեկ անգամ ևս ի մի բերել ճգնաժամային տարածքներից յուրաքանչյուրում տեղի ունեցած իրադարձությունների հնարավորին չափ ավելի հավանական ընթացքը, վեր հանել տեղական առանձնահատկությունները, որից հետո փորձել առանձնացնել տարբեր երկրների միջև եղած նմանություններն ու տարբերությունները: Այդ ընդհանրություններն ու տարբերությունները թույլ կտան գնահատելու ճգնաժամի սկզբնավորումը, զարգացման ընթացքը, աշխարհագրական ընդգրկումն ու հետևանքները: Ուսումնասիրությունը կարող է արդյունավետ լինել միայն մինչճգնաժամ-ճգնաժամ-ետճգնաժամ հաջորդականության միասնության դեպքում: Այսինքն, իրական գնահատականը հնարավոր է միայն հետևանքների տեսանկյունից: Այս մեթոդը գլխավորապես թելադրվում է իրադարձություններին համաժամանակյա գրավոր աղբյուրների սակավությամբ, ինչպես նաև ճգնաժամի շրջանում իրենց գոյությունը դադարեցրած բնակավայրերի մեծ մասի համար անկման պատճառների անորոշությամբ:

Ուսումնասիրության մեթոդական մյուս մոտեցումը թելադրվում է ճգնաժամի աշխարհագրական լայն ընդգրկումով: Դատելով առկա նյութից, ճգնաժամը ոչ մի երկրում առանձին վերցրած չի սկսվել և ավարտվել տեղում: Բնականաբար, այն չէր կարող ամենուրեք միաժամանակ սկսվել: Ուրեմն, տարբեր էթնոքաղաքական միավորները պիտի ազդեին մեկը մյուսի վրա ճգնաժամի խորացման հարցում՝ միգրացիաների և դրանցից բխող ժողովրդագրական փոփոխությունների տեսքով (օրինակ, «ծովի ժողովուրդները» Փոքր Ասիայի, Լևանտի ու Եգիպտոսի վրա, արամեացիները՝ Գյուսիսային Աիդիայի և Միջագետքի վրա և այլն), ինչպես նաև ռազմաքաղաքական հավանարտությունների արդյունքում (օրինակ, Նեֆական տերության և Ալսիխյավա-Միկենյան աշխարհի միջև): Ներկայացվող ուսումնասիրության խնդիրներից մեկն է լինելու տարբեր տարածաշրջանների միջև եղած փոխազդեցությունների բնույթի և դրանց հետևանքների վերականգնումը:

Աշխատության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա են Գայկական լեռնաշխարհի արևմուտքում գրավոր և հնագիտական աղբյուրներով վկայված էթնոքաղաքական գործընթացները, որոնք հետազոտվում են XII դարի ճգնաժամի լայն ետնախորքի վրա:

Մինչև վերջին տարիները, XII դարից սկսած Գայկական լեռնաշխարհում հիշատակվող մուշկերը և մյուս էթնիկական խմբերը մասնագետների կողմից դիտվել են որպես դարասկզբին Գյուսիսային Բալկաններից Փոքր Ասիայով այստեղ հասած քրակա-փոյուզական (այսպես կոչված՝ նախահայեր) կամ հյուսիս-արևելյան Փոքր Ասիայից հարավ տեղաշարժված (քարք-վելական կամ արխազա-ադդյան) ցեղեր: Աշխատության համապատասխան բաժնում այս ժողովուրդների տեղաշարժերը և նրանց էթնիկական պատկանելության խնդիրը կքննարկվի Մերձավոր Արևելքում ընթացած համաժամանակյա երևույթների լույսի ներքո, որը թույլ կտա առաջադնելու միանգամայն նոր մեկնաբանություն: Գարկ է նշել, որ մուշկերի խնդիրը առայժմ վերջնական լուծման ակնկալիք չունի, քանի որ առկա սկզբնաղբյուրները թույլ են տալիս ներկայացնելու միայն այս ցեղանունով վկայված էթնիկական խմբերի աշխարհագրական ծավալման ընդհանուր պատկերը: Այդ իսկ պատճառով մուշկերին վերաբերող բաժինը ներկայացնում է լոկ այս խնդրի ուսումնասիրման հեռանկարները:

Աշխատության մեջ ուսումնասիրվող ժամանակաշրջանի իրադարձությունները արվում են ըստ մասնագիտական գրականության մեջ 1980-ական րվականներին առաջարկված և հետազոտողների մեծ մասի կողմից ընդունելություն գտած առաջավորասիական պատմության նոր «ստորին ժամանակագրության»<sup>8</sup>:

Աշխատությունը գրված է հինարևելյան գրավոր աղբյուրների (խեթական, ասորեստանյան սեպագիր, փոքրասիական հիերոգլիֆային), անտիկ հեղինակների աշխատությունների, սեպագրագիտական և հնագիտական ուսումնասիրությունների, ինչպես նաև հնակլիմայաբանական հետազոտությունների նյութերի հիման վրա:

## ՄԵՐՉԱԿՈՐ ԱՐԵՎԵԼԸ ԵՎ ԷԳԵՅԱՆ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆԸ Մ.Թ.Ա. XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ.թ.ա. XIII դարի կեսերին Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում տեղի ունեցավ մի կարևոր քաղաքական իրադարձություն, որը պատմական մեծ նշանակություն ունեցավ ողջ տարածաշրջանի հետագա շուրջ կեսդարյա զարգացման համար:

Դեռ մ.թ.ա. XIV դարի կեսերից երկու գերտերությունների՝ Խաթթիի և Եգիպտոսի միջև հաստատվել էր անկայուն հավասարակշռություն այն բանից հետո, երբ Մուպալիլուլիումաս I-ը գրավեց Միտաննիի և Յուսիսային Սիրիան վերածվեց խեթերից կախյալ Կարգամիսի թագավորության<sup>1</sup>: Մ.թ.ա. XIII դարի առաջին քառորդում խեթա-եգիպտական հակամարտությունը հասավ իր բարձրակետին ի դեմս 1274 թ. Քաղեշի ճակատամարտի, որից հետո այն սկսեց աստիճանաբար տեղի տալ և ավարտվեց 1258 թ. Խաթթուսիլիս III-ի և Ռամզես II-ի միջև կնքված խաղաղության պայմանագրով<sup>2</sup>:

Նախկին հակամակրողների մերժեցումը պայմանավորված էր առաջին հերթին այն հանգամանքով, որ երկու կողմերն էլ գիտակցում էին հետագա պայքարի անհեռանկարայնությունը: Ըստ էության, դաշնագիրը վավերացրեց Քաղեշից հետո ստեղծված իրավիճակը Սիրիայում: Չաջորդ, գրեթե նույնքան կարևոր դրդապատճառ պիտի համարել մ.թ.ա. XIV դարի վերջերին-XIII դարի առաջին կեսին Խաթթիի և Եգիպտոսի արտաքին և ներքաղաքական մի շարք բարդությունները, կապված թե նրանց անմիջական հարևանների, և թե կախյալ երկրների աճող ակտիվության հետ: Այն ժամանակ, երբ խեթերն ու Եգիպտացիք պայքարում էին համուռ սիրիական քաղաքների նկատմամբ վերահսկողության հաստատման, Միտաննիի գերիշխանությունից ազատագրված Ասորեստանը, Ախիսիյավան և արևմտափոքրասիական երկրները բացահայտորեն ձգտում էին ընդարձակել իրենց քաղաքական ազդեցության շրջանակները խեթական տերության հաշվին: Ստացվում էր այնպես, որ, հաջողության հասնելով Սիրիայում, խեթերին սպառնում էին ավելի մեծ կորուստներ Յուսիսային Միջագետքում (ասորեստանյան առաջխաղացումը դեպի կախյալ Միտաննի), Վերին Եփրատի հարավում և արևմտյան Փոքր Ասիայում: Իրադարձությունների նման ընթացքը հղի էր լուրջ հետևանքներով, հատկապես հուժքի աղբյուրների և առևտրական ուղիների առումով: Ոչ պակաս բարդ խնդիրներ կային նաև Խաթթիի ներքաղաքական կյանքում, կապված Ուրխի-Թեշուբի (Մուրսիլիս III) և Խաթթուսիլիս III-ի միջև ընթացած դինաստիական պայքարի հետ<sup>3</sup>: Չավանաբար, որպեսզի ինչ-որ կերպ ամրապնդի իր դիրքերը, Խաթթուսիլիսը զիջման գնաց վտարված Ուրխի-Թեշուբի կողմնակիցներին, Փոքր Ասիայի հարա-

վում ստեղծելով Թարխունասասայի կախյալ պետությունը՝ Ուրխ-Թեշուրի կոտսեր որդու՝ Կուրունտայի գլխավորությամբ<sup>4</sup>:

Այսպիսով, մ.թ.ա. XIII դարի կեսերին խաթթին և Եգիպտոսը ակնհայտորեն վարում էին իրերի գոյություն ունեցող վիճակը (status quo) պահպանելու քաղաքական գիծ: Տրամագծորեն հակառակ դիրքորոշում էր նկատվում Ասորեստանի և Ախիյադայի արտաքին քաղաքականության մեջ:

Մ.թ.ա. XIV դարի վերջին քառորդից ասորեստանյան պետությունը սկսում է քաղաքական վերելք ապրել: Լախլինում Միտաննիից կախյալ համեմատաբար փոքր այս պետությունը, սակայն, շնորհիվ հարմար աշխարհագրական դիրքի կարևոր առևտրական ուղիների վրա և ավանդականորեն զարգացած տնտեսության, արագ տեմպերով վերածվում էր լուրջ քաղաքական ուժի: Ասորեստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հյուսիսից արևմուտք ձգվող և խեթերի կողմից վերահսկվող «կիսալուսնի»<sup>5</sup> ճեղքումն էր, որը թույլ կտար ճանապարհ հարթել դեպի հյուսիսի մետաղների աղբյուրները և արևմուտքի առևտրական ուղիներն ու կենտրոնները: Հաջորդ խնդիրը ավանդաբար լարված փոխհարաբերություններն էին կասսիտական Բաբելոնիայի հետ: Չնայած վերջինս իրենից վաղուց արդեն լուրջ ռազմաքաղաքական ուժ չէր ներկայացնում, սակայն ի վիճակի էր որոշակիորեն կաշկանդելու Ասորեստանին երրորդ ուժի առկայության պայմաններում. խեթերը Բաբելոնիան դիտում էին որպես հակակշիռ Ասորեստանին<sup>6</sup>:

Ասորեստանի ազդեցիվ արտաքին քաղաքականությունը սկսվեց Աշշուրուբալիթ I-ի օրոք և հաջողությամբ շարունակվեց Մալմանասար I-ի (1263-1234 թթ.) և Թուկուլթի-Լինուրտա I-ի (1234-1197 թթ.) կառավարման շրջանում: Ասորեստանցից հատկապես ակտիվ էին հյուսիսում և արևմուտքում: Առաջինը Ասորեստանին գրավում էր իր բնական հարստություններով՝ պղնձահանքերով (Ժամանակակից Էրզանի-Մադեն՝ Իսուվա-Թուփում), անասուններով և ստրկական ուժով: Այստեղ Մալմանասարը նվաճեց Ուրուատրի երկրները (Վանա լճի և Եփրատի միջև՝ Հայկական Տավրոսի շրջանում), իսկ Թուկուլթի-Լինուրտան մ.թ.ա. 1234/3 թ. Եփրոսիայի ճակատամարտից հետո<sup>7</sup> կարողացավ նույնիսկ ասպատակել Եփրատի արևմտյան առափնյա շրջանները: Արդյունքում, ինչպես ենթադրվում է, խեթերի հսկողության տակից դուրս եկան ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող Ալզին և Իսուվան<sup>8</sup>:

Արևմտյան ուղղությամբ հատկապես հաջող էին Մալմանասար I-ի արշավանքները, որոնց հետևանքով խեթերը զրկվեցին կախյալ Միտաննիից, ասորեստանյան զորքը դուրս եկավ Եփրատի ափը՝ Կարգամիսի դիմաց<sup>9</sup>: Սա նշանակում էր, որ Ասորեստանը անմիջականորեն սպառնում էր խեթերի համար կենսական մեծ նշանակություն ունեցող հյուսիսսիսիական տիրույթներին: Կարծիք կա, որ հենց Միտաննիի կորուստով էր պայմանավորված խեթա-եգիպտական դաշնագրի կնքումը<sup>10</sup>: Ասորեստանի արտաքին քաղաքական հաջողությունները ամրապնդվեցին Թուկուլթի-Լինուրտա I-ի կողմից Բաբելոնի նվաճմամբ<sup>11</sup>:

Չնայած Ասորեստանի արտաքին քաղաքական հաջողություններն անցողիկ էին, և շատ չանցած Թուկուլթի-Նինուրտան զոհ գնաց պալատական հեղաշրջման և նվաճված տարածքների մի զգալի մասը դուրս եկավ Ասորեստանի վերահսկողությունից, սակայն դա արդեն վերաբերում է մերձավորարևելյան ճգնաժամի բարձրակետին: Իսկ XIII դ. Ասորեստանը հիմնական ապակայունացնող գործոնն էր Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում:

Իրավիճակը Փոքր Ասիայի արևմուտքում նույնպես ծայրաստիճան բարդ էր: Այստեղի մեծ թվով քաղաքական կազմավորումների մի մասի անջատողական քաղաքականությունը ընդդեմ Խաթթիի հաջողությամբ օգտագործվում էր Ախիյայավայի կողմից<sup>12</sup>: Վերջինս այս եղանակով փորձում էր էլ ավելի ամրապնդվել Էգեյան ծովի փոքրասիական առափնյա շրջաններում, հենվելով տեղական դաշնակիցների, առաջին հերթին իր գլխավոր հենակետ Միլլավանդայի (անտիկ շրջանի Միլեթ) վրա: Այստեղ և Լևանտում Ախիյայավային գլխավորապես հետաքրքրում էին մերձավորարևելյան առևտրական կենտրոնները և շուկաները, որոնք վերահսկվում էին Խեթական տերության, Եգիպտոսի և այս երկուսից կախյալ փոքր պետությունների կողմից (Ուգարիտ, Ամուրրու, Ալասիա-Կիպրոս և այլն): Արևելամիջերկրածովյան ավազանում XV-XIV դդ. նկատվող միկենյան խեցեղենի լայն արտահանման կտրուկ անկումը XIII դ.. կեսերին<sup>13</sup> թույլ է տալիս ենթադրելու դրան անմիջականորեն նախորդող շրջանում խեթա-ախիյայական հարաբերությունների սրում:

Ըստ խեթական աղբյուրների, հավանաբար, օգտվելով խեթական արքա Մուվատալիս II-ի զբաղվածությունից Եգիպտոսի դեմ սպասվող պատերազմի նախապատրաստություններով, Ախիյայավայի բացահայտ հովանավորությունը վայելող ոմն Պիյամարդուսը գրավեց կամ ասպատակեց նախկինում խեթերին ենթակա մի շարք երկրներ՝ Վիլուսան, Սեխան, Միրան և Լացպան<sup>14</sup>: Իրավիճակը չփոխվեց նաև Մուվատալիսի հաջորդ Ուրխի-Թեշուրի օրոք: Խեթերի իշխանության սասանմանը արևմուտքում նպաստեց Ուրխի-Թեշուրի և Խաթթուսիլիս III-ի միջև ընթացած պայքարը գահի համար, որի ընթացքում կախյալ երկրները երկփեղկվեցին երկու հակամարտ ժամբարների. օրինակ, Միրան հարեց Ուրխի-Թեշուրին, Սեխան Խաթթուսիլիսին: Պայքարում հաջողությունը ուղեկցեց Խաթթուսիլիսին, իսկ Ուրխի-Թեշուրը վտարվեց երկրից, սակայն մինչև 1258 թ. խեթա-եգիպտական դաշնագրի կնքումը, Խաթթուսիլիսն ի վիճակի չէր հաջողությամբ պայքարելու երեք ճակատներով արևմուտքում (Ախիյայավայի դաշնակիցներ), հարավարևելքում (Ասորեստան) և հարավում (Եգիպտոս): Այս ժամանակաշրջանում Խաթթուսիլիսը փորձում էր իրադրությունը շտկել ավելի շուտ դիվանագիտական, քան ռազմական ճանապարհով<sup>15</sup>: Հավանաբար, 1258 թ. հետո, այնուամենայնիվ, արևմուտքում Խաթթուսիլիսը որոշ հաջողությունների հասավ, այդ թվում՝ Սեխայում վերահաստատելով նրա օրինական արքայատոհմի իշխանությունը:

Խաթթուսիլիս III-ի կողմից իրականացվող՝ արտաքին քաղաքական

խնդիրները դիվանագիտորեն լուծելու քաղաքականությունը, այսպիսով, լիովին հաջողվեց միայն Եգիպտոսի հարցում: Դյուսիսային Միջագետքում Միտաննիի կորուստը և լարված իրավիճակը արևմուտքում կարող էին հսկայական տեղաշարժեր գրկել ոչ միայն իր մի շարք ծայրամասային շրջաններից, այլև նույնիսկ կենսականորեն կարևոր առևտրական ուղիների և հումքի աղբյուրների նկատմամբ ունեցած վերահսկողությունից: Արևմուտքում և հարավ-արևելքում ստեղծված բարդ իրավիճակի համատեքստում պիտի դիտել խաթթուսիլիս III-ի հաջորդ Թուդխալիյաս IV-ի կառավարումը:

Վերջինիս օրոք խեթերի արտաքին քաղաքականության մեջ պարզորոշ նկատվում է վճռական բեկում դեպի խնդիրների լուծման ուժային եղանակը, մի բան, որ հատուկ էր խաթթուսիլիսի նախորդներին (Մուպալիուլիումաս I, Մուրսիլիս II, Մուվատալիս II) և շարունակվեց նաև Թուդխալիյասի որդու՝ Մուպալիուլիումաս II-ի կողմից:

Թուդխալիյաս IV-ի գործունեությունը հիմնականում ուղղված էր արևմտափոքրասիական և ասորեստանյան ճակատներում նախորդ շրջանում կորցրած տարածքների վերանվաճմանը և խաթթիի հեղինակության վերականգնմանը: Այս ծրագիրը հիմնականում հաջողվեց իրագործել միայն արևմուտքում. Նիլոսիայի ճակատամարտից հետո խաթթիի քաղաքական ազդեցությունը ակնհայտորեն կրճատվեց Վերին Եփրատի ավազանում:

Այսպիսով, XIII դարի վերջին քառորդում՝ մերձավորարևելյան ճգնաժամի նախօրեին Մերձավոր Արևելքում ձևավորվեց քաղաքական նոր իրավիճակ, որը կարելի է բնութագրել հետևյալ կերպ:

Խեթական տեղաշարժի հաջողվեց լուծել իր արտաքին քաղաքական խնդիրների մեծ մասը (արևմտյան Փոքր Ասիա, Ալասիա, բացի ասորեստանյան ճակատից), պահպանել երկրի բնօրրանի տարածքային ամբողջականությունը Թարխունտասսայի դեմ ընթացած պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ: Ախիյալվան գրկվել էր իր փոքրասիական գլխավոր հենակետ Միլլավանդայից և արդեն ի վիճակի չէր լքորեն միջամտելու մերձավորարևելյան գործերին: Բացի այդ, միկենյան աշխարհի ներսում տարեց-տարի խորացող ճգնաժամը կարճ ժամանակում ավարտվեց այդ քաղաքակրթության աստիճանական անկումով: Այսպիսով, Ախիյալվան արդեն «խաղից դուրս» վիճակում էր հայտնվել: Խեթա-եգիպտական դաշնագրից հետո Եգիպտոսը գործնականում հրաժարվել էր ակտիվ արտաքին քաղաքականությունից Սիբիայում: Ռամզես II-ի հաջորդ Մերենպտահի օրոք (1213-1203 թթ.) Եգիպտոսը կրկին ակտիվացավ, փորձելով ամրապնդել իր գերիշխանությունը Պաղեստինում: Դժվար է ասել, թե ինչի հետ էր կապված Գեզերի, Աշկելոնի, Յաֆֆայի և այլ քաղաք-պետությունների վերահպատակեցումը<sup>16</sup>, սակայն այս ձեռնարկումը անմիջականորեն չէր առնչվում մերձավորարևելյան մեծ քաղաքականությանը: Դավանարար, այն պայմանավորված էր Ռամզես II-ի կառավարման վերջին տասնամյակներում Եգիպտոսի արտաքին քաղաքական ակտիվության նվազման հետևանքով պաղեստինյան քաղաքների անջատողական միտումների խորացումով, ինչպես նաև հրեական ցեղերի ու «ծովի ժողովուրդների» առաջին ալիքի դիմաց ա-



մուր պատճենը ստեղծելու նպատակով:

Ինչ վերաբերում է Ասորեստանին, ապա Թուկուլթի-Նինուրտա I-ը, Բաբելոնիան գրավելուց հետո, փաստորեն հրաժարվել էր լայն նվաճողական ծրագրերից: Նրա կառավարման վերջին տարիներն անցան տոհմային ազնվականության դեմ մղվող լարված պայքարի մթնոլորտում և ավարտվեցին արքայի սպանությամբ: Թուկուլթի-Նինուրտայից հետո Ասորեստանը մուտք գործեց շուրջ մեկդարյա արտաքին քաղաքական պասսիվության փուլ<sup>17</sup>:

Ներկա ուսումնասիրության առջև դրված խնդիրների առնչությամբ անհրաժեշտ է պարզել մի կարևոր հանգամանք: Մ.թ.ա. XII դարի ճգնաժամի խորացման գործում կարող էին արդյոք վճռական դեր խաղալ մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսի ընթացքում Մերձավոր Արևելքի խոշոր պետությունների փոխհարաբերություններում պարզորոշ գծագրվող միտումները, ինչի մասին նշվեց վերը: Այս հարցին, թվում է, կարելի է միանշանակ բացասական պատասխան տալ: Խեթա-ախիխյալյան և խեթա-ասորեստանյան տևական հավամարտությունը կարող էր միայն նպաստել Մերձավոր Արևելքում մ.թ.ա. XII դարի սկզբին ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությանը: Հակամարտության վերոհիշյալ բլոկները պիտի ցրված լինեին դեռ մ.թ.ա. XIII դարի 30-ական թվականներին, որից հետո մեծ տերությունների փոխհարաբերություններում այլևս նոր էսկալացիա վկայված չէ: Սա թույլ է տալիս ենթադրելու ճգնաժամի խորացման նաև այլ, առայժմ աղոտ պատկերացվող պատճառներ, ինչի մասին աշխատության մյուս բաժիններում:

### ***ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ***

Խեթական տերության եզրափակիչ փուլի պատմության վերաբերյալ գոյություն ունեն չորս համաժամանակյա գրավոր սկզբնաղբյուրներ՝ խեթական, ասորեստանյան, եգիպտական և ուգարիտյան: Դրանց տվյալների համադրումը վկայում է ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ խեթական արքաներ Թուղխալիյաս IV-ի և Սուպիլիուլիումաս II-ի օրոք<sup>18</sup> ծավալված արտաքին և ներքաղաքական բնույթի մեծ թվով իրադարձությունների մասին: Այս ժամանակաշրջանին նվիրված ուսումնասիրություններում նկատվում է մի միտում, այն է՝ փորձել վերոհիշյալ իրադարձություններում նկատել վերահաս աղետի կանխանշանները, որոնց խորացումը դարավերջին կամ, ավելի ճշգրիտ՝ մ.թ.ա. XII դարի սկզբներին հանգեցրեց խեթական տերության անկմանը: Որքանով է արդարացված նման մոտեցումը, և եթե այո, ապա հնարավոր է արդյոք ստույգ բնորոշել այդ կանխանշանները:

Խաթթիի պատմության՝ վերջին մի քանի տասնամյակներին վերաբերող գրավոր աղբյուրների մի զգալի մասը մեզ է հասել քերի վիճակում (տեքստերը մեծապես տուժած են), իսկ մյուս մասի մեկնաբանությունը երբեմն այլընտրական ենթադրությունների տեղիք է տալիս: Արդյունքում այս կամ այն իրադարձության բացասական ներգործությունը խեթական պետականության հետագա գոյության վրա հաճախ բացարձակեցվում է<sup>19</sup>:

A II  
85878

Քարտեզ 1. Խերական տերությունը մ.թ.ա. XIII դարում



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԼ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Խաթթիում մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին քաղաքական ճգնաժամի հասունացման հնարավոր պատճառների շարքում սովորաբար նախապատվությունը տրվում է արտաքին գործոնին: Եվ դա պատահական չէ, քանի որ այս ժամանակաշրջանում լավ վկայված են 1) Ասորեստանի առաջխաղացումը Խաթթիի հարավ-արևելյան սահմանամերձ գոտում (Թուղխալիյաս IV-ի օրոք), 2) խեթա-ախիխյայան հարաբերությունների սրումը և Փոքր Ասիայի արևմուտքում հակախեթական տրամադրությունների առկայությունը (Թուղխալիյաս IV), 3) «ծովի ժողովուրդների» շարժումները Փոքր Ասիայի հարավային առափնյա շրջաններում և խեթերին ենթակա Առանտյան ծովափում (Սուպալիլուլիումաս II): Ոչ պակաս կարևոր ներքին գործոններ են դիտվում 1) Փոքր Ասիայում վկայված տևական երաշտը (Սուպալիլուլիումաս II), 2) վերջին տարիներին ի հայտ եկած տեղեկությունները Թուղխալիյաս IV-ի օրոք Խաթթիում ընթացած քաղաքացիական պատերազմի մասին:

Վերոհիշյալ իրադարձությունները, անկասկած, անհնար է քերականահատել: Դրանք վկայում են խեթական տերությունում ստեղծված բավական բարդ իրավիճակի գոյության օգտին: Ստորև փորձենք ներկայացնել Խաթթիի պատմության եզրափակիչ փուլի հիմնական քաղաքական իրադարձությունները և գնահատել դրանց դերը խեթական պետականության անկման տեսանկյունից:

### **ԽԱԹԹԻՆ ԹՈՒԴԽԱՆԻՅԱՍ IV-Ի ՕՐՈՔ**

Թուղխալիյաս IV-ը (մոտավորապես 1240-1220 թթ.) իշխանության եկավ հոր՝ Խաթթուախիս III-ի՝ քաղաքական իրադարձություններով հարուստ, սակայն ոչ միշտ հաջողություններով ուղեկցվող կառավարման վերջին շրջանի լարված մթնոլորտում: 1258 թ. խեթա-եգիպտական պայմանագրի շնորհիվ սիրիա-պաղեստինյան շրջանում status quo-ի հաստատագրումը կայունացրել էր Խաթթիի հարավային շրջաններում տիրող իրավիճակը: Սակայն մյուս երկու ուղղություններում (հարավ-արևելք և արևմուտք) իրադրությունը մնում էր լարված, հղի հետագա բարդացման հեռանկարով: Դենց նշված ճակատներն էլ հանդիսացան Թուղխալիյասի արտաքին քաղաքական գործունեության գլխավոր ուղղությունները: Դավանաբար, հարավային Փոքր Ասիայում Թարխունաստայի թագավորության կարգավիճակի ամրապնդումը նպատակ ուներ վերացնել Խաթթիում ներքին անկայունության սպառնալիքը՝ արևմուտքում և հարավ-արևելքում տարվող քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու համար:

Թուղխալիյասի կառավարման շրջանի քաղաքական անցքերը զգալի թիվ են կազմում, սակայն դրանց ուսումնասիրությունը բարդանում է հետևյալ պատճառով: Այդ իրադարձությունների միավորումը ժամանակագրական միասնական համալիրի մեջ առայժմ անհնար է որոշ դեպքերի ճշգրիտ փազորման բացակայության պատճառով: Ստորև ներկայացնենք Թուղխալիյասի կառավարման տարիներին խեթական և օտար աղբյուրներում վկայված իրադարձությունները.

- 1) խեթա-ասորեստանյան ճակատամարտը Նիխրիայի մոտ (Յյուսիսային Միջագետք) 1234/3 թ.:
- 2) Ապստամբություն Լալանդա երկրում:
- 3) Թուղխալիյասի մեծ արշավանքը արևմտյան Փոքր Ասիա (Լուկկա երկրներ):
- 3) Թուղխալիյասի արշավանքը արևմտյան Փոքր Ասիա՝ ընդդեմ Միլլավանդայի և Վիլուսայի արքա Վալմուի վերահաստատումը իր գահին:
- 5) Թուղխալիյասի պայմանագիրը խեթերից կախյալ Ամուրրուի արքա Սաուսգամուվայի հետ:
- 6) Ալասիայի (Կիպրոս) նվաճումը խեթերի կողմից:
- 7) Զաղաքանցիական պատերազմը Խաթթիում Թուղխալիյասի և Թարխունտասայի արքա Կուրունտայի միջև:
- 8) Թարխունտարդուի ապստամբությունը Սեխայում:
- 9) Շինարարական աշխատանքներ Խաթթուսասում և Յազըլըկայայի սրբավայրում:

Վերոհիշյալ իրադարձությունների ուսումնասիրության հիման վրա<sup>20</sup> փորձենք ի մի բերել Թուղխալիյասի կառավարման ամբողջական պատկերը:

#### ՆԻՒՐԻՅԱՅԻ ՃԱԿՏԱՍՄԱՐՇ

Դեռ Սալմանասար I-ի ժամանակներում սկսված ասորեստանյան առաջխաղացումը դեպի Յյուսիսային Միջագետք, Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազանների խեթերից կախյալ շրջաններ շարունակվեց նոր քափով Թուկուլթի-Նինուրտա I-ի օրոք<sup>21</sup>: Կախյալ Միտաննիի նվաճումը Սալմանասարի կողմից վերացրեց թեկուզ խարխուլ, բայց, այնուամենայնիվ, այն արգելապատնեչը, որը Կարգամիսի օգնությամբ ինչ-որ ժամանակ զսպում էր Ասորեստանին: Հարավ-արևելյան Փոքր Ասիայի մատույցներում ուժերի հարաբերակցությունը աստիճանաբար փոխվում էր հօգուտ Ասորեստանի: Այդ էր պատճառը, որ Թուղխալիյաս IV-ը չէր կարող անտարբեր դիտորդի դերում մնալ:

Նիխրիայի մոտ<sup>22</sup> տեղի ունեցած խեթա-ասորեստանյան ճակատամարտի մասին տեղեկություններ են պահպանվել երեք տարբեր աղբյուրներում՝ 1) Թուկուլթի-Նինուրտա I-ի տարեգրություններում<sup>23</sup>, 2) Ուզարիտի արքա Ամնուրապիին ուղղված Թուկուլթի-Նինուրտայի նամակում<sup>24</sup> և 3) Իսուվայի արքային ուղղված Թուղխալիյաս IV-ի նամակում<sup>25</sup>:

Թուկուլթի-Նինուրտայի տարեգրություններից պարզորոշ երևում է, որ ասորեստանցիք այս արքայի կառավարման առաջին տարում լայնածավալ հարձակում էին սկսել դեպի հյուսիս, որի ընթացքում նրանց հաջողվել էր անցնել Եփրատը, նվաճել Վերին Տիգրիսի ավազանի երկրները (Կադմուխի, Ալզի, Խաթխի և այլն) և Եփրատի արևմտյան ափից գերեվարել 28,800

մարդ<sup>26</sup>: Չնայած այստեղ Նիխրիյայի ճակատամարտը անվանապես չի հիշվում, սակայն Թուկուլթի-Նինուրտայի տարեգրություններում խաթրիի տարածք ասորեստանյան զորքի ներխուժման մասին որևէ այլ վկայության բացակայությունը թույլ է տվել այս իրադարձությունը համադրելու վերոհիշյալ ուզարիտյան նամակում հիշատակվող Նիխրիյայի ճակատամարտի հետ<sup>27</sup>: Համոզիչ փաստարկների հիման վրա այս իրադարձության հետ է առնչվում նաև Մախկինում խեթական վերջին արքա Սուպլիլուլիումաս II-ին վերագրվող այն տեքստը, որտեղ հիշատակվում է խեթերի արշավանքը դեպի Մելիսի երկիր<sup>28</sup>: Նիխրիյայի ճակատամարտի հետ կապված անցքերը վերականգնվում են հետևյալ կերպ<sup>29</sup>:

Նպատակ ունենալով կանխել ասորեստանյան զորքի առաջխաղացումը, խեթերն իրենք են Մախաիարծակ լինում: Արշավանքը ծրագրված էր կազմակերպել կախյալ Իսուվայի հետ համատեղ: Սակայն երբ խեթական զորքը հասնում է Նիխրիյա ու բախվում ասորեստանցիների հետ, խոստմանը հավանակ, Իսուվայի արքան չի ժամանում ճակատամարտի վայր: Արդյունքում Թուկուլթի-Նինուրտան հաղթում է, որից հետո, անցնելով Եփրատը, ասպատակում է սահմանամերձ խեթական շրջանները: Թուկուլթի-Նինուրտայի տարեգրությունների հիման վրա, այս իրադարձությունը քվազվում է 1234/3 ք.<sup>30</sup>:

#### ԹՈՒՂՈՒՍԱՅԱՍԸ ԱՐԵՎՍՈՒՏՐՈՒՄ

Չնայած արևմտափոքրասիական պետությունների մեծ մասի ճշգրիտ տեղադրությունը առայժմ հնարավոր չէ որոշել, իսկ այս տարածաշրջանի վերաբերյալ խեթական տեքստերը զգալիորեն տուժած են, այնուամենայնիվ, Թուղխալիյասի օրոք այստեղ տիրող իրավիճակը ընդհանուր գծերով կարելի է վերականգնել:

Թագուհի մորը՝ Պուղուխեպային ուղղված Թուղխալիյաս IV-ի նամակում<sup>31</sup> խոսվում է Փոքր Ասիայի արևմուտքում՝ Լալանդա երկրում<sup>32</sup> բռնկված ապստամբության մասին: Հաղորդվում է նաև հարավ-կենտրոնական Փոքր Ասիայում Ստորին երկրում (Կոնյայի հարթավայր) տիրող պայթյունավտանգ իրադրության մասին: Նամակը վերաբերում է Թուղխալիյասի կառավարման սկզբին կամ նույնիսկ խաթրուսիլիս III-ի վերջին շրջանին:

Ըստ երևույթին, վերոհիշյալ իրադարձությունները խաթրուսիլիսի կառավարման վերջին տարիներին արևմտյան Փոքր Ասիայում ավանդաբար ընթացող անջատողական միտումների արտացոլումն են:

#### ԼՈՒԿԱ ԵՐԿՐԵՐ

Մինչև վերջին տարիները Արևմուտքում Թուղխալիյասի արտաքին քաղաքականությունը լուսաբանող հիմնական սկզբնաղբյուրը այսպես կոչված «Միլավատայի նամակն» էր<sup>33</sup>, որոնք լուսաբանում են այս տարածաշրջանի

երեք երկրների հետ (Միլլավանդա, Սեխա և Վիլուսա) Խաթթիի ունեցած փոխհարաբերություններին առնչվող որոշ խնդիրներ: Այժմ, շնորհիվ 1970 թ. հայտնաբերված Թուղխալիյասի հիբրոզլիֆային մեծ արծանագրություն (Yalbur), հնարավոր է դառնում զգալիորեն խորացնելու մեր գիտելիքները խեթական տերության պատմության այս ժամանակաշրջանի վերաբերյալ: Վերոհիշյալ արծանագրությունը ոչ միայն քույլ է տալիս վերականգնելու Թուղխալիյասի կառավարման մի որոշակի փուլի արտաքին քաղաքական ձեռնարկումները, այլև տրամաբանական կապ է ստեղծում նրա ավելի ուշ շրջանի զործունեության հետ:

Yalbur-ը բաղկացած է 17 քարե սալերից, որոնց սկզբնական դասավորությունը ժամանակի ընթացքում խախտվել է: Դժբախտաբար, արծանագրությունում հիշատակվող տեղանունները պահպանվել են տարբեր սալերի վրա, այդ պատճառով առայժմ դժվար է ճշգրտորեն ներկայացնել խեթական զորքի երթուղին: Այնուամենայնիվ, այդ թվով 10 տեղանունների առկայությունը արդեն իսկ արտակարգ կարևոր նշանակություն ունի Թուղխալիյաս IV-ի սույն ռազմաքաղաքական ձեռնարկման գնահատման տեսանկյունից: Ստորև ներկայացնենք արծանագրության տեքստի ամբողջական քարզմանությունը<sup>34</sup>:

### Yalbur

- 1, 1. Արևը, Մեծ արքան, [աբարնա Թուղխալիյան, Գերոսը, Մեծ արքա, Գերոս Խաթթուսիլիի որդին, Մեծ արքա, Գերոս Մուրսիլիի [թողը] [...]:
- 2, 1. [...]:
2. Ես, Արևը(?), [աբարնան, վերադարձա Խաթթուսաս,
3. և ինձ Թարխունտասը [...]:
- 3, 1. [...]:
2. Եվ երբ [ես] հաս[ա] սահմանին,
3. ... [...]:
- 4, 1a. ... Պատարա [եռանը մատուցեցի,
- b. Ես ...,
- c. Եվ ես «քարե պատվանդան»(?) ստեղծեցի:
2. Դեպի այս երկրներ Խաթթիի Մեծ արքաները, իմ հայրերն (ու) պապերը, ոչ ոք չի ընթացել,
3. սակայն Թարխունտասը, իմ Տերը, սիրում էր ինձ,
4. և այդ երկրները [...]:
- 5, 1. ....
2. (պահպանվել են միայն «լեռ» նշանակող երկու գաղափարագրեր - *U.R.*)
- 6, 1. Կուվալատարնա [երկրում] կանայք (և) երեխաները ծնկի(?) իջան [իմ առաջ?],
2. [...] եզներ, ոչխարներ մեծ քանակությամբ (ես) վերցրեցի,
3. և [...]:
- 7, 1. Եվ (ես) հաղթեցի Նիպիրա երկրին ....

- 2a. և ավերեցի այն,  
 2b. և Արևը(?) Նիսիբիա, Կուվակուվալուվանտա(?)(և) ...-sa-...  
 երկրները...
8. [...] Թարխունտասը՝ Տերս, վազում էր իմ առջևից և ... [...]
- 9, 1a. [...] Լուկկա երկրները (ես) ավերեցի,  
 1b. Վիյանավանդա երկրում (ես), Մեծ արքաս, ... արեցի,  
 2. և Լուկկա (երկրները) ...
- 10, 1. [...] քարեհաճությամբ:  
 2. Ես, հերոսս, ... \*463.\*398 VITELLUS. \*285, Մեծ արքան:  
 3. Երբ Թարխունտասը՝ Տերս, վազում էր իմ առջևից,
- 11, 1. Թարխունտասը՝ Տերս, վազում էր իմ առջևից,  
 2. Եվ ես՝ Արևս(?), նվաճեցի Ատ(ա)պա քաղաքը/երկիրը:  
 3. ...  
 4a. ...  
 4b. Այդ(?) ևս.INFRA նա/ներանք նվաճեց(ին),  
 5. ...
- 12, 1. ...  
 2. Եվ (ես) հաղթեցի Պինալի քաղաքին,  
 3. Եվ ես՝ Արևս(?), «ամուր կանգնեցի» Պինալիի առջև,  
 4. Թարխունտասը՝ Տերս, վազում էր իմ առջևից:
- 13, 1. Եվ ես՝ Արևս(?), նվաճեցի,  
 2. Եվ (ես) ավերեցի Պինալին,  
 3. Եվ (ես) գնացի Ավարոնա երկիրը,  
 4a. Եվ ինձ(?) Արևս(?) 4,100 ավանակ (այնտեղ կային),  
 4b. կամ [...]
- 14, 1. [...] ես վերցրեցի,  
 2. ես նստեցի գահին,  
 3. և (ես)՝ Մեծ արքաս, THRONUS? PES<sub>2</sub>-PES<sub>2</sub>,  
 4. (ես) գնացի դեպի Տալավա քաղաքը [...]  
 5. և ինձ Տալավա քաղաքը [...]
- 15, 1. [...] կանայք (և) երեխաները ծնկի(?) իջան [իմ առջև?],  
 2. եզներ, ոչխարներ մեծ քանակությամբ [ես վերցրեցի]:
- 16, 1a. [...] ծողը  
 1b. Թարխունտասի քարեհաճությամբ,  
 2a. ես գրավեցի բոլոր երկրները,  
 2b. ... Ուունտիյաս աստվածը [...]
- 17, 1. [...] երկիրը ես ավերեցի,  
 2. Եվ \*511-sa<sub>5</sub> երկիրը, Կուվալատարոնա երկիրը [...]

Թուդիալիյասի արձանագրությունը ակնհայտորեն նկարագրում է երկու արշավանքներ: Դրանցից առաջինի մասին (երկրորդ սալ) հնարավոր չէ որևէ եզրակացության հանգել, քանի որ պահպանվել է միայն «հաղթել» բա-

յը: Պարզ է նաև, որ այս արշավանքից հետո արքան՝ վերադարձել է հաթթու-  
 ասա, որից հետո միայն սկսել է հաջորդ արշավանքը, այս անգամ դեպի հա-  
 րավ-արևմտյան Փոքր Ասիա: Ինչ վերաբերում է այս երկրորդ արշավանքին,  
 ապա տեքստում հիշատակվող նվաճված երկրների և քաղաքների ցուցակը,  
 նույնիսկ դրանց պայմանական հաջորդականության պարագայում, թույլ է  
 տալիս պարզելու այն աշխարհագրական տարածքը, որտեղ ծավալվել են  
 արձանագրության մեջ ներկայացված իրադարձությունները:

Վերոհիշյալ տեղանուններից մեկը՝ Տալավան, լիկիական Տլոսն է  
 (սեպագիր խեթական տեքստերում՝ Դալավա), իսկ մյուս երկուսը,  
 հավանաբար, նույնպես գտնվել են հետագայի Լիկիայի տարածքում:  
 Այսպես, Ավարնան համադրվում է Լիկիայի մայրաքաղաք Քասնթոսի  
 (լիկիերեն Arḫna արամեերեն՝ ʾwrn), իսկ Պինալին՝ Լիկիայի քաղաքներից  
 Պինալիե հետ<sup>35</sup>: Այսպիսով, կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել,  
 որ Թուրխալիյասի սույն արշավանքի նպատակակետը Լիկիան է եղել,  
 խեթական աղբյուրների «Լուկկա երկրները»:

#### ՄԻԼԼԱՎԱՆԴԱ ԵՎ ՎԻԼՈՒՍԱ

«Միլավատայի նամակը» հասցեագրված է Արևմտյան Փոքր Ասիայի  
 ինչ-որ կառավարչի, որի անունը և երկիրը տեքստում չեն պահպանվել: Սա-  
 կայն տեքստում հիշատակվող Վիլուսայի արքա Վալմուի մասին եղած հատ-  
 վածի համադրումը Թուրխալիյասի մեկ այլ նամակի նմանատիպ հատվածի  
 հետ թույլ է տվել ենթադրելու, որ «Միլավատայի նամակի» հասցեատերը  
 կրել է Մասիտուխտա անունը (կարելի է ընթերցել նաև Պարխուխտա)<sup>36</sup>: Ա-  
 ռավել բարդ է հասցեատիրոջ երկրի խնդիրը (այդ մասին տես ստորև): Հաշ-  
 վի առնելով «Նամակում» հաղորդվող տեղեկությունների արտակարգ  
 կարևորությունը, ներկայացնենք դրանից մի հատված<sup>37</sup>.

«Եվ երբ նրա/դրա տերը [...] խոս[քը...] փախավ: [Եվ նրանք] իրենց հա-  
 մար նոր տեր [ստեղծեցին]: Ես չճանաչեցի [.....] չարագործին(“): Բայց փաս-  
 տաթղբերը, որ [ես/նրանք ստեղծեցի(ն)] Վալմուի համար, պահեց Կուվալա-  
 նացիտին: Այժմ իմացիր, նա դրանք բերում է իմ որդուն (հասցեատիրոջը -  
 Ա.Բ.). ուսումնասիրիր դրանք: Այժմ, որդիս, քանի որ դու պահպանում ես  
 Արևիս բարօրությունը, ես, Արևս, կվստահեմ քո բարի կամքին: Ուրեմն, որ-  
 դիս, ուղարկիր Վալմուին ինձ մոտ, և ես նրան կրկին կդնեմ Վիլուսայում որ-  
 պես արքա: Ինչպես նախկինում նա Վիլուսայի արքան էր, այժմ էլ [թող] նա  
 [լինի]: Ինչպես [նա] նախկինում մեր kulawanis հպատակն է[ր], այժմ էլ թող  
 նա kulawanis հպատակը լինի: Քանի որ մենք՝ Արևս և (դու), որդիս, մեզ հա-  
 մար սահմանեցինք Միլավատայի սահմանը, [ապա] դու [չպիտի] դրժես քո  
 [.....]: Եվ Արևս [կվստահի] քո բարի կամքին անկեղծ հավատով»:

«Նամակի» տեքստը թույլ է տալիս վերականգնելու իրադարձություննե-  
 րի հետևյալ ընթացքը:

1) Հաթթին և Մասիտուխտայի երկիրը(“) նախկինում Վիլուսայի նկատ-  
 մամբ համատեղ գերիշխանություն են ունեցել՝ համատիրապետություն:



- 2) Վիլուսայի օրինական արքան գահագրվել է: Թուղխալիյասը չի ճանաչել նոր արքային, իսկ Վիլուսայի փախստական արքա Վալմուն ապաստան է գտել Մասխուխտտայի երկրում(“):
- 3) Թուղխալիյասը շահագրգռված է եղել վերահաստատելու Վալմունին իր օրինական գահին: Այդ նպատակով նա կազմել է Վիլուսայի նախկին կարգավիճակի վերաբերյալ մի նոր փաստաթուղթ և ոմն Կուվալանացիտիին հանձնարարել է այն հասցնել Մասխուխտտային(“): Վերջինս պիտի ծանոթանար դրան և վավերացներ իր կողմից: Դրանից հետո Մասխուխտտան(“) պիտի խաթրուսաս ուղարկեր Վալմունին, որպեսզի Թուղխալիյասը ձեռնարկեր նրա՝ Վիլուսա վերադառնալու ծրագրի իրականացումը:
- 4) «Նամակի» կազմման պահից ինչ-որ ժամանակ առաջ Թուղխալիյասը և Մասխուխտտան(“) վերածնել էին Միլլավանդայի սահմանները: Դավանաբար, դա տեղի էր ունեցել դեպի Միլլավանդա ձեռնարկած հաջող արշավանքից հետո:
- 5) Թուղխալիյասը ցանկանում է, որպեսզի Մասխուխտտան(“) հավատարիմ մնա Միլլավանդայի վերածնված սահմանների վերաբերյալ գոյություն ունեցող պայմանագրին:

Որպեսզի վերոհիշյալ տեսլից բխող եզրակացությունները ինչպես հարկն է կարևորվեն և մտցվեն պատմական ենթատեքստ, անհրաժեշտ է պարզել Մասխուխտտայի(“) կառավարած քաղաքական միավորի ինքնությունը: Այս առթիվ մասնագիտական գրականության մեջ երկու այլընտրական կարծիքներ են հայտնվել: «Նամակի» առաջին ուսումնասիրողները ենթադրում էին, որ այն գրված է եղել Միլլավանդայի արքային, և դրա հայտնվելու պահին այս երկիրը նախորդող արշավանքի հետևանքով արդեն գտնվել է խեթերի վերահսկողության տակ<sup>36</sup>: Թ.Բրայսի կարծիքով, նամակի հասցեատերը դեռևս Մուվատալլիս II-ի և խաթրուսիլիս III-ի կողմից հիշատակվող՝ Միլլավանդայի կառավարիչ Ատպասի որդին է, որը գահի համար պայքարում օգտվել է խեթերի աջակցությունից<sup>37</sup>: Այնուհետև, հաշվի առնելով Վիլուսայի երկկախյալ կարգավիճակը, նա ենթադրում է, որ Միլլավանդայի քաղաքական ազդեցության ընդարձակումը այդ երկրի վրա դեռ խաթրուսիլիս III-ի օրոք Սիսիլիայվայի օժանդակությամբ արևմտյան Փոքր Ասիայում Միլլավանդայի կառավարիչ Ատպասի և նրա հոգեհայր Պիլամարադուսի հակախեթական գործողությունների արդյունքում ստեղծված իրավիճակի հետևանքն էր <sup>40</sup>: Քանի որ Վիլուսան, մինչև խեթերի կողմից Միլլավանդայի գրավումը, գտնվել է երկրորդի տիրապետության տակ, ապա Թուղխալիյասը կարող էր պահպանել status quo-ն, սակայն պայմանով, որ Միլլավանդան ճանաչեր խաթրի գերիշխանությունը:

«Նամակի» հասցեատիրոջ երկրի մյուս մեկնաբանությունը հետևյալն է. խեթերը չեն գրավել Միլլավանդան, այլ ընդամենը հասցեատիրոջ հետ միասին համատեղ հարձակում են ձեռնարկել Միլլավանդայի վրա, որի հետևանքով վերջինիս սահմանները որոշակի փոփոխությունների են կրել ենթարկ-

վել<sup>41</sup>: Ինչ վերաբերում է Մասխուխտայի(“) երկրին, ապա այն առաջարկվում է նույնացնել Սեխա գետի երկրի հետ<sup>42</sup>:

Վերոհիշյալ իրարամերձ կարծիքներում առկա են երկու հակադիր կետեր. 1) հասցեատիրոջ և նրա երկրի խնդիրը, 2) Միլլավանդան գրավելու կամ չգրավելու հարցը: Քանի որ նշված խնդիրների պարզաբանումից է կախված «Նամակի» մեկնաբանությունը, ապա ստորև փորձենք ներկայացնել որոշ նկատառումներ, որոնք թույլ կտան վեր հանելու թուղխալիյասի արևմտյան քաղաքականության շուրջը:

Իհարկե, աշխարհագրական առումով Վիլուսայի անմիջական հարևանը Սեխան էր՝ Կախկոսի հովտում, որի արքաները դեռ Մուրսիլիս II-ի ժամանակներից ավանդաբար լոյալ էին Նաթթիի հանդեպ (Մանապա-Թարխունտասը և Մաստուրիսը): Բնական կլիմեր ենթադրել, որ Վիլուսայում տեղի ունեցած հակախեթական հեղաշրջումից հետո Վալմուն կարող էր ապաստան գտնել հարևան խեթամետ Սեխայում: Սակայն երկու հանգամանք, մեր կարծիքով, վկայում են «Նամակի» հասցեատիրոջը Սեխայի արքայի հետ նույնացնելու դեմ:

Առաջին, տեքստում հիշատակվում է Թուղխալիյասի նկատմամբ հասցեատիրոջ հոր ունեցած թշնամական դիրքորոշումը<sup>43</sup>: Եթե «Նամակը» ուղղված է Սեխայի արքային, ապա առկա գրավոր աղբյուրները այս խնդրի առնչությամբ զգալի նյութ են պարունակում:

Այսպես, դեռ Մուրսիլիս II-ի ժամանակներում հիշատակվում է Սեխայի արքա Մանապա-Թարխունտասը, որի օրոք (Մուրսիլիս II - Մուլվատալլիս II - Ուրխի-Թեշուր ժամանակահատվածը) Սեխան հստակ խեթամետ դիրքորոշում է ունեցել, բացի մի անորոշ ժամանակաշրջանից, երբ Մանապա-Թարխունտասը ստիպված էր ապաստան գտնել Նաթթիում<sup>44</sup>: Նրան հաջորդել է նույնպես լոյալ Մաստուրիսը, Թուղխալիյասի հորաքրոջ անուսինը, որը հիշատակվում է «Բրոնզե տախտակում» որպես Սեխայի արքա (Թուղխալիյասի կառավարման սկիզբը)<sup>45</sup>: Թուղխալիյասի մի տեքստում<sup>46</sup> հիշատակվում է Սեխայի ապստամբ արքա Թարխունարադուի դեմ ձեռնարկված պատժիչ արշավանքը, որն ավարտվել է վերջինիս գերեվարմամբ և օրինական գահաժառանգի գահակալմամբ: Բնականաբար, Թարխունարադուի դիպվածը պիտի տեղի ունենար Թուղխալիյասի կառավարման ավելի ուշ շրջանում, քան «Բրոնզե տախտակի» ստեղծումը: Ըստ նույն տեքստի, Թարխունարադուին փոխարինել էր ոչ թե նրա որդին, այլ «Մուլվավալլիի որդին» (նոր արքայի անունը չի պահպանվել): Այստեղից պարզ է, որ «Միլվատայի նամակի» հասցեատիրոջ հայրը և Թարխունարադուն նույնական չեն<sup>47</sup>:

Երկրորդ, Մասխուխտային ուղղված Թուղխալիյասի մեկ այլ նամակում (տես վերը), վնասված ենթատեքստում, հիշատակվում է Վիլուսան, որից հետո հայտնվում է հետևյալը. «այդ տարում [ս(“)] կարգ[եցի X] արքա»: Նկատվել է, որ այստեղ խոսվում է Վալմուի դեպքի մասին<sup>48</sup>: Այնուհետև խեթական արքան դիմում է հասցեատիրոջը նախկինում տեղի ունեցած պատերազմի ընթացքում երկու կողմից գերված անձանց փոխանակման կապակ-

ցությանը: Պարզվում է, որ, ըստ պայմանավորվածության, խեթերն արդեն վերադարձրել էին իրենց կողմից Ավարնա և Պինն քաղաքներից գերվածներին և սպասում էին նման քայլի խեթական տարածք համարվող Ուտիմա և Ատրիյա քաղաքներից գերվածների հարցում<sup>49</sup>:

Եթե, այնուամենայնիվ, հնարավոր է ենթադրել, որ KBo XVIII 18-ում ակնարկվող պատերազմը նույնն է ինչ Թաթուհուհուհու ապստամբության ճնշումը, ապա բավական զարմանալի է, որ Թուդխալիյասը Սեխայի գերված արքայի հաջորդից է (ընդ որում «Մուվավալիի որդուց» հետո կառավարած) ակնկալում իր հպատակների վերադարձը: Այդ գործը հեշտությանը կարելի էր իրականացնել Թաթուհուհուհու պարտությունից անմիջապես հետո: Այնինչ այս փաստարկը շատ հարմար է Միլլավանդայի առնչությամբ: Մասխուխտտան կարող էր լինել Միլլավանդայի նախկին կառավարիչ Ատպասի որդին, որի՝ Ախխիյավայի կողմից հովանավորվող երկարատև հակա-խեթական գործունեությունը լավ վկայված է Մուվատալլիս II - Խաթթուսիլիս III ժամանակահատվածի ընթացքում<sup>50</sup>:

Հաշվի առնելով վերոհիշյալ փաստարկները, հակված ենք «Միլլավատայի նամակի» հասցեատեր համարելու Միլլավանդայի կառավարչին՝ Ատպասի որդի Մասխուխտտային<sup>51</sup>:

Այժմ փորձենք ամփոփել Թուդխալիյաս IV-ի օրոք արևմտյան Փոքր Ասիայում ստեղծված իրավիճակը և խեթերի քաղաքականությունը այստեղ:

Ելնելով «Միլլավատայի նամակի» վերոհիշյալ մեկնաբանությունից, հնարավոր ենք համարում առաջարկելու Թուդխալիյաս IV-ի օրոք արևմուտքում տիրող իրավիճակի հետևյալ գնահատականը, որը հենվում է ստորև ներկայացվող իրադարձությունների համադրումից.

- 1) Թուդխալիյասի պատերազմը Մասխուխտտայի հոր (Ատպասի<sup>52</sup>) դեմ, որն ավարտվել է վերջինիս վտարումով<sup>(\*)</sup> Միլլավանդայից:
- 2) Մասխուխտտայի գահակալումը խեթերի օգնությամբ և նրա հետ Թուդխալիյասի կնքած պայմանագիրը Միլլավանդայի սահմանների վերաբերյալ:
- 3) Վալմուի գահազրկումը և փախուստը Միլլավանդա:
- 4) Վալմուին իր գահին վերահաստատելու խեթական ծրագիրը:
- 5) Վալմուի վերահաստատումը Վիլուսայի գահին:
- 6) Ատպասի<sup>(\*)</sup> դեմ պատերազմի ընթացքում վերցված գերիների փոխանակումը:

Թուդխալիյաս IV-ի կառավարման շրջանում պարզորոշ նկատվում է զգալի առաջընթաց նրա նախորդի՝ Խաթթուսիլիս III-ի գործունեության համեմատ: Եթե Խաթթուսիլիսը փորձում էր պահպանել իր ազդեցությունը արևմուտքում՝ զուգակցելով ուժային և դիվանագիտական մեթոդները (զիջումներ անջատողական ուժերին), ապա Թուդխալիյասը ակնհայտորեն հակված էր առաջին տարբերակին: Միլլավանդայի հակախեթական վարչակարգի բռնի տապալումը, որը հետևանք էր նախորդող պատերազմին, նշանակում էր տասնամյակներ շարունակվող ապակայունացնող գործոնի վերացում, համեմայնդեպս տվյալ պահին և դեռ բավական երկար ժամանակի

ընթացքում: «Միլլավանդայի խնդրի» նման լուծումը, իր հերթին, Ախխիյավային զրկում էր Փոքր Ասիայում ունեցած գլխավոր հենակետից: Իսկ դա կարող էր նշանակել միայն խեթա-ախխիյավային հարաբերությունների վերջնական խզում<sup>52</sup>, մի բան, որ պարզորոշ արտացոլված է «Սաուսգամուվայի պայմանագրում»<sup>53</sup>:

Թուղխալիյասի կառավարման որ շրջանում կարող էին տեղի ունենալ վերոհիշյալ իրադարձությունները: Չնայած դրանց թվագրման համար հստակ ելակետեր չկան, սակայն, այնուամենայնիվ, կարելի է որոշ հեռանկարներ նշմարել:

- 1) Միլլավանդայի դեմ «Միլլավատայի նամակի» հասցեատիրոջ հոր օրոք ընթացած պատերազմի և Սեխայի արքա Թարխունարադուի դեմ պատժիչ արշավանքի միջև համաձայնական ժամանակագրական կապը: Եթե առաջին իրադարձության ընթացքում Ախխիյավայի դերը կասկածից վեր է, ապա երկրորդի առնչությամբ ուղղակի նշվում է Թախունարադուի և Ախխիյավայի արքայի միջև ինչ-որ համաձայնության առկայություն<sup>54</sup>: Եթե այդպես է, ապա հիշյալ իրադարձությունները պիտի տեղի ունենային Թուղխալիյասի կառավարման սկզբնական փուլից հետո:
- 2) Պատերազմը Միլլավանդայի դեմ և Վալմուի գահագրկումը: Դժվար է պատկերացնել խեթամետ Վալմուի կառավարումը Վիլուսայում մինչև Միլլավանդայի նվաճումը և Սեխայի անհնազանդ արքա Թարխունարադուի դեմ տարած հաղթանակը: Ուրեմն, Վալմուն կարող էր իշխանության հասնել առաջին անգամ Միլլավանդայի նվաճումից հետո, ինչ-որ ժամանակ անց՝ գահագրկվել, և միայն դրանից հետո վերադառնալ Վիլուսա:

Ասվածից կարծես հետևում է, որ նշված իրադարձությունները կարող էին տեղ գտնել առնվազն մի քանի տարվա ընթացքում: Եթե նույնիսկ ենթադրենք, որ Մաստուրիսը մահացել է կամ գահագրկվել Թուղխալիյասի և Կուրունտայի պայմանագրի կնքման տարում, ապա ամենատրամաբանական հաշվարկներով Միլլավանդայի դեմ պատերազմի սկզբից մինչև Վալմուի վերահաստատումը Վիլուսայում պիտի անցնեն առնվազն երեք-չորս տարի, եթե ոչ ավելի:

Այս առնչությամբ, թվում է, ավելորդ չի լինի նշել «Սաուսգամուվայի պայմանագրում» Ախխիյավայի անվան ջնջելու փաստը: Կարելի է միայն ենթադրել, որ խեթա-ախխիյավային հարաբերությունների խզման օգտին վկայող այս երևույթը պիտի ժամանակագրորեն շատ հեռու չլինեն Միլլավանդայի հետ կապված իրադարձություններից: Եվ քանի որ «Սաուսգամուվայի պայմանագիրը» կնքվել է Թուղխալիյասի կառավարման ուշ շրջանում՝ Նիխրիյայից հետո<sup>55</sup>, ապա Փոքր Ասիայի արևմուտքում Թուղխալիյասի գործունեությունը նույնպես ճիշտ կլինի թվագրել այդ ժամանակաշրջանով: Որպես աշխատանքային վարկած կարելի է առաջարկել Թուղխալիյասի և Կուրունտայի միջև ընթացած քաղաքացիական պատերազմից հետո ընկած ինչ-որ ժամանակահատված:

Թուղխալիյաս IV-ի պայմանագիրը կախյալ Ամուրրուի արքա Սաուսգամուվայի հետ<sup>56</sup> լավ հայտնի է մասնագետների լայն շրջանակներին: Մեր ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունի տեքստի այն հատվածը, որը վերաբերում է Խաթթիի փոխհարաբերություններին Ասորեստանի և Ախխիյավայի հետ: Ներկայացնենք մի հատված.

(4) «Եթե Եգիպտոսի արքան Արևիս բարեկամ (է), (5) քեզ էլ պիտի բարեկամ լինի, (6) Բայց եթե նա Արևիս թշնամի (է), (7) նա քո թշնամին պիտի լինի, (8) Եվ եթե Բաբելոնի արքան (9) Արևիս բարեկամ (է), քեզ էլ նա (10) բարեկամ պիտի լինի, և եթե նա Արևիս (11) թշնամի (է), քեզ էլ պիտի նա թշնամի լինի, (12) Եթե Ասորեստանի արքան Արևիս թշնամի (է), (13) քեզ էլ պիտի նա թշնամի լինի: (14) Քեզնից առևտրականը թող Ասորեստան (15) չգնա, իսկ նրանից առևտրականին (16) դու քո երկիր մի թողնի, (17) քո երկրով թող նա չանցնի: (18) Եվ եթե նա քո երկիր գա, բռնիր նրան և ուղարկիր նրան Արևիս մոտ»: Այնուհետև. (23) «Ոչ մի ախխիյավյան նավ թող չգնա նրա մոտ»:

Պայմանագրի վերոհիշյալ հատվածից պարզորոշ զգացվում է ուսումնասիրվող ժամանակաշրջանում Մերծավոր Արևելքում ստեղծված միջազգային իրավիճակը, ժամանակի առաջատար ուժերի դասավորությունը: Այստեղ առանձնանում են երկու տիպի պետություններ:

Եթե Եգիպտոսի և Բաբելոնի հետ ապագայում Ամուրրուի հարաբերությունները պիտի ընթանան ըստ դրանց հետ Խաթթիի հարաբերությունների, ապա միանգամայն այլ է իրավիճակը մյուս երկուսի հարցում: Ասորեստանը միանշանակ դիտվում է որպես թշնամական պետություն, որի հետ ճուշմակ ապագայում չի ենթադրվում հարաբերությունների նորմալացում<sup>57</sup>: Ասորեստանի հետ Ամուրրուի առևտրական հարաբերությունների վրա դրվող արգելքը, ասորեստանյան առևտրականների ձեռքակալումը և առաքումը Խաթթի ոչ այլ ինչ է, քան տնտեսական շրջափակում: Ասորեստանի նկատմամբ նման դիրքորոշումը, բնական է ենթադրել, առկա պիտի լիներ նաև Խեթական տերության ողջ տարածքում: Ուշադրության է արժանի Ախխիյավայի և Ասորեստանի միջև առևտրական հարաբերությունների առկայությունը անհարկող տեղեկությունը: Չնայած տեքստում ուղղակիորեն չի խոսվում Ախխիյավայի նկատմամբ կիրառվելիք տնտեսական շրջափակման մասին, սակայն նման տարբերակ հնարավոր է ենթադրել:

Ամփոփելով «Սաուսգամուվայի պայմանագրի» նյութը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

- 1) Պայմանագիրը կնքված է մի շրջանում, երբ Խեթա-ասորեստանյան հարաբերությունները արդեն վերջնականապես խզվել էին: Իսկ դա հնարավոր էր միայն Նիխրիյայի ճակատամարտից հետո<sup>58</sup>:
- 2) Ախխիյավայի կարգավիճակը միջազգային նորմերի տեսանկյունից արդեն նախկինը չէր: Խաթթիի արքային հավասար կարգավիճակ

ունեցող արքաների ցուցակից Ախիսիյավայի արքայի անվան ջնջելը<sup>59</sup> պիտի արտացոլեր տվյալ պահին Ախիսիյավայում տեղի ունեցած ինչ-որ իրադարձություն, որը բացասաբար էր անդրադարձել նրա միջազգային հեղինակության վրա: Դժվար է համաձայնվել այն կարծիքի հետ, թե զրիչը սխալվել է Ախիսիյավայի արքային վերոհիշյալ ցուցակ մտցնելով, այդ իսկ պատճառով հետո այն ջնջել է<sup>60</sup>: Եթե նկատի ունենանք, որ Նաթթուսիլիս III-ի տեքստում («Տավազալավասի նամակը», տես Գլուխ 1.3) խեթական արքան Ախիսիյավայի արքային դիմում է որպես «Իմ եղբայր», «Ինձ հավասար», ապա պիտի ընդունել, որ «Պայմանագրի» տեքստի կազմման նախօրեին Ախիսիյավայի արքան իրոք դիտվել է որպես վերոհիշյալ մերձավորարևելյան արքաների կարգավիճակին հավասար կարգավիճակ ունեցող կառավարիչ: Հավանաբար, «Պայմանագրից» Ախիսիյավայի արքայի անվան հանելը պիտի կապված լիներ արևմտյան Փոքր Ասիայում Թուղխալիյաս IV-ի արտաքին քաղաքականության հետ<sup>61</sup>:

#### ԹՈՒՂԽԱՎԻՅԱՍ IV-Ի ԱՐՇԱԿԱՆԵՐ ԱՆՍԻՍ (ԿԻՊՐՈՍ)

Թուղխալիյասի այս ձեռնարկման մասին մեր տեղեկությունները գալիս են նրա որդու՝ Սուպպիլուլիումաս II-ի օրոք կազմված մի տեքստից<sup>62</sup>: Ըստ Գյուտերբուկի, սա Թուղխալիյաս IV-ի արձանի վրա հիերոգլիֆային գրով փորագրված տեքստի սեպագիր վերարտադրությունն է<sup>63</sup>: Տեքստի համապատասխան մասում հայտնվում է հետևյալը.

*«[Ալասիայի արքային] իր կանանց, երեխաների [և իր .....] ես բռնեցի: Բոլոր բարիքները, [արծաթի, ոսկու և բոլոր գերեվարված մարդկանց հետ միասին ես [տեղիահանեցի և [բերեցի] Նաթթուսաս: Իսկ Ալասիա երկիրը ես [ստրկացրի] և հարկատու դարձրի: [Այ]ս հարկը ես դրեցի նրա վրա» (I 3-9):*

Դժբախտաբար, վերոհիշյալ տեղեկության հիման վրա հնարավոր չէ պարզել ոչ աննախադեպ ծովային արշավանքի ղրղապատճառները, ոչ էլ դրա մոտավոր ժամանակը: Կա, իհարկե, մի փաստարկ, որը զուցե թույլ տա Ալասիայի արշավանքը թվագրելու Թուղխալիյասի կառավարման վերջին տարիներով: Դա Սուպպիլուլիումաս II-ի հետևյալ հաղորդումն է.

*«Այս պատկերը, [իմ հայր] Թուղխալիյան չ[արեց (այն)]: Ես, Սուպպիլուլիուման, [Մեծ Արքան], Նաթթիի արքան, Թուղխալիյայի՝ Մեծ Արքայի որդին, Նաթթուսիլիի՝ Մեծ Արքայի թոռը և Մուրսիլիի՝ Մեծ Արքայի ծոռը, արեցի այն: Եվ քանի որ իմ հայրը՝ Մեծ Արքա Թուղխալիյան ճշմարիտ արքա էր, նույն կերպ ես արձանագրեցի (նրա) ճշմարիտ առնական գործերը դրա վրա» (II 4-14):*

Կարելի արդյոք ենթադրել, որ Ալասիայի արշավանքը տեղի է ունեցել Թուղխալիյասի կառավարման վերջին շրջանում, այդ իսկ պատճառով նրա տեքստերում ոչինչ չի հաղորդվում դրա մասին: Այս տարբերակը հնարավոր է, սակայն չի բացառվում, որ, ինչ-ինչ պատճառներով, Սուպպիլուլիումասը

հոր արձանի կերտման ժամանակ արձանագրեր ավելի վաղ շրջանի իրադարձությունը:

Ինչ վերաբերում է Ալասիայում տեղի ունեցած դեպքերին, ապա այս խնդրում որոշակի հեռանկարներ կարող են բացվել Ուզարիտից հայտնի մի նամակի ուսումնասիրությունից:

RS 20.238-ում<sup>64</sup> Ուզարիտի վերջին արքա Ամմուրապին Սուպլիլուլի-մաս II-ի ժամանակակիցը, Ալասիայի արքային գրած նամակում վերջինիս դիմում է «Իմ հայր» ձևով, որ ավելի քան տարօրինակ է, եթե Ալասիան դիտենք որպես Խաթթիից կախյալ նույնպիսի երկիր, ինչպիսին Ուզարիտն էր: Նման դիմելածնը հայտնի է խեթական արքաների կամ, առնվազն, խեթերի հյուսիսսիրիական տիրույթների նկատմամբ արտակարգ լիազորություններով օժտված Կարգամիսի արքայի առնչությամբ<sup>65</sup>: Թվում է, Ամմուրապիի նամակի հիման վրա հնարավոր է որոշակի պարզաբանում տալ Թուղխալի-յասի կողմից Ալասիայի նվաճման խնդրին: Գուցե հնարավոր է առաջարկել հետևյալ վարկածը:

Գրավելով կղզին և վերացնելով Ալասիայի իշխող դինաստիան, Թուղխալիյասը կարող էր այնտեղ նշանակել Խաթթուսասի արքայատոհմի ներկայացուցիչներից մեկին, նրան օժտելով արտակարգ լիազորություններով: Փաստորեն, այս ձեռնարկումը կարելի է որակել որպես կղզու բռնազավթում:

#### ԹՈՒՂԽՍԱԼԻՅԱՆ ԵՎ ԿՈՒՐՈՒՆԱՆ. «ԲՐՈՆՁԵ ՏԱԽՏԱԿԸ»

1986 թ. Բողազքոյից հայտնաբերված Թուղխալիյաս IV-ի և Թարխունտասասայի արքա Կուրունտայի միջև կնքված պայմանագրի անվանս տեքստը, գրված բրոնզե տախտակի վրա<sup>66</sup>, ինչպես նաև 1986-1987 թթ. ընթացքում Բողազքոյի այսպես կոչված «Չարավային քաղաքում» (Südburg) գտնված և Կուրունտայի անունը կրող հիերոգլիֆային կնիքի երկու դաջվածքները միանգամայն նոր լույս սփռեցին Թուղխալիյասի կառավարման ընթացքում Խաթթիում տեղի ունեցած ներքաղաքական իրադարձությունների վրա: Կուրունտայի կնիքը այսպիսի բովանդակություն ունի. «Մեծ արքա, լաբարնա Կուրունտա»<sup>67</sup>: Սա խեթական արքաների նորմալ տիտղոսաշարն է և մայրաքաղաք Խաթթուսասում նման կնիքի առկայությունը բացատրության կարիք ունի:

Ինչ էր հայտնի Թարխունտասասայի պետության մասին մինչև «Բրոնզե տախտակի» հայտնաբերումը:

Վաղուց ի վեր հայտնի էր այսպես կոչված «Ուլմի-Թեշուրի պայմանագիրը»<sup>68</sup>, կնքված խեթական արքայի<sup>69</sup> և Թարխունտասասայի արքա Ուլմի-Թեշուրի միջև: Պայմանագիրը կարգավորում էր երկու երկրների միջև հարաբերությունները, նշելով նրանց ընդհանուր սահմանները և փոխադարձ պարտավորությունները: Տեքստում հիշատակվում էր Թարխունտասասայի նախորդ արքա Կուրունտան<sup>70</sup>:

Այժմ «Բրոնզե տախտակի» նյութը հնարավորություն է ընձեռում հանգամանորեն ներկայացնելու Թարխունտասսայի խնդիրը:

Կուրունտան Մուվատալլիս II-ի կրտսեր որդին է եղել, որն իր ավագ եղբայր Ուրխի-Թեշուբի և հորեղբոր՝ Նաթթուսիլիսի միջև ընթացած գահակալական պայքարում լոյալ դիրք է բռնել վերջինիս հանդեպ: Արքա հռչակվելուց հետո Նաթթուսիլիսը իր խնամքի տակ է վերցրել Կուրունտային, որը մեծացել է արքունիքում՝ քազաժառանգ Թուղխալիյասի հետ միասին. նրանք մտերիմ ընկերներ են եղել: Հասունանալուն պես Նաթթուսիլիսը հարավային Փոքր Ասիայում, Կիլիկյան Տավրոսից հյուսիս Կուրունտայի համար ստեղծել է մի թագավորություն՝ Թարխունտասսան: 1986 թ. հայտնաբերված «Բրոնզե տախտակը» (մեկը նույն բովանդակության 7 տախտակներից) Թուղխալիյասի և Կուրունտայի միջև կնքված պայմանագիրն է:

Նաթթուսասում «Մեծ արքա» Կուրունտայի կնիքի առկայությունը մասնագետները հավելած են մեկնաբանելու որպես վերջինիս կողմից խեթական մայրաքաղաքը գրավելու վկայություն<sup>71</sup>: Թուղխալիյասի օրոք Նաթթիում ընթացած քաղաքացիական պատերազմի մասին է վկայում նաև հետևյալը:

Քաղաքի հարավային մասում, այսպես կոչված «Վերին քաղաքում», որը Թուղխալիյասի օրոք կառուցված մոտավորապես 1կմ<sup>2</sup> մակերեսով պարսպապատ տարածք է, հիմնականում զբաղեցված տաճարներով և դրանց հետ առնչվող շինություններով, համար 2-րդ և 3-րդ տաճարները ցույց են տալիս երկու հաջորդական ավերածությունների հետքեր: Դրանցից առաջինը կարող էր տեղի ունենալ Թուղխալիյասի և Կուրունտայի միջև ընթացած պատերազմի ժամանակ, իսկ երկրորդը՝ Նաթթուսասի վերջնական անկման շրջանում<sup>72</sup>:

Չնայած ստույգ հայտնի չէ Կուրունտայի ապստամբության ժամանակը, սակայն, հաշվի առնելով Նաթթուսասի ավերածությունների արագ վերականգնումը, ինչպես նաև այն, որ Թուղխալիյասին հաջողել են նրա երկու որդիները՝ Առնուվանդաս III-ը և Սուպալիլուլիումաս II-ը, ենթադրվում է, որ Թուղխալիյասին հաջողվել է վերահաստատվել խեթական գահին<sup>73</sup>: Երկու փաստարկ ևս վկայում են Կուրունտայի ապստամբության արագ ճնշման օգտին:

Առաջին, Կուրունտայի հաջորդ Ուլմի-Թեշուբի հետ Թուղխալիյասի կնքած պայմանագրի տեքստում Թարխունտասսայի արտոնությունները կրճատված են, համեմատած Թուղխալիյասի և Կուրունտայի պայմանագրի հետ<sup>74</sup>: Հավանաբար, ապստամբության ճնշումից հետո Թուղխալիյասը փորձել է բուլացնել Թարխունտասսան, որպեսզի հետագայում այն իրենից մեծ վտանգ չներկայացնի:

Երկրորդ, «Բրոնզե տախտակը» հայտնաբերվել է մի վայրում, որը դամբարան է հիշեցնում: Ենթադրվում է, որ, վտարելով Կուրունտային, Թուղխալիյասը ապաստարանագործել է Նաթթիի աստվածների վկայությամբ կնքված պայմանագիրը, թաղելով այն սրբավայրում, այսինքն, չեղյալ է հայտարարել այն<sup>75</sup>:



«Բրոնզե տախտակի» տեքստի վերջում, պայմանագրի կնքմանը վկա աստվածների ավանդական ցուցակին հաջորդում են թվով 27 բարձրաստիճան անձինք, որոնք ներկա են եղել դրա ստեղծման և հաստատման արարողությանը (IV 30-43): Այստեղ ներկայացված են ինչպես արքայատոհմի անդամները, այնպես էլ պալատական բարձր աստիճանավորները և կախյալ երկրների՝ Կարգամիսի, Սեխայի, Միրայի և Ամուրուի արքաները:

Տեքստի որոշ հատվածներ մոտավոր պատկերացում են տալիս Թուղխալիյասի կառավարման առաջին տարիներին խաթթիում տիրող իրավիճակի մասին:

Դայտնվում է, որ խաթթուսիլիսի մահից հետո տերության որոշ երկրներ (անվանապես չեն հիշվում) դուրս էին եկել խաթթի կազմից. Կուրունտան չէր խախտել իր երդումը (II 53-56): Դոչակվելով արքա, Թուղխալիյասը կազմել է այն պայմանագիրը, որով դեռ խաթթուսիլիսի կողմից Թարխունտասային տրված տարածքին նոր հողեր է ավելացրել (II 57-61): Թարխունտասան ստացել է Կարգամիսին հավասար կարգավիճակ (II 79-83): Կուրունտայի գահը, սերնդե-սերունդ, ժառանգաբար պիտի գտնվեր Սուվատալիսի տոհմի ձեռքում արական գծով ժառանգված (III 9-11):

Այժմ ամփոփենք Թուղխալիյաս IV-ի և Կուրունտայի փոխարարություններին նվիրված այս ենթաբաժինը: Մեր տրամադրության տակ եղած գրավոր և հնագիտական նյութը թույլ է տալիս հետևյալ հաջորդականությամբ ներկայացնելու այս խնդիրը:

- 1) Իշխանության անցնելուց կարճ ժամանակ անց, կարգավորելով տերության տարածքային ամբողջականությանը սպառնացող անջատողական միտումները, Թուղխալիյասը ձեռնարկում է Թարխունտասայի կարգավիճակի հաստատագրման գործը: Կարգամիսի պես, Թարխունտասան վերածվում է զգալի ինքնուրույնություն ունեցող, սակայն խաթթուսայի արքաների գերակայության տակ գտնվող մի խոշոր քաղաքական միավորի: Բնական է ենթադրել, որ, ինչպես Կարգամիսը Դյուսիսային Միրիայում, Թարխունտասան հարավային և հարավ-արևմտյան Փոքր Ասիայում պիտի որոշակի տարածաշրջանային հեզեմոնիա ձեռք բերեր խաթթիին ենթակա ավելի մանր քաղաքական միավորների նկատմամբ: Փաստորեն, այս ձեռնարկումով էլ ավելի ընդարձակվեց դեռ Սուպալիուլիումաս I-ի կողմից ստեղծված բազմաստիճան քաղաքական կառույցը, որի նպատակը, ակնհայտորեն, տերության ծայրամասային շրջանների նկատմամբ անմիջական վերահսկողության հանձնումն էր իշխող արքայատոհմի տարբեր ճյուղավորումների ձեռքին գտնվող խոշոր կախյալ երկրներին:

Դժվար է ասել, թե հարավային Փոքր Ասիայի որ տարածքների վրա կարող էր տարածվել Թարխունտասայի վերահսկիչ ֆունկցիան:

- 2) Պայմանագրի կնքման պահին խաթթիից կախյալ երկրներն էին Կարգամիսը, Սեխան, Միրան և Ամուրուն<sup>76</sup>: Սա վկայում է հոգուս այն բանի, որ Թուղխալիյասն արդեն կարողացել էր լուծել հորից

ժառանգված անկայուն իրավիճակի վերացման խնդիրը:

- 3) Պայմանագրի կնքումից ինչ-որ անորոշ ժամանակ անց Կուրունտան ապստամբում է և նույնիսկ կարճ ժամանակով տիրում մայրաքաղաք հաթթուսասին:

Կուրունտայի ապստամբության ժամանակի մասին հաջորդ բաժնում:

Թուղխալիյասի և Թարխունտասսայի փոխհարաբերությունների առնչությամբ հատկանշական է ենթաբաժնի սկզբում նշված «Ուլմի-Թեշուբի պայմանագիրը»:

Քանի որ, ըստ «Բրոնզե տախտակի», հաթթուսիլիս III-ն էր Թարխունտասսայի արքա դարձրել Կուրունտային, իսկ վերջինս Թուղխալիյասի ժամանակակիցն ու սերնդակիցն էր, ապա այժմ պիտի անհիմն համարել ինչպես 1) Ուլմի-Թեշուբի հետ պայմանագիր կնքած խեթական արքային հաթթուսիլիսի հետ նույնացնելը<sup>77</sup>, այնպես էլ 2) Ուլմի-Թեշուբին և Կուրունտային նույնացնելը<sup>78</sup>:

«Բրոնզե տախտակի» տեքստի և Թուղխալիյասի ու Կուրունտայի միջև քաղաքացիական պատերազմի լույսի տակ առավել հավանական է թվում դեպքերի հետևյալ հաջորդականությունը:

Կուրունտայի ապստամբությունը ճնշելուց հետո Թուղխալիյասը, այնուամենայնիվ, չի վերացնում Թարխունտասսայի կիսանկախ կարգավիճակը: Սակայն, մինչև Կուրունտայի ապստամբության պահը, հաթթուսասի և Թարխունտասսայի արքաների միջև կնքված պայմանագիրը խախտվել էր Կուրունտայի կողմից. նշանակում է, այն արդեն կորցրել էր իր ուժը: Լախկին պայմանագիրը չեղյալ հայտարարելուց հետո<sup>79</sup> Թուղխալիյասը, սակայն, չի խախտում այնտեղ հաստատագրված պայմանը՝ Թարխունտասսայի գահաժառանգման կարգը, որով նրա գահը պիտի անցներ Մուվատալիս II-ի սերունդներին: Դայտնի չէ Կուրունտայի ճակատագիրը, սակայն պարզ է հետևյալը. 1) Թարխունտասսայի նոր արքան ոչ թե Կուրունտայի որդին էր, այլ նրա ավագ եղբայր Ուլմի-Թեշուբը, 2) Թարխունտասսային ըստ «Բրոնզե տախտակի» տրված տարածքը և արտոնությունները կրճատվել էին:

#### ԹՈՒՂԽԱԼԻՅԱՍ IV-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԽԱՅԹՈՒՄ

Թուղխալիյաս IV-ի կառավարման տարիներին հեթական տերությունում տիրող քաղաքական իրավիճակը, ինչպես նշվեց, կարելի է ամբողջացնել միայն գրավոր աղբյուրներով վկայված իրադարձությունների հեթականության պարզաբանման դեպքում: Դակառակ դեպքում, նշված ժամանակաշրջանի պատմությունը կներկայանա միմյանցից մեկուսացած մի քանի բլոկներով, որոնց կամայական միակցումը էլ ավելի կբարդացնի առանց այդ էլ բարդ խնդիրը: Դաշվի առնելով այս բաժնի համապատասխան ենթաբաժիններում յուրաքանչյուր իրադարձության մասին պատմող տեքստային նյութի վերաբերյալ ներկայացված նկատառումները, փորձենք շփման եզրեր գտնել դրանց միջև:

Թուղխալիյաս IV-ի օրոք տեղի ունեցած իրադարձությունների հաջոր-

դականությունը հնարավոր է որոշակիորեն պարզել հետևյալ փոխկապակցված խմբերի միջոցով: Իրադարձությունները տրվում են ըստ ժամանակագրական հաջորդականության.

- 1) Ապստամբություններ Լալանդայում և այլուր, դրանց ճնշումը - մոտավորապես 1240 թ. ± 1-2 տարի:
- 2) Թուղխալիյասի և Կուրունտայի պայմանագիրը - մոտավորապես 1238/7 թ.
- 3) Կուրունտայի ապստամբության ճնշումը և Ուլմի-Թեշուրի գահակալումը Թարխունաստայում<sup>80</sup>:
- 4) Նիխրիյայի ճակատամարտը - մոտավորապես 1234/3 թ.:
  - Թարխունարադուի ապստամբությունը Սեխայում, դրա ճնշումը և Մուվավալվիի որդու գահակալումը հնարավոր է քվազել միայն terminus post quem-ով: Ապստամբությունը կարող էր սկսվել (2) կետից հետո, սակայն պարզ չէ, թե որքան պիտի անցած լիներ: Ապստամբության սկզբի և ճնշման միջև կարող էր ժամանակագրական մեծ ճեղքվածք լինել:
  - Մյուս իրադարձությունների համար հստակ մեկնակետեր չկան: Սեխայի ապստամբությունը, թերևս, կարելի է ինչ-որ կերպ կապել «Միլավանդայի նամակի» հասցեատիրոջ հոր հակախեթական գործունեության հետ, որը, իր հերթին, կարող էր սկիզբ առնել Թուղխալիյասի և Կուրունտայի միջև ընթացած պատերազմի շրջանում: Երբ վերոհիշյալ հիպոթեզիկ կապը կարող է մեկնակետ ծառայել Թարխունարադուի ապստամբության ճնշման, Միլավանդայի գրավման և դրանից քիչ անց Վալմուիի Վիլուտայի գահին վերահաստատելու համար, ապա, թվում է, հնարավոր է առաջարկել հետևյալը: Չամապատասխան բաժնում ներկայացված Միլավանդայի և Վալմուի դեպքերը, կապված Սաուսգամուվայի պայմանագրում Միխիյավայի արքայի անվան ջնջելու հետ, առաջարկվեց դիտել որպես փոխկապակցված իրադարձություններ: Եշանակում է, Թարխունարադուի ապստամբությունը նույնպես կարելի է տանել Թուղխալիյասի կառավարման վերջին շրջան:

Իսկ այժմ փորձենք վերոհիշյալի հիման վրա ներկայացնել Թուղխալիյասի կառավարման ընդհանուր պատկերը:

Իր գրեթե բոլոր նախորդների պես Թուղխալիյասն էլ գահ բարձրացավ կախյալ երկրներում սկսված անջատողական միտումների պայմաններում: Ինչ-որ կերպ լուծելով այդ խնդիրը, Թուղխալիյասի հաջորդ քայլը Թարխունաստասայի խնդրին, այն է, իր հոր՝ Խաթթուսիլիս III-ի օրոք Ուլմի-Թեշուրի տոհմի նկատմամբ ձեռնարկած միջոցառմանը հետագա զարգացում տալն էր: Դրանով Թուղխալիյասը «բաղաբացիական համերաշխություն» ստեղծելու փորձ կատարեց Մուրսիլիս II-ի տոհմի երկու ճյուղավորումների (Մուվատալլիսի և Խաթթուսիլիսի) միջև: Սակայն 1238/7 թ. մինչև Նիխրիյայի ճակատամարտն ընկած ժամանակահատվածը ամենևին խաղաղ չանցավ:

Շատ շուտով Կուրունտան ապստամբեց և նույնիսկ որոշ ժամանակով

տիրեց Խաթթուսասին: Թուղխալիյաս-Կուրունտա հակամարտության փաստն արդեն թույլ է տալիս ենթադրելու, որ Նիխրիյայի ճակատամարտի նախօրեին Խաթթիում տիրող ներքաղաքական ճգնաժամը պիտի համապատասխան կերպով անդրադառնար ժայրամասային կախյալ երկրների լոյալության վրա: Չենց այս շրջանում կարող էին խորանալ հակախեթական տրամադրությունները արևմուտքում, չխոսելով արդեն Ասորեստանի ազդեցիվ ծրագրերի մասին Միտաննի-Խանիզալքատի և վերինեվրատյան երկրների նկատմամբ:

Խաթթիի և Ասորեստանի՝ մ.թ.ա.XIV դ. վերջերից սկսված հակամարտությունը խեթերից կախյալ Միտաննիի տարածքի համար հասավ իր բարձրակետին Նիխրիյայի ճակատամարտի շրջանում: Այս խնդրի մասին կխոսվի ավելի ուշ (Գլուխ 1.5), իսկ այստեղ պիտի նշել հետևյալը:

Չյուսիսմիջագետքյան ճակատում Թուղխալիյասի անհաջողությունը ակնառու է: Խնդիրը միայն այն է, թե որքան խորն էին դրա հետևանքները: Դժվար է ասել, կարողացան արդյոք խեթերն այս շրջանում վերականգնել կորցրած ազդեցության զոնն մի մասը, թե ոչ: Այս մասին արքյուրները երկուստեք (խեթական և ասորեստանյան) լռում են: Թուղխալիյասի կողմից կախյալ Իսուվայի արքային հղված նամակի առկայությունը<sup>81</sup> կարող է վկայել հօգուտ նրա, որ Իսուվան չէր անցել Թուկուլթի-Նինուրտայի վերահսկողության տակ:

Այս պահից սկսած իրադարձությունների՝ դժվար վերականգնվող հաջողականությունը ստիպում է եզրակացությունները շարադրել ետադարձության հիմքի վրա: Ետադարձության մեկնակետ պիտի համարել՝ 1) «Ասուագանուվայի պայմանագրում» Ախիխալայի արքայի անվան ջնջելը, 2) Թուղխալիյասի որդու՝ Աոնուվանդաս III-ի գահակալումը հորից հետո: Վերոհիշյալ փաստերը թույլ են տալիս ենթադրելու որ Կուրունտայի ապստամբությունը և, հավանաբար, դրա հետ կապված հուզումները արևմուտքում (Սեխա, Միլլավանդա, Վիլուսա) պիտի ճնշվեին հենց Թուղխալիյասի կողմից, դրանից բխող հետևանքներով:

#### ԹՈՒԴԽԱՆԻՅԱՍ IV. ՉԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Այժմ ընդհանրացնենք Խաթթիում մ.թ.ա. 1240-1220-ական թվականներին տիրող իրավիճակը: Կարելի է արդյոք Թուղխալիյասի կառավարման շրջանում նշմարել խեթական տերության քաղաքական անկման նշաններ:

#### ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆ

Չնայած Նիխրիյայի ճակատամարտում կրած պարտությանը, որին հետևեց Ալզիի և որոշ այլ տարածքների նկատմամբ խեթական ազդեցության անկումը, Ասորեստանի կողմից ինչպես այդ պահին, այնպես էլ հետագա մեկ-երկու տասնամյակների ընթացքում հազիվ թե որևէ լուրջ սպառնալիք սպասվեր<sup>82</sup>:

Ինչ վերաբերում է ավանդաբար անհանգիստ արևմուտքին, ապա այստեղ Թուղխալիյասի գործունեությունը կարելի է ըստ ամենայնի հաջողված համարել: Թուղխալիյասի կառավարման շրջանում միկենյան արտահանման կտրուկ անկումը<sup>83</sup>, իսկ քիչ ավելի ուշ միկենյան կենտրոններում նկատվող ճգնաժամի նշանները<sup>84</sup> ասվածի լավագույն ապացույցն են:

Դեռ Խաթթուսիլիս III-ի գործունեության վաղ փուլում, երբ նա ընդամենը երկրի հյուսիսային մարզերի կառավարիչն էր, բազմաթիվ վկայություններ կան կասկական ցեղերի դեմ ձեռնարկված պատժիչ միջոցառումների վերաբերյալ<sup>85</sup>: Սակայն արքա հռչակվելուց հետո կասկերը այլևս չեն հիշատակվում Խաթթի վրա կազմակերպած ավերիչ արշավանքների առիթով: Նույնը նաև Թուղխալիյասի օրոք: Այնպես որ, դժվար է որևէ կերպ մեկնաբանել խեթերի համար այս ավանդական սպառնալիքի գոյության խնդիրը:

### *ԼԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՆ*

Հիմնական ապակայունացնող գործոն պիտի դիտել Թարխունտասսայի դինաստիայի նկրտումները Խաթթուսասի գահի հանդեպ: Չնայած Թուղխալիյասի հաղթանակին և Թարխունտասսային նախկինում տրված արտոնությունների կրճատմանը, վերջինս, զտնվելով Խաթթի կենտրոնական շրջանների ամմիջական հարևանությամբ, կարող էր լուրջ սպառնալիք պարունակել Տերության անվտանգության համար: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ «Ուլմի-Թեշուբի պայմանագիրը» ամենևին ձեռնու չէր Թարխունտասսայի արքաներին:

Եզրափակման փոխարեն անհրաժեշտ է նշել հետևյալը: Թուղխալիյասի օրոք Խեթական տերությունը դեռևս բավականաչափ հզոր էր, որպեսզի դիմակայեր արտաքին և ներքին ապակայունացնող գործոններին: Վերջիններիս ճակատագրական հետևանքները ընկնում են XIII դարի վերջին-XII դարի սկզբներին:

### *ԽԱԹԹԻՆ ՍՈՒՊՊԻԼՈՒԼԻՌՄԱՍ II-Ի ՕՐՈՔ*

Թուղխալիյաս IV-ին կարճ ժամանակով հաջորդեց նրա ավագ որդին՝ Առնուվանդաս III-ը, որի կառավարման տարիների մասին շատ քիչ բան է հայտնի<sup>86</sup>: Պարզ չէ, թե ինչ պայմաններում Առնուվանդասին հաջորդեց նրա եղբայրը՝ Սուպպիլուլիումասը: Նույնքան բարդ է Տերության ներքաղաքական և արտաքին քաղաքական վիճակի խնդիրը: Կարելի է միայն ենթադրել, հենվելով գրեթե բացառապես անալոգիայի վրա, որ կարճ ժամանակահատվածի ընթացքում երկու արքաների հաջորդական գահակալումը անպայման պիտի ուղեկցվեր տերության տարբեր շրջաններում սկիզբ առնող անջատողական տրամադրություններով:

Սինչև 1980-ական թվականների կեսերը Խաթթի վերջին Մեծ Արքայի կառավարումը դիտվում էր որպես վերահաս աղետի նախօրեին բնորոշ հա-

մատարած փլուզման առաջին փուլ: Սուլպալիլուլիումասի՝ գրավոր աղբյուրներով վկայված միակ հաջող ռազմական ձեռնարկումը՝ Ալասիայի ափերին տարած ծովային ճակատամարտում հաղթանակը և կղզու գրավումը ոմանց կողմից մեկնաբանվում էր որպես «ծովի ժողովուրդներին» դիմագրավելու ընթացքում ունեցած անցողիկ հաջողություն<sup>87</sup>: Մեխրի երկիրը հիշատակող KBo IV 14-ի վերաբավագրումը Թուդիսալիյաս IV-ի ժամանակաշրջանով (տես վերը) Նիխրիյայի ճակատամարտը) էլ ավելի էր կրճատում Սուլպալիլուլիումասի արտաքին քաղաքական գործունեության չրջանակները:

Այժմ, սակայն, շնորհիվ 1986 թ. Բողագբյոյում հայտնաբերված Սուլպալիլուլիումաս II-ի Südburg կոչվող արձանագրության հրատարակության<sup>88</sup>, զգալիորեն փոխվում են մեր պատկերացումները այս արքայի գործունեության մասշտաբների վերաբերյալ:

Չնայած արձանագրության մեջ օգտագործված մի շարք անհայտ գաղափարազրեքը և որոշ հնչյունական նշանների դժվարամատչ բնույթը բարդացնում են տեքստի մեկնաբանությունը, սակայն դրա ընթեռնելի հատվածների հիման վրա կարելի է վստահորեն ասել, որ, բացի Ալասիայի նվաճումից, Սուլպալիլուլիումաս II-ը ակտիվ արտաքին քաղաքականություն է վարել նաև այլ ուղղություններով: Դաշվի առնելով արձանագրության հաղորդվող նյութի բացառիկ կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում ընթեռնելի հատվածները ներկայացնել ամբողջությամբ<sup>89</sup>:

- 1 ա. «Երբ tawani-ն բոլոր(“) երկրները ենթարկեց խաթթիին՝  
բ. Վիյանավանդան, Տամինան, Մասան, Լուկան, Իկունան:
2. III սալ. Սուլպալիլուլիումաս, Մեծ արքա, հերոս ...
3. (III սալ: տրվում է աստվածների ցուցակ) (նրանք) կանգնած էին քազմությամբ:
- 4 ա. tawani-ն հնազանդեցրեց նրանց՝  
բ. Վիյանավանդան, Տամինան, Մասան, Լուկան, Իկունան:
5. «արքայազն-մարդը» խաթթիին բոլոր երկրները, խաթթիի սահմաններին(“) tawani-ն դրանք վերցրեց:
6. Սուլպալիլուլիումասը, Մեծ արքան, հերոսը, խաթթիի (համար) բոլոր(“) երկրներում դրանից հետո (III սալ: (նա) կառուցեց), (տրվում է քաղաքների ցուցակ):»:

Դժվարընթեռնելի հատվածներում խոսվում է յոթ քաղաքների կառուցման, ինչ-որ լեռան և Թարխունտասսայի գրավման, ինչպես նաև սույն արձանագրության ստեղծման մասին:

Այս տեղեկությունների ընձեռած հնարավորությունները դժվար է գերազնահատել այն առումով, որ XIII դարի երկրորդ կեսի խեթական տերությանը տրված «ժայռաստիճան թուլացած և զնալով անկարող դարձող խեթական պետություն» մակդիրը<sup>90</sup> ակնհայտորեն ոչ մի քննադատության չի դիմանում: Փորձենք մեկնաբանել արձանագրության վերը բերված նյութը:

Արձանագրության մեջ հիշատակվող երկրներից չորսը լավ վկայված են խեթական սեպագիր տեքստերում. միայն Տամինան է անհայտ<sup>91</sup>: Չնայած

դրանց տեղադրության հարցում մասնագետները համակարծիք չեն, սակայն նույնիսկ այդ հանգամանքը չի խանգարում վերականգնելու Սուպախլուլիումասի վարած պատերազմների լայն աշխարհագրությունը:

Այսպես, Վիյանավանդան նույնացվում է դասական շրջանի Oenoandus-ի<sup>92</sup> կամ գրեթե համահունչ Oinoanda-ի<sup>93</sup> հետ (վերջինս Քսանթոս գետի վերին հոսանքի շրջանում - ժամանակակից Եսենչայ): Առաջարկվել են նաև այլ տեղադրություններ՝ Էդրիդիդ լճից հյուսիս-արևմուտք<sup>94</sup>, Ինդոսի գետաբերանի<sup>95</sup> և Երթոյի մոտ<sup>96</sup>: Նույնը նաև Մասայի<sup>97</sup> և Լուկկայի<sup>98</sup> հարցում: Ինչ վերաբերում է Իկունային, ապա արտաքին նմանության պատճառով դրա սեպագիր Ikkusaniya ծնը առաջարկվել է նույնացնել դասական և ավելի ուշ շրջանի Իկոնիոնի (այժմ Կոնյա) հետ՝ կենտրոնական Փոքր Ասիայում<sup>99</sup>:

Ինչպես տեսնում ենք, Sūdburg-ում հիշատակվող տեղանուններն ընդգրկում են կենտրոնական, հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան Փոքր Ասիան: Դրանց լայն աշխարհագրությունը կարծես հուշում է, որ տեքստում կարող էին ներկայացվել մեկից ավելի արշավանքների մասին պատմող իրադարձություններ:

Արձանագրության նյութը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ այստեղ հստակ կապ է նշմարվում նախկինում հայտնի երկու իրադարձությունների հետ:

#### ԹԱՐԽՈՒՆԱՍՏԱՍՅՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Նախորդ ենթաբաժնում նշվեց, որ Թարխունտասայի արքա Կուրունտայի կողմից մայրաքաղաք Խաթթուսասի ժամանակավոր նվաճումից հետո Թուղխալիյաս IV-ին հաջողվել էր ճնշել ապստամբությունը, որից հետո Թարխունտասայի նոր արքա Ուլմի-Թեշուբի հետ կնքվել էր վերջինիս համար ծանր պայմաններով մի պայմանագիր:

Որ Սուպախլուլիումասը ստիպված էր եղել գրավելու Թարխունտասասան, վկայում է հոգուտ այն բանի, որ Թուղխալիյասից հետո, հավանաբար, Առնուվանդաս III-ի կարճատև կառավարման ընթացքում կամ նույնիսկ Սուպախլուլիումաս II-ի գահակալման սկզբնական շրջանում Թարխունտասասան կրկին ապստամբել էր: Նման ենթադրությունը կարծես հաստատվում է Սուպախլուլիումասից մեզ հասած տեքստային նյութով<sup>100</sup>: Հազիվ թե նպատակահարմար լինի ընդունելու Հ.Հոֆների ենթադրությունը, ըստ որի վերոհիշյալ արշավանքից առաջ Թարխունտասասան կարող էր արդեն գրավված լինել «ծովի ժողովուրդների» կողմից, որոնց դեմ էլ ուղղված էր Սուպախլուլիումասի արշավանքը<sup>101</sup>, այն որևէ փաստական հիմք չունի, լինելով ընդամենը մեկը տվյալ իրադարձությանը տրվող հնարավոր բացատրություններից:

**Սուպախլուլիումասը Լուկկայում.** Ուզարիտի վերջին արքա Ամնուրապիի՝ Ալասիայի արքային ուղղված մի նամակում<sup>102</sup> առաջինը հայտնում է, որ իր ողջ նավատորմը ուղարկված է Լուկկա՝ օգնելու Խաթթիի արքային<sup>103</sup>:

Իսկ Ամնուրապիին հասցեագրված նամակում<sup>104</sup>, որը, անկասկած, գրված է առաջին նամակից որոշ ժամանակ անց, հայտնվում է Ուզարիտի նավատորմի կործանման մասին: Չնարավոր է արդյոք կապ տեսնել ուզարիտյան նավատորմի՝ Լուկկա առաքման և Տմբուրգ-ի մեջ հիշատակվող Լուկկայի գրավման մասին տեղեկությունների միջև: Չնայած մեր տեղեկությունները հնարավոր չէ ամրապնդել այլ աղբյուրներով, սակայն, թվում է, նման տարբերակը անհիմն չի լինի: Փորձենք վերականգնել Լուկկայում տեղի ունեցած իրադարձությունները:

Եթե երկու աղբյուրները նկատի ունեն հարավ-արևմտյան Փոքր Ասիայում տեղի ունեցած միևնույն իրադարձությունը, ապա հնարավոր է ենթադրել, որ այստեղ խեթերը գործ են ունեցել այնպիսի հակառակորդի հետ, որի հնազանդեցումը պահանջել է ցամաքային և ծովային ուժերի համագործակցություն: Ուզարիտյան նավատորմի ոչնչացումը Սուպպիլուլիումասի ցամաքային հաղթանակի փաստի կողքին կարող է վկայել հակառակորդի գերազանցապես ծովային սպառնալիքի օգտին, մի հակառակորդի, որը փորձել է ծովից մուտք գործել Լուկկա: Ամնուրապիին ուղղված մեկ այլ նամակում<sup>105</sup> Ալասիայի արքան զգուշացնում է նրան ինչ-որ հակառակորդի հնարավոր հարձակման առթիվ: Սա կարծես վկայում է Լուկկայում գործող թշնամու մեծ ներուճակության մասին:

Իսկ եթե Տմբուրգ-ը և ուզարիտյան նամակները նկարագրում են տարբեր իրադարձություններ, որ քիչ հավանական է, ապա, այնուամենայնիվ, թվում է, Լուկկայի ափերին գործող հակառակորդը պարտված պիտի լիներ ցամաքում. մենք ոչ մի հիմք չունենք չվստահելու տվյալ իրադարձությունից զգալի ժամանակ անց կազմված արձանագրությանը:

Իհարկե, չի կարելի միանշանակ հայտարարել, թե Լուկկայում կամ նրա ափերի մոտ գործող հակառակորդը չէր կարող ներթափանցել թերակղզի, սակայն դա քիչ հավանական է Տմբուրգ-ում հիշատակվող ընդարձակ տարածքներ ընդգրկող հաջող արշավանքների ֆոնի վրա: Ամենայն հավանականությամբ, Լուկկայի իրադարձությունը պիտի կապել թերակղզու այս հատվածում գործող «ծովի ժողովուրդների» հետ, ինչպես և մեկնաբանվել է մինչև օրս<sup>106</sup>:

Սուպպիլուլիումասի արշավանքը Լուկկա, դրա ափերին Ուզարիտի նավատորմի ջախջախումը և, այնուհետև, հակառակորդի սպառնալիքը Ուզարիտ քաղաքին նպատակահարմար է դիտել որպես հարավային Փոքր Ասիայի առափնյա շրջաններ մուտք գործել ցանկացող «ծովի ժողովուրդների» խմբերի նկատմամբ խեթական արքայի կանխարգելիչ միջոցառումներ, որոնց նպատակն էր թույլ չտալ այդ ժողովուրդներին հաստատվելու խեթական տերության տարածքում:

Այժմ փորձենք մեկնաբանել Սուպպիլուլիումաս II-ի կառավարման վերաբերյալ վերոհիշյալ տեղեկությունները:

Ամենայն հավանականությամբ, Տմբուրգ-ի ընթեռնելի հատվածներում խոսվում է մի քանի արշավանքների մասին<sup>107</sup>: Անշուշտ, դժվար է եղած սուր



Նյութի հիման վրա կամայականորեն առանձնացնել դեպի նշված երկրներ կազմակերպված արշավանքները, սակայն դրանց տեղադրությունը կարծես այդպիսի հնարավորություն ընձեռում է: Այսպես, եթե Թարխունտասսան կարող էր ինչ-որ ծնով կապ ունենալ Իկունայի և Վիյանավանդայի հետ, ապա մի կողմից Մասան, մյուսից՝ Լուկկան կարծես աշխարհագրորեն չեն կապվում առաջինների հետ: Տեսականորեն, իհարկե, հնարավոր էր նման լայնամասշտաբ պատերազմը, բայց քիչ հավանական:

Ինչ վերաբերում է Ալասիայի պիեթի մոտ երեք ծովային և կղզում տարած մեկ ցամաքային հաղթանակներին, ապա KBo XII 38-ի փուն տեղեկության ժամանակագրական հարաբերակցությունը Sûdburg-ի իրադարձություններին շատ ավելի քարո է, որպեսզի ներկա աշխատության մեջ հնարավոր լինի առաջարկելու քիչ թե շատ հավանական տարբերակ: Դնարավոր են իրադարձությունների հետևյալ տարբերակները:

1) KBo XII 38-ը նախորդել է Sûdburg-ին. այս դեպքում պարզ կդառնա խաթրիի հպատակ Ուգարիտի արքա Ամնուրապիի նամակագրությունը Ալասիայի արքայի հետ: Ուրեմն, կղզին նվաճելու պահից մինչև ուգարիտյան նամակներում հաղորդվող անհայտ հակառակորդի շարժումները Ալասիան կառավարվել է խեթապատակ կառավարչի կողմից: Այնուհետև, Սուպալիլուլիումասի արշավանքները Թարխունտասսա և արևմտափոքրասիական մյուս երկրներ տեղի են ունեցել դրանից հետո: Մի հանգամանք կարծես տարօրինակ է թվում Ալասիայի հիշատակությունը Sûdburg-ում: Անշուշտ, սա հիմնավոր հակափաստարկ չէ, քանի որ 1) կղզու գրավումը կարող էր և չի իշատակվել, 2) նրա անունը զուցե դեռ հնարավոր լինի ընթերցել Sûdburg-ի դժվարընթեռնելի հատվածներում:

2) Ալասիայի իրադարձությունը հաջորդել է Sûdburg-ին<sup>108</sup>: Այս դեպքում պարզ կդառնա կղզու հիշատակության բացակայությունը հիերոգլիֆային տեքստում: Սա թույլ կտա Ալասիայի անհնազանդությունը դիտել արևմտափոքրասիական երկրների դեմ ձեռնարկված պատժիչ միջոցառումների ենթատեքստում: Միևնույն ժամանակ, սակայն, կխզվի կապը վերոհիշյալ երկու աղբյուրների և ուգարիտյան նամակներում հաղորդվող իրադարձությունների միջև: Ստիպված կլինենք ընդունել, որ KBo XII 38-Sûdburg զույգում արտացոլված խաթրիի հակառակորդները և ուգարիտյան նամակների մեջ հիշատակվող անհայտ հակառակորդը բացարձակապես տարբեր են եղել:

3) KBo XII 38-ում և Sûdburg-ում հիշատակվող Լուկկայի նվաճումը և ուգարիտյան նամակների իրադարձությունները միմյանց հետ փոխկապակցված են: Սա, իհարկե, անվերապահորեն չի ենթադրում բոլոր իրադարձությունների միաժամանակություն: Խոսքը պատճառա-հետևանքային միասնության մասին է: Իրադարձությունները կարող էին ծավալվել հետևյալ կերպ:

Լուկկան ծովից ենթարկվել է անհայտ հակառակորդի հարձակ-

մանը: խեթական զորքը ցամաքում հասել է հաջողության, սակայն ծովում զործող ուզարիտյան նավատորմի զործունեությունը ապարդյուն է եղել, որից հետո հակառակորդը սկսել է ծավալվել դեպի արևելք՝ Ալասիա և Լևանտ: Ահա այս պահին կարող էին ընթանալ KBo XII 38-ում նկարագրվող իրադարձությունները Ալասիայի առնչությամբ: Սուլայիլուլիումասի կիպրոսյան ձեռնարկման քնույթի հարցում անհրաժեշտ է մի կարևոր պարզաբանում մտցնել: Արդյոք խեթական արքան գործ է ունեցել Ալասիայի ապստամբ արքայի հետ, թե նրա հակառակորդներն այստեղ ուրիշներն էին: KBo XII 38-ի համապատասխան հատվածը<sup>109</sup> կարծես չի վկայում առաջին տարբերակի օգտին.

- III 1-17: «Իմ հայրը [.....]: Ես հավաքեցի և ես, Սուլայիլուլիումասս, Մեծ արքան, անմիջապես [կտրեցի-անցահասա(??)] ծովը: Ալասիայի նավերը երեք անգամ եկան իմ դիմաց մարտի, և ես ոչնչացրի նրանց, և ես վերցրի նավերը և այրեցի ծովի մեջտեղում: Եվ երբ ես հասա ցամաք, Ալասիայի թշնամիները մեծ բազմությամբ եկան իմ դեմ մարտի: Ես կռվեցի նրանց դեմ, և [...] ինձ [...]:»

Դժբախտաբար, վերը բերված տեքստի սկիզբը և Ալասիայի հողի վրա տեղի ունեցած ճակատամարտի ավարտը կորսված են: Սակայն նույնիսկ այս կցկտուր տեղեկությունը կարող է որոշակի նպաստ բերել ուսումնասիրվող խնդրի պարզաբանմանը:

Եթե հակառակորդի նավերը իսկապես Ալասիային են պատկանել, ապա ինչպես բացատրել երեք ճակատամարտերի անհրաժեշտությունը: Այս խնդրի առնչությամբ մասնագետների շրջանում գերիշխում է այն տեսակետը, թե տվյալ պահին խեթերի հակառակորդները կարող էին լինել տեղաշարժվող «ծովի ժողովուրդները»<sup>110</sup>: Իհարկե, գերբնադատական մոտեցման դեպքում կարելի է առարկել, սակայն մի ողջ շարք գրավոր և հնագիտական տվյալներ վկայում են այդպիսի տարբերակի օգտին<sup>111</sup>: Ըստ այդմ, հնարավոր պիտի համարել ալասիական արշավանքը դիտել ոչ թե որպես միաժամանակյա գործողություն, այլ որոշակի ժամանակ տևած փորձեր ետ շարունելու կղզու մերձակա ջրերով ընթացող «ծովի ժողովուրդների» խմբերին<sup>112</sup>: Ընդ որում, շատ հնարավոր է, որ Ալասիայի հողում տեղի ունեցած ճակատամարտը մղվեր կղզու մի հատվածում հաստատված եկվորների, այլ ոչ կղզու օրինական կառավարության դեմ, եթե այդպիսին դեռ գոյություն ունենր:

Իհարկե, իրադարձությունների վերոհիշյալ մեկնաբանությունը զուտ կանխավարկած է և կարիք ունի ավելի հիմնավոր փաստարկման: Այնուամենայնիվ, այս պահին առավել հավանական է թվում վերը բերված երրորդ տարբերակը, այն է՝ Ալասիայի և Լուկկայի նվաճումների փոխկապակցվածությունը:

Այժմ անցնենք Sûdburg-ում հիշատակվող նվաճումների խնդրին: Իհարկե, տեքստի ուսումնասիրման ներկա մակարդակը թույլ չի տալիս որոշելու

այնտեղ նշված երկրների նկատմամբ կիրառված միջոցառումների դրդապատճառները: Այնուամենայնիվ, որոշ նախնական աշխատանքային վարկածներ կարելի է առաջարկել:

1) Լուկկա. եթե այն առնչվում է «ծովի ժողովուրդների» տեղաշարժերին, ապա այստեղ խոսք չի կարող լինել այդ երկրի ապստամբության մասին:

2) Թարխունտասսա. ամենայն հավանականությամբ, նպատակահարմար է ենթադրել Ուլմի-Թեշուրի կամ նրա անմիջական հետևորդի հերթական փորձ դուրս գալու Խաթթիի արքայի գերիշխանությունից, ինչպես նախկինում Կուրունտան: Ապստամբության համար ամենահարմար պահը, հավանական է, Առնուվանդաս II-ի կարճատև կառավարումն էր կամ Սուպաիլուլիումասի կառավարման սկիզբը: Նոր արքայի գահակալման սկզբում կախյալ երկրների անհնազանդությունը վկայված է Նոր խեթական շրջանի գրեթե բոլոր արքաների առնչությամբ:

Ինչ վերաբերում է Իկունային, Վիյանավանդային, Տամինային և Մասային, ապա այս երկրների հարցում առայժմ դժվար է որևէ ենթադրություն անել:

Այժմ փորձենք ամփոփել Սուպաիլուլիումաս II-ի կառավարման շրջանում խեթական տերության ներքաղաքական և արտաքին քաղաքական վիճակը եղած սուղ տեղեկությունների հիման վրա: Ինչպիսին կարող էր լինել այն Խաթթիի անկման նախօրեին:

1) Ներքին վիճակ. Կախյալ երկրների կամ զոնե դրանց մի մասի անհնազանդություն, Թարխունտասսայի ապստամբությունը, սոցիալական ընդվզումներ<sup>113</sup>, Եգիպտոսից հացահատիկի ներմուծման անհրաժեշտություն<sup>114</sup>, որը, թերևս, պայմանավորված էր ուժեղ երաշտով Փոքր Ասիայում<sup>115</sup>:

2) Արտաքին վիճակ. «ծովի ժողովուրդների» տեղաշարժեր Փոքր Ասիայի հարավային առափնյա շրջաններում՝ Լուկկայից մինչև Ուզարիտ և ավելի հարավ, խաղաղություն ասորեստանյան ճակատում: Համենայնդեպս, այլ արտաքին քաղաքական բարդություններ վկայված չեն:

Անց Սուպաիլուլիումաս II-ի օրոք այսօր վերականգնելի իրադարձությունները, որոնք մի անորոշ ժամանակ անց պիտի հանգեցնեին խեթական տերության անկմանը, ավելի ճիշտ կլինի ասել՝ տրոհմանը: Թվում է, որ վերը նշված քայքայիչ գործոններից նախապատվությունը պիտի տալ ներքինին: Իհարկե, արտաքին գործոնի վերաբերյալ մեր տեղեկությունները, թերևս, կարող են թերի լինել, հատկապես ավանդաբար անհանգիստ հյուսիսի և հյուսիս-արևելքի (կասկեր), ինչպես նաև, զուգե, հյուսիս-արևմուտքի (բալկանյան ցեղեր) հարցում<sup>116</sup>: Այնուամենայնիվ, առկա նյութը, այդ թվում նաև սույն բաժնում չքննարկված հնագիտական տվյալները (տես Գլուխ 2), բույլ են տալիս չափավորելու Խաթթիի անկման միզրացիոն տեսության

հիմնադրույթները: Արտաքին ուժի ճնշման տակ Խաթթի կործանման ավանդական սխեմայի ձևավորման շրջանում դեռևս հայտնի չէին 1) Սուպսի-լուլիումասի ակտիվ ռազմական ձեռնարկումները (Südburg), 2) Թուլուլթի-Նինուրտա Ի-ի Ատրեստանը դիտվում էր որպես պոտենցիալ սպառնալիքի աղբյուր (KBo IV14-ի վերագրումը Սուպսիլուլիումաս II-ին, տես վերը), 3) հյուսիսբալկանյան ցեղերի միգրացիայի մասշտաբները Փոքր Ասիա, ինչպես նաև «ծովի ժողովուրդների» տեղաշարժերի հետևանքները խիստ չափազանցեցվում էին: Այժմ, նոր փաստերի ճնշման տակ անհրաժեշտ է վերանայել նախկինում իշխող պատկերացումները, ինչի մասին հաջորդ գլխում:

### **ԱՐԵՎՏՅԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱ. «ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ»**

Փոքր Ասիայի արևմուտքը դեռ Գին խեթական բազավորության ժամանակաշրջանից (մ.թ.ա. XVII-XVI դդ.) առանձնահատուկ տեղ ուներ Խաթթի քաղաքական և տնտեսական կյանքում: Նվաճվելով առաջին անգամ Լաբարնայի կողմից (XVII դ. կեսեր)<sup>117</sup>, այստեղի բաղաբաղական միավորները հետագայում դուրս եկան Խեթական տերության ազդեցության ոլորտից: XV դ. երկրորդ կեսին խեթերը կրկին ձեռնարկեցին դրանց վերանվաճման գործը: Թուլթալիյաս II-ը կարողացավ գրավել ողջ տարածաշրջանը, որն այդ պահին միավորված էր «Աստուվա երկրներ» կոչվող միության մեջ<sup>118</sup>: Քիչ ավելի ուշ, Թուլթալիյաս III-ի կառավարման վերջին շրջանում արևմուտքը կրկին անկախացել էր: Աստուվային փոխարինած Արցավա միությունը փորձեց նույնիսկ ընդարձակվել Խաթթի տարածքների հաշվին. արցավյան առաջխաղացումը վկայված է մինչև Գալիսի մեծ ոլորանից հարավ ընկած շրջանում<sup>119</sup>: Սուպսիլուլիումաս I-ը իր կառավարման սկզբում վերականգնեց իրերի նախկին վիճակը<sup>120</sup>, իսկ Մուրսիլիս II-ի վճռական գործողությունների շնորհիվ, նրա երրորդ տարում (մոտավորապես 1320 թ.) Արցավան ծանր պարտություն կրեց. խեթերը նվաճեցին Արցավայի մայրաքաղաք Ապասասը (անտիկ շրջանի Եփեսոս), իսկ նրա արքա Ուխթաացիտիսը ծովով փախավ իր դաշնակից Ախիսիյավա՝ մայրցամաքային Գունաստան (տես ստորև)<sup>121</sup>:

Արցավյան միությունը բաղկացած էր բուն Արցավայից (հետագայի Լիդիայի կենտրոնական մասը) և մի շարք այլ քաղաքական միավորներից՝ Միրա-Կուվալիյա<sup>122</sup>, Սելթա գետի երկիր<sup>123</sup>, Խապալլա<sup>124</sup>, Ցիպպասալա-Խարիյատա<sup>125</sup> և Վիլուսա<sup>126</sup>: Մուրսիլիսի արշավանքի հետևանքով արցավյան դաշինքը տրոհվում է և նրա բաղկացուցիչ մասերից միայն երկուսն են, ըստ XIII դ. խեթական աղբյուրների, շարունակում որոշակի դեր կատարել տարածաշրջանում<sup>127</sup>:

Արևմտյան Փոքր Ասիայի երկրները XIII դ. իրավական առումով հանդիսանում էին Խեթական տերությունից կախյալ երկրներ, սակայն նշված ժամանակահատվածի մեծ մասի ընթացքում դրանք վերածվում են կովախնձորի Խաթթի և Ախիսիյավայի միջև: Մուվատալլիս II-ի օրոք, խեթա-եգիպտական հարաբերությունների բարձրակետի շրջանում Ախիսիյավայի բացա-

հայտ հովանավորությամբ արևմուտքում սկսվում է մի գործընթաց, որը կարելի է բնորոշել որպես «կողմնորոշման փոփոխություն»։ Այն իրականացվում էր երկու եղանակով՝ 1) անջատողական ուժերի հովանավորում Ախխի-յավայի կողմից, 2) խեթամետ ուժերի նկատմամբ հարկադրական միջոցառումների իրականացում (ռազմական ագրեսիա)։ Առկա գրավոր աղբյուրները թույլ են տալիս ենթադրելու, որ Ախխիյավայի նման քաղաքականությունը գլխավորապես իրականացվում էր տեղական միջոցներով։ Չամենայն-դեպս, որը XIII դ. ընթացքում արևմուտքում տեղի ունեցած իրադարձությունների մասին պատմող խեթական տեքստերում ոչ մի հիշատակություն չկա ախխիյավայան զորքերի որևէ գործողության մասին։

Ներկա ուսումնասիրության նպատակների տեսանկյունից արևմտյան Փոքր Ասիան կարևոր է մի շարք նկատառումներով։ Առաջինը այս տարածաշրջանի յուրահատուկ աշխարհագրական դիրքն է մի կողմից միկենյան աշխարհի քաղաքական-մշակութային սահմանների, մյուս կողմից՝ Յուսիսային Բալկանների մերձավորությամբ։ Դրանց այստեղ կարող էին իրենց արտացոլումը գտնել դեռ XIII դ. վերջերից սկսված մերձավորարևելյան ճգնաժամի կանխանշանները։ Ստորև կփորձենք պարզաբանել սույն խնդիրը։

Երկրորդ, ինչպիսի փոխազդեցություններ կարող էին տեղի ունենալ ճգնաժամից XII դ. առավել շատ տուժած երկու տարածաշրջանների՝ Փոքր Ասիայի և միկենյան Յունաստանի միջև։ Կարող էին արդյոք սրանք անջարենպաստ ներգործություն ունենալ մեկը մյուսի վրա։ Եթե այո, ապա ինչ եղանակով և չափով։ Նույնը նաև Փոքր Ասիա-Յուսիսային Բալկաններ փոխադարձությունների խնդրում։

Վերոհիշյալ խնդիրների տեսանկյունից հատուկ ուսումնասիրության առարկա կլինի անտիկ ավանդության «Տրոյական պատերազմ» կոչվող իրադարձությունը, որը փոքրասիական-միկենյան-հյուսիսբալկանյան եռակողմ փոխհարաբերությունների յուրատեսակ քանձորուկն է։

#### «ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ»

Այս բաժնում մեր ուսումնասիրության առարկան չեն լինելու հոմերոսյան անմահ պոեմներում նկարագրվող Տրոյական պատերազմին (այսուհետև՝ ՏՊ) առնչվող բոլոր խնդիրները։ Դրանց ուսումնասիրությունը սկսվել է դեռ անտիկ ժամանակներում և, շնորհիվ Գ.Ըլիմանի, այսօր էլ այն տվյալ դարաշրջանով զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում է, որի վառ ապացույցը վերջին շրջանում կազմակերպված գիտաժողովներն են<sup>128</sup> և հարյուրավոր հատուկ ուսումնասիրությունները։ Չնայած դրան, ՏՊ պատմականության հարցում չկա քիչ թե շատ գերիշխող տեսակետ<sup>129</sup>։ Ներկա ուսումնասիրության տեսանկյունից ՏՊ խնդիրը կարևոր է մի շարք նկատառումներով.

- ՏՊ հարաբերակցությունը XII դ. ճգնաժամին. կարելի է արդյոք որևէ կապ նշմարել հնագիտական Տրոյայի շերտերից որևէ մեկի ավերման և նույն դարաշրջանի երեկակական տեղաշարժերի միջև։

- Ովքեր էին Տրոյայի վերոհիշյալ շերտը կործանողները՝ միլենյան հույները, բալկանյան այլ ժողովուրդներ, թե որևէ անմիջական փոքրասիական հարևան:
- ՏՊ կոչվող իրադարձության նշանակությունը մերծավորարեսյան ճգնաժամի հասունացման գործում:

#### ՏՐՈՅԱ-ԳԻՍՄՐԼԸԿԻ ՈՒԷՐՐՈՆՉԵԴԱՐՅԱՆ ԺԱՍՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուշրրոնգեղարյան Տրոյայի շերտերի ժամանակագրությունը ամբողջությամբ հենվում է այստեղից հայտնաբերված միլենյան խեցեղենի քվազուման վրա, որն իր հերթին քվազրվում է եզիպտական խեցեղենի օգնությամբ: Այստեղից բխում է, որ Տրոյայի ժամանակագրությունը հեռու է ստույգ լինելուց: Դարկ է նշել նաև, որ այսօր հենց եզիպտագիտության ասպարեզում չկա միասնական ժամանակագրություն:

Եվ այսպես, մայրցամաքային Գունաստանի և Էգեյան ծովի կղզիների պատմության ուշրրոնգեղարյան ժամանակաշրջանը, ըստ «միջին ժամանակագրության», բաժանվում է հետևյալ փուլերի՝ LH II (մոտավորապես 1500-1425 թթ.), LH IIIA (մոտավորապես 1425-1300 թթ.), LH IIIB (մոտավորապես 1300-1200 թթ.)<sup>130</sup>: Նկատի ունենալով ներկայումս մասնագիտական գրականության մեջ ավելի ու ավելի հաճախ կիրառվող «ստորին ժամանակագրությունը», վերը բերված քվակամները կարելի է պայմանականորեն իջեցնել մեկ-երկու տասնամյակով:

Ժամանակագրորեն ներկա ուսումնասիրությանն առնչվում են Տրոյայի հետևյալ ենթաշերտերը՝ Տրոյա VII (LH IIIA2 - IIIB1 անցման փուլից<sup>131</sup> մինչև XIII դ. երկրորդ կեսի ինչ-որ պահ<sup>132</sup>, մոտավորապես 1300-1230/20 թթ.), Տրոյա VIIa (տևել է մեկ-երկու սերունդ և ավարտվել դարավերջին՝ ավերածությամբ և իրդեհով)<sup>133</sup>, Տրոյա VIIb1 (XIII դ. վերջից՝ հազիվ մեկ սերունդ)<sup>134</sup>, Տրոյա VIIb2 (XII դ.):

Վերոհիշյալ շերտերը մշակութային առումով հետևյալ պատկերն են ներկայացնում:

Տրոյա VII-ի ավերումից հետո (հարձակման արդյունքում կամ երկրաշարժի պատճառով, տես ստորև), VIIa-ում կյանքի եղանակը որոշակիորեն փոխվում է: Տրոյա VII-ը բնորոշում են խաշոր կառույցները, լայն փողոցները, իսկ VIIa-ում տները փոքր են, զգացվում է տարածքի պակաս<sup>135</sup>: Այնուամենայնիվ, այս երկու շերտերի միջև մշակութային խզում չկա:

Տրոյա VIIa-ի ավերումից հետո, չնայած նոր բնակչության ներհոսքին, որի վկայությունը հյուսիսբալկանյան զուգահեռներ ունեցող Coarse Ware-ն է<sup>136</sup>, տեղական բնակչությունը գոյատևել է: Շարունակվել է խեցեգործական ավանդույթը՝ «Գորշ մինիական», Red-washed և Tan Ware-ի արտադրությունը<sup>137</sup>: Coarse Ware-ի հետ միասին Տրոյա VIIb1-ում առկա է նաև LH IIIC խեցեղենը, որը թույլ է տալիս VIIa-ի ավերումը քվազրելու XIII դ. վերջերով-XII դ. սկզբներով<sup>138</sup>: Հազիվ մեկ սերունդ գոյատևած այս քաղաքի մշակույթը

կտրուկ փոխվում է Տրոյա VIII2-ում. հայտնվում է Buckelkeramik<sup>139</sup> կոչված խեցեղենը՝ թրակյան և նույնիսկ Դունգարիայի ուշբրոնզեդարյան «Լաուզից» մշակույթի զուգահեռներով (տես ստորև): Այնուամենայնիվ, բուն տրոյական խեցեղենը դեռ որոշ ժամանակ արտադրվում է<sup>140</sup>:

Այսպիսով, XIII դ. ընթացքում և XII դ. սկզբներին Տրոյայում առկա են երկու հաջորդական ավերածություններ՝ Տրոյա VIII-ը և Տրոյա VIIa-ն, ինչպես նաև օտար ծագման երկու մշակույթների մուտք՝ Coarse Ware-ը և Buckelkeramik-ը՝ Տրոյա VIII2-ում:

Եթե վերոհիշյալ պատկերի հարցում մասնագետների ճնշող մասը համակարծիք է, ապա նույնը չի կարելի ասել Տրոյան ավերողների ինքնության, ՏՊ հետ դրանց ունեցած առնչության մասին:

### *ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԾՄԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Հոմերոսյան պոեմներում նկարագրվող ՏՊ պատմականության խնդրի շուրջ ծավալված իրարամերժ տեսակետների հիմքում ընկած է այն մտայնությունը, թե միկենյան քաղաքակրթության գոյության վերջին փուլում (XIII դ.) մայրցամաքային Հունաստանի ախայան քաղաքների և Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Տրոյայի միջև ընթացած պատերազմի վերաբերյալ կույր պոետի հաղորդած տեղեկությունները անպայման պիտի ինչ-որ եղանակով արտացոլվեին XIII դ. գրավոր աղբյուրներում (տվյալ պարագայում խեթական) և արևմտյան Փոքր Ասիայի ու Հունաստանի համաժամանակյա գրավոր նյութերում: Եթե այդպիսի զուգահեռներ և արձագանքներ չկան կամ դրանք բավարար չեն, ապա ՏՊ պիտի դիտել որպես Հոմերոսի երևակայության արդյունք, իսկ եթե կան, այն իրոք եղել է: Ստորև ներկայացնենք ՏՊ պատմականությանն առնչվող առավել կարևոր վիճախարույց խնդիրները:

### *ՀՈՍԵՐՈՍՅԱՆ ՏՐՈՅԱՅԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՆԸ*

Հայտնի է, որ Տրոադայի արևմտյան մասում գտնվող Հիսարլըկ բլրի՝ Հ.Շլիմանի կողմից պեղված «Հոմերոսյան Տրոյան» ոչ մի առնչություն չունի ոչ միայն ուշբրոնզեդարի, այլև ընդհանրապես մ.թ.ա. II հազարամյակի հետ: Այն ներկայացնում է մ.թ.ա. III հազարամյակը: Ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում, հոմերոսյան քաղաքը պիտի փնտրել Տրոյա VI և VII շերտերից մեկում (իրենց բազմաթիվ ենթաշերտերով), քանի որ այդ ժամանակահատվածով է թվագրվում LH I-III փուլը մայրցամաքային Հունաստանում և Էգեյան ծովի կղզիներում, այսինքն, ախայան դարաշրջանը: Վերը նշվեց նաև այս նույն ժամանակահատվածում Հիսարլըկի վրա գտնվող քաղաքի՝ հնագիտորեն վկայված երկու ավերածությունների մասին: Այս երկուսից որի ավերումը կարող էր հիմք ծառայել Հոմերոսի մոտ նկարագրվող իրադարձության համար:

Եթե խնդրի պարզաբանման գործում նախապատվությունը տանք Հո-

մերոսին, որը Տրոյան ներկայացնում է որպես բարձր և ամուր պարիսպներով ու շքեղ կառույցներով մի ծաղկուն քաղաք<sup>141</sup>, ապա, անկասկած, գերադասելի կլիներ հակվելու Տրոյա VI-ի կողմը. այն իրոք համեմատելի չէ ոչ իր նախորդների, ոչ էլ հետևորդների, այդ թվում VIIa-ի հետ: Այս դեպքում հնարավոր է ՏՊ դիտել մ.թ.ա. XIII դարի առաջին կեսին Փոքր Ասիայի արևմուտքում խեթական աղյուրներով վկայված քաղաքական վայրիվերումների ենթատեքստում: Խեթական արքաներ Խաթթուսիլիս III-ի և Թուդիսալիյաս IV-ի տեքստերում բազմաթիվ վկայություններ կան այստեղ Ախիսիյավայի կողմից հովանավորվող ոմն Պիյամարադուսի հակախեթական գործունեության վերաբերյալ: Վերջինիս նույնիսկ հաջողվել էր գրավել մի շարք երկրներ, այդ թվում նաև Վիլուսան, որը մասնագետների մեծ մասի կողմից դիտվում է որպես հոմերոսյան Իլիոնի խեթական ձևը<sup>142</sup>: Հավանաբար, Պիյամարադուսի գործունեության արդյունքում էր գահազրկվել Վիլուսայի արքա Վալմուն, որին իր օրինական գահին վերադարձնելու նպատակով Թուդիսալիյաս IV-ը բանակցում էր արևմտափոքրասիական երկրներից մեկի, հավանաբար, Սիլավանդայի աիքայի հետ (տես Գլուխ 1.2):

ՏՊ այսպիսի ժամանակագրությունը, թվում է, նպատակահարմար է ոչ միայն այն առումով, որ Տրոյա VII-ը իրոք լիովին համընկնում է քաղաքին տրվող հոմերոսյան մակդիրներին, այլև ակա է Փոքր Ասիայի արևմուտքում գրավոր աղյուրներով վկայված խեթա-ախիսիյավյան բազմամյա հակամարտությունը, որն իր բարձրակետին էր հասել հենց XIII դ. առաջին կեսին, և որի ընթացքում գրավվել էր նաև Վիլուսան՝ հոմերոսյան քաղաքի ենթադրվող գուգահեռը: Հազիվ թե Տրոյայի տասնամյա պաշարումը հնարավոր լինի մեկնաբանել որպես պատերազմ մի կոնկրետ քաղաքի դեմ, որքան էլ որ ամուր պարիսպներ ունենար այն: Դա կարող էր լինել տևական պայքար<sup>143</sup>, ընդ որում ոչ միայն ընդդեմ Տրոյայի, այլև նրա բազմաթիվ դաշնակիցների փոյուզացիների, թրակացիների, լիկիացիների և այլոց դեմ:

Գոգուտ Տրոյա VII-ի է վկայում նաև շատերի կողմից անվերապահորեն ընդունվող այն մտայնությունը, թե ՏՊ շրջանում պիտի անպայման գոյություն ունենար հզոր և կայուն միկենյան աշխարհ, որն ի վիճակի լիներ ձեռնարկելու միասնական հեռավոր ու տևական արշավանք: Այնինչ, Տրոյա VIIa-ի ավերման փուլում նման արշավանք հնարավոր չէր իրականացնել, քանի որ այդ նույն ժամանակաշրջանում կամ քիչ անց միկենյան կենտրոններում առկա էին խոր ճգնաժամի նշաններ, որն ավարտվեց դրանց անկումով և բնակչության ապարնակեցմամբ<sup>144</sup>:

Եվ, վերջապես, նս մեկ փաստարկ հոգուտ Տրոյա VII-ի: Ըստ անտիկ ավանդության<sup>145</sup>, ուշրոնգեդարի վերջում վկայված միկենյան քաղաքների անկումը տեղի է ունեցել ՏՊ-ից երկու սերունդ հետո: Հայտնի է, որ առաջինը թվագրվում է մոտավորապես 1200 թ. կամ քիչ ավելի ուշ շրջանով, որի վկայությունը ոչ միայն միկենյան կենտրոնների ավերածություններն ու ապարնակեցումն է, այլև LH IIIB խեցեղենի վերացումը և LH IIIC-ի հայտնվելը (տես Գլուխ 2): Մ.թ.ա. 1200 թ. երկու սերունդ ավելի վաղ իսկապես կհասցնի



XIII դ. կեսերը:

Սակայն, այսուհանդերձ, բերված փաստարկները դեռևս քույլ չեն տալիս միանշանակ եզրակացնելու Տրոյա VII-հոմերոսյան Տրոյա համադրության օգտին: Բավական լուրջ են նաև Տրոյա VIIa-ի օգտին վկայող փաստարկները:

Առաջինը LH III C1 տիպի թվով ութ խեցեբեկորների առկայությունն է Տրոյա VIIa-ում: XIII դ. կեսերը այս խեցեղենի համար շատ վաղ է, քանի որ այն ոչ մի տեղ այլևս վկայված չէ: Եթե դրանք պատահաբար չեն ընկել հաջորդ՝ VIIb1 շերտից<sup>146</sup>, ապա պիտի ենթադրել, որ Տրոյա VIIa-ի ավերումը տեղի է ունեցել LH III B - III C անցման փուլում, այսինքն, XIII դ. վերջերին<sup>147</sup>: Այս դեպքում հնարավոր է կապ գտնել Տրոյա VIIa-ի ավերման և Տ<sup>9</sup> ժամանակի վերաբերյալ Թուկիդիդեսի հաղորդած տեղեկության միջև՝ մոտավորապես 1225 թ.<sup>148</sup>:

Երկրորդ, Տրոյա VIIa-ում ավերման պահին առկա են պատերազմական նախապատրաստությունների ակնհայտ նշաններ (մթերքի մեծ պաշարների կուտակում, հավելյալ բնակչության մուտք քաղաք և այլն)<sup>149</sup>: Այնինչ մասնագետների մի մասը, ինչպես նշվեց վերը, Տրոյա VII-ի կործանումը հակված է վերագրելու երկրաշարժին, բացառելով արտաքին՝ թշնամական հարձակման գործոնը<sup>150</sup>:

Երրորդ փաստարկը բխում է Տրոյա VIIa-ի ավերումը XIII դ. վերջին-XII դ. սկզբին Մերծավոր Արևելքում սկսված խոշոր միգրացիաների ենթատեքստում դիտելուց: Եթե ճիշտ է Դոմերոսը, ասելով թե հույները հիմնահատակ կործանեցին Տրոյան և բնակչությանը ոչնչացրեցին կամ գերեվարեցին, ապա քաղաքը վերականգնած նոր բնակիչները իրենց հետ պիտի նոր մշակույթ և կենցաղ բերեին: Իսկ քանի որ Տրոյա VII-ի և VIIa-ի միջև մշակութային խզում չկա (փոփոխությունները միայն որակական են), ապա Տրոյա VIIa-ի և VIIb-ի միջև այդպիսի խզումը արդեն անվիճելի փաստ է. Տրոյա VIIb2-ում հայտնվում է LH III C-ն և «բարբարոսական» խեցեղենը՝ թրակյան ծագման Buckelkeramik-ը<sup>151</sup>: Այս փաստարկի էությունը հետևյալն է:

XIII դ. վերջերին սկսված եթիկական տեղաշարժերի ընթացքում մայրցամաքային Դունաստանի բնակչության արտագաղթի մի ալիքի կրողները կարող էին ձգտել հաստատվել Տրոադայում, ինչպես դա տեղի ունեցավ Կիպրոսում, Կիլիկիայում և այլուր: Դրանով կարելի է բացատրել LH III C խեցեղենի հայտնվելը նշված վայրերում:

Այսպիսով, հոմերոսյան Տրոյայի նույնացումը հնագիտական Տրոյայի շերտերից որևէ մեկի հետ չափազանց բարդ խնդիր է, եթե փորձում ենք հենվել մի կողմից միայն «Իլիականի» ու «Ոդիսականի», մյուս կողմից՝ բացառապես խեթական տեքստերի և հնագիտական նյութի համադրման վրա: Այն ավելի է խճվում խեթական տեքստերի հիշատակած Ախիսիյավա երկրի և միկենյան աշխարհի հարաբերակցության խնդրում գոյություն ունեցող լուրջ տարածայնությունների (տես հաջորդ ենթաբաժինը), ինչպես նաև հոմերոսյան Տրոյայի՝ Դիսարլիկի հետ նույնացման ավանդական տեսակետի

նկատմամբ վերջին շրջանում նկատվող թերահավատության պատճառով:

Այս խնդրում նոր մոտեցում պիտի համարել Շ.Հիլերի վարկածը երկու ՏՊ-րի գոյության մասին<sup>152</sup>:

«Իլիականում» տեղեկություն կա Ազամեննոնի գլխավորած Տրոյական արշավանքից մեկ սերունդ առաջ Գերակլեսի կողմից Տրոյայի գրավման մասին: Գերակլեսին օգնում էր էգինեցի Այակոսի որդի Տելամոնը՝ ՏՊ հերոսներից Այաքսի հայրը: Գեդիմակը ուշադրություն է հրավիրում հետևյալ նկատառումների վրա.

1) Գերակլեսի և Ազամեննոնի գլխավորած արշավանքները Տրոյա տեղի են ունեցել երկու հաջորդական սերունդների ընթացքում, այսինքն, դրանք ծածկում են Տրոյա VII-ի վերջին փուլը և VIII-ն:

2) Եթե նույնիսկ Տրոյա VIII-ի ավերման պահին միկենյան աշխարհի անկումն արդեն սկսվել էր, ապա դա դեռ չի նշանակում, որ հնարավոր չէր կազմակերպել Տրոյական արշավանքը<sup>153</sup>: Ավանդությունը վկայում է, որ արշավանքը տեղի է ունեցել աճող վտանգի և լայն միզոնացիաների շրջանում, երբ շատ հերոսներ չվերադարձան հայրենիք, այլ բնակություն հաստատեցին օտար երկրներում<sup>154</sup>:

3) Փայտե ձիու մոտիվը, հավանաբար, պիտի վերաբերեր Տրոյա VII-ի ավերմանը: Ըստ ավանդության, Տրոյայի արքա Լաոմեդոնի խնդրանքով Պոսեյդոնն ու էգինեցի Այակոսն էին կառուցել Տրոյայի պարիսպները: Դրաժարվելով տալ խոստացած պարգևը, Լաոմեդոնը առաջ է բերում Պոսեյդոնի զայրույթը, որը քաղաքի վրա է ուղարկում *կեթոս* կոչված հրեշտիկ, վերջինս սարսափահար է անում բնակիչներին: *Կեթոսը* խորհրդանշում է բնության ուժերը, տվյալ դեպքում՝ երկրաշարժը<sup>155</sup>: Երկրաշարժից հետո քաղաքը կարող էր գրավվել ախայացիների կողմից, ինչը, կարծես, վկայված է նույն ավանդությունում. Լաոմեդոնին նախապես օգնած Գերակլեսը, չստանալով իր ակնկալած վարձատրությունը, գրավում է Տրոյան:

Այսպիսով, ՏՊ պատմականությունն ընդունող մասնագետների մեծ մասը, որը հակված է հոմերոսյան Տրոյան փնտրելու Գիսարլըկի ուշբրոնզեդարյան վերջին փուլի շերտերից մեկում և քաղաքի ավերումը վերագրելու ախայան արշավանքին (սկսված մայրցամաքային Գունաստանից կամ կղզիներից), փորձում է լրացուցիչ և ավելի հիմնավոր զուգահեռներ գտնել անտիկ ավանդության և սեպագրական-հնագիտական աղբյուրների միջև, որը քույլ կտա տեղայնացնելու և բվագրելու ՏՊ կոչվող շուրջ երեքհազարամյա խնդիրը:

Ի տարբերություն մասնագետների վերոհիշյալ խմբի, մեր դարի 80-ական թվականների սկզբներից ՏՊ և դրան առնչվող խնդիրների մեկնաբանության ասպարեզում աստիճանաբար ձևավորվել է քացահայտ ժխտողական միտում, որ սկսվել էր դեռ Ֆ.Ջոնսոնից<sup>156</sup>: Այս ուղղության կողմնակիցները հենվում են մի շարք փաստարկների վրա, որոնց մի մասը, առաջ անցնելով, կարելի է բնորոշել որպես էմպիրիկ, զուրկ որևէ լուրջ փաստական հիմքից: Դրանք են.

- 1) Մ.թ.ա. XV-XIII դդ. խեթական աղբյուրների հիշատակած Ախխիյա կամ Ախխիյավա պետությունը ոչ մի առնչություն չունի մայրցամաքային Դունաստանի կենտրոնների հետ<sup>157</sup>:
- 2) խեթական աղբյուրների հիշատակած Վիլուսա (նաև՝ Վիլուսիյա ծով) և Տարուխա երկրանունները լեզվական առումով և տեղադրմամբ կապ չունեն հոմերոսյան Իլիոնի և Տրոյայի հետ<sup>158</sup>:
- 3) Միկենյան կենտրոնների և Տրոադայի միջև եղած բնական արգելքը (էգեյան ծովը) քիչ հավանական է դարձնում ախայացիների ակտիվ մասնակցությունը փոքրասիական գործերին<sup>159</sup>:
- 4) Տրոյա VIIa-ի ավերման պահին միկենցիները չէին կարող խոշոր արշավանք ձեռնարկել Փոքր Ասիա, քանի որ քե միկենյան կենտրոնները, քե Տրոյա VIIa-ն միաժամանակ զոհ են դարձել Թրակիայից ընթացած միգրացիային<sup>160</sup>:
- 5) Տրոյա VIIa-ի կործանումը պիտի քվազրել XII դ. 40-30-ական քվականներով կամ քիչ ավելի ուշ շրջանով, այսինքն, միկենյան քաղաքակրթության անկումից մի քանի տասնամյակ անց<sup>161</sup>:

Ստորև ավելի հանգամանորեն ներկայացնենք վերոհիշյալ փաստարկները:

#### ԱԽԽԻՅԱՎԱ-ՄԻԿԵՆՅԱՆ ԳՈՒՆԱՍՏԱՆ ԽՆԴԻՐԸ

Արդյոք խեթական աղբյուրներում հիշատակվող Ախխիյավա երկիրը<sup>162</sup> մայրցամաքային Դունաստանի միկենյան կենտրոնների՝ խեթերի կողմից մի փոքր փոփոխված անվանումն է<sup>163</sup>, քե այն կապ չունի միկենյան աշխարհի հետ:

խեթական սեպագիր տեքստերի ուսումնասիրության սկզբնական փուլում, հենվելով Ախխիյավա երկրանվան և անտիկ ավանդության կողմից միկենյան դարաշրջանի Դունաստանի բնակչության նկատմամբ կիրառվող Achai(w)oi ցեղանվան միջև ակնառու նմանության վրա, է.Ֆոռերը առաջարկեց դրանց նույնությունը<sup>164</sup>: Այս տեսակետն ընդունվեց Յ.Ֆրիդրիխի<sup>165</sup>, Ա.Գյոքցեի<sup>166</sup>, Ֆ.Շախերմեյրի<sup>167</sup> կողմից. հետագայում էլ Ախխիյավա-միկենյան աշխարհի նույնացումը մեծ քվով կողմնակիցներ ունեցավ<sup>168</sup>:

Սակայն արդեն 1932 թ. Ֆ.Չոմմերը իր ֆունդամենտալ աշխատության մեջ հանդես եկավ միկենյան տեսության սուր քննադատությամբ<sup>169</sup>: Նրա կարծիքով, խեթական աղբյուրներում պահպանված՝ Ախխիյավային վերաբերող տեղեկությունները ոչ մի հիմք չեն տալիս այն տեղադրելու մայրցամաքային Դունաստանում. հավանաբար, Ախխիյավան արևմտափոքրասիական երկիր պիտի եղած լիներ<sup>170</sup>:

1940-60-ական քվականներին Ախխիյավայի տեղայնացման խնդիրը նոր քանավեճերի առարկա դարձավ: Առաջարկվեցին փոխզիջողական տարբերակներ, որոնց հիմքում ընկած էր Փոքր Ասիան Դարավային Բալկաններից քաժանող մեծ տարածության մտայնությունը: Ինչպես կտեսնենք ստորև, XV-XIII դդ. Ախխիյավան ակտիվ արտաքին քաղաքականություն էր

վարում արևմտյան Փոքր Ասիայում, հովանավորելով այստեղի հակախեթական ուժերին: Ըստ այդմ, ենթադրվում էր, որ պելոպոննեսյան ախայացիները հազիվ թե Վիճակի լինեին լուրջ մրցակցություն ցույց տալու խեթերին հեռավոր Փոքր Ասիայում: Եույնիսկ Ախիսիական միկենյան աշխարհում փնտրողների մեծ մասը, այնուամենայնիվ, հակված էր ենթադրելու, որ խեթական աղբյուրներում հիշատակվող երկիրը պիտի գտնվեր միկենյան աշխարհի արևմտյան ծայրագավառում, այն է՝ Էգեյան ծովի արևելյան հատվածում ընկած կղզիներում: Մայրցամաքային Դունաստանը, տվյալ պարագայում Պելոպոննեսը թվում էր քիչ հավանական: Պելոպոննեսի, որպես Ախիսիական կենտրոնական շրջանի կամ միջուկի մասին տեսակետը պաշտպանում էին քչերը<sup>171</sup>: Դրա արդյունքում Ախիսիական սկսեց «թափանջել» Էգեյան ծովի արևելյան ավազանի ողջ երկայնքով՝ Դոդոսում<sup>172</sup>, Փոքր Ասիայի արևմտյան ծովափին և հարակից կղզիներում<sup>173</sup>, Կիպրոսում<sup>174</sup>, Կրետեում<sup>175</sup>, Բալկանյան Թրակիայում<sup>176</sup> և նույնիսկ Տրոադայում<sup>177</sup>:

Ախիսիական փոքրասիական կամ մերձփոքրասիական տեղադրման միտումը ակնհայտորեն խթանվեց 1969 թ. հետո, երբ հնագրական հիմքի վրա զգալի թվով խեթական պատմական բնույթի տեքստեր XIII դ. երկրորդ կեսից վերաթվագրվեցին XV դ. երկրորդ կեսով<sup>178</sup>: Այդ թվում նաև հայտնի «Մադդուվատտասի մեղանչանքը»<sup>179</sup>, որտեղ նկարագրվում է «Ախիսիայի մարդու»՝ Ատտարիսիասիսին ենթակա ոճն Մադդուվատտասի փախուստը խեթական արքայի հովանավորության ներքո: Այստեղ ներկայացվում էր թեթևակալ արևմուտքում խեթական պետության համար ստեղծված քավական անճապատ իրավիճակ՝ խեթերից կախյալ Մադդուվատտասի անհնազանդությունը, նրա հարձակումը խեթական հովանավորության տակ գտնվող Ալասիա-Կիպրոսի վրա, դաշինքը խեթերի դեմ ապստամբած Դալավա քաղաքի (հետագայի Տլոսը՝ Լիկիայում) հետ: Իսկ այս տեքստին համաժամանակյա մեկ այլ տեքստում՝ «Թուդիսալիասի տարեգրությունում»<sup>180</sup> հիշատակվում էր խեթերի արշավանքը դեպի արևմտյան Փոքր Ասիա՝ Աստուվա խոշոր միության դեմ: Այս երկու տեքստերի նախկին թվագրումը Թուդիսալիաս IV-ի և Առնուվանդաս III-ի ժամանակներով (XIII դ. երկրորդ կես) իսկապես կարող էր հանգեցնել Փոքր Ասիայի արևմուտքում Ախիսիական կողմից հովանավորվող հակախեթական ագրեսիվ գործողություններով հագեցած իրավիճակի գոյության մասին ենթադրության: Սա, կարծես, որոշակի հիմք էր ստեղծում ՏՊ՝ պատերազմի իրականության և Ախիսիական-Միկենյան Դունաստան նույնացման համար: Դատկապես, եթե հաշվի առնվեր վաղուց առաջարկված Ատտարիսիաս-Ատրեոս (ՏՊ՝ հերոս Ագամեմոնի հայրը) նույնությունը<sup>181</sup>: Եզրակացությունը հետևյալն էր. օգտվելով Փոքր Ասիայի արևմուտքում խեթերի սասանված ագրեսիությունից, միկենյան հույները կարող էին ակտիվանալ այս տարածաշրջանում և գրավել մի շարք երկրներ, այդ թվում նաև Տրոյան<sup>182</sup>:

Սակայն վերոհիշյալ տեքստերի վերաթվագրումը XV դ. երկրորդ կեսով չուրջ երկու հարյուր տարի ետ էր տանում այդ իրավիճակը և Ատտարիսիսի-

յաս-Ատրեոսին, հետևաբար, նաև կասկածելի էր դարձնում Ախիսիյավա-մի-կենյան Յունաստան կապը:

Բացի խեթական տեքստերի վերաբնագրումից, Ախիսիյավայի տեղադրման գործում զգալի դեր խաղացին միկենյան աշխարհի արտաքին կապերի ասպարեզում հնագիտորեն նշմարվող գործընթացները:

Բանն այն է, որ միկենյան խեցեղենի և կենցաղային այլ իրերի արտահանումը արևմտյան Փոքր Ասիա, Լեսոս և Եգիպտոս ծաղկում էր ապրում դեռևս ողջ XIV դ., հատկապես LH IIIA2-ում (XIV դ. վերջ-XIII դ. սկիզբ), որից հետո սկսվում է նրա կտրուկ անկումը (տես Գլուխ 2): Այս երևույթի մասին ավելի ուշ, իսկ այժմ այն մասին, թե ինչպես էր մեկնաբանվում նշված փաստը:

Ենթադրվում էր, որ LH III B փուլում՝ մ.թ.ա. XIII դարի 80-70-ական թվականներից հետո մայրցամաքային Յունաստանի միկենյան կենտրոնները այնքան էին թուլացել, որ հազիվ թե փորձեին ակտիվություն ցուցաբերել Փոքր Ասիայում: Բնակամաբար, այս ժամանակահատվածում հիշատակվող Ախիսիյավան չէր կարող մայրցամաքային Յունաստանը լինել<sup>183</sup>:

Միկենյան ծագման իրերի (զլխավորապես՝ խեցեղեն) առկայությունը արևմտյան Փոքր Ասիայում մինչև վերջին տասնամյակները չի վիճարկվել: Այս տարածաշրջանի ծովափնյա հատվածում հայտնաբերված միկենյան բնակավայրերի, քաղումների, խեցեղենի ու այլ իրերի տեղաբաշխման քարտեզը<sup>184</sup> ինքնին արդեն բավական է, որպեսզի պատկերացում կազմվի մայրցամաքային միկենյան կենտրոնների խաղացած դերի մասին: Այս նյութի զգալի մասը գալիս է Տրոյա-Ֆիսարլըկից, Միլեթից, Սմիրնայից, Յասոսից և Մյուսզեբիից, ինչպես նաև մայրցամաքից ոչ հեռու գտնվող Չոդոս, Կոս, Սամոս և Լեմնոս կղզիներից:

Ըստ Կ.Բիտտելի քարտեզի, արևմտյան Փոքր Ասիայից հայտնի միկենյան նյութը երեք տիպի է՝ ա) բնակավայրեր (Պիտանե, Կլազոմենե՝ մայրցամաքում, մեկ բնակավայր Կալիմնոս կղզում, երեքը՝ Կոս կղզում, Յալիսոսը և Լինդոսը՝ Չոդոսում)<sup>185</sup>, բ) քաղումներ (Կոլոֆոն, Եփեսոս, Մյուսզեբի, Յալիսոս և Լինդոս), գ) խեցեղեն և այլ իրեր (Մարդես, Սմիրնա, Միլեթ, Յասոս, Միլիաս, Ստրատոնիկես [ ժամանակակից Եսքիհիսար], Տելմեսոս [ ժամանակակից Ֆեթիե], Անտիյաս և Թերմի՝ Լեսոս կղզում): Սրան պիտի ավելացնել Տրոյայից հայտնի մեծ քանակությամբ խեցեղենը: Եթե չհաշվենք Տրոյան, ապա Փոքր Ասիայում միկենյան նյութի հյուսիսային սահմանը Չերմոս գետն է՝ պատմական Միսիայի և Լիդիայի սահմանը (ժամանակակից Գեդիզ): Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ վերոհիշյալ միկենյան նյութը որոշ դեպքերում հայտնաբերվել է լուվիական հիերոգլիֆային արձանագրություններ պարունակող հուշարձանների մոտակայքում (Կարաբել, Միպիլոս)<sup>186</sup>:

Ինչ վերաբերում է Տրոյային, ապա այստեղ ներկայացված է միկենյան խեցեղենի ամենախոշոր քանակությունը: Ներմուծման սկիզբն է LH II-ը (մոտավորապես մ.թ.ա. 1500 թ.): LH III A1-ում միկենյան խեցեղենի քանակը կտրուկ աճում է և հասնում իր քարձրակետին մոտավորապես 1425-1375 թթ.

ընթացքում: Ուշագրավ է, որ այս նույն ժամանակահատվածում նման երևույթ է նկատվում նաև Կրետեում, Զոդոսում և արևմտյան Փոքր Ասիայի մյուս ծովափնյա շրջաններում<sup>187</sup>: Ինչպես կտեսնենք ստորև, միկենցիների ակտիվությունը չէր սահմանափակվում միայն առևտրով, այն ուղեկցվում էր նաև քաղաքական շրջաճախով:

Ի վերջո, Փոքր Ասիայում միկենցիների բազմաքնույթ գործունեության օգտին կարելի է բերել ևս մեկ փաստարկ: Պիլոսից (Մեսսենիա) հայտնի «Գծային Բ» գրով գրված աղյուսակներում (մ.թ.ա. XIII դար) կան արքայական և տաճարային տնտեսություններում աշխատող փոքրասիական ծագման ստրկուհիների և երեխաների գոյությունը հաստատող տվյալներ: Օրինակ, հիշատակվում են Ki-ni-di-ja-o = knidiiai «(կարիական) Կնիդոսից», mi-ra-ti-ja = Milatai «Միլեթից», ze-pu<sub>2</sub>-ra<sub>3</sub> = Zephur(i)ai «Չեֆուր(ի)այից» (Դավիթաճանախի հին անվանումը)<sup>188</sup>:

Ինչպես կարելի է մեկնաբանել արևմտյան Փոքր Ասիայում միկենցիների ակտիվ ներկայությունն ապացուցող համեմատաբար առատ նյութը և դրա կրճատումը ոչ միայն այստեղ (այդ թվում նաև Զոդոսում), այլև լեանտյան կենտրոններում: Եթե XIII դ. միկենյան արտահանումը կտրուկ անկում է ապրել, իսկ նույն դարի առաջին կեսին Ախիսիյավան խիստ ակտիվ էր արևմտյան Փոքր Ասիայում, ապա որքանով է նախատակահարձար այս փաստն ընդունել որպես վկայություն Ախիսիյավա - միկենյան աշխարհ նույնացման դեմ:

Թվում է, որ Ախիսիյավան ամեն կերպ Փոքր Ասիայի արևմուտքում կամ մերձավորությամբ (օրինակ, Էգեյան ծովի արևելքի կղզիներում կամ Բալկանյան Թրակիայում) տեղադրողները ելնում են ոչ այնքան զերբնադատական մոտեցման դիրքերից, որքան Էգեյան ծովի «պատնեշին» չափից ավելի մեծ տեղ տալու միտումի պատճառով և որոշ այլ փաստարկներից, ինչի մասին ավելի ուշ: Այնինչ, անկանխակալ մոտեցման դեպքում խնդիրն այնքան բարդ չի թվում, որքան այն ներկայացվում է: Ստորև տեսնենք, թե ինչպես կարելի է բացատրել միկենյան արտաքին առևտրի անկման փաստը, և թե հնարավոր է արդյոք դրա աղբյուրները գտնել գրավոր աղբյուրներում: Այդ նպատակով ի մի բերենք նախ Ախիսիյավայի՝ արևմտյան Փոքր Ասիայում խաղացած դերը, վեր հանելով դրա հիմնական միտումները: Այնուհետև միայն փորձենք վերլուծել միկենյան կենտրոնների արտաքին կապերի խնդիրը:

#### *ԱՆԽԻՅԱՎԱՆ ԽԵԹԱՎԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՄ*

Ախիսիյավայի վերաբերյալ գոյություն ունեցող խեթական արքյուրները մեզ են հասել խեթական չորս արքաների կառավարման ժամանակաշրջանից՝ Առնուվանդաս I, Մուրսիլիս II, Խաթթուսիլիս III և Թուդիալիյաս IV: Ներկայացնենք այս արքաների կողմից Ախիսիյավան հիշատակող տեքստային նյութը՝ դրա համառոտ զնախատակաճով:

**Առնուվանդաս I. XV դ.** երկրորդ կեսով վերաթվագրված «Մադդուվատ-

տասի մեղանչանքը» պայմանական անունը կրող տեքստը խաթրիի արևմտափոքրասիական կախյալ կառավարիչ Մադդուվատտասին ուղղված մի նամակ է, գրված Առնուվանդաս I-ի կողմից: Այստեղ երկու ենթատեքստերում հիշատակվում է «ախխիյացի» Ատտար(իս)սիյասը՝ արևմտյան Փոքր Ասիայում և Ալասիայում ձեռնարկած գործողությունների առնչությամբ: Ատորն բերվող հատվածին նախորդող տողերում խոսվում է այն մասին, որ ինչ-որ մի ժամանակ Մադդուվատտասը վտարվել է Ատտար(իս)սիյասի երկրից և, ապաստանելով խեթական արքայի հոր թուրխալիյաս II-ի մոտ, շուտով նրանից ստացել է Ցիպպասալա լեռան երկիրը, դառնալով կախյալ կառավարիչ: Նրա պարտավորությունների մեջ էր մտնում որևէ կապ չունենալ Ատտար(իս)սիյասի հետ: Մինչև բուն «մեղանչանքները», Մադդուվատտասը անհաջող հարձակման փորձ էր կատարել խեթերի հակառակորդ Արգավայի վրա, և միայն խեթական զորքի օգնությամբ փրկվել:

«Այնուհետև ախխիյացի Ատտար(իս)սիյան եկավ և մտադրվեց սպանել թեզ, Մադդուվատտա: Բայց երբ իմ Արևի հայրը լսեց (այս մասին), նա ուղարկեց Կիսնապիլիին, զորք և մարտակառքեր՝ կռվելու Ատտար(իս)սիյայի դեմ: Իսկ դու, Մադդուվատտա, չդիմադրեցիր Ատտար(իս)սիյային և փախար նրանից [.....]: Կիսնապիլիին կռիվ տվեց Ատտար(իս)սիյային: Եվ Ատտար(իս)սիյայի կողմից 100 մարտակառք և ... հետևակ եկավ մարտադաշտ: Նրանք մարտի բռնկեցին (մեկը մյուսի հետ) և նրանք (խեթերը - Ա.Բ.) սպանեցին մեկ ազնվականի Ատտար(իս)սիյայի կողմից, և մեր կողմից նրանք (թշնամիները - Ա.Բ.) սպանեցին մեկ ազնվականի Ցիդանցային: Եվ Ատտար(իս)սիյան հրաժարվեց (իր հարձակումից) Մադդուվատտայի վրա և վերադարձավ իր երկիրը: Եվ նրանք (խեթական զորքը - Ա.Բ.) վերականգնեցին Մադդուվատտային իր կախյալ վիճակում»<sup>189</sup>:

Հաջորդ հիշատակությունը.

«Բանի որ Ալասիան պատկանում է Իմ Արևին, (դու ինչու ես գրոհել այն)», դիմում է Առնուվանդասը Մադդուվատտասին: Երբ Ատտար(իս)սիյասը և Պիզգայացին ասպատակում էին Ալասիան, ես էլ ասպատակեցի: Ոչ քո հայրը, ոչ էլ Քո Արևը երբևէ չեն դիմել ինձ (ասելով) «Ալասիան իմն է: Ծանաչիր այն որպես այդպիսին»: Այժմ, երբ Քո Արևը ցանկանում է վերադարձնել Ալասիայից գերվածներին, ես նրանց կվերադարձնեմ թեզ»: Առնուվանդասի պատասխանը. «Բանի որ Ատտար(իս)սիյասը և Պիզգայացին Իմ Արևից անկախ են, իսկ դու, Մադդուվատտաս, իմ ենթական ես, ապա ինչու դու միացար նրանք»<sup>190</sup>:

Տեքստում շարադրված են թուրխալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի օրոք տեղի ունեցած իրադարձությունները, որոնց ընթացքը հետևյալն է:

**Թուրխալիյաս II.** «Ախխիյացի» Ատտար(իս)սիյասը իր երկրից վտարում է Մադդուվատտասին, որը, փախչելով Փոքր Ասիա խեթական տիրույթներ, դառնում է խեթական տարածք հանդիսացող Ցիպպասալայի կառավարիչ: Ինչ-որ ժամանակ անց Ատտար(իս)սիյասը զորքով մտնում է Ցիպպասալա: Չկարողանալով դիմադրել, Մադդուվատտասը փախչում է և միայն խեթական զորքի առաջխաղացման շնորհիվ հարձակվողները նահանջում են և

Մադդուվատտասը վերականգնվում է իր երկրում:

**Առնուվանդաս I.** Ատտար(իս)սիյասը և «Պիզգայացին» հարծակվում են Ալասիայի վրա: Նույնը կատարում է նաև Մադդուվատտասը: Վերջինիս արարքը առաջ է բերում Առնուվանդասի դժգոհությունը, քանի որ Ալասիան, ըստ նրա, խեթական տարածք էր:

«Մադդուվատտասի մեղանշանքի» վերը բերված հատվածները, ինչպես ենթադրվում է, դժվար թե վկայեն մայրցամաքային Գունաստանի միկենյան որևէ պետության հետ Ախիսիայի նույնացման օգտին: Վերջինս ավելի շուտ կարելի է մեկնաբանել որպես երնիկոն, այլ ոչ քաղաքական միավոր: Գավանաբար, Ատտար(իս)սիյասը արևմտյան Փոքր Ասիայում կամ հարակից կղզիներում գործող միկենցի է եղել<sup>191</sup>: Ինչևէ, Ատտար(իս)սիյասի երկիրը բավական զգալի ռազմական ներուժ պիտի ունենար, որպեսզի կարողանար 1) արևմտյան Փոքր Ասիայում խեթերի դեմ ճակատամարտում մարտադաշտ հանել 100 մարտակառք և 2) ծովային արշավանք(ներ) ձեռնարկել Ալասիայի վրա:

Մեր խնդրի առնչությամբ կարևորը ոչ այնքան Ատտար(իս)սիյասի երկրի տեղադրությունն է, որքան վերոհիշյալ իրադարձությունների և արևմտյան Փոքր Ասիայում միկենյան մշակույթի ներկայության ակտիվացման միջև եղած ժամանակազրական կապը LH II - LH IIIA1 անցման փուլը:

**Մուրսիլիս II.** Ախիսիավան հիշատակվում է այս արքայի տարեգրություններում.

*«Եվ երբ գարուն էր, քանի որ Ուխխացիտին միացավ Ախիսիավայի արքային, և Միլլավանդա երկիրը [անցավ] Ախիսիավայի արքային, և ուղարկեցի Գուլլային և Մալացիտիին, հետևակ և մարդտակառքեր, և նրանք՝ ավեբեցին [Միլլավանդա երկիրը]»<sup>192</sup>:*

*«... Այն ժամանակ ... ևս ընթացա դեսպի Արցավա ... Եվ Ուխխացիտին չդիմադրեց ինձ: Նա փախավ իմ առջևից և ծովով գնաց կղզիներ: Եվ այնտեղ նա մնաց»<sup>193</sup>:*

Երկու տեքստերն էլ պատմում են միևնույն իրադարձության մասին, որը տեղի է ունեցել Մուրսիլիս II-ի կառավարման երրորդ տարում (մոտավորապես 1320 թ.): Արցավան ապստամբել և դաշինք էր կնքել Ախիսիավայի հետ, որից հետո Միլլավանդան գրավվել էր վերջինիս կողմից կամ կամավոր կերպով անցել էր նրա տիրապետության տակ: խեթերի կողմից Միլլավանդայի գրավումից հետո Արցավայի ապստամբ արքան հեռացել էր ինչ-որ կղզիներ, ենթադրաբար, Ախիսիավային պատկանող տարածք<sup>194</sup>: Ի տարբերություն «Մադդուվատտասի մեղանշանքի», այստեղ համոզես է գալիս ոչ թե «ախիսիացի»՝ առանց տիտղոսների, այլ «Ախիսիավայի արքան»: Բացի այդ, նշվում է, որ Ախիսիավայի(ը) տիրապետության տակ էին գտնվում ինչ-որ կղզիներ:

Վերոհիշյալ իրադարձությունը վկայում է այն մասին, որ նախքան Արցավայի ապստամբությունը, Միլլավանդան հանդիսացել է խեթական տարածք: Ախիսիավայի փորձը վերահսկողություն հաստատելու քաղաքի վրա



անհաջողությամբ է ավարտվել:

**Մուվատալլիս II.** Այս արքայի տեքստերում Ախխիյավան անվանապես չի հիշվում, սակայն դրանցից երկուսը՝ «Մանապա-Թարխունտասի նամակը»<sup>195</sup> և «Ալաքսանդրոսի դաշնագիրը»<sup>196</sup> հստակ տեղեկություններ են հաղորդում արևմտյան Փոքր Ասիայում Ախխիյավայի կողմից հովանավորվող հակախեթական ելույթների մասին: Դրանցից առաջինը Սեխա գետի երկրի արքայի՝ Մանապա-Թարխունտասի նամակն է խեթական արքային:

«Նամակի» թվագրումը Մուվատալլիսի շրջանով լուրջ բանավեճի առարկա է: Նրանք, ովքեր այս տեքստը թվագրում են Խաթթուսիլիս III-ի ժամանակով<sup>197</sup>, կարևոր փաստարկ են համարում այնտեղ Պիյամարադուսի և Ատպասի հիշատակությունը, կապված այս անձանց հակախեթական գործունեության հետ, որը հայտնի է Խաթթուսիլիսի կողմից Ախխիյավայի արքային հղված «Տավազալավասի նամակից» (տես ստորև):

«Նամակի» թվագրումը Մուվատալլիսի շրջանով հենվում է Թուդխալիյաս IV-ի և Ամուրրուի արքա Սաուսգամուվայի միջև կնքված դաշնագրի այն հատվածի վրա, ըստ որի Մանապա-Թարխունտասի որդի Մաստուրիսին (Սեխայի հաջորդ արքան) Մուվատալլիսն է ամուսնացրել իր քրոջ՝ Maššana-IR-iš-ի հետ<sup>198</sup>: Այս երկրորդ ենթադրության օգտին է վկայում նաև տեքստի մեկ այլ հատված, ըստ որի Մաստուրիսը Ուրխի-Թեշուբի և Խաթթուսիլիսի միջև ընթացած գահակալական պայքարի ժամանակ հարել է վերջինին<sup>199</sup>: Սրանից կարծես հետևում է, որ նշված ժամանակաշրջանում (մոտավորապես 1272-1265 թթ.) Մաստուրիսն արդեն փոխարինել էր հորը Սեխայի գահին: «Նամակի» վաղ թվագրման օգտին են վկայում, թերևս, որոշ այլ փաստարկներ նս<sup>200</sup>:

«Նամակի» տեքստի՝ մեզ հետաքրքրող հատվածը բավական տուժած է, այդ իսկ պատճառով շարադրենք դրա համառոտ բովանդակությունը:

Սեխայի արքան հայտնում է ո՞նց Պիյամարադուսի կողմից Վիլուսայի, Լաքսայի (Լեսբոս) և Սեխայի (գուցե նաև՝ Միրայի) վրա ձեռնարկած հարձակումների մասին: Ասվում է նաև, որ Պիյամարադուսը Մանապա-Թարխունտասին դրել է Ատպասի ենթակայության տակ: Այնուհետև, Սեխայի արքայի բոլոր ստորադրյալները, ինչպես նաև խեթական արքայի ենթակաները արևմուտքում լեզու են գտել Պիյամարադուսի հետ:

Այս տեքստից բխող ենթադրությունների և Պիյամարադուս-Ատպաս գույզի գործունեության մասին հաջորդ ենթաբաժնում:

**Խաթթուսիլիս III.** Ախխիյավան հիշատակվում է Խաթթուսիլիսի կողմից Ախխիյավայի արքային հղված «Տավազալավասի նամակում»<sup>201</sup>: Ներկայացնենք մի հատված.

*«Բայց երբ [իմ եղբոր լրաբերը] ժամանեց իմ ճամբար, նա ինձ [ողջույն] չբերեց և [չբերեց] ընծաներ, բայց խոսեց [այսպես]. «Նա (Ախխիյավայի արքան - Ա.Բ.) գրել է Ատպասին (ասելով). «Պիյամարադուսին դիր Խաթթիի արքայի ենթակայության տակ»: Այնժամ ես գնացի [ղեպի] Միլլավանդա ...: Բայց Պիյամարադուսը նավով փախավ: Ավայանասը և Ատպասը լսեցին իմ*

մեղադրանքները, որ ունեի նրա (Պիյամարադուսի - Ա.Ք.) դեմ: Այժմ, քանի որ նա նրանց (Ավայանասի և Սուպասի - Ա.Ք.) հոգեհայրն է, ինչու են նրանք քաջցնում դեպքը: Ես նրանցից երդում վերցրի, և այդպիսով նրանք պիտի քեզ ճշմարտությունն ասեն»<sup>202</sup>:

Այնուհետև տեքստում խոսվում է այն մասին, որ Ախխիյավան շարունակաբար հովանավորել է հաթթուսիլիսի երկիրն ասպատակող Պիյամարադուսին, իսկ երբ խեթական փորձել է պատժել իրենից կախյալ այդ անձնավորությանը, վերջինս ամեն անգամ ապաստան է գտել Ախխիյավայում: Խաթթուսիլիսը ձգտում է համոզել Ախխիյավայի արքային, որպեսզի նա խաթթի վերադարձնի Պիյամարադուսին:

Փորձենք ի մի բերել Մուվատալլիս II-ի և խաթթուսիլիս III-ի օրոք արևմուտքում ստեղծված քաղաքական իրավիճակը:

- 1) Մուվատալլիսի կառավարման շրջանում, հնարավոր է, խեթա-եգիպտական պատերազմի նախօրեին կամ նույնիսկ քիչ անց, արևմտյան Փոքր Ասիայում նախկինում խեթերից կախյալ ինչ-որ կառավարիչ՝ Պիյամարադուսը, քայքայիչ գործունեություն է ծավալել, հարձակումներ գործելով խեթապատակ Վիլուսայի, Սեխայի (և Միրայի)՝ վրա: Պիյամարադուսը և նրա հոգեզավակները ախխիյավցիներ չէին, այլ տեղական կառավարիչներ, որոնք ակնհայտորեն վայելում էին Ախխիյավայի արքայի հովանավորությունը: Սեխան կախման մեջ էր դրվել Պիյամարադուսի հոգեզավակ Սուպասից, որը Միլլավանդայի կառավարիչն էր<sup>203</sup>: Այս իրադարձությունների ընթացքում, օգնություն չստանալով խեթական արքայից, Մանապա-Ձարխունտասը ստիպված էր եղել ապաստան գտնել խաթթիում, լքելով իր երկիրը. նույն Մուվատալլիսի կամ, ավելի հավանական է, Ուրխի-Ձեշուբի օրոք նա իր որդու՝ Մաստուրիսի հետ վերադարձել էր Սեխա<sup>204</sup>:
- 2) խաթթուսիլիս III-ը փորձում է համաձայնության գալ Ախխիյավայի արքայի հետ՝ Պիյամարադուսի հարցում: Նա պատրաստ է նույնիսկ ներել վերջինիս և տիրույթներ տրամադրել, ընդ որում հաշվի առնելով Պիյամարադուսի ցանկությունը<sup>205</sup>:
- 3) Այնուամենայնիվ, խաթթուսիլիսը պասսիվ դիտորդի դերում չէ: Նա բազմիցս արշավանքներ է ձեռնարկում դեպի արևմուտք, ստիպելով Պիյամարադուսին հեռանալու Ախխիյավա, իսկ «Նամակը» գրելու նախօրեին նույնիսկ մուտք է գործում վերջինիս գլխավոր հենակետ Միլլավանդա, հավանաբար, ոչ Սուպասի կամ Ախխիյավայի արքայի հրավերով:
- 4) Ախխիյավայի արքային խաթթուսիլիսը դիմում է որպես հավասար կարգավիճակ ունեցող կառավարչի («Իմ եղբայր»): Այս պարագան անհնար է անտեսել Ախխիյավայի տեղայնացման հարցում: Նման դիմելածնը վկայված է խաթթիի արքաների պաշտոնական գրագրության մեջ միայն չորս երկրների արքաների առնչությամբ՝ Եգիպ-

տոսի, Ասորեստանի, Միտաննիի և Բաբելոնի<sup>206</sup>:

Արևմտյան Փոքր Ասիայում Մուվատալլիս II-ի և Խաթթուսիլիս III-ի օրոք Ախիսիյավայի կողմից հովանավորվող հակախեթթական անջատողական ուժերի գործունեությունը, այնուամենայնիվ, չի կարելի գերազնահատել, ենթադրելով այստեղ խեթթական տիրապետության հիմքերի սասանում<sup>207</sup>: Այստեղ Պիյամարադուսի և այլոց ժամանակավոր հաջողությունները ավելի շուտ պիտի բացատրել նշված ժամանակահատվածի ընթացքում նախ «Եզիպտական խնդրի» լուծման անհրաժեշտությամբ (Քաղեշի ճակատամարտը և խեթթա-եզիպտական դաշնագիրը), այնուհետև Ուրխի-Ձեշուբի և Խաթթուսիլիսի գահակալական պայքարով: Մի որոշ ժամանակ Խաթթուսասի կառավարիչները կարող էին ստիպողաբար թուլացնել հսկողությունը արևմտյան ծայրագավառային տիրույթների նկատմամբ: Ինչպես կտեսնենք ստորև, Խաթթուսիլիսի հաջորդի՝ Թուղխալիյաս IV-ի օրոք արևմուտքում իրավիճակը զգալիորեն փոխվում է հոգուտ Խաթթիի:

**Թուղխալիյաս IV.** Այս արքայի մի տեքստում<sup>208</sup> Ախիսիյավան կրկին անգամ հանդես է գալիս որպես քաղաքական գործոն Փոքր Ասիայի արևմուտքում:

*«Այսպես է ատում քաբարնա Թուղխալիյասը, Մեծ Արյքան. Սեխա գետի երկիրը երկրորդ անգամ մեղանչեց: Նրանք ասացին(՝). «Անցյալում(՝) Արևի (խեթթական արքայի - Ա.Ք.) նապա(՝)ալյալը չի գրավել մեզ գեների ուժով: [Արևի պալը] նվաճեց մեզ, բայց մենք ջնջեցինք(՝) նրա համար մեղանչանքը»: [Այնուհետև Թարխունարադուն] պատերազմ ծավալեց և հույսը դրեց Ախիսիյավայի արքայի վրա: [Եվ] նա ապաստանեց [Բազեի լեռան վրա]: Բայց ես, Մեծ արքան, ընթացա [և ...] և գրավեցի Բազեի լեռը: Եվ 500 ծիեր [և ... զինվորներ] ես բերեցի [տուն Խաթթի], և Թարխունարադուն իր կանանց, [երեխաների, նրա բարիքների(՝)...] հետ ես ուղարկեցի [...] և տարա Արիննա՝ Արևի աստվածուհու քաղաքը: [Երբեք], Լաբարնայի [օրերից սկսած], ոչ մի Մեծ արքա չէր գնացել [այդ] երկիրը: Ես Մուվավալլիի ժառանգին [...] Սեխա գետի երկրում] արքա դարձրի [...]:»:*

Ի տարբերություն Խաթթուսիլիս III-ի օրոք տիրող իրավիճակի, այժմ արդեն խեթթական արքան չի փորձում որևէ բանակցություն վարել իր կախյալ կառավարչի կամ նրա հովանավոր Ախիսիյավայի արքայի հետ: Տեքստը թույլ է տալիս հանգելու մի շարք հետևությունների.

- 1) Հավանաբար, Սեխայի խեթթամետ արքա Մանապա-Թարխունտասի իշխանությունը չէր ավարտվել գահազրկմամբ: Համենայնդեպս, դեռ Թուղխալիյաս IV-ի կառավարման սկզբին Սեխայի արքան Մաստուրիսն էր՝ Մանապա-Թարխունտասի որդին<sup>209</sup>: Սա վկայում է հոգուտ այն բանի, որ Պիյամարադուսի գործունեության ընթացքում Սեխան պահպանել էր Խաթթիի նկատմամբ իր հավատարմությունը:
- 2) Թուղխալիյասի հարձակման արդյունքում Սեխան պարտվել էր, իսկ Թարխունարադուն գերվել և ուղարկվել էր Խաթթի: Ախիսիյավայի

- արքան չէր փորձել կամ չէր հասցրել օգնել իր դաշնակցին<sup>210</sup>:
- 3) Թարխունարադուի կողմից Սեխայում իշխանության անցնելը պիտի տեղի ունենար Թուղխալիյասի կառավարման շրջանում, անկասկած, ոչ առաջին տարիներին, քանի որ «Բրոնզե տախտակում» (տես Գլուխ 1.2) Սեխայի արքան դեռ Մաստուրիսն էր: Թարխունարադուի գահակալումը պիտի տեղի ունենար Մաստուրիսից հետո: Եթե նկատի ունենանք, որ Մաստուրիսը անժառանգ էր<sup>211</sup>, ապա կարելի է ենթադրել, որ Թուղխալիյասի և Կուրունտայի միջև կնքված պայմանագրից որոշ ժամանակ անց, օգտվելով գահաժառանգի քաջակալությունից և հենվելով Ախխիյավայի աջակցության վրա, Սեխայի անջատողական ուժերը կարող էին հեղաշրջում կազմակերպել:
  - 4) Այս և Թուղխալիյասի մեկ այլ տեքստի՝ «Միլավատայի նամակի» (տես Գլուխ 1.2) նյութի համադրումը թույլ է տալիս ենթադրելու, որ ա) խեթերին հաջողվել էր անցնել վճռական հարձակման արևմուտքում, որի ընթացքում վերահպատակեցվել էին Սեխան, Վիլուսան և Միլավանդան, բ) Ախխիյավայի արքան անկարող էր եղել միջամտելու փոքրասիական գործերին<sup>212</sup>:

**ԱՆՍԻՅԱՎԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՋՐ ԱՍԻԱՅՈՒՄ  
ՊԱՏՄԱ-ՂԱԳԻՏԱԿԱՆ ԵՏՆԱԽՈՐՔ**

Այժմ փորձենք ի մի բերել արևմտյան Փոքր Ասիայում Ախխիյավայի խաղաղած դերը ըստ խեթական աղբյուրների, առանձնացնելով խեթա-ախխիյավայան փոխհարաբերությունների փուլերը: Վերլուծության արդյունքների համադրումը Փոքր Ասիայում միկենյան մշակութային աշխարհի ներկայությունը հավաստող հնագիտական նյութի նման պարբերացման արդյունքների հետ, թվում է, կարող է զգալիորեն մոտեցնել Ախխիյավա-միկենյան Դունաստան և ՏՊ խնդիրների լուծումը:

Խեթական աղբյուրները թույլ են տալիս ներկայացնելու Փոքր Ասիայում Ախխիյավայի վարած քաղաքականության հետևյալ փուլերը.

- 1) **Ա.ք.ա.XV դ. երկրորդ կես** - «ախխիյացի» Ատտար(իս)սիյասի հարձակումը Փոքր Ասիայի Ցիպլասալ երկրի խեթահպատակ կառավարիչ Մադուվատտասի վրա, ճակատամարտը խեթական զորքի դեմ, Ատտար(իս)սիյասի ծովային արշավանքը դեպի Ալասիա:
- 2) **Ա.ք.ա.XIV դ.վերջին քառորդ** - Ախխիյավայի և արևմտյան Փոքր Ասիայում խաթթիի զլխավոր հակառակորդ Արցավայի դաշինքը, Միլավանդա-Միլեթի նկատմամբ Ախխիյավայի ժամանակավոր վերահսկողության հաստատումը մինչև Մուրսիլիսի կողմից քաղաքի նվաճումը:
- 3) **Ա.ք.ա.XIII դ. 80-60-ական թվականներ (խաթթուսիլիս III)** - Ախխիյավայի քաղաքական ակտիվության բարձրակետը, որն արտահայտվում էր արևմտյան Փոքր Ասիայում գործող հակախեթական

տարրերի հովանավորությանը և վերջիններիս (Պիյամարադուս, Աուպաս, Ավայանաս) միջոցով այս տարածաշրջանի խեթամետ երկրների նվաճումով, Ախիսիյավայի և Խաթթիի փոխհարաբերությունների աննախադեպ լարում, խեթական զորքերի մի շարք փորձեր շտկելու իրավիճակը արևմուտքում, Վիլուսայի և Լացպայի գրավում Պիյամարադուսի կողմից<sup>213</sup>: Առաջին անգամ Ախիսիյավայի արքան Խաթթուսիլիսի կողմից դիտվում է որպես իրեն հավասար կարգավիճակ ունեցող արքա:

- 4) **Մ.թ.ա.XIII դ. 50-40-ական թվականներ** - Փոքր Ասիայում Ախիսիյավայի քաղաքական ակտիվության աստիճանական անկում, որի ուղղակի արտահայտությունը Թուդիսալիյաս IV-ի հաջող ծեռնարկումներն էին Ախիսիյավայի գլխավոր հենակետ Միլավաճնդայի հարցում, ինչպես նաև Սեխայի ախիսիյավամետ արքա Թարխոււււա-րադուի գերեվարումը և այստեղ խեթամետ արքայի՝ Մուվավալվիի որդու գահակալումը, Թուդիսալիյասի ծրագիրը Վիլուսայի գահին վերահաստատելու ինչ-ինչ պատճառներով իր երկրից վտարված Վալմուլին, Ախիսիյավայի տնտեսական շրջափակումը («Սաուսգամուվայի դաշնագիրը»):

Իսկ այժմ անդրադառնանք խնդրի հնագիտական ասպեկտին:

- 1) **Մ.թ.ա.XV դ.-XIII դ. սկիզբ** - Միկենյան ծագման բազմաթիվ իրերի մուտք արևմտյան Փոքր Ասիայի ծովափնյա շրջաններ և հարակից կղզիներ, միկենյան բնակչության առկայություն որոշ բնակավայրերում (Միլեթ, Պիտանե, Կլագոմենե): Այս ժամանակահատվածը ընկնում է LH II և LH IIIA փուլի մեջ: Հայտնի է, որ միկենյան արտաքին առևտուրը Մերձավոր Արևելքի երկրների հետ առավել բարձր զարգացման է հասել հենց այս շրջանում. նույն պատկերն է տիրում նաև Լեանտում:
- 2) **Մ.թ.ա.XIII դ. երկրորդ կես** - Որոշ վայրերում այս փուլը սկսվում է ավելի վաղ: Նկատվում է ներմուծման կտրուկ անկում, որի պատճառները դեռևս այնքան էլ պարզ չեն: Ոմանք դա բացատրում են միկենյան հասարակության ներսում սկսված տնտեսական համակարգի և քաղաքական կառույցի խաղիվմամբ<sup>214</sup>, մյուսները լեանտյան մրցակիցների (Կիպրոս, Ուզարիտ, կիլիկյան քաղաքներ) հակազդեցությանը<sup>215</sup>: Այս երևույթի ակնառու արտացոլումներ պիտի համարել XIII դ. երկրորդ կեսին Պելոպոնեսում և որոշ այլ շրջաններում վկայված քաղաքական անկայունության նշանները, արևելյան Էգեիդայում պարզորոշ նկատվող բնակավայրերի և թաղումների բանակի նվազումն ու բնակչության տեղաշարժերը<sup>216</sup>: Այս ժամանակաշրջանում լեանտյան բնակավայրերում հայտնաբերված միկենյան IIIB խեցեղենը արդեն ներմուծովի չէ, այլ պատրաստված է տեղում՝ տեղական կավից: Այսինքն, կապը մայրցամաքային Հունաստանի և Մերձավոր Արևելքի երկրների հետ էականորեն փոխվում է:

Եվ այսպես, հնագիտական նյութը հանգեցնում է միլենյան աշխարհի և արևմտյան Փոքր Ասիայի երկրների փոխհարաբերություններում տրամագծորեն հակառակ երկու փուլերի գոյության մասին եզրակացության. 1) սերտ փոխհարաբերություններ (XV-XIII դ. սկիզբ), 2) կապերի կտրուկ նվազում կամ նույնիսկ խզում (XIII դ. երկրորդ կես):

Անհնար է չնկատել, որ Ախիսիյավայի վերաբերյալ խեթական աղբյուրների հաղորդած տեղեկությունները ընդհանուր առմամբ ժամանակագրորեն լիովին համապատասխանում են միլենյան աշխարհի արտաքին կապերի՝ հնագիտորեն վերականգնվող իրավիճակին: Հազիվ թե հնարավոր լինի վիճարկել վերոհիշյալ փուլերի առկայությունը և համապատասխանությունը:

Փորձենք խնդիրը ներկայացնել հակառակ կողմից: Ենթադրենք, որ Ախիսիյավան միլենյան կենտրոններից որևէ մեկը չէ (ասենք՝ հեզեմոնը), այլ Հյուսիսային Բալկաններում կամ Էգեյան ծովի արևելքում (կղզիներում կամ Փոքր Ասիայի արևմտյան ափին) գտնվող ինչ-որ քաղաքական միավոր: Այդ դեպքում անհրաժեշտ կլինի 1) հայտնաբերել այդ պետության մշակույթի հուշարձանները Փոքր Ասիայում, առաջին հերթին՝ Միլեթում<sup>217</sup> (եթե Ախիսիյավան գտնվեր Բալկաններում՝ Թրակիայում)<sup>218</sup>, 2) արևմտյան Փոքր Ասիայում տեղադրել մի այնպիսի հզոր պետություն, որը կարող էր երկար տասնամյակների ընթացքում խեթերի հետ վիճարկել տարածաշրջանի նկատմամբ վերահսկողության առաջնությունը, մի պահ նույնիսկ Ախիսիյավայի արքան պիտի խեթական արքային հավասար կարգավիճակ ունենար, 3) բացատրել Ախիսիյավայի արքայի ֆիզիկական բացակայությունը Փոքր Ասիայում խեթա-ախիսիյավայան ռազմական և դիվանագիտական փոխառնությունների ընթացքում<sup>219</sup>, և, վերջապես, 4) ավելի հիմնավոր փաստարկներով ժխտել Ախիսիյավա և հունական Achai(w)oi տերմինների ակնհայտ նմանությունը<sup>220</sup>:

Եզրափակելով Ախիսիյավա - միլենյան Հունաստան հարաբերակցության բաժինը, անհրաժեշտ է նշել հետևյալը: Չնայած այսօր գոյություն ունեցող տվյալները, թվում է, վկայում են Ախիսիյավան Հարավային Բալկաններում տեղադրելու օգտին, սակայն խնդիրը դրանով չի կարելի լուծված համարել: Խոսքը այդ տերմինի տակ հասկացվող էթնոքաղաքական միավորի ճշգրտման մասին է: Կարող էր արդյոք մայրցամաքային Հունաստանում գոյություն ունենալ ռազմաքաղաքական զգալի ներուժ ունեցող պետություն, որն ի վիճակի լիներ շուրջ մեկ դար (XIV դ. կեսերից մինչև XIII դ. կեսերը) ժամանակ առ ժամանակ հաջողությամբ միջամտելու փոքրասիական գործերին:

Միլենյան աշխարհի քաղաքական կառուցվածքի վերաբերյալ գերիշխում է այն տեսակետը, որ խոսք չի կարող լինել միասնական պետականության մասին<sup>221</sup>: Առկա բազմաբնույթ աղբյուրները (Հոմերոսից մինչև Հունաստանի առանձնահատուկ բնակլիմայական պայմանները) ենթադրում են բազմաթիվ մանր, ինքնուրույն քաղաքական միավորների գոյություն: Վերջիններս կարող էին ժամանակ առ ժամանակ, արտաքին վտանգի կամ ռազմական և տնտեսական մեծ ձեռնարկումների դեպքում ստեղծել ժամանա-

կավոր անկայուն միություններ, միավորվելով այնպիսի պետությունների շուրջը, ինչպիսին Դոմերոսի նկարագրած Միկենքն էր: Բացի նման խոշոր միությունից, ենթադրվում է քիչ թե շատ կայուն, ավելի փոքր միությունների առկայություն, ինչպես Արգոլիդան (Միկենք կենտրոնով), Բեոտիան (Թեբե կենտրոնով), Ատտիկան (Աթենք կենտրոնով)<sup>222</sup>: Ասվածը բույլ է տալիս ենթադրելու նման դաշինքի գոյություն Փոքր Ասիայում Ախիյավայի ակտիվության շրջանում. հազիվ թե սահմանափակ ռեսուրսներ ունեցող միկենյան որևէ կենտրոն ի վիճակի լիներ նման հեռահար ծեռնարկումներ կազմակերպելու: Խաբբուսիլիս III-ի օրոք Ախիյավայի արքայի բարձր կարգավիճակը ինքնին արդեն ենթադրում է Միկենքի կամ մեկ այլ միկենյան կենտրոնի բավական երկարատև գերակայություն մի շարք մայրցամաքային իշխանությունների և որոշ էգեյան կղզիների նկատմամբ:

Այժմ միկենամերձ տեսության մյուս փաստարկների մասին:

#### *ՎԻՆՈՒՍԱ-ԻՒՆՈՆ ԵՎ ՏԱՐՈՒՍԱ-ՏՐՈՅԱ ԽՆԴԻՐԸ*

ՏՊ-ի հավաստիության հարցը որոշակիորեն կախված է հոմերոսյան Տրոյա-Իլիոնի՝ խեթական աղբյուրներում վկայված լինել-չլինելու հանգամանքից:

Տրոյա-Իլիոն գույզի խեթական տարբերակների գոյությունը առաջարկվել է դեռ մեր դարի 20-ական րվականներին: Է.Ֆոռերի ենթադրությունը խեթական Տարուխսայի և Տրոյայի, ինչպես նաև խեթական Վիլուսա/Վիլուսիյայի նույնության մասին Իլիոնի հետ ընդունվեց շատերի կողմից<sup>223</sup>: Այս համադրումները լեզվաբանական որևէ բարդություն չեն հարուցում: Այլ է սակայն սրանց տեղադրման և հարաբերակցության խնդիրը:

Դոմերոսը ախայացիների հակառակորդ քաղաքն անվանում է մերք Տրոյա, մերթ Իլիոն: Եվ քանի որ նույն քաղաքը չէր կարող միաժամանակ երկու անուն կրել, սովորաբար ենթադրվում է, որ այս անվանումներից մեկը նշանակել է երկիրը, մյուսը՝ դրա գլխավոր քաղաքը (Տրոյան՝ երկիրը, Իլիոնը՝ քաղաքը)<sup>224</sup>: Իսկ ինչպիսին է խեթական Վիլուսա-Տարուխսա գույզի հարաբերակցությունը:

Թուդիսալիյաս II-ի տարեգրություններում<sup>225</sup> այս երկրները հանդես են գալիս արևմտյան Փոքր Ասիայի 22 երկրներից բաղկացած Ասուվա միության կազմում: Ընդ որում Վիլուսան և Տարուխսան եզրափակում են ցուցակը: Եվ քանի որ այդ ցուցակի մասնակիորեն վնասված առաջին երկրանունը՝ [...]սկա-ն վերականգնում է [L]ukka<sup>226</sup> - պատմական Լիկիա կամ Լիկատնիա<sup>227</sup>, ապա վերոհիշյալ 22 երկրները տեղադրվում են արևմտյան Փոքր Ասիայում՝ հարավից հյուսիս: Այսպիսով, մեծ հավանականություն կա, որ Վիլուսան և Տարուխսան կարող էին գտնվել Տրոադայում<sup>228</sup>: Խնդրի բարդությունն այն է, որ երկու անվանումները հանդես են գալիս «երկիր» դետերմինատիվով, այսինքն, դրանք խեթերի կողմից դիտվել են որպես առանձին երկրներ:

Արդյոք սա գրչի սխալի արդյունք է, որը կարող էր երկու անվանումները դիտել որպես առանձին երկրներ, թե իսկապես ինչ-որ տեղ հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայում գոյություն են ունեցել միմյանց հարևան երկու երկրներ, որոնց անունները դարեր հետո միավորվել են ավանդության մեջ որպես միևնույն քաղաքական միավորի անվանումներ:

Հարկ է նշել, որ Թուդխաշիյաս II-ից հետո Տարուխսան այլևս չի հիշատակվում<sup>229</sup>, մի փաստ, որը զուցե հնարավոր է քացատրել ինչպես 1) Տարուխսայի՝ պատմական ասպարեզից հեռանալով (միավորում Վիլուսայի կամ մեկ այլ քաղաքական միավորի հետ), այնպես էլ 2) խեթական արքյուրների՝ տվյալ տարածքի վերաբերյալ եղած նյութի սակավությամբ: Առաջին տարբերակի դեպքում կարող է որոշակիորեն պարզվել հունական ավանդության մեջ երկրին տրված երկակի անվան առկայության պատճառը<sup>230</sup>:

Ինչպես պարզ է դառնում հոմերոսյան քաղաքի երկու ձևերի համար վիճարկվող խեթական նախատիպերի մասին պատմող արքյուրներից, առայժմ դրանց նույնության օգտին են վկայում 1) այդ երկու անունների նմանությունը, 2) Աստուվայի ֆեդերացիայի՝ հարավից հյուսիս տեղադրումը (Լուկկան հարավում, Տարուխսան՝ հյուսիսում), 3) Մուվատալլիս II-ի տեքստում որպես Վիլուսայի արքա հիշատակվող Ալաքսանդրոսի անվան և Տրոյայի արքա Պրիամոսի որդի Պարիսի երկրորդ՝ Ալեքսանդրոս անվան միջև եղած ակնհայտ նմանությունը: Այդ նույնության դեմ է վկայում, փաստորեն, միայն Վիլուսան և Տարուխսան հիշատակող խեթական տեքստերի հազորդած տեղեկությունների սակավությունը, որը թույլ չի տալիս ճշգրիտ տեղայնացնելու դրանք:

Ըսդ այդմ, կարելի է եզրակացնել, որ ներկայումս ավելի նպատակահարմար է ընդունելու հոմերոսյան և խեթական անվանումների միջև առաջարկվող կապը և տեղադրությունը Տրոադայում, քան ժխտել փաստական նյութի անբավարար պատճառաբանությամբ, ՏՊ համարելով ոչ պատմական, զուտ ժողովրդական ստեղծագործության միջոցով մեզ հասած մտացածին իրադարձություն:

#### ԷԳԵՅՍԸ ԾՈՎԻ ՓՍՍՏԱՐԿԸ

Այս փաստարկը գրեթե լռելյայն, քսիփոմատիկ եղանակով առկա է շատ մասնագետների մոտ (*argumentum ex silentio*)<sup>231</sup>: Իսկապես էգեյան ծովը մայրցամաքային Դունաստանը և Փոքր Ասիան միմյանցից տարանջատող այրալիսի խոշոր բնական արգելք էր, որպեսզի միկենցիները չկարողանային IIIA և IIIB փուլերի ընթացքում քաղաքական ակտիվություն ցուցաբերել արևմտյան Փոքր Ասիայում:

Ախիտյավայի խնդրին առնչվող ուսումնասիրություններում որոշակիորեն նկատվում է հոմերոսյան պոեմներում միկենյան աշխարհի քաղաքական կառուցվածքի վերաբերյալ պահպանված նյութի ազդեցությունը, ինչպես նաև XV-XIII դարերի ախայան հասարակությունը ավելի ուշ շրջանի՝ VIII-VI դարերի հունական «մեծ գաղութացման» ետնախորքի վրա դիտելու միտու-



մը: Բացի այդ, ըստ այնպիսի մի հեղինակավոր պատմիչի, ինչպիսին էր Թուկիդիդեսը, միկենյան դարաշրջանում Գունաստանը իրենից ներկայացրել է միմյանցից անկախ կամ կիսանկախ մեծ թվով քաղաքների ամբողջություն, որը միայն ՏՊ ժամանակ է միավորվել<sup>232</sup>: Ուրեմն ինչ հեռավոր արշավանքների մասին է խոսքը, երբ Միկենցի արքայի իշխանությունը հազիվ տարածվում էր Արգոլիդայի մի մասի վրա: Իսկ «միկենյան» ծագման խեցեղենի և այլ իրերի վիթխարի աշխարհագրությունը Փոքր Ասիայից մինչև Լևանտ և Եգիպտոս կարելի է հեշտությամբ բացատրել որպես առանձին քաղաք-պետությունների ինքնուրույն առևտրական կամ այլ ձեռնարկումներ, որոնք երբեմն կարող էին ուղեկցվել առևտրական ֆակտորիաների հիմնադրումով այս կամ այն վայրում (ավելի ուշ շրջանի ապոլիսիայի նախատիպը)։ Վերջին դեպքում հնարավոր էին նաև ռազմական քախումներ տեղական բնակչության կամ քաղաքական միավորների հետ:

Քննարկվող փաստարկի հիմքում ոչ մի իրական փաստ չկա: Այն, ինչ այսօր հայտնի է մայրցամաքային Գունաստանի միկենյան կենտրոնների արտաքին առևտրական լայն գործունեության վերաբերյալ, որը լրացվում է Սիսիյավայի մասին խեթական տեքստերի տվյալներով, հոմերոսյան պոեմների և Թուկիդիդեսի հաղորդումներով, միկենյան քաղաքների թեկուզ ժամանակավոր և անկայուն միությունների գոյության հնարավորության առումով, կարծում ենք, բավական է ենթադրելու, որ Էգեյան ծովը այնպիսի անհաղթահարելի արգելք չէր կարող լինել միկենյան աշխարհ-Փոքր Ասիա փոխհարաբերություններում, ինչպես ենթադրվում է:

#### *ՏՐՈՅԱ ՎՈՒՆԱՆԸ ՄԻԿԵՆՅԱՆ ԱՆՍՏՈՒՄԻՆԵՐԻ ԱՆՍՏՈՒՄԻՆԵՐԻ ԼԻՆԵԼԸ*

Այս փաստարկը պատկանում է ավելի շուտ կողմնակալ մտտեցման բնագավառին, քան որևէ լուրջ հիմնավորում ունի: Դրա հիմքը Տրոյա ՎՈՒՆում հայտնվող քրակյան ծագման Coarse Ware-ն է, որը դեռ 1975 թ. Ջ.Ռուտտերը դիտում էր որպես մայրցամաքային Գունաստանի՝ LH III C փուլի սկզբով թվագրվող «բարբարոսական» խեցեղենի զուգահեռ<sup>233</sup>: Նրա կարծիքով, նշված երկու տարածաշրջաններում այս խեցեղենի հայտնվելը վկայում է Գուսիսային Բալկաններից միաժամանակ դեպի Տրոյա և Գարավային Գունաստան ընթացած էթնական տեղաշարժի հետևանք: Հենվելով Ջ.Ռուտտերի ենթադրության վրա, Դ. Իսթըրը Տրոյա ՎՈՒՆ-ն և միկենյան կենտրոնները կործանողներին փնտրում է Բալկանյան Թրակիայում<sup>234</sup>:

Հարկ է նշել, որ Coarse Ware-ի և «բարբարոսական» խեցեղենի ազդակցության մասին տեսակետը այժմ միայն նախնական ենթադրություն է<sup>235</sup>, չխոսելով արդեն երկու վայրերում դրանց հայտնվելու ժամանակի և եղանակի անորոշության մասին: Եթե Տրոյա ՎՈՒՆ-ի կործանման ժամանակը և եղանակը որոշ չափով հնարավոր է վերականգնել (տես վերը), ապա նույնը չի կարելի ասել միկենյան կենտրոնների մասին (Գլուխ 2.2):

Տրոյա ՎՈՒՆ-ի ավերմանը միկենցիների մասնակից լինել-չլինելու խնդիրը, բնականաբար, կապված է ՏՊ թվագրման հետ: Քանի որ այդ խնդիրը ա-

ռայժմ հնարավոր չէ վերջնականորեն հիմնավորել, ապա, թվում է, կարելի է հարցին մոտենալ այլ տեսանկյունից:

Ենթադրենք, որ ՏՊ կոչվող իրադարձությունը տեղի է ունեցել միլենցիների կողմից Տրոյա VII-ի ավերման ենթատեքստում, այսինքն, XIII դ. առաջին կեսի ընթացքում: Կարող էր արդյոք դրանից հետո տեղ գտնել միլենցիների մեկ այլ բախում Տրոադայի տարածքում գտնվող քաղաքական միավորի հետ:

Չնագիտորեն, իհարկե, մեծ հավանականություն կա, որ միլենցիներն անմասնակից պիտի լինեին Տրոյա VIIa-ի ավերմանը. նույնը կարելի է պնդել նաև Տրոյա VIIb1 : b2 անցման փուլի մասին: Տրոյա VIIb-ից հայտնաբերված LH IIIC խեցեղենի ութ բեկորների առկայությունը<sup>236</sup> չի կարող եղանակ տեղծել, դրանք կամ պատահաբար են հայտնվել նախորդ շերտից, կամ կարող էին փոխանակման միջոցով ընկնել Տրոյա: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Տրոյա VIIa-ի ավերման և միլենցյան կենտրոնների անկման միջև պարզորոշ ժամանակազրական կապը, նման հնարավորություն ենթադրել: Դրա օգտին են վկայում վերը բերված փաստարկները (տես «Չոմերոսյան Տրոյայի տեղայնացումը» բաժինը): Թվում է, որ ՏՊ հավաստիության խնդիրը չպիտի անպայմանորեն կապվի հզոր միլենցյան աշխարհի գոյության հետ: Միլենցիների բախումը Տրոադայի տարածքի բնակչության հետ կարող էր տեղի ունենալ նաև XIII դ. վերջին տասնամյակների ընթացքում:

#### *ՏՐՈՅԱ VIIa-Ի ՄՎԵՐՈՒՄԸ XII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ*

Տրոյա VIIa -ի ավերման թվագրումը XII դ. երկրորդ կեսով (Ք.Պոդցուվայտ և Է.Բլեդով), որ հիմնվում է այս հնագետների կողմից Կ. Բլեզենի՝ Տրոյայում հայտնաբերված խեցեղենի վերաթվագրման վրա<sup>237</sup>, չի կիսվում հնագետների ճնշող մասի կողմից: Այդ իսկ պատճառով սույն փաստարկը, մինչև լրացուցիչ և հիմնավոր փաստական նյութի կուտակումը, անհամոզիչ է թվում:

#### *«ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐՎԱԾՆԸ» ԵՎ ԻՃՆԻԿՎԱԿԱՆ ՏԵՂԱՄՈՒԾԵՐԸ*

Այսպիսով, հաշվի առնելով նախորդ ենթաբաժիններում քննարկված խնդիրները, հնարավոր ենք համարում հանրագումարի բերել ՏՊ ժամանակի և բնույթի, դրանում արտաքին գործոնի մասնակցության հարցերը:

Սույն գրավոր և հնագիտական նյութի հիման վրա XIII դ. ընթացքում որոշակիորեն առանձնանում են երկու ժամանակահատվածներ, որոնք կարող են լիովին համապատասխանել հոմերոսյան պոեմներում նկարագրվող ՏՊ-ին: Առաջինը Տրոյա VII-ի ավերումն է XIII դ. 70-80-ական թվականներին, երկրորդը՝ դրանից 1-2 սերունդ անց Տրոյա VIIa-ի ավերումը: Եթե Չոմերոսի պոեմներում իրոք արտացոլված է միլենցյան հույների և Տրոյա-Չիսարլիկի տեղում գոյություն ունեցած քաղաքական միավորի ու նրա դաշնակիցների միջև ընթացած տևական պատերազմը, ապա վերոհիշյալ երկու ժամանա-

կաշրջաններից որևէ մեկը պիտի հիմք ծառայեր դրա համար:

Տրոյա Vի-ի ավերումը լիովին հարմար է որպես ՏՊ նախահիմք, քանի որ 1) առկա է խեթա-ախխիյավյան երկարատև հակամարտությունը արևմտյան Փոքր Ասիայում և հատկապես Վիլուսայի շուրջը, 2) առկա է հզոր Ախխիյավյան (միկենյան աշխարհում գոյություն ունեցած որևէ քաղաքական միություն):

Եշված փաստարկներին անհրաժեշտ է ավելացնել նաև դեռ 1911 թ. նկատված խեթական աղբյուրների Վիլուսայի արքա Ալաքսանդրուսի անվան նույնությունը հոմերոսյան Տրոյայի արքա Պրիամոսի որդու՝ Ալեքսանդրոս-Պարիսի անվան հետ<sup>238</sup>: Մուվատալլիս II-ի և Վիլուսայի արքայի միջև կնքված պայմանագիրը թվագրվում է Քաղեշի ճակատամարտին անմիջապես նախորդող շրջանով, այսինքն, ըստ «ստորին ժամանակագրության», մոտավորապես 1280 թ.: Եթե նկատի ունենանք, որ 1) Պիլամարադուսի գործունեությունը այս տարածաշրջանում պիտի սկսվեր Մուվատալլիսի մահից (1272 թ.) որոշ ժամանակ առաջ<sup>239</sup>, 2) Տրոյա Vի-ի ավերումը թվագրվում է մոտավորապես նույն շրջանով, 3) Հոմերոսի մոտ Ալեքսանդրոս-Պարիսը ՏՊ գլխավոր դրդապատճառն է, ապա դժվար չէ ենթադրել, որ Վիլուսայի Ալաքսանդրուսը պիտի հանդիսանար հոմերոսյան կերպարի նախատիպը:

Տրոյա Vիա-ի ավերումը դժվար է վերագրել միկենյան հույներին, քանի որ դրա օգտին կարող են վկայել միայն 1) անտիկ պատմիչների հաշվարկները, որոնք ՏՊ թվագրում են Տրոյա Vիա-ի ավերման շրջանով, 2) ՏՊ հերոսների մի մասի դեգերումները Արևելյան Միջերկրականում պատերազմից անմիջապես հետո, որը ժամանակագրորեն մոտ է «ծովի ժողովուրդների» տեղաշարժերին: Տրոյա Vիա-ի քելնածության դեմ կարող են վկայել 1) Vիա-ի ավերումից հետո LH IIIC խեցեղենի բացակայությունը, 2) թրակյան ծագման Coarse Ware-ի առկայությունը:

Վերոհիշյալ փաստարկների ճնշման տակ այսօր հնարավոր ենք համարում նախապատվությունը տալու Տրոյա Vի-ին, սակայն մեկ կարևոր վերապահումով: Հնարավոր է, որ Հոմերոսի երկու պոեմները ներկայացնեին միկենյան աշխարհի զարգացման երկու տարբեր՝ հաջորդական փուլերին բնորոշ իրավիճակներ: Առաջին փուլը արևմտյան Փոքր Ասիայում քաղաքական մեծ ակտիվությունն էր, որը արտացոլված է «Իլիականում» (Տրոյա Vի-ի ավերման շրջանը): Երկրորդ փուլը XIII դ. երկրորդ կեսին միկենյան աշխարհի անկման գործընթացն է, որն ուղեկցվել է երկպառակտչական պատերազմներով<sup>240</sup> և մայրցամաքային Հունաստանի զգալի թվով բնակավայրերի ապրճակեցմամբ, այսինքն, արտագաղթով, որի մի ալիքը կարող էր հասնել արևմտյան և հարավային Փոքր Ասիա. այս վերջին իրադարձությունը կարող էր արտացոլվել «Ոդիսականում»:

Վերը ներկայացված պատկերը ստիպում է անմիջական կապ տեսնել Տրոյա Vի-ով նախնորելի ՏՊ-ի թվագրման և դրանից որոշ ժամանակ անց միկենյան աշխարհի վայրընթաց զարգացման միջև: Խեթական տեղության և միկենյան աշխարհի երկարատև հակամարտության կուլմինացիան՝ իր բոլոր դրվագներով իսկապես ի վիճակի էր պահպանվելու արևմտյան Փոքր Ա-

սիայի բնակչության հիշողության մեջ և փոխանցվելու հոնիական հույներին: Վիլուսա-Տրոյայի գրավումը և ձեռքբերված ռազմավարը հազիվ թե լիովին փոխհատուցեին այն վիթխարի կորուստները, որ կրեցին միլենցիները Տրոադայում: Քաղաքը գրավվեց, սակայն Տրոյայի պարիսպների տակ զոհվեց միլենյան զորքի ծաղիկը: Տևական, տարբեր վտանգներով լի վերադարձ, որպեսզի տանը նոր փորձությունների հանդիպեին: Չոմերոսի աղբյուրները լավ էին գիտակցում ՏՊ-ի տեղը ու դերը միլենյան աշխարհի «հերոսական դարաշրջանի» կյանքում. դա «Պյուռոսյան հաղթանակ» էր:

Ահա այսպիսին է ներկայանում ՏՊ-ը առկա աղբյուրների լույսի տակ: Ակնհայտորեն, Տրոյա VII-ի ավերման շրջանում զժվար է կապ գտնել արևմտյան Փոքր Ասիայի և մերձավորարևելյան ճգնաժամի սկզբնավորման միջև: Այդ պահին և դրանից դեռ որոշ ժամանակ անց ոչ Փոքր Ասիայում, ոչ էլ Մերձավոր Արևելքի մյուս տարածաշրջաններում չկան, համեմայնդեպս առայժմ չեն նկատվում ճգնաժամի նշաններ: Ի տարբերություն, միայն, միլենյան աշխարհի: Վերջին հանգամանքը շատ կարևոր է XII դ. ճգնաժամի տեսանկյունից (տես ստորև):

### **ՄԻԿԵՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԸ Մ.Թ.Ա.XIII ԴԱՐՈՒՄ**

Մայրցամաքային Չունաստանի և էգեյան ծովի կղզիների ուշքորոնգեդարյան շրջանի պատմությունը անհամեմատ ավելի թերի է ուսումնասիրված, քան նույն դարաշրջանի մշակույթը և տնտեսությունը: Պատճառը առկա սկզբնաղբյուրների բնույթն է: Դեռ XIX դարի երկրորդ կեսից սկսված հնագիտական աշխատանքները այսօր էլ շարունակում են վիթխարի քանակությամբ նյութ մատակարարել էգեյան ծովի ավազանում ծնավորված ուշ-հելլադայան փուլի (XVI-XII դդ.) ուսումնասիրությանը: Սակայն, բացի միլենյան քաղաքակրթության կերտողների նյութական մշակույթից, այդ հարուստ նյութը որևէ լուրջ հնարավորություն չի ընձեռում թեկուզ հիմնական զծերով վերականգնելու միլենյան պետությունների քաղաքական կառուցվածքը: XX դարի 50-ական թվականներին Մ.Վենտրիսի և Ջ.Չադվիքի կողմից վերծանված կրետե-միլենյան «գծային Բ» գրով գրված հազարավոր սալիկները (հիմնականում Պիլոսից, ավելի սակավ Կոնոսոսից և Միլենքից) բացառապես տնտեսական բնույթի տեքստեր են (ինվենտարային ցուցակներ, տնտեսական հաշվարկներ): Այստեղ քաղաքական կյանքին վերաբերող ոչ մի անմիջական տեղեկություն չկա<sup>241</sup>:

Միլենյան աշխարհի պատմության ավանդական սկզբնաղբյուրները Չոմերոսի պոեմները, անտիկ պատմիչների աշխատությունները (Չերոդոտոս, Թուկիդիդես և այլն), իհարկե, զգալի նյութ են պարունակում խնդրո առարկայի համար, սակայն, ինչպես բազմիցս նշվել է, VIII դ. և ավելի ուշ շրջանի հեղինակների պատկերացումները «հերոսական» դարաշրջանի մասին բավական աղոտ են և անհրաժեշտ է մեծ զգուշավորությամբ մոտենալ այդ աղբյուրներին:

Ինչ վերաբերում է միլենյան քաղաքակրթությանը համաժամանակա

արևելյան աղբյուրներին, տվյալ պարագայում խեթական, ապա այստեղ հաղորդվող տեղեկությունները բավական սուղ են և անորոշ: Բացի այդ, առայժմ հնարավորություն չկա ճշգրտորեն տեղայնացնելու խեթական աղբյուրների Ախիթիական պետությունը (տես Գլուխ 1.3):

Եթե հետևելու լինենք անտիկ ավանդույթին, ապա հարավային Պունաստանում, միջին Պունաստանի որոշ շրջաններում (Բեռտիա, Թեսսալիա, Ատտիկա և այլն), ինչպես նաև կղզիներում գոյություն են ունեցել մեծ թվով անկախ կամ կիսանկախ իշխանություններ, ավելի ճշգրիտ՝ քաղաք-պետություններ, որոնք թե ռազմական առումով, թե տնտեսապես, իրենցից լուրջ քաղաքական ուժ չեն ներկայացրել: Նույնիսկ Թուկիդիդեսի պես վստահելի հեղինակը պատկերում է բավական խղճուկ մի հասարակություն, որին խորթ էին բարեկեցիկ կյանքը, միջըրջանային առևտուրը (ծովային և ցամաքային), չկար զարգացած երկրագործություն, բնակավայրերը ամրացված չէին, և այլն<sup>242</sup>: Պոնեբոսի մոտ «միկենյան» բասիլևսները ընդամենը ցեղապետներ էին, որոնք ապրում էին անշուք «պալատներում»:

Այս ետնախորքի վրա հնազգիտական և զրավոր աղբյուրները ներկայացնում են միանգամայն այլ հասարակություն. մի քանի տասնյակ խոշոր և մանր ամրոցներ, պալատական և տաճարային խոշոր տնտեսություններ, որտեղ աշխատում էին հազարավոր արհեստավորներ և երկրագործներ, շուրջ երեք հարյուր տարի տևած միջազգային լայն առևտրական հարաբերություններ ողջ արևելամիջերկրածովյան ավազանի երկրների հետ:

Կարելի է արդյոք որևէ կերպ փորձել վերականգնել միկենյան աշխարհի, համեմայնդեպս դրա մայրցամաքային հատվածի քաղաքական կառուցվածքը մինչև XIII դ. կեսերը, երբ այստեղ սկսվում է այդ հասարակության ճգնաժամի առաջին փուլը:

Մասնագետների շրջանում այսօր գերիշխող կարծիքը հետևյալն է.

Խոսք չի կարող լինել միասնական քաղաքական կառույցի մասին: Մայրցամաքային Պունաստանի խիստ կտրտված ռեյեֆը, այստեղ մի քանի տասնյակ պարսպապատ բնակավայրերի առկայությունը և, վերջապես, անտիկ ավանդույթի տվյալները միանշանակ վկայում են հօգուտ քաղաքական մասնատվածության<sup>243</sup>: Ավելի նպատակահարմար է խոսել մի քանի քաղաք-պետությունների ժամանակավոր միությունների մասին: Այս տեսակետի մի տարբերակը ենթադրում է մայրցամաքում 3-4 միությունների առկայություն (Արգոլիդա, Բեռտիա, Ատտիկա, գուցե և Թեսսալիա կամ Մեսսենիա)<sup>244</sup>: Նշված կարծիքներին քչերն են հակադրվում<sup>245</sup>: Վերջիններիս գլխավոր փաստարկը արգոլիդյան ծագում ունեցող ուշհելլադյան III C տիպի միօրինակ, ստանդարտացված խեցեղենի առկայությունն է, որը պիտի ենթադրեր Արգոլիդայում գտնվող քաղաքական կենտրոնի գերակայություն մյուս շրջանների նկատմամբ:

Միկենյան աշխարհի քաղաքական միասնության խնդիրը չափից ավելի բարդ է, որպեսզի հանգամանորեն քննարկվի ներկա ուսումնասիրության շրջանակներում: Ըստ այդմ, այստեղ նպատակահարմար է ներկայացնել

միայն մի քանի առավել լավ նշմարվող և փաստացի հիմնավորվող տեսակետներ, որոնք բնութագրական են միկենյան հասարակության համար:

- 1) Մինչև XIII դ. կեսերը մայրցամաքային Յունաստանի և էգեյան ծովի կղզիների միկենյան կենտրոնները ակնհայտորեն զարգացել են վերընթաց ուղիով: Սրա վկայությունը բնակավայրերի քանակի, չափսերի, ամրացվածության մակարդակի, նյութական մշակույթի առարկաների որակական հատկանիշների աճն է:
- 2) Նշված դարաշրջանում նկատվում է բնակչության նշանակալի քանակական աճ (տես Գլուխ 2.4):
- 3) Թագավորական իշխանության հզորացում, դրա ֆունկցիաների ընդլայնում, որի արտահայտությունը ոչ միայն դամբարանների հարուստ նյութն է, այլև արքայական խոշոր տնտեսությունների կառավարման անհրաժեշտությունը: Չնայած ենթադրվում է, որ միկենյան վանականների իշխանությունը, ի տարբերություն դրանց մերձավորարևելյան գործընկերների, բացարձակ չի եղել, սակայն քիչ է տարբերվել<sup>246</sup>: Այս առնչությամբ ավելորդ չի լինի հիշել, որ խեթական արքա խաթթուսիլիս III-ը Ախիթյավայի արքային համարում էր իրեն հավասար կարգավիճակ ունեցող կառավարիչ (տես Գլուխ 1.3):
- 4) Միկենյան կենտրոնները վարել են աշխույժ միջազգային առևտուր արևելամիջերկրածովյան ավազանի երկրների հետ XV-XIV դդ. ընթացքում և XIII դ. սկզբներին: Սա կարող է վկայել բավական կայուն քաղաքական և տնտեսական իրավիճակի գոյության օգտին միկենյան աշխարհում: Արևելամիջերկրածովյան ավազանում միկենյան ծագման իրերի լայն աշխարհագրությունը, թերևս, կարող էր պայմանավորված լինել ոչ այնքան դրանց բարձր որակով և արտահանվող երկրների համանման իրերի նկատմամբ ունեցած առավելությամբ, ինչպես նաև միկենյան կենտրոնների քաղաքական-տնտեսական կայունությամբ, որքան միկենյան քաղաքակրթության զարգացմանը բնորոշ էքստենսիվության միտումով: Էգեյան ծովի կղզիներում միկենյան մշակույթի արագ տարածումը XVI-XV դդ., ինչպես նաև դրա գոյությունը հավաստող զգալի հնագիտական նյութը արևմտյան Փոքր Ասիայում (Գլուխ 1.3) կարող է նշանակել միայն միկենյան բնակչության պարբերաբար ընթացող շարժում մայրցամաքից՝ տարբեր ուղղություններով<sup>247</sup>:

Վերոհիշյալ ելակետերի ետնախորքի վրա ստորև կփորձենք ներկայացնել միկենյան աշխարհի աստիճանական անկման գործընթացը, որը սկսվեց XIII դ. կեսերից և ավարտվեց XII դ. ընթացքում:

### **ՅԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐԴԸ Մ.Թ.Ա. XIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

Բննարկելով Չայկական լեռնաշխարհում տիրող քաղաքական իրավի-

ճակը XIII դ. երկրորդ կեսին, անհրաժեշտ է նկատի ունենալ երկու կարևոր հանգամանքներ, որոնք օբյեկտիվորեն բարդացնում են այս պատմական դարաշրջանի իրադարձությունների լուսաբանումը:

Առաջին հերթին դա գրավոր աղբյուրների ծայրաստիճան սակավությունն է: Նշված ժամանակաշրջանի համար մասնագետների տրամադրության տակ են աստիճանաբար երկու արքաների՝ Սալմանասար I-ի (1263-1234 թթ.) և Թուկուլթի-Նինուրտա I-ի (1233-1197 թթ.) տեքստերը, որոնք ներկայացնում են նրանց օրոք դեպի Չայկական լեռնաշխարհի հարավային և հարավ-արևմտյան շրջաններ ուղղված ռազմական արշավանքները: Այսպիսով, մոտավորապես XIII դ. երկրորդ կեսին ամփոփականորեն նախորդող և հաջորդող ժամանակահատվածները բացարձակապես բաց են մնում: Ժամանակագրորեն սույն աղբյուրներին առավել մոտ են XII դ. վերջերին-XI դ. առաջին կեսին վերաբերող Թիզլաթպալասար I-ի տեքստերը: Ինչ վերաբերում է Լեռնաշխարհին արևմուտքից հարող խեթական տերությանը, ապա խեթական տեքստերում վկայված են որոշ քանակությամբ տեղեկություններ գլխավորապես վերինեփրատյան Իսուվա պետության (հայկական Օուֆթ) մասին, որոնք նույնպես թվագրվում են XIII դ. երկրորդ կեսով: Ասվածին անհրաժեշտ է ավելացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի աստիճանաբար և խեթական աղբյուրները քիչ թե շատ լուսաբանում են միայն Վանա լճից հարավ և արևմուտք ընկած տարածքներում տիրող իրավիճակը, այսինքն, Լեռնաշխարհի մի փոքր հատվածը միայն:

Երկրորդ խնդիրը ուսումնասիրվող տարածքների նյութական մշակույթի անբավարար ուսումնասիրությունն է: Այսօր առավել լավ ուսումնասիրված է, բացի Վանա լճի արևելյան առափնյա մասերից, միայն Ելազղի շրջանը (Իսուվա-Օուֆթ)<sup>248</sup>: Վերջին տարիներին բավական արդյունավետ աշխատանքներ են ընթանում Չայկական Տավրոսից հարավ խարբերդի դաշտում<sup>249</sup>: Սակայն Չայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների հնագիտական ուսումնասիրության վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Ինչ վերաբերում է Լեռնաշխարհի կենտրոնական մասերին, ապա այստեղից՝ հայտնի որոշ քանակությամբ խեցեղեն նյութը<sup>250</sup>, որ պահվում է Վան քաղաքի հնագիտական թանգարանում, գերազանցապես ծագում է անորոշ աղբյուրներից<sup>251</sup>: Այսպիսով, մի կողմից Չայկական լեռնաշխարհի արևմուտքի ու հարավ-արևմուտքի, մյուս կողմից՝ Չայսստանի Դանրապետության համեմատաբար լավ պեղված ու շրջանգեղարյան հնավայրերի միջև առկա է մի խոշոր «սպիտակ բիծ», որը, բնականաբար, էապես խոչնդոտում է Լեռնաշխարհում XIII դ. տիրող մշակութային իրավիճակի պարզաբանմանը:

Նկատի ունենալով վերոհիշյալը, սույն աշխատության մեջ նպատակահարմար ենք գտնում սահմանափակվելու միայն Չայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և արևմտյան շրջանների էթնոքաղաքական պատմության ուսումնասիրմամբ:

Վերիննվիրատյան երկրների՝ XIII դ. պատմության վերաբերյալ պահպանված տեղեկությունները հասել են տարբեր բնույթի մի շարք համաժամանակյա խեթական տեքստերից<sup>252</sup>: Դրանք, առանց բացատրության<sup>253</sup>, կազմված են Թուղխալիյաս IV-ի օրոք: Այս նյութը գլխավորապես վերաբերում է Խուլվային:

Նախևերջին վերիննվիրատյան տարածաշրջանի պատմության կարևորագույն սկզբնաղբյուր համարվող «Պախխուվացի Միտայի» տեքստի<sup>254</sup> վերաբերվագրումը XV դ. երկրորդ կեսով<sup>255</sup> մի զգալի բաց առաջացրեց վերիննվիրատյան երկրների պատմության աղբյուրագիտական հենքում:

Ինչ է հայտնի XIII դ. կեսերին անմիջականորեն նախորդող ժամանակահատվածի վերաբերյալ:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մուրսիլիս II-ի հայասական պատերազմը, ինչպես հայտնի է<sup>256</sup>, ավարտվեց այս արքայի կառավարման 10-րդ տարում խեթերի հաջողությամբ. վերջիններս զրավեցին հակառակորդի գլխավոր քաղաքները Արիւսան և Դուկկաման<sup>257</sup>: Թե որքան հիմնավոր էր խեթերի հաջողությունը արևելքում, դժվար է ասել: Մի բան, այնուամենայնիվ, կասկածից վեր է բնում: Մուրսիլիս II-ից հետո մինչև Թուղխալիյաս IV ընկած ժամանակահատվածում այս տարածաշրջանում շատ բան կարող էր փոխվել ոչ ի նպաստ խաթթի: Դրա համար կային օբյեկտիվ պատճառներ:

Ավանտ Մուրսիլիս II-ից, խեթական տերության արտաքին քաղաքականության մեջ առաջնային նշանակություն են ստանում երկու ուղղություններ՝ 1) Գյուսիսային Սիրիան և Գյուսիսային Միջագետքը (Ասորեստանը և, մինչև խաթթուսիլիսի և Ռամզես II-ի դաշնագիրը՝ Եգիպտոսը) և 2) արևմտյան Փոքր Ասիան: Սրանց կարելի է ավելացնել նաև ավանդաբար անհանգիստ կասկերին հյուսիս-արևելքում: Մուվատալլիս II-ից հետո, Ուրխի-Թեշուրի կառավարման շրջանում և խաթթուսիլիսի առաջին տարիներին խեթական տերության ներսում սկիզբ առած խառնակությունների հետևանքով խեթերի ազդեցությունը ծայրամասային կախյալ երկրների նկատմամբ խիստ նվազել էր (տես Գլուխ 1.2): Եվ միայն խաթթուսիլիսի կառավարման վերջին շրջանում խեթերի հեղինակությունը սկսում է աստիճանաբար վերականգնվել, մի բան, որ հիմնականում իրագործվում է Թուղխալիյաս IV-ի օրոք:

Այսպիսով, Մուրսիլիս II-ի կառավարման շրջանից (1321-1300 թթ.) հետո Հայաստան-Ազգիի՝ ժամանակագրորեն առաջին և վերջին հիշատակությունը հանգում է Թուղխալիյաս IV-ի մի հպանցիկ հաղորդման. «Տերերդ, ովքեր առաջին հերթին( ) կառավարում էք Ազգիին, Կասկային (և) Լուկկային նայող սահմանային կետերը»<sup>258</sup>:

Անկասկած, պիտի ընդունել Ի. Դյակոնովի այն կարծիքը, որ այս հաղորդումը կարող է նշանակել միայն, որ տվյալ պահին Ազգին արդեն դուրս էր ե-



կել Խաթթիի քաղաքական ազդեցությունից<sup>259</sup>: Թե Լուկկան, թե Կասկան XIV-XIII դդ. Փոքր Ասիայի տարածքում գտնվող առավել անհնազանդ երկրներն էին (առաջինը՝ թերակղզու հարավ-արևմուտքում), որոնք, որքան հայտնի է խեթական աղբյուրներից, պարբերաբար ենթարկվում էին խեթական արքաների կանխարգելիչ արշավանքներին: Նշանակում է, XIII դ. առաջին կեսի ընթացքում Ազգին<sup>260</sup> դուրս էր եկել Խաթթիի վերահսկողությունից:

## ԻՍՈՒՎԱ

Իսկ ինչպիսին էր իրավիճակը վերինեպիրատյան մյուս երկրներում: Հասաս-Ազգիից հարավ ընկած Իսուվան<sup>261</sup>, դատելով ամկա սկզբնաղբյուրներից, Սուպալիուլիումաս 1-ի կողմից նվաճվելուց հետո, շնորհիվ հարմար աշխարհագրական դիրքի և հարուստ պղնձահանքերի (էրզանի մադեն) կարևոր նշանակություն է ստանում Խաթթիի համար: Հայտնի չէ, թե խեթերի կողմից նվաճվելուց հետո երբ են այստեղի և Խաթթուսասի արքայատոհմերի միջև հաստատվել խնամիական հարաբերություններ<sup>262</sup>: Համենայնդեպս, արդեն իսկ այդ փաստը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Իսուվան գտնվում էր Խաթթիի ուժեղ հսկողության տակ: Իսուվայում խեթական մեծ ազդեցության վկայություն պիտի դիտել նաև նրա տարածքից հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված մեծ քանակությամբ խեցեղենը, որը կրում է կենտրոնական Փոքր Ասիայի խեթական խեցեղենի ակնհայտ ազդեցությունը XV-XIII դդ.<sup>263</sup>: խեթական աղբյուրներից հայտնի են Իսուվայի երկու արքաների անուններ՝ Արի-շարրուման և էլալի-շարրուման (Խաթթուսիլիս III-ի և Թուդիսալիյաս IV-ի ժամանակակիցները):

Մեր ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է եղած սուղ տեղեկությունների միջոցով պարզել XIII դ. երկրորդ կեսին այս պետության դերը ժամանակի քաղաքական իրադարձությունների մեջ: Նախքան այս խնդրին անդրադառնալը, ներկայացնենք Իսուվայի վերոհիշյալ արքաների կառավարման ժամանակի ճշգրտման համար մեծ կարևորություն ներկայացնող խեթական երկու պայմանագրերի ուսումնասիրությունից բխող եզրակացությունները:

Մասնագետներին վաղուց հայտնի «Ուլի-Թեշուբի պայմանագրի»<sup>264</sup> վերջում, դրա կնքմանը ներկա բարձրաստիճան անձանց թվում հիշատակվում է նաև Իսուվայի արքա Արի-շարրուման (KBo IV 10 Rs.29): Այս տեքստը, մինչև «Բրոնզե տախտակի» հայտնաբերումը (տես Գլուխ 1.2), թվագրվում էր Թուդիսալիյաս IV-ի ժամանակաշրջանով, առանց կոնկրետացման: Նշված երկու պայմանագրերի տեքստային վերլուծության շնորհիվ հնարավոր եղավ պարզել, որ Թուդիսալիյասի և Թարխունտասասայի արքա Ուլի-Թեշուբի միջև կնքված են եղել երկու պայմանագրեր, ընդ որում Իսուվայի անունը հիշատակող KBo IV 10-ը դրանցից երկրորդն է ներկայացնում<sup>265</sup>: Այս հանգամանքը լուրջ մտորումների տեղիք է տալիս կապված ինչպես Իսուվայի, այնպես էլ հենց խեթական տերության պատմության սույն ժամանա-

կահատվածի իրադարձությունների թվագրման հետ:

Արի-շարրումայի անունը հիշատակվում է «Բրոնզե տախտակից» ժամանակագրորեն ավելի ուշ ստեղծված Ուլմի-Պեշուրի պայմանագրում որպես դրա կնքմանը ներկա բարձրաստիճան անձնավորություն<sup>266</sup>: Այսինքն, նա դեռ կենդանի է եղել Խաթթիում տեղի ունեցած մի շարք կարևոր իրադարձությունների շրջանում՝ Կուրունտայի ապստամբությունը և դրա ճնշումը, Թախունտասայում Ուլմի-Պեշուրի գահակալումը և դեռ որոշ ժամանակ անց, ընդհուպ մինչև Լիխրիայի ճակատամարտի նախօրյակը: Այսպիսով, Արի-շարրումայի կառավարումը կարելի է պայմանակաճորեն հասցնել մինչև 1235/4 թ.: Ասվածը պարզորոշ կերպով վկայում է հօգուտ այն բանի, որ Խաթթիում տեղի ունեցած նշված իրադարձությունները նախորդել են Լիխրիայի ճակատամարտին:

Չենվելլով այս ենթաբաժնում ներկայացված ժամանակագրական ճշգրտումների վրա, փորձենք մեկնաբանել XIII դ. երկրորդ կեսին Չայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան շրջաններում ստեղծված քաղաքական իրադրությունը և խեթա-ասորեստանյան մրցակցության մեջ Իսուվայի և հարևան երկրների դերը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԽԵՁԱ-ԱՍՈՐԵՍԱՆՅԱՆ  
ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՒՐՏՈՒՄ

XIII դ. կեսերից Չայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան լեռնային շրջանները հայտնվում են Խեթական տերության և Ասորեստանի ռազմաքաղաքական մրցակցության ոլորտում: Ասորեստանի արտաքին քաղաքականության առաջին թիրախը դարձան այս տարածաշրջանի խեթաիպատակ Միտաննի-Խանիզալբատը, «Ուրուառիի երկրները»<sup>267</sup>, Մուծրին<sup>268</sup> և կուտիների երկիրը<sup>269</sup>: Այս արշավանքները, բացի Միտաննիից, ավելի շուտ կանխարգելիչ բնույթ ունեին, քան նշված երկրների հպատակեցումը: Մասնավորապես, Մուծրիի կրոնական կենտրոն Արինուի առնչությամբ հիշատակվում է նախկինում դրա բնակչության վարած թշնամական զործողությունների մասին ընդդեմ Ասորեստանի: Եթե նկատի ունենանք, որ, մինչև Սալմանասար I-ի նշված արշավանքները, ասորեստանյան աղբյուրները ոչինչ չեն հաղորդում Ասորեստանից հյուսիս ընկած այս դժվարամատչ լեռնային շրջանների հետ ունեցած բախումների մասին, ապա կարելի է ենթադրել, որ Սալմանասար I-ի արշավանքները նպատակ ունեին կանխելու դեպի հարավ ուղղված լեռնային ժողովուրդների ասպատակչի հարձակումները<sup>270</sup>:

Ասորեստանի ակտիվությունը Խեթական տերության քաղաքական ազդեցության ոլորտում և դրա անմիջական հարևանությամբ, բնականաբար, չէր կարող հետագա ծավալում ստանալ առանց Խաթթիի համապատասխան ռեակցիայի: Սակայն մինչև 1258 թ. խեթա-եգիպտական դաշնագրի կնքումը և արևմտյան Փոքր Ասիայում տիրող անհանգիստ իրավիճակը միառժամանակ թույլ չէին տալիս Խաթթուսիլիս III-ին ակտիվորեն զբաղվելու հարավ-արևելքում ծավալված աննպաստ իրադարձություններով: Այստեղ խե-

թերը ստիպված էին սահմանափակվելու բուժերային Կարգամիսի, Միտաննիի և Իսուվայի ուժերով, ինչպես նաև Ասորեստանի հարավային հարևան Բաբելոնիայի հետ հակասորեստանյան զինակցության զաղափարի իրականացման հույսերով: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այս երկու ծրագրերն էլ հեռանկարային չէին: Բաբելոնիայի արքա Կադաշման-Տուրգուի մահից հետո նրա փոքրահասակ որդին՝ Կադաշման-Էնլիլ II-ը չկարողացավ շարունակել հոր խեթամետ դիրքորոշումը, և խնամակալ Բարու-ախու-իդդինան ծագում էր հարաբերությունները չսրել հզոր հարևանին հետ: Միևնույն ժամանակ, նույնիսկ Կարգամիսի աջակցությամբ Միտաննին արդեն իրենից լուրջ ռազմաքաղաքական ուժ չէր ներկայացնում:

Սալմանասար I-ի արշավանքը Միտաննի ավարտվեց նրա տարածքի նվաճումով, ասորեստանյան զորքը ասպատակությամբ հասավ Եփրատ գետը՝ Կարգամիսի դիմաց<sup>271</sup>: Չնայած դրան, Սալմանասարի նվաճումները այստեղ անցողիկ էին, քանի որ որոշ ժամանակ անց երկիրը ապստամբեց և դադարեցրեց հարկի վճարումը<sup>272</sup>: Ընդհանուր առմամբ, Սալմանասարի գործունեությունը հյուսիսում սահմանափակ բնույթ ուներ, աշխարհագրական ընդգրկմամբ զգալիորեն զիջելով Թուկուլթի-Նինուրտա I-ի ձեռնարկումներին:

Խեթա-ասորեստանյան հակամարտությունը նոր ուժով վերսկսվեց 1234/3 թ., Թուկուլթի-Նինուրտա I-ի գահակալության առաջին տարում: Կար-Թուկուլթի-Նինուրտայից գտնված երկու միանման աղյուսակներում հակիրճ ներկայացված են արքայի բոլոր հիմնական նվաճումները<sup>273</sup>: Դրանք են՝ Պապխի, Ուբուժանի, Շարնիդա, Սեխրի, Կադմուխի, Բուշշի, Ալզի, (Ա)մադանի, Նաիրի և այլն: Այստեղ խոսվում է նաև «Եփրատի այն կողմից» 28,800 խեթական բնակչության գերևարման մասին:

Սակայն մինչև Թուկուլթի-Նինուրտայի գահակալումը և վերոհիշյալ արշավանքները, Թուղխալիյաս IV-ը որոշ միջոցներ էր ձեռնարկել Ասորեստանի առաջխաղացումը կանգնեցնելու ուղղությամբ: Ասորեստան ուղարկված նամակներում<sup>274</sup> Թուղխալիյասը փորձում էր դիվանագիտական ճնշում գործադրելով ետ պահել ասորեստանցիներին տարածաշրջանում տվյալ պահին գոյություն ունեցող իրավիճակը փոփոխելու ծրագրի իրականացումից: Չենվելով այդ տեքստերի սուղ նյութի և Թուկուլթի-Նինուրտայի՝ Ուգարիտի արքային առաքված նամակի վրա<sup>275</sup>, կարելի է պարզել, որ Ասորեստանի արքան իր գահակալման հենց սկզբից ծագում էր տարածքային նոր զավթումների: Ուգարիտյան նամակում հիշատակվում են որոշ սահմանային բախումներ: Այս բանակցությունները հաջողության չհասան և Թուղխալիյասը ստիպված էր դիմելու վճռական գործողությունների:

Թուկուլթի-Նինուրտայի ուգարիտյան նամակում ուղղակիորեն հիշատակվում է Թուղխալիյասի կողմից Ասորեստան վերջնագիր ուղարկելու մասին: Միաժամանակ խեթական զորքը մտնում է Նիխրիյա: Չավանաբար, Ասորեստանի արքան ինքն է նպատակ ունեցել գրավելու Նիխրիյան<sup>276</sup>, սակայն խեթերը կանխել են նրան: Խեթերի հաջորդ քայլը վկայում է նրանց ի-

րական նպատակների մասին: Նիխրիյայից խեթական զորքը շարժվում է ասորեստանյան զորքին ընդառաջ՝ ճակատամարտ տալու ականալիքով: Տեղի ունեցած ճակատամարտում խեթերը անհաջողության են մատնվում:

Մ.թ.ա.1234/3 թ. Նիխրիյայի ճակատամարտը և ստեղծված քաղաքական իրավիճակը զնահատելուն որոշալիորեն կնպաստի այս տարածաշրջանի երկրների, առաջին հերթին Իսուվայի քաղաքական դիրքորոշման քաջահայտումը:

Համոզիչ փաստարկներով Ի.Չինգեբը ցույց է տվել, որ ժամանակին խեթական վերջին արքա Սուպալիլուլիումաս II-ին վերագրվող KBo IV 14<sup>277</sup> տեքստը գրված է Թուդխալիյաս IV-ի կողմից Իսուվայի արքա էլիլի-շարունային<sup>278</sup>: Այն հիշատակում է տեքստի կազմմանը նախորդած քաղաքական իրադարձություններում Իսուվայի արքայի դավաճանությունը խեթական արքայի հանդեպ: Սիւս այդ հատվածը.

*«Երբ (իրադրությունը) ինձ համար բարդացավ, դու քեզ ինձնից հեռու պահեցիր: Դու իմ կողքին չէիր: Միթե ես Նիխրիյայից միայնակ չհեռացա: Երբ էր պատահել, որ թշնամին ինձնից վերցնե՞ր խուրրի երկրները, եթե ես միայնակ չլինեի Ալաթարմայում»<sup>279</sup>:* Իսուվայի արքայի դավաճանության մասին է հայտնում մեկ այլ խեթական տեքստ<sup>280</sup>:

Եթե այս երկու տեքստերում հիշատակված իրադարձությունը կապված է Նիխրիյայի ճակատամարտի հետ, ապա պարզ է դառնում Թուդխալիյասի ծրագիրը Ասորեստանի դեմ ռազմական գործողությունների ընթացքի առնչությամբ: Երկրորդ տեքստը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, ուստի քերենք այն ամրոջությամբ.

*«[...] երբ նա գա այստեղ [...]»* ետևից մենք կհարձակվենք նրա վրա: Բայց [այ]ժմ, երբ Իսուվայի արքան եկավ այստեղ, նրանք նրան չըրեցին: [Եվ] նա նույնպես ընկղմվեց(?) ապստամբության մեջ: Իսուվայի արքան այլևս չի հետևում Արևին: Թող թագուհին՝ իմ տիրուհին նույնպես տեղեկանա: Տիրուհին՝ թագուհին, ինչ պիտի անեմ ես: Արևը այս տեղում (պարազայում - Ա.Ք.) Արցավա երկրում ...»:

Այս տեքստը թույլ է տալիս առաջարկելու իրադարձությունների ծավալման հետևյալ հնարավոր ընթացքը:

Վերինեփրատյան ճակատում ռազմական գործողությունները խեթական կողմից դեկավարել է Թուդխալիյասի զորավարը՝ KUB VIII 23-ի հեղինակը. տվյալ պահին արքան գտնվել է Արցավայում: Ըստ ծրագրի, խեթա-իսուվյան միացյալ զորքը պիտի անսպասելի հարձակում կազմակերպեր ասորեստանցիների վրա, սակայն, արդեն սպայամակրոված վայր հասնելուց հետո, Իսուվայի արքան միանում է ինչ-որ հակախեթական ուժերի և չի մասնակցում ճակատամարտին, որի հետևանքով խեթական զորքը պարտվում է:

Դժբախտաբար, նամակի նյութը թույլ չի տալիս պարզելու այդ հակախեթական ուժերի ինքնությունը: Դրանք կարող էին լինել ինչպես բուն Իսուվայում, այնպես էլ՝ Նիխրիյայում: Վերջինիս աշխարհագրական դիրքը՝ Ամիդ-Դիյարբարքից հյուսիս-արևելք, ուրարտական տեքստերի Արմեի մայրաքա-

ղաք Նիխորիան<sup>281</sup>, թույլ է տալիս քաղաքը պայմանականորեն տեղադրելու Ալզիի հարավում կամ նրան անմիջականորեն հարող շրջանում:

КВo IV 14-ում Թուղխալիյասը հիշատակում է, Նիխորիայից բացի, մեկ այլ քաղաք է՝ Ալաքարման, որտեղ կարծես տեղի է ունեցել նոր բախում ասորեստանցիների հետ: Ալաքարման պայմանականորեն տեղադրվում է Խսուվայի և Պախխուվայի մերձակցությամբ<sup>282</sup>: Դժվար է պարզել, արդյոք Նիխորիայից հետո նույն շրջանում տեղի է ունեցել մի երկրորդ ճակատամարտ, թե դա ավելի ուշ ժամանակների իրադարձություն է, օրինակ, Թուկուլթի-Նիմուրտայի կողմից Խուրրի երկրների նվաճման ընթացքում:

Ամփոփելով Նիխորիայի ճակատամարտի հետ կապված խնդիրների քննարկումը, անհրաժեշտ է նշել հետևյալը:

Ասորեստանի առաջխաղացումը հյուսիսում աննախընթաց լայն աշխարհագրական ընդգրկում ուներ (Կադմուխի, Ալզի, այնուհետև՝ Նախի): Խեթական տերության արևելյան սահմանամերձ գոտում (Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազաններ) գտնվող քաղաքական միավորները ժամանակավորապես հայտնվեցին Ասորեստանի էքսպանսիայի շրջանում<sup>283</sup>: Դրա հետևանքները, համապատասխան աղբյուրների բացակայության պատճառով, հնարավոր չէ պարզել: Թուկուլթի-Նիմուրտայի կառավարման շրջանի իրադարձությունները<sup>284</sup>, թերևս, անուղղակի վկայություն կարելի է ընդունել հօգուտ այն ենթադրության, որ Դայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանների քաղաքական միավորները հազիվ թե մնային Ասորեստանի տիրապետության տակ:

Դաջորդ հարցը, որ նույնպես կարևոր է պարզել, Ալզիի և մյուս «սուբարյան երկրների»<sup>285</sup> քաղաքական դիրքորոշումն է հաթթուսիլիս III-ի և Թուղխալիյաս IV-ի շրջանում ընթացած վերը քննարկված իրադարձություններում: Խեթական տեքստերը որևէ հիմք չեն տալիս ենթադրելու, որ դրանք գտնվել են հաթթիի քաղաքական գերիշխանության ոլորտում: Ավելի շուտ կարելի է ենթադրել հաթթիի և այդ երկրների միջև տվյալ ժամանակաշրջանում քաղաքական շահերի ընդհանրություն երկու պատճառներով.

- 1) Մավանասար I-ի արշավանքները այդ երկրներ, որից կարող էին օգտվել խեթերը տարածելու իրենց ազդեցությունը: Թուղխալիյաս IV-ի նամակներից մեկում, առաքված նոր իշխանության եկած Թուկուլթի-Նիմուրտային<sup>286</sup>, խեթական արքան «նախագգուշացնում է» դեպի Պապանխի (ասորեստանյան Պապխի) կազմակերպվելիք արշավանքի դժվարությունների առթիվ: Որ Ալզին և մյուս երկրները հակախեթական տրամադրություններ չէին կարող ունենալ, վկայում է հենց Նիխորիայի տեղադրությունը Ալզիի հարավում կամ հարևանությամբ:
- 2) Միտաննի-խանիզալբատի ավանդական խեթամետ դիրքորոշումը պիտի որոշակի դեր խաղար նաև առաջինի բնակչության հետ ազգակցական կապեր ունեցող սուբարյան երկրների քաղաքականության մեջ:

Չայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների՝ XIII դ. վերջին տասնամյակների պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրները իսպառ բացակայում են: Այս հանգամանքը հնարավորություն չի ընձեռում թեկուզ որևէ կերպ պարզելու այս տարածաշրջանում տեղի ունեցած քաղաքական անցուղարձեղը, ի հայտ բերելու ճգնաժամի հասունացման գործոնները: Երբ շուրջ կես դար անց կրկին հայտնվում են ասորեստանյան աղբյուրները, այստեղ արդեն ճգնաժամային պրոցեսներն ընթանում էին վայրընթաց ուղիով: Թե ինչպես կարող էր արտահայտվել մերձավորարևելյան ճգնաժամը Չայկական լեռնաշխարհում, տես աշխատության համապատասխան բաժնում (Գլուխ 3.2):

### **ԵՆՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այժմ ամփոփենք աշխատության առաջին գլխում քննարկված հարցերը և բնորոշենք XIII դ. երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած քաղաքական գործընթացները: Դրանք հիմնականում հանգում են հետևյալին:

#### **ՆԵՐՔԱԳԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ**

Սա առավել լավ է դրսևորվում հատկապես խեթական տերությունում և միկենյան աշխարհում: Եթե առաջինում մինչև դարավերջը մեծ դժվարությամբ հաջողվում էր պահպանել տերության տարածքային ամբողջականությունը, ապա երկրորդը անխուսափելիորեն ընթանում էր անկման ուղիով:

Խաթթիում ներքաղաքական իրավիճակի սրման առաջին նախանշանը կարելի է համարել դեռ Մուվատալլիս II-ի կողմից տերության երկատման փորձը, երբ մայրաքաղաքը փոխադրվեց հարավային Փոքր Ասիա՝ Թարխունտասսա, իսկ նախկին մայրաքաղաք Խաթթուսսաը հանձնվեց նրա եղբորը՝ Խաթթուսիլիսին: Այս իրադարձությունից որոշ ժամանակ անց սկիզբ առավ տևական դինաստիական պայքար Մուրսիլիս II-ի սերունդների երկու ճյուղավորումների միջև (Մուվատալլիսի և Խաթթուսիլիսի տոհմերի): Խաթթուսիլիսի կողմից Թարխունտասսայի թագավորության կիսանկախ կարգավիճակի հաստատագրումը, որը հետագայում ամբողջականության սասանման գլխավոր գործոններից մեկը դարձավ: Պայքարը Խաթթուսասի և Թարխունտասսայի միջև շարունակվեց նաև Մուպիլիուլիումաս II-ի օրոք: Տերության փաստական տրոհումը, բնականաբար, պիտի նվազեցներ Խաթթուսասի արքաների հեղինակությունը և հնարավորությունները պահպանելու իրենց գերիշխանությունը ծայրամասային տիրույթների նկատմամբ: Այն փաստը, որ Թարխունտասսան գոյատևեց նաև Խաթթիի անկումից հետո, ինքնին արդեն վկայում է պատմական ասպարեզից վերջինիս վերացման եղանակի մասին (Գլուխ 3.1):

Միլենյան կենտրոններում XIII դ. կեսերից սկսված ճգնաժամը, անվերապահորեն խորանալով, ի վերջո հասցրեց այդ քաղաքակրթության աստճանական մահացմանը: Գրավոր աղբյուրների բացակայության պատճառով դժվար է վերականգնել այստեղ ընթացած քաղաքական և այլ գործընթացները: Կարելի է միայն վստահաբար ասել, որ միլենյան պետությունների անկման գործում արտաքին գործոնը, անկասկած, ավելի փոքր դեր պիտի խաղար, քան Փոքր Ասիայում: Տվյալ պարագայում «արտաքին գործոնը» պիտի հասկացվի այն առումով, որ XIII դ. երկրորդ կեսին-XII դ. սկզբներին մայրցամաքային Հունաստանի հարավը հազիվ թե ներկայացներ մեկ միասնական պետություն: Ամենայն հավանականությամբ, այստեղ եղել են մի քանի քաղաքական կազմավորումներ, որոնց միջև ճգնաժամի հասունացման ընթացքում կարող էին հակասություններ ծագել: Արտաքին գործոն ասելով պիտի հասկանալ միլենյան կենտրոնների անկման շրջանում հարևան տարածաշրջանի ռազմական ագրեսիա:

Համապատասխան բաժնում վեր հանված ճգնաժամային երևույթների համադրումը վկայում է միլենյան տարբեր քաղաքական կազմավորումների միջև ընթացած ռազմական բախումների առկայության, բնակչության լայն զանգվածների տեղաշարժերի օգտին: Դրանց ծավալման արդյունքում սահմանափակ մարդկային և նյութական ռեսուրսներ ունեցող միլենյան քաղաքները չէին կարող երկար գոյատևել: Շուրջ մեկ դար (XIII դ. կեսեր-XII դ.) տևած քաղաքական, տնտեսական և մշակութային վայրէջքը ավարտվեց այս քաղաքակրթության գրեթե լիակատար մարումով: Հարկ է նշել, որ Էգեյան ծովի կղզիներում, սակայն, ճգնաժամային գործընթացները այդքան խոր և ընդգրկուն չէին: Այստեղ, որոշ բացառություններով, ուշորոնգեղարյան մշակույթը շարունակվեց հաջորդ վաղ երկաթեդարյան փուլում:

Քաղաքական անկայունությամբ են բնութագրվում նաև Մերծավոր Արևելքի մյուս խոշոր քաղաքական միավորները՝ Եգիպտոսը և Ասորեստանը: Սակայն, ի տարբերություն հեթական տերության և միլենյան կենտրոնների, այստեղ անկման նշանները քիչ թե շատ նկատելի են միայն դարավերջից: Եգիպտոսում դա առկա է Մերենպտահի և նրան հաջորդած XIX դինաստիայի մյուս փարավոնների շրջանում, իսկ Ասորեստանում՝ թուկուլթի-սինուրտայի կառավարման վերջին տարիներից:

Քաղաքական անկայունության գլխավոր հետևանքը կենտրոնական իշխանության հսկողության թուլացումն էր ծայրամասային կախյալ երկրների նկատմամբ: Այս միտումը առավել ցայտուն է դրսևորվում Փոքր Ասիայում: Խաթթուսիլիս III-ը փորձում էր տերության տարբեր շրջանների վրա կենտրոնի իշխանությունը պահպանել գերազանցապես դիվանագիտական միջոցներով (խեթա-եգիպտական դաշնագիր, խեթա-ախիսիյական փոխհարաբերություններ՝ «Տավազալավասի նամակը»), կիրառելով դինաստիական ամուսնությունների պրակտիկան (Սեխա, Ամուրրու, Իսուվա)<sup>287</sup>: Թուդխալիյաս IV-ի մոտ գերակշռում էին ուժային միջոցները (Միլլավանդա, Ասորեստան, Ալասիա):

Եթե թուդխալիյասին և խաթթուսիլիսին ուժերի գերազույն լարումով

դեռես հաջողվում էր պահպանել տերության հեռավոր տիրույթները, ապա այնուհետև իրավիճակի վերահսկումը, ամենայն հավանականությամբ, պիտի ավելի սրվեր Առնոլֆանդաս III-ի կարճատև կառավարման ընթացքում: Սուպալիլուլու մաս II-ը ստիպված էր ակտիվորեն գործելու այն նույն ուղղություներում, ինչ Թուլխալիյաս IV-ը՝ արևմտյան Փոքր Ասիա, Թարխունտասսա, Ալասիա:

Ինչ վերաբերում է միլենյան աշխարհին, ապա այստեղ քաղաքական անկայունության հիմնական դրսևորումը ենթադրյալ երկպառակտչական պատերազմներն էին: Միասնական պետականության բացակայությունը սահմանափակ տարածք ունեցող միլենյան կենտրոնների առկայության պայմաններում, նույնիսկ արտաքին վտանգ չլինելու դեպքում կարող էր պարարտ հող ստեղծել դրա համար: Ախիսիյավայի քաղաքական և տնտեսական շրջափակումը Թուլխալիյաս IV-ի օրոք պիտի հանդիսանար այն արտաքին գործոնը, որն ի վիճակի էր ծանր հարված հասցնելու միլենյան պետությունների տնտեսական հիմքերին: Դարավերջին և XII դ. Պելուպոննեսում և Միջին Գունաստանում հնազնիտորեն լավ վկայված խոշոր ու մանր ավերածությունները, ինչպես նաև բնակչության զանգվածային տեղաշարժերը ապացուցում են ասվածը:

#### ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՄԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՃ

Այս երևույթը զրավոր աղբյուրներով և հնազնիտորեն վկայված է XIII դ. վերջերից և իր ծավալման բարձրակետին է հասնում հաջորդ դարում (տես Գլուխ 2.2): Դրա հնարավոր պատճառների մասին կխոսվի հաջորդ գլխում, իսկ այստեղ բնակչության տեղաշարժերի դերի մասին XIII դ. երկրորդ կեսի ընթացքում:

Առկա աղբյուրների նյութը քույլ չի տալիս պարզելու երնիկական տեղաշարժերի սկզբնավորման պահը և դրանց ստույգ ելակետերը: Եթե «ծովի ժողովուրդների առաջին ալիքը (Մերեսպտահի հինգերորդ տարում՝ 1208 թ.) կարող էր որպես մեկնակետ ունենալ միլենյան աշխարհը (ավելի շուտ Պելուպոննեսը, քան կղզիները), ապա նույնը չի կարելի ասել փոքրասիական բնակչության տեղաշարժերի ոչ ժամանակի, ոչ էլ մեկնակետի մասին (տես Գլուխ 3): Ինչ վերաբերում է հյուսիսբալկանյան միգրացիային, ապա դրա սկիզբը հնարավոր է մոտավորապես սինթրոնիզացնել Տրոյա VIIa-ի և Տրոյա VIIb1-ի ավերումների հետ (երկու ալիքով):

«Ծովի ժողովուրդների» տեղաշարժերի հետևանքը Փոքր Ասիայի հարավային ծովափնյա որոշ բնակավայրերի, Ալասիայի և լեանտյան ծովափի ավերածություններն էին, որոնք, անկասկած, պիտի զգալիորեն ապակայունացնեին այս տարածաշրջանի կենսագործունեությունը:

Գյուսիսբալկանյան ժողովուրդների շարժումը Տրոյա VIIa-ի և VIIb1-ի ավերումից հետո շրջանում հազիվ թե ծանր հետևանքներ ունենար խաթիի կենսագործունեության վրա: Քիչ այլ է VIIb1-ի ավերումը և VIIb2-ին բնորոշ Buckelkeramik-ի կողոնների ներթափանցումը թերակղզի: Այս շրջանում և քիչ



ավելի ուշ հյուսիսքալկանյան տարրի հայտնվելը Սանգարիոսի հովտում և նույնիսկ Չալիսի հոսանքի հարավ-արևմուտքում (Կաման-Կալեհյոյուք), բերևս, պիտի նշանակեր Տրոադայի և արևմտակենտրոնական Փոքր Ասիայի կորուստ խաթրի համար: Եթե սրան ավելացնենք Սուաչալիուլիումնս II-ի ծավալուն արշավանքները դեպի Թաթիսուտասսա, Ալասիա, Լուկկա, Իկունա և Վիյանավանդա, ապա պատկերը կլրանա: Խաթրուսասի վերջին արքայի նշված արշավանքները պիտի ուղղված լինեին տեղաշարժվող ժողովուրդների դեմ:

Եթե ի մի բերենք Փոքր Ասիայի այն հնավայրերի հնագիտական ուսումնասիրության նյութերը, որոնք լուսաբանում են ուշ բրոնզից վաղ երկաթ անցումը (մոտավորապես 1200 թ.), ապա կպարզվի, որ ոչ «ծովի ժողովուրդներ», ոչ էլ հյուսիսքալկանյան ցեղերի տեղաշարժերը չեն ընդգրկել խեթերի բնօրրանը՝ Չալիսի հոսանքով պարփակված տարածքը և դրանից հարավ մինչև Կիլիկյան Տավրոս:

Ամփոփելով աշխատության առաջին գլուխը, անհրաժեշտ է նշել, որ XIII դ. վերջին մեկ-երկու տասնամյակներում արդեն միանգամայն պարզորոշ դրսևորվում են ճգնաժամային բոլոր երևույթները, իհարկե, անհամեմատ ավելի փոքր ծավալով: Հաջորդ գլխում կքննարկվեն ճգնաժամի ընդհանուր և մասնավոր դրսևորումները և դրանց ունեցած հետևանքները Մերծավոր Արևելքի և Էգեիդայի ուշբրոնզեդարյան քաղաքակրթությունների կենսագործունեության վրա:

## ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԳՆԱԺԱՍԸ

## ԵԳՆԱԺԱՍԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Մերձավորարևելյան ճգնաժամն ուսումնասիրելիս անհնար է չըջանցել բրոնզեդարյան քաղաքակրթությունների զարգացման ընթացքում պարզորոշ գծագրվող մի երևույթ, որը վկայված է հին Առաջավոր Ասիայի պատմության նախորդ դարաշրջաններում: Խոսքը պետությունների կենսագործունեության վերընթաց և վայրընթաց զարգացման փուլերի կանոնավոր հերթազարյույթյան մասին է, որը կարծես ընդգրկում է ոչ թե մի կոնկրետ տարածաշրջան, այլ ողջ Առաջավոր Ասիան և էգեիդան: Այս համաժամանակյա երևույթների կանոնավոր բնույթը համապատասխան բացատրության կարիք ունի: Ներկա ուսումնասիրության շրջանակներում զարգացման այդ ցիկլերի համակողմանի ուսումնասիրությունը այստեղ հնարավոր չէ, ուստի սահմանափակվենք միայն դրանց ընթացքում նկատվող ուղեկցող երևույթների առանձնացմամբ: Դա թույլ կտա XII դ. ճգնաժամը դիտելու ոչ որպես հինարևելյան քաղաքակրթությունների զարգացման ընթացքում տեղի ունեցած արտասովոր, մեկուսացած երևույթ, այլ որպես օրինաչափություն, դրանից բխող հետևանքներով<sup>1</sup>: Սիա վերոհիշյալ ցիկլերի ընդհանուր բնութագիրը դրանցից յուրաքանչյուրի ընթացքում գրավոր և հնագիտական աղբյուրներով վկայված իրադարձությունների համառոտ շարադրանքով:

**1. XXX/XXVIII-XXIV դդ. (վաղ բրոնզեդար)**

*Միջազետք:* Շումերական քաղաք-պետությունների կազմավորում և վերընթաց զարգացում: Փուլի վերջում՝ Աքքադի պետության կազմավորում, նրա վերածում համամիջազետքյան տերության:


*Եգիպտոս:* Համաեգիպտական պետության կազմավորում (Վաղ թագավորություն) և Հին թագավորություն, նշանակալից առաջնթաց կենսագործունեության բոլոր բնագավառներում:

*Փոքր Ասիա:* Չզալի թվով մշակութային կենտրոնների կենսագործունեության մասշտաբների ընդլայնում (Տրոյա I-II, Բեյջեսուլթան 19-13, Ալաջահյույուք 5-8, Ալիշար I և այլն), վաղ պետական կազմավորումների առաջացում:

*Էգեիդա:* Վաղ հելլադյան և վաղ միհոսյան փուլը, կիլիդյան քաղաքակրթության վերընթաց զարգացումը, բարձրակետը՝ 2500-2300 թթ.:

*Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկաս:* Վաղ բրոնզի փուլի սկիզբը այստեղ թվագրվում է շատ ավելի վաղ շրջանով, քան Առաջավոր Ասիայի մյուս տարածաշրջաններում՝ մ.թ.ա. XXXV-XXXIV դդ.: Կուր-Արաքսյան (կամ «Վաղ Անդրկովկասյան») մշակույթի ծաղկման փուլը՝ մ.թ.ա. XXXI/XXIX-XXVI դդ., երբ այն ծավալվում է դեպի հյուսիս-արևմտյան Իրան, այնուհետև՝ Սիրիա և Պարսեստին:

**Քարտեզ 2. Ճգնաժամի ընթացքում ավերված կամ լքված բնակավայրերը**



**Յունաստան**

1. Տեյխոս Դիմաշյոն
2. Պիլոս
3. Լիխորիյա
4. Մենելայոն +
5. Տիբինքոս \*
6. Միդեա +
7. Միլինք +
8. Յեթ
9. ԼեՖկանդի
10. Յոկոս

**Կրետե**

11. Կիդոնիյա
12. Կոնոսոս

**Փոքր Ասիա**

13. Տրոյա +
14. Միլեթ
15. Մելոսին
16. Տարսոս

**Ֆրանկոն**

17. Կարաոզլան
18. Խաթրոսաս
19. Ալազախյոյուք
20. Մաշատիոյուք
21. Ալիշարիոյուք
22. Լորչունքնեֆն
23. Տիլլեիոյուք
24. Լիդարիոյուք

**Կիարոս**

25. Պալեոկաստրո
26. Կիստին
27. Մինյա
28. Ենկոմի

**Սիրիա**

29. Ուզարիտ +
30. Յեյ Սուկաս
31. Քաղեշ
32. Քատնա

**Համատ**

33. Ալալախ
34. Հալեալ
35. Եմար

**Յարավալին Ասան**

36. Հազոթ
37. Ակո
38. Մեզիդդ
39. Դեյո Ալլա
40. Բեթլ
41. Բեթ Շեմեշ
42. Լալիշ
43. Ալոդ
44. Ալկելոն

+ Հաշվանաբար, առկա է եղել նաև բնական աղբյուր գործոնը:

## **2. XXIV–XXII դդ. (վաղ բրոնզեդար-միջին բրոնզեդար անցում)**

*Միջազետք:* Աքքադի պետության անկումը (մոտավորապես 2200 թ.), կուտիների արշավանքները և նրանց տիրապետությունը:

*Եգիպտոս:* Հին բազավորության անկումը (XXIII դ. կեսեր), պետության տրոհում մի քանի տասնյակ ինքնուրույն իշխանությունների, անկայուն ներքաղաքական և տնտեսական իրավիճակ մինչև XXI դ. կեսերը:

*Փոքր Ասիա:* Տրոյա II, Բեյջեսուլթան 13 և այլ քաղաքային կենտրոնների ավերում մոտավորապես 2300 թ., նյութական մշակույթի համընդհանուր անկում արևմտյան և հարավային շրջաններում<sup>2</sup>:

*Էգեիդա:* «Վաղ բրոնզեդար III» փուլի բնակավայրերի մեծ մասի ավերում 2300 թ. մոտերքում, նոր էթնիկական տարրի և մշակույթի ներթափանցում:

*Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկաս:* Կուր-Արաքսյան մշակույթի անկում: Այս փուլի հիմնական առանձնահատկությունը Հայկական լեռնաշխարհի մշակութային հոմոգենության ավարտն է: Վկայված են միմյանցից տարբեր հնագիտական մշակույթներ: Առկա են նաև օտար մշակութային տարրերի (զլխավորապես Արևելյան Միջերկրականից ծագող) ակնառու հետքեր: Բնակավայրերի գրեթե խապառ բացակայությունը կարող է վկայել բնակչության շարժունակության խոշոր աճի օգտին:

## **3. XXI–XX դդ.-XVIII/XVII դդ. (միջին բրոնզեդար)**

*Միջազետք:* Ուրի III դինաստիան (XXII դ. վերջ-XXI դ.), շուրջ մեկդարյա կայունություն, Ուրի անկում ամորեական ցեղերի միգրացիայի հետևանքով (XXI դ. վերջ), ամորեական իշխանությունների կազմավորում (XX–XIX դդ.), Աշշուրի, Բաբելոնիայի և այլ պետականությունների կայունացում և հզորացում:

*Եգիպտոս:* Միջին բազավորություն (XXI–XVIII դդ.), քաղաքական, տնտեսական և մշակութային վերելք:

*Փոքր Ասիա:* Քաղաքական կայունացում (XXI–XX դդ.), որն էլ ավելի է ամրապնդվում շնորհիվ Աշշուրի աստորական գաղութների գործունեության (XX–XVIII դդ.):

*Էգեիդա:* Միջին հելլադյան և միջին մինոսյան մշակույթի փուլ, որ բնութագրվում է տնտեսական մեծ առաջընթացով, հատկապես կղզիներում. «մինոսյան թալասոկրատիան»:

*Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկաս:* Թեոեքյան մշակույթի ծաղկման շրջան: Բնակավայրերի թիվը, նախորդ փուլի պես, քիչ է: Հյուսիսում, հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում առկա են մշակութային ընդհանրությունները Փոքր Ասիայի և Իրանի համաժամանակյա մշակույթների հետ: Փուլի եզրափակիչ մասում (XVIII/XVII–XVIդդ.) վկայված են համաժամանակյա մի քանի մշակույթներ (Հաոիճ-Թեոեքյան, Կարմիրբերդյան, Սևան-Արցախյան և այլն), որոնց հետագա զարգացումը տալիս է դեպի խաչասերում և տրանսֆորմացիա: Նկատվում է բնակավայրերի քանակական աճ. վերաբնակեցվում են վաղ բրոնզում

լքված բնակավայրերը: Մշակութային մասնատվածության աստիճանական հաղթահարում:

Ընդհանրապես այս փուլի համար տարբեր տարածաշրջանների միջև համաժամանակյա ցիկլերի առանձնացումը քավական բարդ է: Պարզորոշ նկատվում է կայունացում-ապակայունացում ցիկլի կարճատևություն, չափազանց սակավ է համապատասխան հնագիտական նյութը մի շարք տարածաշրջաններից (Փոքր Ասիա, Սիրիա, Հայկական լեռնաշխարհ): Խիստ մեծ շարժունակություն կա վաղբրոնզեդարյան փուլի համեմատ: Այդ խակ պատճառով, տվյալ փուլից դեպի կայունացման հաջորդ՝ ուշբրոնզեդարյան փուլ անցման ճգնաժամային դարաշրջանի առանձնացումը միշտ չէ որ հստակ գծագրվում է տարբեր տարածաշրջաններում:

#### **4. Մ.թ.ա. XVIII/XVII-XVI դդ.**

**(միջին բրոնզեդար-ուշ բրոնզեդար անցում): Երկրորդ ճգնաժամ**

*Միջագետք:* Բաբելոնիայի քաղաքական վայրընթաց զարգացում, Աշտուրի արտաքին առևտրի անկում (VIII դարի վերջ), խուրրիների և կասսիտների զանգվածային տեղաշարժեր և բնակեցում Հյուսիսային և Կենտրոնական Միջագետքում, Համմուրապիի դինաստիայի անկում:

*Եգիպտոս:* Միջին թագավորության թուլացում և տրոհում (VIII դարի երկրորդ կես), հիքսոսյան արշավանքը և նրանց տիրապետությունը Եգիպտոսում (VII դարի վերջ-VI դարի սկիզբ):

*Փոքր Ասիա:* Տարբեր քաղաքական միավորների միջև ծավալված հակամարտություն, Կուսսարի դինաստիայի անկում, քաղաքական անկայունություն:

*Էգեիդա:* Միջին հելլադյան մշակույթի անկում, էթնիկական նոր տարրի (ենթադրաբար՝ ախայան հույներ) ներթափանցում մայրցամաքային Հունաստան:

*Հայկական լեռնաշխարհ և Անդրկովկաս:* Մշակութային մասնատվածության աստիճանական հաղթահարում, Լեռնաշխարհի արևմուտքում մի շարք քաղաքական միավորների ձևավորում (Հայասա, Իսուվա, Ալզի):

#### **5. Մ.թ.ա. XVI-XII դդ. (ուշ բրոնզեդար)**

*Միջագետք:* Միջին բաբելոնյան և միջին ասորեստանյան փուլերը, Միտաննիի կազմավորումը և իզդրացումը: Փուլի հիմնական բնորոշ գծերը՝ կայուն պետականությունների ձևավորում, աննախընթաց տնտեսական վերելք, ակտիվ արտաքին քաղաքականություն, այսինքն, համընդհանուր վերընթաց զարգացում:

*Եգիպտոս:* Նոր թագավորության XVIII և XIX դինաստիաներ: Եգիպտական պետականության և քաղաքակրթության համընդհանուր վերելք:

*Էգեիդա:* Ուշհելլադյան մշակույթը, միկենյան քաղաքակրթության ձևավորումը և վերընթաց զարգացումը, նրա քաղաքական և մշակութային էքսպանսիան Էգեյան ծովի ավազանում:

*Հայկական լեռնաշխարհ և Անդրկովկաս:* Մշակութային մասնատվածու-

քյան ավարտ և հոնոգեն մշակութային մեծ արեալի ծնավորում: Պարսպավատ ամրոց-քնակատեղիների (կիկլոսյան ամրոցներ) առկայություն: Տնտեսության աննախադեպ վերելք («ժողովրդագրական պայթյուն»): Մշակութային լայն կապեր միջազնեության և փոքրասիական արեալների հետ: Լեռնաշխարհի արևմուտքի և հարավի պետական կազմավորումների քաղաքական մեծ ակտիվություն, որն արձանագրված է խեթական և ասորեստանյան տեքստերում:

Այսպիսով, ինչպես երևում է վերը բերված փուլերով ներկայացված իրավիճակների համեմատությունից, III հազարամյակի սկզբներից մինչև XII դ. ընկած ժամանակահատվածը որոշակիորեն բաժանվում է հինգ փուլերի, որոնք պայմանականորեն կարելի է բնութագրել որպես 1) կայունացում և վերընթաց զարգացում (1, 3, 5) և 2) ապակայունացում և վայրընթաց զարգացում (2, 4): Իհարկե, ասվածը չի նշանակում, որ առաջին տիպի փուլերի ընթացքում չեն եղել քիչ թե շատ տեսական և ընդգրկուն բացասական երևույթներ: Այդպիսիք առկա են, սակայն դրանք բնութագրական չեն եղել տվյալ դարաշրջանների համար: Հին առաջավորասիական քաղաքակրթությունների զարգացման նման ցիկլային ընթացքը թույլ է տալիս միանշանակ եզրակացնելու, որ XII դ. ճգնաժամը նախորդ երկուսի թեթ պարզ կրկնությունը չէ դրանք ծնող պատճառների տեսակետից, ապա, առնվազն, կարող էր նման պրոցեսների հետևանք լինել:

Վերոհիշյալ երկու ճգնաժամային փուլերի ընթացքում պարզորոշ նկատվող ուղեկցող երևույթները կարելի է ամբողջացնել հետևյալ կերպ.

- 1) ճգնաժամից քիչ առաջ քաղաքական, տնտեսական և մշակութային վերելք ապրող պետությունները կարճ ժամանակում վերածվում են անկայուն, ներսից արագ քայքայվող քաղաքական միավորների: Օրինակ, Աքքադը Նարամսինի հաղթական պատերազմներից անմիջապես հետո, Բաբելոնիան Համմուրապիի որդի Սամսուիլունայի օրոք, Եգիպտոսը XIII դինաստիայի վերջում և այլն:
- 2) Կենտրոնախույս ուժերի մեծ ակտիվություն, կենտրոնական իշխանության ծնական գերիշխանություն:
- 3) Մեծ պետությունների հարևանությամբ բնակվող ժողովուրդների և ցեղերի շարժունակության աննախադեպ աճ, որն արտահայտվում է խոշոր էթնիկական տեղաշարժերով:
- 4) ճգնաժամի հետևանքը՝ երկրի նվաճում հարևան ժողովրդի կողմից. Աքքադը՝ կուտիների, Եգիպտոսը՝ հիքսոսների, Բաբելոնիան կասսիտների, Հյուսիսային Սիրիան և Հյուսիսային Միջազնեքը՝ խուրիների:

Առաջավորասիական քաղաքակրթությունների պատմության նշված ճգնաժամային փուլերի գնահատման հարցում մասնագետների կողմից առաջարկվել են տարբեր տեսակետներ, սակայն, որքան հայտնի է, դեռևս գոյություն չունի որևէ սպառիչ հիմնավորում, որը կբացատրի, թե ինչու են Մերձավոր Արևելքի և Էգեիոսյան տարբեր շրջաններում, զրեթե միաժամանակ, մեկ-երկու դարի ընթացքում տեղի ունեցել վերոհիշյալ երևույթները: Օրի-

Նակ, ինչու է ներքաղաքական ճգնաժամը համընկնում հարևան ժողովրդի ազգրեսիվության աճի հետ, ինչու հենց ճգնաժամային դարաշրջանում է աճում ժողովուրդների շարժունակությունը: Իհարկե, այս կամ այն քաղաքական միավորի անկումը հարևան միավորի կամ ցեղերի հարձակման հետևանքով ամեննին չի կարելի ներկայացնել որպես ճգնաժամ: Ասկայն երբ հարձակվողի նպատակը ոչ թե միայն որևէ տարածքի հպատակեցումն է, այլ նաև դրա զանգվածային վերաբնակեցումը, որը հանգեցնում է դրա ելակետի թեկուզ մասնակի ապաբնակեցման, ապա այստեղ արդեն անհրաժեշտ է խոր պատճառներ փնտրել. քան սովորական պատերազմը հարևանների միջև: Առավել ևս, որ ճգնաժամային դարաշրջանների միգրացիաները չէին սահմանափակվում մի որոշակի տարածքով, այլ վիթխարի շրջաններ էին ընդգրկում. օրինակ, խուրդիների տարածումը Դյուսիսային Աֆրիկայում, Սիրիայում և Կիլիկիայում XVIII-XVII դդ.:

Անկասկած, ճգնաժամները քննելիս կարևոր է պարզել ենթադրվող պատճառներից առաջնայինը, որով կարող էին պայմանավորված լինել մյուսները: Առկա ուսումնասիրություններում սովորաբար բվարկվում են երկու և ավելի պատճառներ (ներքին և արտաքին), որոնց սինթեզը այլուի հանգեցնելու գոյություն ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կառույցների ու արժեքների դեգրադացիային կամ վերափոխմանը: Ընդ որում, սովորաբար չի առաջադրվում, ենթադրենք, այսպիսի հարցադրում. իսկ եթե տվյալ պետությունը չապրեր քաղաքական ճգնաժամ, կարող էին արդյոք «բարբարոս» հարևանները նվաճել այն: Կամ, եթե չլինեին «բարբարոս» հարևանների հարձակումները, կպահպանվեր արդյոք պետության քաղաքական միասնությունը:

Այս հարցադրումները լուրջ հիմք ունեն, քանի որ Մերձավոր Արևելքի պատմությունը լի է բազմաթիվ օրինակներով, երբ «ներքաղաքական-տնտեսական ճգնաժամ + արտաքին գործոն» միասնության տարրերից առաջինի րացակայությունը կամ չընդգծված բնույթը չի ավարտվել համընդգրկուն ճգնաժամով, համենայնդեպս, դրա հետևանքները արագ վերացել են: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել որոշ օրինակներ, որոնք կուսարանեն մեր հարցադրումները:

- 1) XXIII դ. կեսերին Եգիպտոսի Դին թագավորությունը տրոհվեց թագաժառանգիվ ինքնուրույն քաղաքական միավորների (նոմերի) առանց արտաքին հարձակման:
- 2) XIV դ. սկզբներին խեթական պետությունը թուրքախլիյաս III-ի կառավարման վերջերին ենթարկվեց քոլոր հարևան պետությունների գրեթե միաժամանակյա հարձակմանը և երկրի մեծ մասը, մայրաքաղաք Խաթթուսասով հանդերձ, ընկավ քշանմիների ձեռքը, բայց որոշ ժամանակ մնաց թուրքախլիյասի որդին՝ Սուլայիլուլիումասը ետ թերեց կորցրածը և նույնիսկ էլ ավելի ընդարձակեց իր պետությունը:

Այս ենթաբաժնում քննարկվող երկու «ճգնաժամային» փուլերի ընթացքում նկատվող երևույթները, ինչպես էլ որ բացատրվեն, ունեն մի կարևորա-

գույն հետևանք, որը կաղապարանում է շնորհիվ «Բրոնզեդար» հնագիտական տերմինի երեք քաղկացուցիչ մասերի միջև եղած որակական տարբերության: Յուրաքանչյուր ճգնաժամային փուլի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները հանգեցնում են տարբեր քաղաքակրթությունների միջև եղած կապերի, փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ինտենսիվացմանը, նոր տեխնոլոգիաների ներթափանցմանը մի տարածաշրջանից մեկ այլ տարածաշրջան: Վերջապես, միգրացիաների շնորհիվ ոչ միայն տեղաշարժվող ժողովուրդներն են ստիպված փոխում իրենց կենսադավարման մակարդակը և բնույթը՝ վերընթաց ուղիով՝ դեպի առաջավորը, այլև արդեն զարգացման բարձր մակարդակին գտնվող և քաղաքական անկում ապրող հասարակությունները ստիպված վերածնունդ են իրենց կենսագործունեության եղանակը: Այսինքն, ճգնաժամային փուլը հնից դեպի առաջավորը, նոր հարաբերությունները քնակոխելու տևական, «վիրահատական» միջամտության գործողություն կարելի է համարել:

Վերադառնալով XII դ. ճգնաժամին, հարկ է նշել, որ այն իր բնույթով չի տարբերվում նախորդ երկու ճգնաժամերից, իսկ աշխարհագրական ընդգրկմամբ նույնիսկ, թերևս, զերազանցում է: Վերոհիշյալ ճգնաժամերի հպանցիկ վերլուծությունը, անկասկած, կնպաստի ճիշտ գնահատելուն երրորդ ճգնաժամը, վերջինս էլ, իր հերթին, նախորդ երկուսը, որոնց վերաբերյալ եղած գրավոր և հնագիտական նյութը բավական սահմանափակ է:

Մասնագիտական գրականության մեջ XII դ. մերձավորարևելյան ճգնաժամի համար նշվում են երեք պատճառներ՝ 1) հինարևելյան հասարակությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական կառուցվածքի ներքին, օբյեկտիվ պատճառներով պայմանավորված քայքայում, 2) լայնամասշտաբ էքսիկական տեղաշարժեր, 3) բնակչիմայական պայմանների վատթարացում: Ինչպես նշվեց քիչ առաջ, մասնագետները սովորաբար առաջարկում են կոմքինացված տարբերակներ առանձին երկրների համար, խուսափելով նախապատվությունը տալ որևէ մեկին: Ստորև ներկայացնենք վերոհիշյալ պատճառները:

#### ՆԵՐՔԻՆ ԵՂՆԱԺՄԱՍ

Վերջին շրջանում մի շարք ուսումնասիրողներ XII դ. ճգնաժամի պատճառները փորձում են գտնել մերձավորարևելյան և էգեյան աշխարհի պետությունների ներսում դեռ ճգնաժամից տասնամյակներ առաջ սկսված քաղաքական և տնտեսական համակարգի փլուզման մեջ<sup>3</sup>: Ընդ որում, այս խնդրին նվիրված ուսումնասիրություններում շեշտը, որպես կանոն, դրվում է սոցիալ-տնտեսական գործոնի վրա:

Ըստ Մ. Լիվերանիի մոդելի, որը կառուցված է սիրիա-պաղեստինյան աշխարհի նյութերի հիման վրա, ուշքրոնզեդարյան ճգնաժամում ներքին գործոնը (սոցիալ-տնտեսական) գերիշխում է արտաքին գործոնի (միգրացիոն) վրա: Ներքին գործոնի քայքայիչ ազդեցության հետևանքով գալիս է մի պահ, երբ գոյություն ունեցող տարածաշրջանային խոշոր միավորներում



(եզիպտոսը, խաթթին՝ իրենցից կախյալ քաղաքական միավորներով հանդերձ) սկսվում է ճգնաժամային իրավիճակ: Այն արտահայտվում է մի շարք երևույթների տեսքով. 1) գյուղական բնակչության փախուստ աննկատաբեր հողերից՝ պարտքերի պատճառով, 2) տեղահանվող բնակչության կենտրոնացում ծովափնյա շրջաններում և գետահովիտներում, որտեղ առկա էին բերրի հողը և ջրային բավարար ռեսուրսները, 3) տեղահանվող բնակչության հաշվին քոչվոր կամ կիսաքոչվոր տարրի աճ, 4) վերը նշված երևույթների պատճառով պալատական վարչակազմի սոցիալ-տնտեսական հենարանի խարխուլում: Իսկ քանի որ պալատներում էին կենտրոնացած երկրի կենսագործունեության բոլոր թելերը, ապա դրանց քայքայումը ի վիճակի էր ճակատագրական հետևանքներ ունենալու ողջ երկրի համար: Ճգնաժամի հասունացմանը նպաստող կարևոր գործոններից նշվում է միջտարածաշրջանային առևտրի անվտանգության երաշխիքների վերացումը, կապված մետրոպոլիայի թուլության (այսինքն «մեծ արքաների» իրական իշխանության սասանում) հետ: Նշված պրոցեսների խորացման հետևանքը տարածաշրջանային վարչատնտեսական համակարգի փլուզումն էր: Նախկինում խոշոր պալատական համակարգերը իրենց տեղը զիջում են ավելի մեծաքանակ, բայց անհամեմատ ավելի փոքր քաղաքային կենտրոններին:

Ուշքրոնզեդարյան հասարակությունների անկման վերոհիշյալ մոդելը, անկասկած, ուշագրավ է այն առումով, որ դրանում առկա քայքայիչ գործոնները (կամ զոնե մի մասը) նկատելի են ոչ միայն սիրիա-պաղեստինյան շրջանում, այլ նաև մայրցամաքային Յունաստանում, Փոքր Ասիայում, Կիպրոսում և այլուր: Սակայն մի հանգամանք ստիպում է առանձնահատուկ զգուշավորություն ցուցաբերել խնդրի նման մեկնաբանման գործում:

Նշված քայքայիչ երևույթները՝ բնակչության զանգվածային հեռացում բնակավայրերից այլ շրջաններ, հաճախ նաև այլ երկրներ, քոչվորության աճ, միջազգային առևտրի անկում և այլն, առկա են եղել թե Միջին բրոնզեդարում, թե Վաղ բրոնզեդարում: Սակայն ինչպես կարող էր պատահել, որ այդ երևույթների բացասական ներգործությունը իր քարծրակետին հասներ միաժամանակ միմյանցից տարածապես հեռու գտնվող տարածաշրջաններում, գրեթե միաժամանակ: Հազիվ թե հնարավոր լինի հիմնավորել այն փաստարկը, թե միևնույն աշխարհը և սիրիա-պաղեստինյան տարածքը կամ մեկ ուրիշը կարող էին ապրել սոցիալ-տնտեսական և քաղաքական վայրէջք միևնույն մոդելով և ժամանակագրությամբ: Մ.Լիվերանիի մոդելում նշվում է ուշքրոնզեդարյան պալատական խոշոր կենտրոնների ավերման և նոր կենտրոնների ստեղծման մասին, սակայն այդ երևույթը չի հիմնավորվում: Ով ավերեց դրանք և ինչու: Բնական է որ մետրոպոլիայի անկումը պիտի կաթավածահար աներ նրան ենթակա ողջ երկրի կենսագործունեությունը, բայց ինչու արդեն հաջորդ փուլում նախկին կենտրոնների մի մասը ընդհանրապես լքվում է բավական երկար ժամանակով կամ վերջնականապես (օրինակ, Պիլոսը և այլ քաղաքներ Մեսսենիայում, խաթթուսսը և կենտրոնական Փոքր Ասիայի մի շարք քաղաքներ, Ուզարիտը սիրիական ծովափին և այլն), կամ էլ դրանց տեղում հայտնվում են մանր, ոչնչով աչքի չընկնող բնա-

կավայրեր (օրինակ, պելոպոննեսյան մի շարք բնակավայրեր երկրորդ աղետից հետո, Գորդիոնը հետագայի Փոյուզիայում, Խաթթուսասի նտիսեթական շերտերը, Կորոջուքփեն՝ Վերին Եփրատի ավազանում և այլն):

Մ.Լիփերանին բնակչության կենտրոնացումը ծովափնյա շրջաններում, ի հաշիվ խորքային երկրազործական շրջանների բնակչության, բացատրում է տնտեսության անեկամտաբերությամբ և պարտքերի առկայությամբ: Սակայն կարծես անտեսվում է այն հանգամանքը, որ ջրային ռեսուրսներով հարուստ ծովափնյա շրջանները և գետահովիտները իրենք վաղուց ի վեր գերբնակեցված էին և հազիվ թե ի վիճակի լինեին ընդունելու նորամուտ բնակչությանը և ապահովելու նրա կարիքները: Բացի այդ, ամրաշինության մեջ ուղեկցվող ու բնակչության մեծ աճ ցույց տվող միկենյան մի շարք քաղաքների օրինակը (Միկենք, Տիրիմոս, Ասինե և այլն) այլ բացատրություն է ակնկալում: Դեղինակի մոտ հստակ չի առանձնացվում այն վճռական ազդակը, որի արդյունքում երևան եկան ուշերոնգեդարյան հասարակությունների ներսում գործող բոլոր բացասական երևույթները: Այսինքն, ինչից սկսվեց ամեն ինչ: Եւ ներկայացնում է միայն ճգնաժամի ընթացքը և եղանակը, այլ ոչ դրա սկզբնավորումը<sup>4</sup>:

Մոտավորապես նույն մոտեցումն է առկա միկենյան քաղաքակրթության անկման պատճառների բացատրության հարցում մի շարք մասնագետների մոտ<sup>5</sup>: Լրանց կարծիքով, անկմանը հաջորդող դարաշրջանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի շատ երևույթներ արդեն առկա են ուշելլայրյան IIIB փուլի վերջում, այսինքն, անկման նախօրեին: Պալատների անկումից հետո շատ բան մնաց նույնը. փոխվեց միայն արտադրության կազմակերպման եղանակը և փոխանակման բնույթը: Ետճգնաժամային ժամանակաշրջանի եզնյան աշխարհը շատ ավելի առաջադիմական բնույթ ուներ, քան միկենյան քաղաքակրթությունը:

#### ԱՐՏԱՔԻՆ ԿԱՄ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՆ

Արտաքին գործոնի դերը ուշերոնգեդարյան ճգնաժամի հասունացման և կործանարար ազդեցության մեջ, որը չափազանց մեծ տեղ է զբաղում ոչ հեռավոր անցյալի ուսումնասիրություններում<sup>6</sup>, գրեթե բացառապես հանգեցվում է լայնածավալ էթնիկական տեղաշարժերին: Ինչպես նշվեց ներածության մեջ, չնայած միգրացիաներ, ընդ որում խոշոր, իրոք եղել են, սակայն մի շարք նկատառումներից ելնելով, որոնց մասին հանգամանորեն կխոսվի համապատասխան բաժիններում, դրանք չէին կարող հասցնել մերձավորարևելյան քաղաքակրթության կարևորագույն կենտրոնների գրեթե միաժամանակյա անկմանը: Արտաքին գործոնի նկատմամբ թերահավատությունը գլխավորապես պայմանավորված է հետևյալ դիտարկումներով. 1) անկմանը անմիջապես հաջորդող շրջանում եկվոր բնակչության հետքեր չկան կամ ուղղակի դրանք խիստ աննշան են մեծ միգրացիա ենթադրելու համար, 2) հնագիտորեն և զբաղվող արդյունքներով վկայված միգրացիաներն ընթացել են ոչ թե անկում ապրող պետությունների կենտրոնական շրջաննե-

րով, այլ ժայռամասային հատվածներով (օրինակ, «ծովի ժողովուրդները» Փոքր Ասիայի հարավային մասով և լեանտյան ծովափով), 3) միզրագիաներում ընդգրկված ժողովուրդները նախապես կազմել են աղետից տուժած երկրների բնակչությունը, այլ ոչ ինչ-որ տեղից (օրինակ, Եվրոպայից) եկած կիսաբարբարոս ցեղերը:

Այս նկատառումները բույլ են տալիս ներկայումս կասկածի տակ առնելու միզրագիան գործոնի խաղաղած վճռական դերը XII դ. ճգնաժամում: Հնարավոր է, խնդիրը պիտի ծնակերպել այսպես. միզրագիաները ոչ թե ճգնաժամի պատճառն են, այլ հետևանքը:

#### ԲՆԱԿԼՈՒՄՅԱԿԱՆ ՏԵՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս տեսությունը իր բազմաթիվ տարբերակներով առաջ է եկել XX դ. 60-ական թվականներին: Հնայած աստուրագետների մեծ մասը հակված է երկրորդական տեղի հատկացնելու մերձավորարևելյան ճգնաժամի հասունացման բնակչիմայական գործոնին<sup>7</sup>, սակայն XIII-XII դդ. այս տարածաշրջանում տեղի ունեցած քաղաքական կատակելիզմների և ռեզրեսիվ երևույթների համար հիմնավոր բացատրության անհնարինությունը ստիպում է լրջորեն մոտենալու այս տեսությանը: Ստորև ներկայացնենք մերձավոր Արևելքի տարբեր շրջաններում մշված ժամանակահատվածում նկատվող բնակչիմայական փոփոխությունները, որոնք կարող էին բացասաբար անդրադառնալ բնակչության կենսագործունեության վրա:

Դեռ 1960-ական թվականներին հայտնի հնագետ Կ.Շեֆերը առաջ էր քաշել մի ենթադրություն, ըստ որի Ուգարիտի անկման շրջանում (XII դ. սկիզբ) ավերված կառույցները գտնվում են մանր, փոշենման, բաց դեղնավուն միատարր մասնիկներից բաղկացած հողաշերտի մեջ, որը վկայում է այս փուլում տիրող խիստ տաք և չորային կլիմայի գոյության օգտին: Նշված շերտին նախորդող և հաջորդող մուգ շագանակագույն, ոչ փոշենիպ հողը խոնավ կլիմայի ակնառու վկայություն է<sup>8</sup>. Կ. Շեֆերի կարծիքով, նման իրավիճակ է նկատվում նաև Էնկոմիում (Կիպրոս)<sup>9</sup>:

Ուշքրոնզեդարի վերջին փուլում կլիմայական պայմանների փոփոխության հաջորդ վկայությունը գալիս է Միջագետքից: Եփրատ ու Տիգրիս գետերի մակարդակների տատանումները ուշ քրոնզ - վաղ երկաթ ժամանակահատվածում հետևյալ պատկերն են ներկայացնում<sup>10</sup>.

- 1) մակարդակի կտրուկ աճ (մոտավորապես 1450 թ.)
- 2) աճի բարձրակետ (մոտավորապես 1350-1250 թթ.)
- 3) կտրուկ անկում, նվազագույն մակարդակը մոտավորապես 1150 թ.
- 4) մակարդակի համեմատական աճ (մոտավորապես 950 թ.)

Վերը բերված տվյալները արտակարգ կարևոր են, քանի որ Առաջավոր Ասիայի երկու խոշորագույն գետերի մակարդակների անկումը ինքնին արդեն վկայում է դրանցով սնվող վիթխարի տարածքների բնակչության կյանքում տեղի ունեցած բացասական գործընթացների օգտին: Հատկանշական է, որ միջագետքյան սեպագիր տեքստերում զգալի թվով տեղեկություններ

են պահպանվել այս նույն ժամանակաշրջանում տիրող սովի մասին<sup>11</sup>: Այս առթիվ հարկ է հիշել նաև XIII դ. երկրորդ կեսին Փոքր Ասիայում եզիպտական աղբյուրներով վկայված տնտեսական ծանր կացությունը և հացահատիկի առաքումները Եգիպտոսից Փոքր Ասիա<sup>12</sup>:

Համաժամանակյա բնակլիմայական փոփոխություններ են գրանցված նաև կենտրոնական Եվրոպայում (Հունգարիա և Ալպեր), հյուսիսային Եվրոպայում (Նորվեգիա), Աֆրիկայում (Քենիա), Հյուսիսային Ամերիկայում (Կալիֆորնիա)<sup>13</sup>:

Վերոհիշյալ բնակլիմայական փոփոխությունների ենթադրվող քայքայիչ դերը Մերձավոր Արևելքի և Էգեյան ավազանի ուշքրոնգեղարյան հասարակությունների անկման գործում, իհարկե, չի կարելի մխտել: Խնդիրը միայն հետևյալն է. կարող էր արդյոք կլիմայի չորացումը, դրան ուղեկցող երևույթների հետ միասին (սով, բերքի կորուստ, ամասուների գլխաքանակի անկում, բնակչության շարժունակության աճ և այլն) հասցնել այնպիսի իրավիճակի, ինչպիսին այսօր հնարավոր է վերականգնել ճգնաժամային տարբեր տարածքներում առանձին վերցրած և ողջ մերձավորարևելյան-էգեյան տարածաշրջանում ընդհանրապես:

Ուսումնասիրողների մի մասը հավկված է ընդունելու նման հնարավորություն: Այս ուղղությամբ վերջին 3-4 տասնամյակներում կլիմայաբանական կարևոր հետազոտություններ են ընթացել Հունաստանի, Թուրքիայի, Կիպրոսի և Սիրիայի տարածքներում:

Վերոհիշյալ երկրներում գործող թվով 35 օդերևութաբանական կայանների՝ 1951-1976 թթ. գրանցած ամենամայա տեղումների քանակի և ջերմաստիճանի չափումները հանգեցրել են հետևյալ հետաքրքիր ենթադրությունների<sup>14</sup>:

Հունաստանը և Թուրքիան գտնվում են ավելցուկային և պակասավոր խոնավության գոտիների սահմանում, որով էլ պայմանավորված են այս երկրներում նկատվող երաշտային և ոչ երաշտային կոնտրաստները<sup>15</sup>: Վերոհիշյալ չափագրումների տվյալները առավել լավ են հարմարվում ուշքրոնգեղարի վերջին տեղի ունեցած իրադարձությունների կլիմայական հիմքին հատկապես 1972 թ. հունվարի առումով: Այսպես, այդ ժամանակահատվածի ընթացքում գրանցված է խիստ չորային կլիմա Պելոպոնեսի հյուսիսում, Դաշտային Կիլիկիայում և Լևանտի հյուսիսային շրջանում<sup>16</sup>: Իսկ ըստ 1972 թ. հունվարյան չափագրումներից մեկի, խիստ չորային կլիմա է արժանագրված էգեյան ավազանի հյուսիսում (հատկապես Թեսսալիայում), նորմայից ավելի չոր է կենտրոնական և հարավային Հունաստանում, նորմայից ավելի խոնավ է Կիպրոսում, սիրիական ծովափին, Պամֆիլիայում և Կիլիկիայում<sup>17</sup>:

Բ.Վայսի կարծիքով, Մերձավոր Արևելքի և Էգեյան ծովի ավազանի «խավար դարաշրջանը» ժամանակագրորեն համընկնում է արևի ակտիվության աճին, այն դեպքում երբ դրան նախորդող (1420-1260 թթ.) և հաջորդող (820 թ. հետո) փուլերը բնորոշվում են որպես արևի ակտիվության նվազման ժամանակաշրջան<sup>18</sup>:

Արևելամիջերկրածովյան ավազանում կլիմայական փոփոխություններ

րի մեկ այլ տարբերակ է առաջարկում Ռ.Քարվեները<sup>19</sup>: Ըստ նրա, XIII դ. վերջերին փոխվել են Ատլանտյան օվկիանոսի կողմից արևելք փչող խոնավ քամիների ուղիները, որոնք ընթացել են դեպի Գյուսիսային Եվրոպա: Դրա հետևանքով արևելամիջերկրածովյան ավազանում ամառային չորային կլիման շարունակվել է աշնանը և գարնանը, հասցնելով բերքի անկմանը:

Անփոփելով XII դ. մերձավորարևելյան հասարակությունների անկման և ռեզրեսիվ զարգացման խնդրում բնակլիմայական գործոնի խնդիրը, անհրաժեշտ է նշել, որ այս փաստարկը բավական լուրջ է և անկնար է այն իսպառ անտեսել, ինչպես վարվում են ոմանք: Եթե իրոք նշված դարաշրջանում իրադարձությունների ծավալմանը նպաստող գործոնների թվում եղել է նաև բնակլիմայականը, ապա, հաշվի առնելով կլիմայաբանների կողմից կատարված դիտարկումների տվյալները, կարելի է ենթադրել, որ դրանք չէին կարող միևնույն ներգործությունն ունենալ մերձավորարևելյան տարածաշրջանի տարբեր մասերի վրա: Իհարկե, տեսականորեն 1972 թ. չափագրումներին համապատասխան իրավիճակ կարող էր լինել XIII դ. վերջերին - XII դ. սկզբին, բայց միայն այդքանը: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ «Խավար դարաշրջանը» տևել է շուրջ 300 տարի, իսկ դա նշանակում է, որ կլիմայի չորացումը ըստ 1972 թ. գրաֆիկի չի կարող բացատրել XII դ. ճգնաժամն ամբողջությամբ: Ուշերոնգեղարյան հիպոթետիկ չորացումը պիտի տևեր դարեր, իսկ դա անհամեմատ ավելի հիմնավոր կլիմայաբանական պատճառներ է պահանջում:

Այնուամենայնիվ, հաջորդ բաժիններում կլիմայական գործոնի հնարավոր ազդեցությունը հաշվի կառնվի, հատկապես այնպիսի դեպքերում, երբ դրա գոյությունը հաստատող թեկուզև աննշան հիմք լինի:

## **ԷՔՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ**

Ինչպես նշվեց նախորդ բաժնում, մերձավորարևելյան ճգնաժամի բնորոշ առանձնահատկություններից առավել այքի ընկնող երևույթը աշխարհագրական լայն տարածքներ ընդգրկող միգրացիաներն էին, որոնք կործանարար ազդեցությանն են սովորաբար մասնագիտական գրականության մեջ վերագրում միկենյան քաղաքների, Խեթական տերության և լևանտյան քաղաքների անկումը: Թե որքանով է արդարացված նման մոտեցումը խնդրին, կքննարկվի հաջորդ բաժիններում, իսկ այստեղ անհրաժեշտ է նշել հետևյալը:

Միգրացիաներ, ընդ որում բավական խոշոր, իրոք եղել են, ինչի վկայությունները գտնում ենք թե համաժամանակյա գրավոր աղբյուրներում (եգիպտական, ասորեստանյան, ուգարիտյան), թե անտիկ հեղինակների երկերում, և թե հնագիտորեն: Դրանց ազդեցությունը ուշերոնգեղարի վերջին ընթացած իրադարձությունների վրա գլխավորապես կախված է տեղաշարժերին մասնակցած ժողովուրդների նախնական բնակության վայրի, միգրացիաների երթուղիների, ընթացքի ժամանակ տեղական բնակչության և միգրանտների փոխհարաբերությունների և բնակության նոր վայրում հետագա

կենսագործունեության ու հարակից այլ հարցերի պարզաբանումից: Միայն նման ուսումնասիրության արդյունքում հնարավոր կլինի որոշել միգրացիաների դերը ճգնաժամում:

Անհրաժեշտ է նշել նաև մի կարևոր անկյունաքարային խնդիր, որն առայժմ եղած մասնագիտական հրատարակություններում հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել, այնինչ դրա պարզաբանումը կարող էր վճռական դեր խաղալ ճգնաժամի գնահատման գործում: Դարցը կարելի է ձևակերպել այսպես. ովքեր էին ուշրրոնգեղարի վերջի միգրանտները, ճգնաժամ հարուցողներ կամ դրան նպաստողներ, թե ճգնաժամի զոհեր, դրա խորացումից տուժած մարդկանց առանձին խմբեր, որոնք ստիպված էին լքել իրենց նախնական բնակավայրերը, առաջ բերելով 1) ելակետային շրջանների լրիվ կամ մասնակի ապաբնակեցում և, բնականաբար, նաև քաղաքական, տնտեսական և մշակութային ավանդույթների դեզորդացիա, 2) մեկնակետում և դրա ճանապարհին գտնվող շրջանների գերբնակեցում, դրանից բխող հետևանքներով (տեղի բնակչության դիմադրություն, երկու կամ ավելի մշակույթների և կացութաձևերի համագոյակցություն և այլն):

Իհարկե, այս խնդիրը չի կարող միանշանակ լուծում ակնկալել, քանի որ տարբեր տեղաշարժային ալիքների պատճառներն ու ընթացքը կարող էին տարբեր ձևեր ընդունել և տարբեր հետևանքներ ունենալ, կախված կոնկրետ տարածաշրջանների առանձնահատկություններից, տեղաշարժերում ներգրավված ժողովուրդների զարգացման մակարդակից և այլ համաճանաչներից<sup>20</sup>:

Ստորև ներկայացվող բաժիններում և չորրորդ գլխում, բացի վերը նշված հարցերից, հնարավորության սահմաններում կքննարկվի ճգնաժամային տարբեր տարածաշրջանների փոխներգործությունը մեկը մյուսի վրա. օրինակ, ինչպիսի ազդեցություն կարող էր ունենալ միկենյան ճգնաժամը փոքրասիական կամ լեանտյան ճգնաժամերի վրա, կամ փոքրասիականը՝ լեանտյանի ու միկենյանի վրա: Բնականաբար, ազդեցություն ասելով նկատի չունենք միայն տեղաշարժերը: Այսօր անկա զրավոր աղբյուրները և հնագիտական նյութերը բավական լավ տվյալներ են պարունակում վերոհիշյալ ազդեցությունների լայն սպեկտրի օգտին:

#### «ԾՈՒԿ ԺՈՂՎՈՐՈՂՆԵՐ»

Եգիպտական աղբյուրներում պահպանված այս հավաքական տերմինի տակ ենթադրվող ժողովուրդների նախնական բնակավայրի և էթնիկական պատկանելության խնդիրը արծարծվում է արդեն շուրջ մեկ դար<sup>21</sup>: Նեղոսի Դելտայի առափնյա բնակավայրերը ասպատակող այս ժողովուրդների առաջին հիշատակությունը վերաբերում է XVIII դինաստիայի փարավոն Ամեն-հոտեպ III-ի կառավարման շրջանին (1382-1344 թթ.)<sup>22</sup>: Սակայն մինչև XIII դ. վերջերը «ծուվի ժողովուրդները» արևելամիջերկրածովյան ավազանում որևէ լուրջ դեր չեն խաղացել: Թերևս դրանցից միայն շարդանաներն էին որոշակիորեն ակտիվ եղել, որոնք հայտնի են եգիպտական տեքստերից որ-

պես վարձկան զինվորներ Ռամզես II-ի բանակում. այստեղ շարդանաները կոչվում են «ծովից եկած անպարտելի մարդիկ»<sup>23</sup>:

Իհարկե, ոչ Ամենհոտեպի, ոչ էլ Ռամզես II-ի օրոք հիշատակվող «ծովի ժողովուրդների» գործողությունները ոչ մի ընդհանուր բան չէին կարող ունենալ մեզ հետաքրքրող խնդրի հետ: Վերջինիս պարզաբանման համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում փարավոններ Մերենպտահի (1213-1203 թթ.) և Ռամզես III-ի (1184-1152 թթ.) ժամանակաշրջանից եկող գրավոր նյութերը:

Մերենպտահի օրոք է, որ եգիպտոսն առաջին անգամ լուրջ բախում ունեցավ «ծովի ժողովուրդների» հետ: Կարնակում գտնվող Ամոնի տաճարի պատին փորագրված արձանագրության համաձայն<sup>24</sup>, Մերենպտահի կառավարման հինգերորդ տարում արևմուտքից դեպի Պելտա ընթացող լիբիացիներին օգնում էին հետևյալ ժողովուրդները՝ *ʿrk, šrdn, škrš, ʿkwš և trš*:

Որ այս պատերազմի շրջանում իրադրությունը խաղաղ չէր եգիպտոսի մեկ այլ սահմանամերձ տարածքում, հայտնի է դառնում Թեբեում գտնվող Մերենպտահի ետմահու տաճարի արձանագրությունից<sup>25</sup>: Այստեղ հաղորդվում է հետևյալը. «Տելխենուն գրավված է, Խաթթիում խաղաղություն է, Քանաանը քայանված է, Աշկելունը գրավված է, Գեզերը՝ վերցված և Իսրայելը՝ ամայացված»: Վերջին հաղորդումը վկայում է Մերենպտահի արտաքին քաղաքականության ընդգրկման լայն չափերի մասին: Եթե առաջին հաղորդումը վերաբերում է միայն Պելտայից արևմուտք ընկած Տելխենու-Լիբիայի տարածքում ընթացած իրադարձություններին, ապա Քանաանի, Աշկելոնի և Գեզերի նկատմամբ իրականացված միջոցառումները կապված էին Պաղեստինում և Իսրայելում փարավոնի ձեռնարկած ակտիվ գործողությունների հետ: Այստեղ անհրաժեշտ է ընդհանուր գծերով բնութագրել Պաղեստինում ծավալված իրադարձությունները:

Ռամզես II-ի և Խաթթուսիլիս III-ի միջև կնքված խաղաղության պայմանագրից հետո երկու պետությունները վերածնեցին իրենց փոխհարաբերությունները: Լևանտյան ծովափը Փոքր Ասիան եգիպտոսի հետ կապող անենակարճ և ապահով ցամաքային ուղին էր, որն անհրաժեշտ էր ամրապնդել: Այս գործը ձեռնարկեց Ռամզես II-ը և հետագայում հաջողությամբ շարունակեց Մերենպտահը: Քանի որ սիրիական ծովափը, ի դեմս Ուզարիտի և Ամուրրուի, վերահսկվում էր Խաթթիի կողմից, ապա եգիպտացիք պիտի զբաղվեին պաղեստինյան տարածքով: Մերենպտահի արշավանքից հետո վերացվեց Աշկելոնի ինքնավար կարգավիճակը, մի շարք կարևոր քաղաքներ՝ Գազան, Աշկելոնը, Աշդոդը, Մահալը, Յաֆֆան, Ափեկը վերածվեցին ծովափով անցնող մայրուղու մատակարարման բազաների<sup>26</sup>: Եգիպտացիք ներթափանցեցին նույնիսկ Երուսաղեմի շրջակա տարածք և գրավեցին Դամասկոսը:

Վերոհիշյալը թույլ է տալիս ասելու, որ Պաղեստինում և հարակից շրջաններում Մերենպտահի գործողությունների նպատակը «ծովի ժողովուրդներին» դիմագրավելը չէր. տվյալ պահին վերջիններս գործում էին միայն

Դելտայից արևմուտք: Նշված իրադարձությունը թվագրվում է 1208 թ.:

Լիբիացիների այս դաշնակիցների մասին քիչ ավելի ուշ, իսկ այժմ «ծովի ժողովուրդների» հաջորդ հիշատակությունը Ռամզես III-ի օրոք:

«Օտար երկրները դավադրություն ծրագրեցին իրենց կղզիներում: Բուլոր երկրները միաժամանակ վերացան և ցրվեցին: Ոչ մի երկիր չկարողացավ դիմանալ նրանց զենքին՝ Խաթթին, Կողեն, Կարբեմիշը, Արցավան և Ալասիան միխանգամից՝ կտրվեցին: Ճամբար [խափեց] Ամուրրում: Նրանք ոչնչացրին դրա ժողովրդին և երկիրը այնպիսին էր, կարծես երբեք չէր եղել: Նրանք գալիս էին առաջ դեպի Եգիպտոս, սակայն նրանց առջև կրակ էր պատրաստվում: Նրանց միությունն էր փոխտացիները, տյեկեկեները, շեկեկեները, դեմիեները և վեշեշեները՝ միավորված: Նրանք ձեռքները դրեցին երկրների վրա «մինչև երկրի շրջագիծը» արիասիրտ և հավատով: «Մեր ծրագրերը կհաջողվեն»:

Ռամզես III-ի վերոհիշյալ տեքստը մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ տարածայնությունների տեղիք է տվել ինչպես բուն տեքստի ընթերցման, այնպես էլ դրա պատմագիտական արժեքի գնահատման տեսանկյունից<sup>27</sup>:

Այսպես, տեքստում թվարկվում են հետևյալ ժողովուրդները՝ prst, tkr, škrš, dny, wšš: Մերենպտահի և Ռամզեսի ցուցակներում համընկնում է միայն մեկ անվանում՝ škrš: Մյուսների մի մասը հայտնի է ավելի վաղ շրջանի եգիպտական արքյուրներից. šrdn-ը հիշատակվում են որպես եգիպտական վարժականներ Քաղեշի ճակատամարտում, իսկ rk-ը՝ խեթական վարժականներ նույն Քաղեշում<sup>28</sup>, dny-ը համեմատվել են անտիկ ավանդության դանայացիների<sup>29</sup>, prst-ը՝ փոխտացիների<sup>30</sup>, իսկ tkr-ը՝ կրկին հունական առասպելական հերոս Տևկրոսի հետ<sup>31</sup>:

Առայժմ մի կողմ թողնելով «ծովի ժողովուրդների» էթնիկական պատկանելության և տեղադրման խնդիրը, փորձենք քննարկել Ռամզես III-ի հիշատակած այս ժողովուրդների ձեռնարկումների հավաստիության հարցը: Կարող էին արդյոք նրանք հեղինակ դառնալ այնպիսի խոշոր աղետների, ինչպիսիք նկարագրվում են Ռամզեսի տեքստում:

Եգիպտական տեքստի ներկայացրած աղետը, իրոք, վիթխարի է: «ծովի ժողովուրդների» հարվածների տակ ոչնչացան Խաթթին, Կողե-Կիլիկիան, Կարբեմիշը. Արցավան, իսկ վերջում, Ռամզես III-ի հետ բախվելու նախօրեին նաև Ամուրրուն: Թվարկված երկրների զբաղեցրած աշխարհագրական լայն տարածքը, բնականաբար, ստիպում է ենթադրել մի լայնածավալ հարձակում:

Մասնագիտական գրականության մեջ վերջին շրջանում նկատվում է Ռամզես III-ի տեքստի հաղորդած տեղեկությունների նկատմամբ թերահավատ մոտեցում<sup>32</sup>: Ներկայացվող փաստարկների հիման վրա ենթադրվում է, որ այնտեղ նկարագրվող լայնամասշտաբ աղետը իրականում ամեննին այդպիսին չի եղել: Բանն այն է, որ «ծովի ժողովուրդներին» վերագրվող բուլոր ավերածությունները գտնվել են կամ ծովափին, կամ ծովից փոքր հեռա-



վորության վրա: Աս ստիպում է ենթադրել, որ այս ժողովուրդների շարժումները կարող էին բացասաբար անդրադառնալ միայն առափնյա բնակավայրերի կենսագործունեության վրա: Խեթական տերության պես խոշոր ցամաքային պետությունը, ինչպես նաև ցամաքից հարյուրավոր կիլոմետրեր հեռու ընկած Կարբեմիջը չէին կարող կործանվել առափնյա շրջաններում գործող «ծովի ժողովուրդների» հարձակումներից, մասնավորապես որ վերջիններիս ներկայությունը հավաստող ուշեիլադյան IIIC1b խեցեղեն այստեղ չկա (տես ստորև):

Հնարավոր է արդյոք պարզել, թե որտեղից կարող էին սկսվել «ծովի ժողովուրդների» տեղաշարժերը, ովքեր, ինչպիսի էթնոմշակութային արեալի ներկայացուցիչներ կարող էին ձեռնարկել նման հարձակումներ:

Որ «ծովի ժողովուրդների» հարձակումները զուտ ռազմական, տարածքային զավթումների նպատակ չէին հետապնդում, այլ ավելի շուտ բնակչության լայն զանգվածների միգրացիաներ էին, ապացուցման կարիք չունի<sup>33</sup>: Նմանապես պարզ է, որ միգրացիաները արդյունք են 1) նախնական բնակչության վայրում կենսապայմանների վատթարացման, կամ 2) հարևան ժողովուրդների կողմից ռազմական նվաճման սպառնալիքի: Արանցից որին կարելի է նախապատվություն տալ տվյալ պարագայում, և կարելի է արդյոք փաստական-տրամաբանական հիմքի վրա որոշել «ծովի ժողովուրդների» ելակետը:

Ինչպես նշվեց վերը, եգիպտական աղբյուրներում հիշատակվող «ծովի ժողովուրդների» անվանումների համադրությունը այլ աղբյուրներից հայտնի էթնոնիմների հետ, չնայած որոշակի հաջողություններին, հաճախ միայն էլ ավելի է քարդացնում խնդրի լուծումը: Եգիպտական տեքստերից կարելի է անել միայն մեկ կարևոր եզրակացություն. թե խեթերը, և թե եգիպտացիք առնվազն XIII դ. կեսերից շատ լավ ծանոթ էին այդ ժողովուրդներին, համեմայնդեպս դրանց մի մասին (շարդանաներ և լուկկաներ): Իսկ դա նշանակում է, որ այդ ժողովուրդներին պիտի փնտրել ոչ թե հեռավոր երկրներում (օրինակ, Արևմտյան Միջերկրականում կամ Գյուսիսային Բալկաններում), այլ Խաթթիի և Եգիպտոսի քաղաքական ազդեցության ոլորտում կամ գոնե այդ ազդեցությանը անմիջականորեն հարող շրջաններում: Ընդ որում «ծովի ժողովուրդների» ելակետը պիտի գտնվեր ծովափնյա տարածքներում: Այս պայմաններին, թվում է, լիովին համապատասխանում է միայն Էգեյան ծովի ավազանը (մայրցամաքային Գունաստան, կղզիներ, Փոքր Ասիայի արևմտյան և հարավ-արևմտյան շրջաններ)<sup>34</sup>:

«Ծովի ժողովուրդների» ելակետի և միգրացիաների ուղղությունների որոշման խնդրում, բացի եգիպտական աղբյուրներից, գոյություն ունի մեկ այլ աղբյուր՝ հնագիտական: Խոսքը ուշեիլադյան IIIC խեցեղենի մասին է, որը հայտնվում է մոտավորապես XII դ. սկզբներին Պելոպոնեսում, փոխարինելով IIIB-ին: Նույն խեցեղենը նույն ժամանակներում հայտնվում է նաև Տրոյայում (VIIb2 շերտում), Կիպրոսում, Կիլիկիայում (Տարսուս), Պաղեստինում, և հնագետները այն կապում են «ծովի ժողովուրդների» հետ<sup>35</sup>:

Պելոպոնեսյան IIIC-ի առկայությունը փոքրասիական-լեանտյան ծո-

վափնյա շրջաններում դժվար թե հնարավոր լինի բացատրել վերջիններիս վրա արդեն անկում ապրող կամ ապրած միկենյան խեցեգործական մշակույթի ազդեցությամբ: Մանավանդ որ դրանից դեռ տասնամյակներ առաջ միկենյան արտաքին առևտուրը նշված շրջանների հետ խիստ նվազել էր, իսկ որոշ դեպքերում նույնիսկ դադարել<sup>36</sup>: Մնում է միայն ենթադրել III-C-ի ստեղծողների առկայությունը Մերձավոր Արևելքի վերոհիշյալ շրջաններում, մի բան, որ հավաստվում է նաև գրավոր աղբյուրներով:

Հայտնի է, որ Տրոյա VIIa և VIIb1 շերտերն ավերվել են արտաքին հարձակման հետևանքով XIII դ. երկրորդ կեսի ընթացքում<sup>37</sup>: XIII դ. վերջերին-XII դ. սկզբներին երկու հաջորդական ավերածություններ են գրանցված Կիպրոսում (Ենկոմի և Կիտիոն)<sup>38</sup>, ավերածություններ կան նաև Տարսուսում (Ղաշտային Կիլիկիա)<sup>39</sup> և լեանտյան ծովափին (Ուգարիտ)<sup>40</sup>: Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա այստեղ «ծովի ժողովուրդների» առկայությունը կասկածից վեր է. այն ապացուցվում է ինչպես X դ. եգիպտական աղբյուրով («Ուն-Ամոնի ճանապարհորդությունը Բիբլոս»)՝<sup>41</sup>, այնպես էլ Աստվածաշնչի տվյալներով<sup>42</sup>:

Այսպիսով, գրավոր և հնագիտական աղբյուրները միանշանակ վկայում են Փոքր Ասիայի և Լեանտի առափնյա շրջաններում XII դ. ընթացքում «ծովի ժողովուրդների» ներկայության օգտին: Քանի որ Փոքր Ասիայի համար առկա նյութը բավական սահմանափակ է, ապա ստորև ներկայացնենք այդ տեղաշարժերի հետևանքները լեանտյան տարածաշրջանի վրա ըստ հնագիտական աղբյուրների: Վերջիններս գալիս են համեմատաբար լավ ուսումնասիրված մի քանի տասնյակ բնակավայրերի համապատասխան շերտերից:

Սիրիա-պաղեստինյան տարածաշրջանում XIII դ. վերջերին-XII դ. սկզբներին հնագիտորեն վկայված ավերածությունների և «ծովի ժողովուրդների» հիշատակությունների ժամանակագրական կապից բխող եզրակացությունները զգալիորեն կախված են հիշյալ ավերածությունների բնույթի և այդ բնակավայրերի հետագա կենսագործունեության աստիճանի պարզաբանումից: Ահա սույն խնդիրները լուսաբանող նյութի ուսումնասիրության արդի վիճակը<sup>43</sup>: Լեռկայացվող հնավայրերը թվարկվում են հյուսիսից (Ուգարիտ-Ռաս Շամրա) հարավ (հարավային Պաղեստին), ներառելով նաև ծովափից որոշակի հեռավորության վրա գտնվող շրջանները:

## **ՄԻՐԻԱ-ԼԻՐԱՆԱՆ**

*Ուգարիտ:* ուժեղ ավերածություններ, մշակույթի ընդհատում (համապատասխանաբար, նաև՝ ալաբոնակեցում):

*Տյուրոս:* ուշքրոնգեղարի վերջին XV շերտը ավարտվում է մասնակի ավերումով, իսկ հաջորդ XIV շերտը մշակութային կտրուկ անկում է ցույց տալիս:

*Սարեպտա:* ուշքրոնգեղարի վերջին շերտը (G-F) շարունակվում է վաղ երկաթեդարում (E2-1), կարճատև ընդհատումով:

## **ՊԱՂԵՍՏԻՆԻ ԾՈՎԱԾ**

Թել Արու-Չավվան V C, Թել Քեյսան 13, Աշող XIV, Թել Չերոր XII, Աշկելուն V և, հավանաբար, նաև Դորը և Յերիշեղը ավերածությունների շերտեր ունեն: Այս բնակավայրերը չեն լքվել, սակայն նկատվում է նոր բնակչության ներհոսք, ինչի վկայությունը տեղում պատրաստված ուշմիկենյան III C1b միագույն խեցեղենն է և էգեյան տարրեր ունեցող մարդակերպ կավե դագղները:

## **ՊԱՂԵՍՏԻՆԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ**

ԱֆՖուլեի IV, Թել Քիրի, Ափեկ X 12, Թել Բատաշ VI, Բեթ-Շեմեշ IVA, Թել Սիպպոր III, Թել Բեյք Սիրսիմ C2, Թել Սերաս IX1-3, Թել Չարոր, Թել էլ-Ֆարահ, Դեյր Ալլա A2 (՝): այս բնակավայրերի ավերածությունները շատ չեն և դրանց հեղինակների ինքնության վկայությունը XII դ. կեսերից հետո հայտնվող փղիշտական երկգույն խեցեղենն է:

Վերը ներկայացված ցուցակից կարելի է եզրակացնել, որ լևանտյան ծովափին և քիչ ավելի խորքային շրջաններում ուշքրոնգեդարյան բնակավայրերի միայն մի փոքր մասն է ցույց տալիս մշակութային ընդհատում և լիակատար ավերում (Ուգարիտը և, մասամբ, Տյուրոսը): Մյուսները, գլխավորապես Պաղեստինում, նվաճվելուց հետո շարունակել են կենսագործունեությունը, ընդունելով եկվոր տարրի որոշ քանակություն: Վերջինիս հայտնվելու եղանակի մասին կարելի է պատկերացում կազմել մեկ այլ դիտարկման հիման վրա:

Պաղեստինի մեծ թվով բնակավայրերում առկա է փղիշտական երկգույն խեցեղենը, սակայն այստեղ բացակայում է ավերածության շերտը<sup>44</sup>: Դա կարող է վկայել նոր էթնիկական տարրի խաղաղ ներթափանցման օգտին: Բնակավայրերի մեկ այլ խմբում<sup>45</sup> երթեմն XII դ. 70-80-ական թվականներին, առանց ավերածության շերտի, հայտնվում է փղիշտական երկգույն խեցեղենը<sup>46</sup>. այնուամենայնիվ, այդ բնակավայրերը շարունակում են մնալ եգիպտական տիրապետության ներքո:

Սիրիա-լիբանանյան ծովափին և Պաղեստինում վկայված ավերածությունները և ակնհայտ էգեյան աղերսներ ունեցող ուշիելլադյան III C1b և փղիշտական երկգույն խեցեղենների հայտնվելը վաղուց ի վեր ընդունվում է որպես դեպի այս տարածաշրջան «ծովի ժողովուրդների» միգրացիայի վկայություն: Ընդ որում, ժամանակագրորեն այս երկու տիպի եկամուտ խեցեղենները ակնհայտորեն համապատասխանում են եգիպտական աղբյուրներում վկայված «ծովի ժողովուրդների» հարձակումների երկու ալիքներին (Սերենպատահի և Ռամգես III-ի օրոք): Լևանտյան ծովափի ավերածությունները հատկապես ուժեղ են Սիրիայում և աստիճանաբար հարձակման ուժգնությունը նվազում է Պաղեստինում: Թվում է, կարելի է համաձայնվել այն տեսակետի հետ, ըստ որի, Պաղեստինում եկվորների մի մասը, ամենայն հավանականությամբ, պիտի բնակեցվեր եգիպտացիների կողմից իրենց ենթակա որոշ բնակավայրերում<sup>47</sup>:

Այսպիսով, կարելի է անցնել որոշ եզրահանգումների.

1) Մերենապտահի օրոք, 1208/7 թ. «ծովի ժողովուրդների» հարվածը վրա է հասել Նեղոսի Դելտայի արևմտյան մասին: Այստեղ ինչ-որ տեղից եկած վերաբնակիչները, լիթիացիների հետ դաշնակցած, փորձել են բնակություն հաստատել Դելտայի երկրագործական շրջաններում, սակայն ետ են մղվել: Հավանաբար, այս իրադարձությունից քիչ ավելի ուշ Մերենապտահը լայն հարձակողական գործողություններ է ծավալել Քանաանում, Պաղեստինում և Իսրայելում, որոնց արդյունքում նշված շրջաններն անցել են Եգիպտոսի տիրապետության տակ:

Մերենապտահի կառավարման շրջանում տեղի ունեցած քաղաքական անցքերի մասին առկա եգիպտական աղբյուրները բավական ակնառու կերպով վկայում են հետևյալի մասին. 1) սիրիա-պաղեստինյան շրջանում տվյալ պահին «ծովի ժողովուրդներ» չեն եղել. այստեղ Եգիպտոսի հակառակորդները տեղական մանր իշխանություններն էին (Գեզերը, Աշկելոնը, Գազան և այլն): Փոքր Ասիայում նույնպես առայժմ խաղաղ էր՝ էթնիկական տեղաշարժերի տեսանկյունից:

2) Ռամզես III-ի կառավարման շրջանում հանդես եկող «ծովի ժողովուրդների» հիշատակության մեջ համատարած աղետի համատեքստում առկա է մի դիտարկում. նշված դարաշրջանում վկայված ավերածությունները և եգիպտական աղբյուրում նշվող կործանված երկրները համընկնում են: Այսպես, շուրջ մեկ տասնյակ ավերված բնակավայրեր կենտրոնական Փոքր Ասիայում, Տարսուսը՝ Կողե-Կիլիկիայում, Էնկոմին և Կիտիոնը՝ Ալասիա-Կիպրոսում, Ուզարիտը և մի շարք բնակավայրեր Սիրիայի ծովափնյա շրջանում: Առայժմ տվյալներ չկան Արցախյան և Կարգամիսի վերաբերյալ<sup>48</sup>: Սակայն գրավոր և հնագիտական տվյալների հիման վրա առաջարկված նախկինում համոզիչ քվացող ենթադրությունը կարող է խաբուսիկ լինել ոչ միայն ռազմավարական տեսանկյունից (ծովային արշավանքներին սովոր բնակչության ներթափանցում ցամաքային դժվարամատչ տարածքներ՝ կենտրոնական Փոքր Ասիա), այլև աղետի ենթարկված որոշ շրջաններում եկվորների գոյությունը հաստատող նյութական վկայությունների բացակայության տեսանկյունից: Ոչ մի կերպ հնարավոր չէ բացատրել Հալիսի ոլորանի ներսում գտնվող քաղաքների ավերումը, որին պիտի հաջորդեր գաղթողների հետընթաց շարժումը: Մնում է ենթադրել, որ կամ ժողովուրդների նման վիթխարածավալ տեղաշարժ չի եղել, կամ էլ «ծովի ժողովուրդների» միգրացիաների թիրախն են եղել մի շարք ծովափնյա տարածքներ, օրինակ, Կիպրոսը, Կիլիկիան, սիրիա-պաղեստինյան շրջանը:

3) Ռամզես III-ի օրոք «ծովի ժողովուրդներին» նախկինում վերագրվող ավերածությունների չափերը հազիվ թե խոշոր լինեին նաև

հետևյալ պատճառով: Արցավայի, Կիպրոսի և Նաթթիի քվարկումը ավերված երկրների շարքում խիստ կրճատում է այն աշխարհագրական արեալը, որտեղից կարող էր բնակչության մեծ արտահոսք լինել, այսինքն, միգրացիաների ելակետը: Քիչ թե շատ հավանական թեկնածուներ են մնում մայրցամաքային Յունաստանը և Էգեյան ծովի կղզիները: Այս երկու տարածքների խնդիրը կքննարկվի ավելի ուշ, իսկ այժմ XII դ. ճգնաժամի շրջանում գրանցված մյուս տեղաշարժերի մասին:

#### ԲԱՆԱԿՆՅԱՆ ԺՈՂՈՒԹՐՈՆԵՐ (ԹԵՐԱԿԱՏԻՆԵՐ, ՓՈՅՈՒՂԱՏԻՆԵՐ)

Ուշբրոնզեդարի վերջին փուլում Յուսիսային Բալկաններից դեպի Փոքր Ասիա թրակա-փոյուզական ժողովուրդների տեղաշարժի մասին հայտնի էր դեռ անտիկ հեղինակներին: Սակայն նույնիսկ այդ իրադարձություններին ժամանակագրորեն շատ ավելի մոտ կանգնած հույն պատմիչներն ու բանաստեղծները համակարծիք չէին քաղկանյան միգրացիայի ժամանակի հարցում: Հարկ է նշել, որ վաղ անցյալի բոլոր իրադարձությունները սովորաբար թվագրվում էին Տրոյական պատերազմի հետ ունեցած հարաբերակցության միջոցով: Վերջինս, ինչպես տեսանք վերը, ինքը ճշգրիտ թվագրման կարիք ունի (Գլուխ 1.3): Քանի որ քաղկանյան միգրացիայի վերաբերյալ անտիկ աղբյուրների տեղեկությունները հավաքված և հանգամանորեն քննարկված են տարբեր հեղինակների կողմից<sup>49</sup>, թվարկենք միայն հիմնական, գերիշխող տեսակետները:

Այսպես, Ստրաբոնը հայտնում է, որ փոյուզացիք, որոնք մինչև տեղաշարժը կոչվել են բրիգներ, եկել են Փոքր Ասիա կամ Տրոյական պատերազմից քիչ առաջ կամ քիչ ավելի ուշ<sup>50</sup>: Փոյուզացիների ներկայությունը Փոքր Ասիայում նախքան Տրոյական պատերազմը նշվում է Դոմեռոսի մոտ: Ըստ «Իլիականի», Տրոյայի արքա Պրիամոսը ժամանակին որպես փոյուզական առաջնորդներ Օտրևսի և Միզդոնեսի դաշնակից մասնակցել է ամազոնուհիների դեմ ճակատամարտին՝ Սանգարիոս գետի մոտ<sup>51</sup>. վերջինս հետագայի Մեծ Փռուզիայի տարածքն էր: Ըստ լիդիացի պատմիչ Քսանթոսի (մ.թ.ա. V դ.), փոյուզական տեղաշարժը եղել է Տրոյական պատերազմից հետո՝ միսիացիների հետ միասին<sup>52</sup>:

Փոյուզական և նրանց ազգակից ցեղերի՝ դեպի Փոքր Ասիա կատարած տեղաշարժի մասին անտիկ աղբյուրների տեղեկությունները, չնայած որոշ հակասություններին, այնուամենայնիվ, արժանի են վստահության, քանի որ 1) հույները, լինելով այդ ժողովուրդների անմիջական հարևանները, կարող էին ծանոթ լինել նրանց վաղ շրջանի պատմությանը, 2) հյուսիսբալկանյան միգրացիան ասպացուցվում է նաև հնագիտորեն և անվանաբանակա՝ շանրակշիռ նյութերով: Եթե Փոքր Ասիայի մ.թ.ա. I հազարամյակի տեղանունների շարքում հյուսիսբալկանյան զգալի տարրի առկայությունը կարող է վկայել միայն նման միգրացիայի գոյության օգտին որևէ անորոշ պահին, ապա հնագիտական նյութը ի վիճակի է պարզելու դրա կոնկրետ ժամանակը, տա-

րածման արեալը և ազդեցությունը տարածաշրջանի վրա: Վերոհիշյալ հարցերը մասնագիտական զրականության մեջ ամենատարբեր, միմյանց տրամագծորեն հակասող տեսակետներ են առաջ բերել: Ատորն կիղվեն դրանց շուրջը եղած կարծիքները («Խաթթիի անկումը» բաժնում), իսկ այժմ տեսնենք, թե ինչպիսի հնագիտական նյութի վրա է ապացուցվում բալկանյան միգրացիան:

### ՏԵՂԱՄԻԹԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Ինչպես նշվեց վերը, անտիկ աղբյուրները փոյուզացիների և մյուս ժողովուրդների շարժումը Փոքր Ասիա դնում են Տրոյական պատերազմի ժամանակներում: Քանի որ Տրոյական պատերազմի համար առաջարկված նորագույն կարծիքները այն տեղադրում են XIII դ. երկրորդ կեսի շրջանակներում կամ քիչ ավելի վաղ (տես «Տրոյական պատերազմը» բաժինը), ապա հենց այս փուլի ընթացքում Տրոյա-Ֆիսարոլլկի ավերածություններից որևէ մեկի կամ նույնիսկ երկուսի (VIIa և VIIb1) հետ կարելի է կապել բալկանցիների ընթացքը հյուսիս-արևմտյան Փոքր Ասիա և այլ շրջաններ: Իհարկե, տեսականորեն կարելի է պատկերացնել, որ միգրանտները կամ գոնե դրանց առաջին ալիքը կարող էր և հետքեր չթողնել Տրոյայում, այլ շարժվել դեպի արևելք, հարավ-արևելք: Սակայն միաժամանակ նույնքան դժվար է պատկերացնել, որ քիչ թե շատ խոշոր զանգվածների տեղաշարժի դեպքում ժամանակի և տարածաշրջանի կարևորագույն քաղաքներից մեկը՝ Տրոյա VIIa-ն կամ նրա հաջորդը խուսափեին միգրանտների հարվածներից:

Տրոյա VIIa-ի ավերումը սովորաբար քվազրվում էր XIII դ. 50-40-ական թվականներով<sup>53</sup>: Սակայն հետազայում VIIa-ի ավերման ժամանակագրությունը ցածրացվեց մինչև XIII դ. 20-ական թվականները, հիմք ընդունելով ավերման պահին այստեղից հայտնաբերված ուշիլլադյան III C տիպի մի քանի խեցեթեկորներ<sup>54</sup>: Այսինքն, ավերածության հեղինակներ կարող էին լինել ինչպես միկենցիները<sup>55</sup>, այնպես էլ բալկանցիները: Վերջիններիս մասնակցության օգտին է վկայում այսպես կոչված Coarse Ware-ը, որը հայտնվում է VIIa-ի ավերմանը հաջորդող VIIb1-ում: Այս խեցեղենի աղբյուրը հյուսիսբալկանյան տարածքն է:

Այնուամենայնիվ, եթե նույնիսկ VIIa-ի ավերման պահին բալկանյան տարրը ներթափանցել է Փոքր Ասիա, այդ տեղաշարժի չափերը պիտի փոքր լինեին, քանի որ ավերումից 1-2 սերունդ հետո Տրոյայում դեռևս շարունակվում է նախկին մշակույթը, այսինքն, նոր տարրի դերը VIIb1-ում վճռորոշ չի եղել:

Բալկանյան միգրացիայի հաջորդ հնարավոր ժամանակահատվածը Տրոյա VIIb1-ի ավերումն է, որին հաջորդող VIIb2-ը անհամեմատ ավելի լավ է համապատասխանում մեծ միգրացիայի ժամանակ համարվելուն երկու պատճառներով.

- 1) Տրոյա VIIb2-ը նախորդ փուլի հետ մշակութային շատ քիչ առնչություններ ունի: Այստեղ հայտնվող և գերիշխող խեցեղենը՝

Buckelkeramik-ը ակնհայտ քրակյան ծագում ունի<sup>56</sup>:

- 2) Տրոյա VIIb1-ը ավերվել է մոտավորապես 1200 թ. սահմաններում, այսինքն, խեթական մայրաքաղաքի և Մերծավոր Արևելքի մյուս բնակավայրերի ավերումների ժամանակաշրջանում:

Վերոհիշյալ երկու ժամանակահատվածներից երկրորդը ակնհայտորեն ավելի հարմար է ենթադրելու որպես հյուսիսբալկանյան միգրացիայի ժամանակ:

Ավածը ամեննին չի նշանակում, որ XIII դ. վերջերին Բալկաններից Տրոյա ներթափանցած ժողովուրդները անպայման փոյուզացիներ են եղել: Ավելին, որոշ նկատառումներով, ինչի մասին կխոսվի հաջորդ ենթաբաժիններում, միգրանտների առաջին ալիքը, հավանաբար, այլ պատկանելություն կարող էր ունենալ:

### ՏԵՂԱՇՄՐԺԻ ՍՍՍԵՏԱԲԵՆԵՐԸ

Տրոյա VIIa-ի ավերումից հետո VIIb 1-ում հայտնվող Coarse Ware-ի տարածման սահմանափակ բնույթը ինչպես բուն Տրոյայում, այնպես էլ քաղաքայությունը Տրոյայի այլ շրջաններում<sup>57</sup> վկայում է այս ժամանակաշրջանում տեղի ունեցած միգրացիայի, եթե այդպիսին իրոք եղել է, տեղական նշանակության օգտին:

Ինչ վերաբերում է VIIb1-ի ավերման հետ կապվող բալկանյան միգրացիային, ապա այստեղ արդեն պատկերն այլ է: Այս խնդրում հնագիտական նյութը ավելի մեծ է և ընդգրկում է աշխարհագրական լայն տարածք: Որպեսզի հնարավորության սահմաններում ավելի ճշգրիտ պատկերացում կազմվի XIII դ. վերջերին-XII դ. սկզբին Յուսիսային Բալկաններից ընթացած միգրացիայի մասին, փորձենք վերլուծել դրա ընդգրկած բոլոր հնարավոր աշխարհագրական տարածքները՝ Բալկանյան Թրակիայից մինչև կենտրոնական Փոքր Ասիա:

Եթե Յուսիսային Բալկաններից, մասնավորապես, Թրակիայից նշված ժամանակաշրջանում քիչ թե շատ խոշոր չափերի միգրացիա լիներ, ապա այստեղի ուշրոնզեղարյան բնակավայրերի մի մասը անխուսափելիորեն պիտի մշակութային ընդհատում կամ զոնե կենսագործունեության չափերի նվազում ցույց տար: Այսինքն, այս տարածքը պիտի զրկվեր բնակչության քիչ թե շատ զգալի մասից:

Սակայն Բալկանյան Թրակիայի հնավայրերի ուսումնասիրությունները վկայում են որևէ ընդհատման կամ մշակութային անկման քաղաքայության օգտին<sup>58</sup>: Ավելի շուտ կարելի է ենթադրել տասնամյակների ընթացքում Թրակիայից Բալկանյան տարրի խաղաղ ներթափանցում փոքր խմբերով, քան միաժամանակյա ավերիչ տեղաշարժ<sup>59</sup>: Բալկանյան Թրակիայի հնավայրերի ուսումնասիրությունից ստացված պատկերացումը չի խախտվում նաև Տրոյայում տիրող իրավիճակի վերլուծությունից: Այստեղ, բացի Տրոյա VIIb1-ից, 1200 թ. մոտերքում այլ ավերածություններ չկան<sup>60</sup>:

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է իրավիճակը Տրոսդայից հարավ-արևելք, Սանգարիոսի հովտում, որտեղ շատ ավելի ուշ ձևավորվեց Սեծ Փռուզիան, ինչպես նաև կենտրոնական Փոքր Ասիայում: Սրանք այն շրջաններն են, որտեղով, ըստ ավանդական տեսակետի, պիտի անցած լինեին խեթական տեղությունը կործանած եվրոպական ցեղերը:

Սանգարիոսի հովտում գտնվող Փռուզիայի մայրաքաղաք Գորդիոնի հնագիտական ուսումնասիրությունը մինչև 1980-ական թվականների վերջերը կատարված պեղումների լուսի տակ վկայում էր, որ ուշրրոնգեղարի եզրափակիչ փուլում, որը ժամանակագրորեն համընկնում է խաթթի անկման հետ, և նույնիսկ դրան հաջորդող զգալի ժամանակահատվածի ընթացքում այստեղ խոշոր ավերածություններ վկայված չեն: Սա դրոշմ էր մասնագետներին խոսելու բալկանյան եթնիկական խմբերի դանդաղ, աստիճանական ներթափանցման մասին տեղական միջավայր<sup>61</sup>:

Բալկանցիների ներկայությունը Գորդիոնում 1200 թ. մոտերքում փաստվում է այստեղ խեթական ժամանակաշրջանի եզրափակիչ շերտին հաջորդող ետխեթական առաջին շերտում հայտնվող՝ առանց բրուտի անիվի պատրաստված կոպիտ, պարզունակ խեցեղենի առկայությամբ: Ինչ է իրենից ներկայացնում այդ խեցեղենը և հնարավոր է արդյոք դրա մերձակա և հեռավոր զուգահեռների հիման վրա հետևություններ անել ենթադրյալ բալկանյան եկվորների տեղաշարժի ընթացքի ու ընդգրկման չափերի մասին:

Բանն այն է, որ Տրոյա VIIb1-ում և VIIb2-ում հայտնվող Coarse Ware-ը և Buckelkeramik-ը ուղղակիորեն կապված չեն Գորդիոնի վերոհիշյալ խեցեղենի հետ: Դրանց միջև կան արմատական տարբերություններ և կապը անուղղակի է<sup>62</sup>: Տրոյա VIIb2 շերտի խեցեղենի ուղղակի զուգահեռները գտնում են, բացի Տրոսդայից, միայն Մարմարա ծովի և Բոսֆորի հյուսիսային ափամյա շրջաններում և ավելի հյուսիս<sup>63</sup>: Սա բույլ է տալիս ենթադրելու, որ Տրոյա VIIb1-ն ավերողները և այն վերաբնակեցնողները, հավանաբար, սահմանափակվել են միայն Տրոսդայով, համեմայնդեպս, 1200 թ. մոտերքում և դրանից դեռ բավական ժամանակ անց: Այստեղից կարելի է առաջարկել երկու այլընտրական ենթադրություններ.

- 1) Տրոյայի և Գորդիոնի նոր բնակիչները տեղաշարժային տարբեր ակիցների կողմեր են եղել: Այս դեպքում Տրոյա VIIb1-ը և Գորդիոնը հազիվ թե զրավված լինեին զրեթե միաժամանակ<sup>64</sup>:
- 2) Նշված երկու քաղաքների նոր բնակիչները մշակութային առումով միատարր չեն եղել:

Սանգարիոսի հովտում ուշ բրոնզից վաղ երկաթ անցման փուլի իրական պատկերի և բալկանյան միգրացիայի գնահատման հարցում հատկապես կարևոր նյութեր են ի հայտ եկել 1988-1989 թթ. ընթացքում<sup>65</sup>:

Խեցեղենի, ճարտարապետության և այլ տվյալների հիման վրա հստակորեն գծագրվում են Գորդիոնի ետխեթական շրջանի երկու փուլեր, որոնցից յուրաքանչյուրը, ըստ պեղող հնագետների հիմնավոր կարծիքի, եթնոմշակութային երկու տարբեր զանգվածների առկայության արդյունք է: Այդ



փուլերն ընդգրկում են մոտավորապես 1200-950/900 թթ., այսինքն, խեթական ժամանակաշրջանի ավարտից մինչև նոր բնակչության հանդես գալը համեմատաբար մեծ ժամանակագրական ճեղքվածք չկա, եթե այդպիսին ընդհանրապես-առկա է<sup>66</sup>: Այդ փուլերն են՝ 1) Յասսըիյուլք 7B (ունի երկու ենթաշերտ - մինչև 1000 թ. մոտերքը), 2) Յասսըիյուլք 7A (1000-950/900 թթ.)<sup>67</sup>:

Գորդիոնի 7B-ին բնորոշ խեցեգործական միակ համալիրը բաղկացած է սև գույնի, առանց բրուտի անիլի պատրաստված և ցածր ջերմաստիճանի տակ թրծված (600-700°) անոթներից: Որ Գորդիոնի նոր բնակչությունը օգտվել է ոչ թե արիեստանոցային ստանդարտ իրերից, այլ սեփական, տնայնագործական արտադրանքից, լավ երևում է հետևյալ դիտարկումից. նույնատիպ անոթները տարբերվում են զրեթե բոլոր հատկանիշներով:

Կարևոր է նշել, որ այս խեցեղենը չունի տեղական նախատիպ: Ուշրոն-գեղարյան խեցեգործական ավանդույթը 7B-ում չի շարունակվել, որը բույլ է տալիս վստահորեն խոսելու խեթական շրջանի մշակույթի լիակատար ընդհատման, այլ ոչ աստիճանական անցման մասին<sup>68</sup>:

Գորդիոնի հաջորդ՝ 7A փուլը իր մշակութային համալիրով ակնհայտորեն նախորդի շարունակությունը չէ. այն իր նախատիպը չունի ոչ ուշ բրոնզեդարում (Յասսըիյուլք 8), ոչ էլ 7B-ում<sup>69</sup>: Մինևույն ժամանակ, 7A-ում հայտնվող գորշ խեցեղենի բոլոր տիպերը լավ վկայված են հետագա փուլերի փռյուզակված մշակույթում, որն, անկասկած, խոսում է 7A-ի և Գորդիոնի հաջորդ փուլի միջև շարունակականության օգտին<sup>70</sup>:

Պիտի նշել նաև Գորդիոնի ուշ բրոնզ - վաղ երկաթ անցման փուլի մի առանձնահատկություն, որը զգալի տարակուսանքների և այլընտրական ենթադրությունների տեղիք է տալիս: Ոչ խեթական, ոչ էլ 7B և 7A շերտերում չի նկատվում խեցեգործական տարբեր համալիրների համազոյակցություն: Յասսըիյուլք 8-ը ներկայացված է միայն տիպիկ խեթական խեցեղենով, 7B-ն՝ վերոհիշյալ ձեռքով պատրաստված խեցեղենով, իսկ 7A-ն՝ բրուտի անիլի վրա պատրաստված խեցեղենով<sup>71</sup>, որը, ինչպես նշվեց վերը, 7B-ի շարունակությունը չէ:

Այսպիսով, Գորդիոնի նորահայտ նյութը վկայում է XII-X դդ. ընթացքում նոր բնակչության երկու ալիքների ներհոսքի մասին: Դրանցից առաջինը ինչ-որ պահ խեթական տերության անկման շրջանում, իսկ երկրորդը՝ մեկ-երկու դար հետո: Ելնելով ետիսեթական առաջին երկու փուլերի միջև մշակութային կապերի բացակայության ակնառու փաստից, նշված տեղաշարժային ալիքների կրողները հազիվ թե մինևույն եթոմշակութային համալիրի ներկայացուցիչները լինեին: Ավելին, առավել քան հավանական է, որ նրանց ելակետները տարբեր են եղել: Իհարկե, սա միակ հնարավոր տարբերակը չէ: Տեսականորեն, տեղաշարժային առաջին ալիքի կրողները կարող էին լինել երկրորդի եթնիկական զանգվածի ծայրագավառային «բարբարոսական» հատվածը, որն ավելի վաղ էր սկսել շարժումը դեպի Փոքր Ասիա:

Ինչպես կարելի է բնութագրել վերոհիշյալ միգրացիոն ալիքները:

Եթե 7B-ի բնակիչները իրոք կապ ունեն հյուսիսքաղկանյան ժողովուրդների հետ, մի տեսակետ, որ կիսում են շատ մասնագետներ<sup>72</sup>, ապա, քերսս, հնարավոր է այդ շարժումը դիտել Տրոյա VIIb1-ի ավերման ֆոնի վրա, չնայած չի կարելի բացառել մեկ այլ հնարավորություն, այն է, արևմտյան և հյուսիսարևմտյան Փոքր Ասիայի ծայրագավառային բնակչության ներհույս դեպի հեթանոսական տերության տրոհումից թուլացած Գորդիոն:

Ինչն է, Գորդիոնի պեղումներից ստացված նյութը ստիպում է ավելի հավանական համարել Գյուսիսային Բալկաններից Տրոյայով դեպի Սանգարիոսի հովիտ ընթացած ժողովուրդների տեղաշարժի մասին ավանդական տեսակետը<sup>73</sup>: Սակայն ներկա ուսումնասիրության նպատակների տեսանկյունից հատկապես կարևոր է պարզել ոչ այնքան վերոհիշյալ տեղաշարժերի լինել-չլինելու հարցը, որքան դրանց աշխարհագրական ընդգրկման շրջանակները:

Սանգարիոսի հովտից արևելք, նախկին հեթանոսական տերության կենտրոնական շրջաններում, ուշ բրոնզ - վաղ երկաթ անցման փուլում Գորդիոնի 7B-ի խեցեղենին նման խեցեղեն է հայտնաբերվել Գալիսի հոսանքի ներսում Կաման-Կալեխյույքում<sup>74</sup>: Իսկ ինչ վերաբերում է Բողազքոյ-Խաթթուսասի և կենտրոնական Փոքր Ասիայի շուրջ մեկ տասնյակ ավերված բնակավայրերին, ապա այստեղի ետիսթեթական շերտերում նման խեցեղեն չկա: Երկուսն էլ նման Գալիսից հարավ և քերակղզու արևելյան շրջաններում<sup>75</sup>: Արևելյան Փոքր Ասիայում՝ Մալաթիայում և Կարահյույք-Էլբիստանում ուշ բրոնզ - վաղ երկաթ անցումը տեղի է ունեցել խաղաղ, առանց մշակութային ընդհատման<sup>76</sup>: Կենտրոնական Փոքր Ասիայի՝ Գալիսի հոսանքով պարփակված տարածքում և հարակից շրջաններում XII դ. հետո առկա է այսպես կոչված «Ալիշար IV» մշակույթը, որը ոչ մի ընդհանրություն չունի Սանգարիոսի հովտի և Կաման-Կալեխյույքի մշակույթի հետ<sup>77</sup>:

Այժմ փորձենք ի մի բերել XII դ. քաղկանյան միգրացիայի ընդգրկման աշխարհագրական շրջանակները և դրա (կամ դրանց) ազդեցությունը Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունների վրա: Դարցի պարզաբանումը հենվում է հետևյալ նկատառումների վրա.

- 1) Յասսըիյույք 7B-ին բնորոշ խեցեղենի և նրա ենթադրվող տրոյական և կամանյան զուգահեռները տարածվում են Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքից մինչև Գալիսի հոսանքի հարավ-արևմտյան շրջանը:
- 2) Բողազքոյ-Խաթթուսասի ետիսթեթական շերտերի (Բյույուքկայա և Բյույուքկալե) և նախորդ կետում նշված շրջանների մշակույթի միջև որևէ կապի բացակայությունը<sup>78</sup>:
- 3) Խաթթուսասի ավերման ժամանակաշրջանում կենտրոնական Փոքր Ասիայի հեթանոսական մյուս ավերված քաղաքների տեղադրությունը խեթերի մայրաքաղաքից հյուսիս-արևելք, այսինքն, ոչ թե ենթադրվող քաղկանյան վերաբնակիչների երթուղու վրա, այլ հակառակ կողմում<sup>79</sup>:

- 4) Փոքր Ասիայի արևելքում ավերածությունների բացակայությունը և մշակութային շարունակականությունը:
- 5) Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազաններում ասորեստանյան աղբյուրներում XII դ. և ավելի ուշ հիշատակվող մուշկերի խեցեղենի տեղական ծագումը, ինչի մասին հանգամանորեն ստորև (Գլուխ 3.2):

Ասվածի հիման վրա հնարավոր ենք համարում առաջարկելու բալկանյան ցեղերի տեղաշարժ(եր)ի հետևյալ ընթացքը:

Բալկանյան ժողովուրդների շարժումը Փոքր Ասիա, ամենայն հավանականությամբ, պիտի ընդգրկեր Տրոադան, Սանգարիոսի հովիտը և դեպի արևելք ընկած որոշ այլ շրջաններ, բայց ոչ խեթերի մայրաքաղաք Խաթթուսասը և կենտրոնական Փոքր Ասիայի մեծ մասը: Թվում է, որ այստեղ ավերածությունների հեղինակները ուրիշ ժողովուրդներ են եղել<sup>60</sup>, եթե ոչ հենց Խաթթիի բնակչությունը<sup>61</sup>: Փոքր Ասիայում նոր էքնիկական խմբերի տեղաբաշխման այսպիսի աշխարհագրությունը համապատասխանում է հետագայի պատմական Մեծ Փոյուզիայի քաղաքական և մշակութային սահմաններին, մի փաստ, որ արդեն նկատվել է<sup>62</sup>: Փոյուզական գորշ խեցեղենը քիչ թե շատ կանոնավոր կերպով վկայված է Հայիսի արևմտյան հոսանքից արևմուտք, բայց ոչ արևելք կամ հարավ: Գորշ խեցեղենի տարածման այս արեալը չի հակասում հիերոզլիֆային լուվիական և VIII դ. ասորեստանյան աղբյուրներին: Շատ դրանց, VIII դ. վերջին քառորդում Միտա-Միդասի փոյուզական պետության սահմանները հարավ-արևելքում հասնում էին մինչև ժամանակակից Թուրքիայի հյուսիսային մերձափնյա շրջանը, իսկ արևելքում առկա է մի մշակույթ, որը, չնայած պայմանականորեն կոչվում է «հին Փոյուզական»<sup>63</sup> (նույնն է ինչ «Ալիշար IV-ը»), սակայն իրականում ոչ մի առնչություն չունի ոչ Սանգարիոսի հովտի, ոչ էլ Գյուսիսային Բալկանների հետ<sup>64</sup>: Եվված շրջաններում Փոյուզիան սահմանակցում էր Թաբալի լուվիական պետություններին:

Այսպիսով, բալկանյան ժողովուրդների միգրացիան դեպի Փոքր Ասիա ակնհայտորեն սահմանափակ բնույթ է կրել, տարածվելով միայն մինչև Խեթական տերության կենտրոնական շրջանների արևմտյան մատույցները: Այստեղ, Խաթթիի անկման շրջանի ցնցումներից հետո շարունակվել է տեղական մշակույթի կենսագործունեությունը, իհարկե, զգալի փոփոխություններով:

Վերոհիշյալ հետևությունները բույլ են տալիս ենթադրելու, որ XII դ. սկզբի բալկանյան ժողովուրդների միգրացիան հազիվ թե կործանարար ազդեցություն ունենար ուշրրոնգեղարյան Փոքր Ասիայի գլխավոր քաղաքական միավորի՝ Խաթթիի անկման գործում:

Եթե բալկանյան ժողովուրդների մուտքը Փոքր Ասիա հնարավոր է քիչ թե շատ ճշգրիտ թվագրել և տեղայնացնել, ապա անհամեմատ ավելի բարդ է եկվորների էքնիկական պատկանելության խնդիրը: Այստեղ փաստական նյութը խիստ անբավարար է: Առայժմ ամենահավանական ենթադրությունը

փոյուզացիների գալստյան քվազրումն է մոտավորապես XI-X դդ., եթե հաշվի առնենք վերը բերված դիտարկումները Գորդիոնի Յասսըիյուք 7B և 7A փուլերի միջև կապի բացակայությունը և, ընդհակառակը, 7A -ում հայտնվող՝ հետազայի փոյուզական գորշ խեցեղենի հիմնական տիպերը: Բուն փոյուզացիների ու շիգրացիայի օգտին է վկայում նաև փոյուզական մշակույթի կարևոր առանձնահատկություններից մեկի՝ դամբանաբլրային քաղման (tumulus burial) պրակտիկայի խայտնվելը միայն VIII դ. կեսերից ոչ շուտ. քաղման այդ եղանակը վկայված է Մակեդոնիայում դրանից դարեր առաջ<sup>85</sup>:

Մ.թ.ա. XII դ. բալկանյան ժողովուրդների միգրացիայի համար առաջարկված վերոհիշյալ պատկերը թույլ է տալիս մեկ անգամ ևս կասկածի տակ առնելու մերձավորարևելյան ճգնաժամի ընթացքում միգրացիաների կործանարար հերի մասին նախկինում գերիշխող տեսակետը: Համեմայնդեպս, առ այսօր առկա հնագիտական նյութը թույլ չի տալիս հայտարարելու, թե բալկանյան ժողովուրդների շարժումը դեպի Փոքր Ասիա կարող էր կործանման հասցնել փոքրասիական քաղաքակրթությունները: Հավանաբար, այստեղ ավելի շուտ կարելի է խոսել եկվոր տարրի՝ տասնամյակներ տևած (զուցե և՛ ավելի երկար) աստիճանական ինֆիլտրացիայի, քան ավերիչ հարձակման մասին: Այդպիսի շարժումը հեշտ է պատկերացնել քաղաքական վայրէջք ապրող խեթական տերության ժայռամասային շրջաններում, ինչպիսիսներից էր նաև Տրոադան:

#### ԴՈՐԻԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ

Միկենյան քաղաքակրթության անկմանը նվիրված ուսումնասիրությունների ճնշող մասը այդ իրադարձությունը անառարկելիորեն բացատրում է որպես Հյուսիսային Բալկաններից XII դ. ընթացած դորիական միգրացիայի հետևանք (Գլուխ 2.2): Այս տեսակետը հենվում է ինչպես անտիկ գրավոր ավանդության, այնպես էլ միկենյան կենտրոնների անկման շրջանում նկատվող երևույթների (բնակչության զանգվածային արտագաղթ, խոշոր ավերածություններ և այլն) վրա:

Եղել է արդյոք ավերիչ դորիական միգրացիա ուշբրոնզեդարի վերջին փուլում, թե ոչ, անհամեմատ ավելի խոր և համակողմանի ուսումնասիրության առարկա է, քան ներկա աշխատության շրջանակները կարող են թույլ տալ: Ընդամին, ստորև ներկայացնենք խնդրին առնչվող որոշ դիտարկումներ, որոնք կարող են զգալիորեն պարզաբանել այն:

- 1) XII դ. միկենյան կենտրոններում վկայված երկու հաջորդական ադետների ընթացքում պարզորոշ նկատվում է Պելոպոննեսի երկու երկրագործական շրջանների՝ Մեսսենիայի և Լակոնիկայի բնակչության կտրուկ անկում<sup>86</sup>: Միևնույն ժամանակ, նույն Պելոպոննեսի հյուսիս-արևմուտքում (Արգոլիդա), չնայած որոշ ավերածություններին, առկա են տարօրինակ երևույթներ՝ բնակչության խոշոր կուտակումներ և աննախընթաց լայն ամրաշինական աշխատանքներ (օրինակ, Միկենքում և Տիրինթոսում):

Ինչպես ցույց կտրվի համապատասխան բաժնում, վերոհիշյալ երևույթները դժվար է բացատրել դեպի միլիենյան կենտրոններ արտաքին աշխարհից ընթացած ավերիչ հարձակումներով:

- 2) Ավերված և բնակաթափ եղած միլիենյան բնակավայրերում կամ դրանց հարևանությամբ հնագիտորեն վկայված չեն օտարամուտ բնակչության կենսագործունեության հետքեր: Միլենքից, Տիրինթոսից, Լեֆկանդիից, Կորակուից և այլ վայրերից հայտնաբերված սահմանափակ քանակությամբ պարզունակ խեցեղենի հյուսիսքալկանյան ծագման վարկածից կարծես տրամաբանորեն բխող միգրացիայի մասին ենթադրությունը<sup>87</sup>, սակայն, մնում է զուտ ենթադրություն, քանի որ նմանօրինակ խեցեղեն հայտնի է դեռ ուլիեյլադյան III B ենթատեքստում (XIII դ.), այսինքն, անկմանը նախորդող շրջանում: Հավանաբար, հյուսիսքալկանյան խեցեղենը միլիենյան կենտրոններ է հասել ոչ թե դրա ստեղծողների հարձակման, այլ առևտրի միջոցով: Երկու կերպ կարելի է բացատրել հյուսիսային ծագման բրոնզե իրերի (երկսայր հատող-ծակող սրերը և ֆիբուլաները) հայտնվելը միլիենյան աշխարհում<sup>88</sup>:
- 3) Անտիկ ավանդության մեջ միասնական կարծիք չկա Հունաստանում դորիացիների հայտնվելու ժամանակի վերաբերյալ: Օրինակ, «Ողիսականում» դորիացիք հիշատակվում են որպես Կրետի բնակիչներ դեռ Տրոյական պատերազմի շրջանում<sup>89</sup>, իսկ «Իլիականում» Հոդոդսի զորքը գլխավորում էր Հերակլեսի որդի Տլեպոլեոնոսը. Հերակլեսի մյուս որդին՝ Թեսսալոսը առաջնորդում էր Կասոս, Կարպատոս, Լիսիոս և Կոս կղզիների (Սպորադներ) զորքին<sup>90</sup>: Այս առնչությամբ ուշագրավ է այն փաստը, որ անտիկ ավանդության մեջ հերակլյանները և դորիացիները ամուր կապված են միմյանց հետ:

Վերը նշված դիտարկումները նկատելիորեն նվազեցնում են XII դ. Հյուսիսային Բալկաններից դեպի միլիենյան կենտրոններ ընթացած ավերիչ միգրացիայի մասին տեսակետի հավաստիությունը: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ այսօր միլիենյան և ետմիլիենյան դարաշրջանների միջև զգալի մշակութային շարունակականության մասին կարծիքը մեծ թվով կողմնակիցներ ունի, ապա կարելի է համաձայնվել այն մասնագետների հետ, որոնց կարծիքով դորիական կոչվող եթնիկական տարրը իրականում կարող էր ընդամենը միլիենյան աշխարհի ծայրամասային բնակչությունը լինել<sup>91</sup>: Միլիենյան կենտրոնների անկման շրջանում և դրանից հետո հիշյալ բնակչությունը կարող էր աստիճանաբար մուտք գործել ապաբնակեցված տարածքներ, լրացնելով ստեղծված քաղաքական և ժողովրդագրական վակուումը: Այս եղանակով հեշտ կլիներ բացատրել ինչպես երկու դարաշրջանների միջև եղած ակնառու ժառանգականությունը, այնպես էլ արտաքին աշխարհից ենթադրվող միգրացիոն շարժման կողմերի գոյությունը հավաստող հնագիտական նյութի բացակայությունը: Ետմիլիենյան դարաշրջանի

մշակույթի համեմատաբար ցածր մակարդակը, բնականաբար, պիտի արտացոլեր նորամուտ բնակչության գերազանցապես պարզունակ կենցաղին հատուկ իրավիճակը, որը լավ հայտնի է հոմերոսյան պոեմներից:

#### ԱՐԱՄԵԱՑԻՆԵՐԻ ՏԵՂԱՆՈՐԺԵՐԸ

Ի տարբերություն XII դ. մյուս էթնիկական տեղաշարժերի, արամեական ցեղերի շարժումը դեպի Դյուսիսային Միջագետք սկիզբ էր առել դեռ XIV դ. վերջերին-XIII դ. սկզբներին: Նախապես բնակվելով կենտրոնական Սիրիայի տավաաստանային գոտում<sup>92</sup>, XIII դ. ընթացքում արամեական ցեղերը սկսում են աստիճանաբար ներթափանցել դեպի հյուսիս: Այսպես, արամեական ախլամու կոչվող ցեղը հիշատակվում է Ադադնիրարի I-ի (1295-1264 թթ.) կողմից որպես Կադմուսի երկրի դաշնակից իր հոր՝ Արիկդեմիլիի (1307-1296 թթ.) օրոք<sup>93</sup>: Նույն ցեղը Սալմանասար I-ի կողմից հիշատակվում է որպես խեթերից կախյալ Միտաննի-խանիզալբատի դաշնակիցը ասորեստանյան զորքի դեմ մղված ճակատամարտի ժամանակ<sup>94</sup>: Ասորեստանյան սպառնալիքի պայմաններում միտաննիական վերջին արքաները ակնհայտորեն դիմում էին արամեացիների ռազմական քակցությանը: Թուկուլթի-Նինուրտա I-ի կառավարման շրջանում Ասորեստանի գերիշխանությունը տարածվեց նվաճված Միտաննիի տարածքի վրա, այդ թվում նաև արամեացիների: Այսպիսով, XIII դ. արամեական ցեղերի շարժումները Դյուսիսային Միջագետքում ակնհայտորեն սահմանափակ բնույթ էին կրում և որևէ լուրջ աշխարհաքաղաքական գործոն չէին հանդիսանում: Ենթադրվում է, որ արամեական ցեղերի՝ դեպի Դյուսիսային Միջագետք ընթացած տեղաշարժը XIII դ. խաղաղ ներթափանցման բնույթ է կրել, ավելին, նրանք Միտաննի-խանիզալբատի և նրա սյուզերեն խաթթիի կողմից դիտվել են որպես դաշնակիցներ հզորացող Ասորեստանի նվաճողական նկրտումների դեմ<sup>95</sup>:

Վիճակը փոխվում է քիչ ավելի ուշ:

Ա.թ.ա. XII սկզբներին, խեթական տերության տրոհման ժամանակաշրջանում, երբ միաժամանակ սկսվում է Ասորեստանի տևական քաղաքական անկումը, արամեական ցեղերի զբաղեցրած տարածքը դուրս է մնում ինչպես խեթերի, այնպես էլ Ասորեստանի քաղաքական ազդեցության ոլորտից: Ասորեստանի և Կարգամիսի միջև ընկած տարածքում առաջացած քաղաքական վակուումը, դժբախտաբար, բացարձակապես չի լուսաբանված գրավոր աղբյուրներով մինչև 1114 թ., երբ Թիզլաքալալասար I-ը լայն հարձակման է անցնում Ասորեստանից արևմուտք ընկած մերձակա և հեռավոր շրջաններում: Այսպիսով, շուրջ մեկ դար ոչինչ հայտնի չէ արամեական ցեղերի մասին, իսկ ըստ Թիզլաքալալասար I-ի և նրա հաջորդների տեքստերի, ինչպես նաև XII դ. բարելոնյան տեքստերի, արամեական ցեղերն արդեն ամուր օղակել էին Ասորեստանը հյուսիսից և արևմուտքից ու փորձում էին հաստատվել Միջագետքի տարբեր շրջաններում:

Արամեական ցեղերի առաջխաղացման ներկայացրած լուրջ սպառնա-

լիքի լավագույն վկայությունը Թիզլաբալասար 1-ի հիշատակած 28 արշավանքներն են Եփրատի գետանցումով<sup>96</sup>, որոնց ընթացքում ասորեստանցիք փորձում էին ճեղք բացել Ստորին Խաբուրից մինչև «լիբանանյան լեռներ»՝ ձգվող արամեական հոծ շղթայի մեջ: Նշանակում է, XIII դ. ընթացքում, օգտվելով Խաքքիի տրոհումից և Ասորեստանի թուլացումից, արամեական ցեղերը սկսում են տարածվել դեպի հյուսիս, արևելք և արևմուտք, բնակեցնելով մի խոշոր տարածք: Արամեացիների շարժումների ուղղությունները, հենվելով ասորեստանյան գրավոր աղբյուրների վրա, հիմնականում պարզ են և կարիք չունեն հնագիտական հիմնավորման<sup>97</sup>: Այլ է նրանց տեղաշարժերի՝ սիրիական-միջագետքյան տարածաշրջանի վրա ունեցած ներգործության աստիճանի խնդիրը:

Խորքային Սիրիայում ուշերոնգեղարի ավարտից հետո հնագիտորեն վկայված որոշ քանակությամբ ավերածություններ և բնակչության քանակի տատանումներ են գրանցված: Քանակապես դրանք զգալիորեն զիջում են լեանտյան ծովափի ավերածություններին:

Այսպես, Խաբուրի շրջանում Թել Բրակի միտաննիական պալատը ավերվել է XIII դ. սկզբին<sup>98</sup>, իսկ Թել Բարրիում XIII դ. սկսած մշակութային ընդհատում է վկայված մինչև IX դ.<sup>99</sup>:

Բալիխի շրջանում երկու բնակավայրեր՝ Դամման էթ-Թուրքմանը և Քիրբեթ էշ-Շենեթը ավերվել են XIII դ.<sup>100</sup>:

Եփրատի երկայնքով ավերածությունները վկայված են Էմարում<sup>101</sup>, Թել Ֆաբուսում<sup>102</sup> և Թել Ֆրայում<sup>103</sup>:

Վերոհիշյալ բնակավայրերի մեծ մասը ավերվել է XIII դ., որը հնարավոր չէ ներկայացնել որպես արամեացիների տեղաշարժերի հետևանք: Սա այն տարածքն է, որը նշված ժամանակաշրջանում կազմում էր Միտաննիի մասը, և որը որջ XIII դ. հանդիսացել է ասորեստանյան արշավանքների քիրախ: Ըստ այդմ, ավելի քան հավանական է այս ավերածությունները դիտել որպես տարածաշրջանում ասորեստանյան հարձակումների վկայություն:

Վերջին շրջանում մասնագետները միանշանակ հավելած են վերանայելու Գյուսիսային Միջագետքում և հարակից շրջաններում արամեացիների հայտնվելու ավանդական եղանակի խնդիրը, որը ձևակերպվել էր դեռ դարասկզբին որպես սեմական մեծ միգրացիա<sup>104</sup>: Այս տեսակետի համաձայն, խորքային Սիրիայի ուշերոնգեղարյան բնակավայրերի անկումը վերագրվում էր արամեացիների արշավանքներին: Նորագույն ուսումնասիրություններում<sup>105</sup> արամեական խնդիրը ներկայացվում է հետևյալ կերպ:

Արամեացիք խորքային Սիրիայում առկա են եղել առնվազն որջ ուշերոնգեղարում, հանդիսանալով այս տարածաշրջանի տնտեսական համակարգի քոչվոր-անասնապահական բաղկացուցիչ մասը: Նախկինում մեկ տնտեսական համալիրում օրգանապես փոխկապակցված նստակյաց-քոչվոր կապի առաջին բաղադրիչի անկումը, որը հետևանք էր XIII դ. վերջերին-XII դ. իրադարձությունների, հնարավորություն ընձեռեց արամեացիներին ընդարձակելու իրենց գործունեության շրջանակները: Գյուսիսային Սիրիա-

յում Սալմանասար I-ի և Թուկուլթի-Նինուրտա I-ի ավերիչ արշավանքների ընթացքում ստեղծված քաղաքական վակուումը թույլ տվեց արամեացիներին տարածվելու նախկին Միտաննիի տարածքով մեկ: Դրա հետևանքը արդեն XII դ. վերջերից այստեղ քաղաքական նոր գործոնի՝ արամեական քաղաքիվ իշխանությունների՝ բիթերի ծնավորումն էր:

### ԱՅԼ ՏԵՂԱՄԻՐԻ

Մերծավորարևելյան ճգնաժամի փուլում տարբեր բնույթի աղբյուրներով վկայված են խոշոր և տեղական բնույթի քաղաքիվ միգրացիաներ, որոնց առավել նշանակալի մասը քննարկվեց վերը: Սրանք այն տեղաշարժերն էին, որոնք զգալի ազդեցություն են ունեցել Մերծավոր Արևելքի և Էգեիդայի քաղաքական-մշակութային միավորների վրա: Սակայն հիշյալ միգրացիաների իրական չափերի և մերծավորարևելյան ճգնաժամի խորության մասին պատկերացումները թերի կլինեն առանց հաշվի առնելու ուշերոնգեդարյան օյկումենեի տարբեր հատվածներից դեպի դուրս ընթացած բնակչության արտահոսքի մասին եղած տեղեկությունները: Վերջիններիս մասին զգալի քանակությամբ վկայություններ կան անտիկ շրջանի հույն և հռոմեացի հեղինակների երկերում:

Այսպես, Գերոդոտոսի վկայությամբ<sup>106</sup>, տիրոենների մի մասը սովի պատճառով հարավ-արևմտյան Փոքր Ասիայից (Լիդիա) տեղափոխվել էր Իտալիա: Մի շարք հեղինակներ հաղորդում են մայրցամաքային Գունաստանից (Պելոպոնես, Թեսսալիա, Էպիրոս, Կրետե և այլն) ընթացած տեղաշարժերի մասին<sup>107</sup>:

Արևելամիջերկրածովյան ավազանից դեպի արևմուտք ընթացած միգրացիաների մասին անտիկ աղբյուրների տեղեկությունների հավաստիությունը ամրապնդվում է «ծովի ժողովուրդների» որոշ անվանումների ակնհայտ նմանությամբ Արևմտյան Միջերկրականի մի շարք տեղանունների հետ. օրինակ, Տրոն (շարդանա) և Սարդիսիա, Տրեճ (շելելեշ) և Սիցիլիա, Խճ (տուրու)չա և Էտրուրիա՝ Ապենինյան թերակղզում: Այս նմանությունները դրդել էին վաղ շրջանի ուսումնասիրողներին «ծովի ժողովուրդների» համար ենթադրել արևմտամիջերկրածովյան ելակետ, սակայն այդ տեսակետը այժմ գրեթե ամբողջովին հերքված է<sup>108</sup>: «Ծովի ժողովուրդների» լեզվյան-փոքրասիական ծագման մասին հիմնավոր տեսակետը (տես Գլուխ 2.2) անվերապահորեն ենթադրում է այս տարածաշրջանից դեպի արևմուտք ընթացած միգրացիոն ալիքների առկայություն: Իհարկե, պարտադիր չէ դրանք բոլորը քվազրել XII դ., սակայն դժվար է նաև ժխտել այն ենթադրությունը, որ հենց նշված ժամանակաշրջանում կարող էին տեղի ունենալ այս տեղաշարժերը: Անտիկ աղբյուրները որոշ դեպքերում տիրոենների և այլոց հայտնվելը Ապենինյան թերակղզում և հարևան կղզիներում տեղադրում են Տրոյական պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում<sup>109</sup>, որի շնորհիվ այդ իրադարձությունները կարելի է դիտել ներկա ուսումնասիրության ժամանակագրա-



կան շրջանակներում:

## ԽԵՔԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄ

Խեթական տերության անկման գործընթացը հնարավոր է ճիշտ պատկերացնել միայն մերձավորարևելյան ճգնաժամի լուսի ներքո, քանի որ նշված ժամանակաշրջանի ընթացքում Փոքր Ասիայում տիրող իրավիճակն արտացոլող շատ երևույթներ պարզորոշ դրսևորվում են նաև այլ տարածաշրջաններում (Միկենյան աշխարհ, Լևանտ, Հայկական լեռնաշխարհ): Բացի այդ, ճգնաժամային իրավիճակում հայտնված երկրների մեծ մասը գտնվում էր Խաթթիի անմիջական կամ միջնորդավորված քաղաքական ազդեցության ոլորտում, և Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններում տեղի ունեցածը այս կամ այն չափով պիտի ազդեր նրանց վրա, կամ հակառակը:

Ստորև ներկայացնենք Խեթական տերության անկման վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունները:

### ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Խեթական տերությունն ավերվեց մոտավորապես մ.թ.ա.1200 թ. նվաճողների կողմից, որոնց թվում էին նրանց (խեթերի - *U.R.*) ավանդական քչնամիները արևելյան սահմանների մոտ՝ կասկերը, և հորդան կամ հորդաների մի շարք հեղեղեց երկիրը ...»<sup>110</sup>:

Արտաքին հարձակման հետևանքով Խեթական տերության անկման և լիակատար կործանման մասին այս տեսակետն ամփոփում է մինչև 1970-ական թվականները, իսկ որոշ դեպքերում նույնիսկ մինչև վերջերս գրված աշխատություններում Խաթթիի պատմության եզրափակիչ փուլին նվիրված կարծիքները: Ուսումնասիրվող խնդիրների վերաբերյալ գոյություն ունեն քաղմաթիվ տեսակետներ, որոնց հեղինակները փորձում են եղած սուղ տեղեկությունների հիման վրա ներկայացնել Խեթական տերության փլուզման եղանակը, ժամանակը և կոնկրետացնել արտաքին գործոնը, այսինքն, մոտավորապես 1200 թ. մոտերքում դեպի կենտրոնական Փոքր Ասիա արշաված ժողովուրդներին: Իսկ քանի որ Խաթթին գտնվում էր Բալկանների, Լևանտի, Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի խաչմերուկում, իսկ բուն Փոքր Ասիայում և հարակից տարածքներում շրջապատված լինելով ամենևին ոչ լոյալ մեծ ու փոքր երկրներով ու ժողովուրդներով, ինչի վկայությունը նրա ողջ պատմության ընթացքում վկայված մշտական բախումներն էին հարևանների հետ, ապա, բնականաբար, խեթերի յուրաքանչյուր հարևան՝ մերձավոր թե՛ հեռավոր, կարող էր համարվել նրանց պոտենցիալ թշնամին: Իհարկե, քացառությամբ Խաթթիի դաշնակից Եզիպտոսի, որի հետ կնքված խաղաղության պայմանագիրը հարատևեց մինչև առաջինի անկման պահը: Խեթերի այսպիսի հարևանությունը մասնագետների առջև ընտրության չափազանց լայն հնարավորություններ է ստեղծում «ծովի ժողովուրդներ», խեթերի հյուսիս-արևելյան հարևան կասկեր, արևելյան

հարևան Չայասա-Ազգի, հյուսիսբալկանյան ցեղեր և, իհարկե, Ասորեստանը:

Ուսմզես III-ի Մեդիներ-Չարուի հայտնի արձանագրությունը, չնայած ակնհայտ չափազանցություններին և շարադրանքի ոճի զգալի դրամատիզմին՝ կապված այնտեղ նկարագրվող աղետի մասշտաբների հետ, դիտվում էր որպես հավաստի վկայություն XIII դ. վերջերին-XII դ. սկզբներին ողջ Մերձավոր Արևելքը ցնցած ժողովուրդների վիթխարի տեղաշարժերի, որոնց գլխավոր զոհը խեթական տերությունն էր (տես Գլուխ 2.2):

Դեռ Ա.Գյոքցեն ենթադրում էր, որ խաթթին ընկել է հյուսիսբալկանյան ծագման քրակա-փոյուզական ցեղերի և «ծովի ժողովուրդների» հարվածների հետևանքով<sup>111</sup>: Այս տեսակետը առկա է նաև Գ.Լեմանի և Ֆ.Կոռնելիուսի մոտ<sup>112</sup>: Մյուսների կարծիքով, խաթթիի անկումը տեղի է ունեցել միայն բալկանյան ցեղերի մասնակցությամբ<sup>113</sup>, բալկանցիների և կասկերի<sup>114</sup>, կասկերի և «ծովի ժողովուրդների»<sup>115</sup>, կամ միաժամանակ մի քանի ժողովուրդների հարձակման հետևանքով<sup>116</sup>:

Կարելի է նշել նաև իր տեսակի մեջ եզակի (անհավանականության առումով) այն կարծիքը<sup>117</sup>, ըստ որի, երբ Սուպպիլուլիումաս II-ը գտնվում էր Լուկկայում և Արցավայում «ծովի ժողովուրդների» դեմ ձեռնարկած արշավանքում, վերջիններիս ցամաքային մի ալիքը գրավում է անպաշտպան խաթթուսասը, հետո շարժվում է հարավ և Չյուսիսային Սիրիայում միանում Փոքր Ասիայի հարավով ընթացող ծովային (գուցե նաև ցամաքային) խմբին. մի խումբը մնում է տեղում, իսկ մյուսը շարունակում է շարժումը հարավ, դեպի Եգիպտոս:

Սովորաբար, խաթթիի անկման միգրացիոն տեսության կողմնակիցները չեն խորացել հիշյալ ժողովուրդների՝ դեպի կենտրոնական Փոքր Ասիա ձեռնարկած ենթադրյալ ճակատագրական արշավանքների դրդապատճառների մեջ, սահմանափակվելով միայն ոչինչ չպարտադրող «էթնիկական տեղաշարժեր» տերմինով: Երբեմն միայն նշվում է, որ այդ շարժումների պատճառներից մեկը կարող էր լինել երաշտն ու սովը Փոքր Ասիայում<sup>118</sup>: Պարզ չէ միայն, թե ինչու պիտի էթնիկական տեղաշարժերի նպատակակետ դառնար տնտեսական ծանր իրավիճակում հայտնված կենտրոնական Փոքր Ասիան:

#### ՏՐՈՂԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակում, շնորհիվ զգալի թվով նորահայտ գրավոր և հնագիտական նյութերի, խեթական տերության անկման պրոցեսը անվերապահորեն արտաքին գործոնին վերագրելու միտումը զգալի փոփոխություններ է կրել: Ուսումնասիրողներն այժմ ավելի մեծ տեղ են հատկացնում ներքին քայքայիչ պրոցեսներին, խնդիրը դիտելով ոչ այնքան որպես հետևանք թշնամական հարձակման, այլ խեթական տերության քաղաքական կառույցի աստիճանական տրոհում նրա բաղկացուցիչ մասերը հանդիսացող մի

չարք կախյալ երկրների անկախացման և քաղաքական ու տնտեսական ճգնաժամի արդյունքում: 1980-90-ական թվականների աշխատություններում «կործանում, անկում» տերմինը արդեն հիմնականում դուրս է մղվել «տրոհման» կողմից: Ներքին պատճառների թվում հատկապես ընդգծվում է խաթմի կենտրոնական իշխանության թուլությունը, անկարողությունը վերահսկելու տարեցտարի բարդացող ներքաղաքական իրավիճակը: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է խաթմուսասի և կենտրոնական Փոքր Ասիայի մի շարք քաղաքների ավերմանը, ապա այս հարցում գերազանցապես «մեղավոր» են ճանաչվում հարևան կասկական ցեղերը: Այս է պատճառը, որ «տրոհում» տերմինը զուցե ավելի հարմար կլինի անվանել «տրոհման-միգրացիոն», հաշվի առնելով ներքին և արտաքին գործոնների զուգակցումը, քանի որ խաթմից կախյալ արևմտափոքրասիական և հարավփոքրասիական ծայրամասային շրջաններն իրոք ենթարկվել են «ծովի ժողովուրդների» և հյուսիսբալկանյան ցեղերի ասպատակություններին և որոշակի ծավալի միգրացիայի:

Այսպես, Ջ.Մելլարտի կարծիքով<sup>119</sup>, XIII դ. երկրորդ կեսին խաթմին ամենին այն խոշոր և հզոր տերությունը չէր, ինչպիսին սովորաբար ներկայացվում է մասնագիտական հրատարակություններում: Այն ընդամենը մեկն էր ի թիվ մյուս փոքրասիական պետությունների (նկատի ունի Փոքր Ասիայի արցավյան երկրները՝ Սեխա, Սիրա, Խապալլա, Վիլուսա և այլն), որի սահմանը արևմուտքում հասնում էր հազիվ մինչև այսօրվա Անկարա-Կոնյա-Սիլիֆկե գիծը, և, բնականաբար, «Խեթական պետության անկումը ներքին անատոլիական գործ էր, հավանաբար, բավական երկար ժամանակ տևած երևույթ, երբ շրջանը շրջանի ետևից անկախանում էր խեթերի տիրապետությունից կամ գերիշխանությունից»:

Դարկ է նշել, որ տրոհման տեսության այս տարբերակը որևէ չուրջ փաստական հիմք չունի: Ջ.Մելլարտի կարևոր փաստարկներից մեկն այն է, որ Մուվաալլիս II-ից հետո խեթերը աստիճանաբար կորցրել են վերահսկողությունը արևմտյան Փոքր Ասիայի նկատմամբ: Այս եզրակացության հեղինակը հանգել է այն փաստի հիման վրա, որ նշված ժամանակահատվածում ոչ մի արցավյան արքա անվանապես չի հիշատակվում խեթական տեքստերում. ընդամենը մեկ անգամ Թուդիալիյաս IV-ը նշում է Սեխայի անանուն արքային: Սա, իհարկե, արդեն հնացած փաստ է, և հեղինակին հանգեցրել է XIII երկրորդ կեսին Փոքր Ասիայում տիրող քաղաքական իրավիճակի կամայական, այսօր գոյություն ունեցող նոր փաստերի ճնշման տակ ժամանակի քննությունը չբռնած մեկնաբանության: Սույն աշխատության առաջին գլխում հանգամանորեն ներկայացված Թուդիալիյաս IV-ի և Սուպալիուլիումաս II-ի կառավարման շրջանի պատմությունը ցույց է տալիս, որ խաթմին ամենին «կավե ոտքերի» վրա կանգնած (տերմինը Ջ.Մելլարտինն է) խարխուլ քաղաքական միավոր չի եղել:

Խեթական տերության անկման այսպիսի մեկնաբանության դրդապատճառը պարզվում է նույն հեղինակի այն ենթադրությունից, ըստ որի «ծովի ժողովուրդների» շարժումները ոչ թե միգրացիա են եղել, այլ Արցավայի կող-

մից նախօրոք ծրագրված լայնամասշտաբ ռազմական արշավանք<sup>120</sup>: Այսպիսի մոտեցումը խնդրին ստիպում է ենթադրել, որ Ռամզես III-ի նկարագրած «ծովի ժողովուրդները» ընդամենը Արցախյան ցամաքային և ծովային ուժերն էին, որոնց ջանքերով կործանվեցին Խաթթին, Կոդեն, Ալասիան, Կարգամիսը և Արցախյան: Կարելի է միայն տարակուսել, քե ինչու է Ռամզեսի տեքստի ցուցակում Արցախյան առաջինը նշվում կործանված երկրների շարքում, կամ, ինչու եգիպտական աղբյուրը կոնկրետ չի նշում այդ մեծ աղետի անմիջական մեղավորին Արցախյան, որին եգիպտացիք լավ ծանոթ էին դեռ XIV դ.:

Տրոհման տեսության անհամեմատ ավելի չափավոր և իրատեսական տարբերակներ են առաջարկվում Ի.Զինգերի, Զ.Մաքքուիհի, Վ.Յելքի, Գ.Գյուտերբրոկի, Գ.Ռոֆների, Զ.Յաքարի և այլոց աշխատություններում:

Ըստ Ի.Զինգերի, «ծովի ժողովուրդների» Փոքր Ասիայի հարավային ափերով դեպի Սիրիա շարժման հետևանքով Խաթթին պիտի գրվեր իր սիրիական կախյալ երկրների հետ կապից, ինչպես նաև եգիպտոսից ու Սիրիայից եկող հացահատիկի առաքումներից: «Ծովի ժողովուրդների» դեմ մղած պայքարից և մթերքի պակասից թուլացած Խեթական տերությունը կարող էր հեշտությամբ զոհ գնալ կասկերի հարձակմանը<sup>121</sup>: Եւ Խաթթի անկումը դիտում է ոչ որպես միաժամանակյա գործողություն, այլ տասնամյակներ տևած գործընթաց<sup>122</sup>:

Զ.Մաքքուիհի տեսակետը գրեթե նույնն է: Եւ հակված է քացառելու Խաթթի անկման շրջանում Բալկաններից ընթացած խոշոր էթնիկական տեղաշարժը<sup>123</sup>:

Վ.Յելքը նվազագույնի է հասցնում միգրացիոն գործոնի դերը<sup>124</sup>: Ըստ նրա, «ծովի ժողովուրդների» գլխավոր հարվածը իրենց վրա են կրել Լևանտի քնակավայրերը: Խեթերի համար Փոքր Ասիայից եգիպտոս տանող կենսականոթն խիստ անհրաժեշտ ճանապարհի փակվելը կարող էր կործանարար լինել երաշտից տուժած Փոքր Ասիայի համար: Յենվելով Կ.Բիտտելի<sup>125</sup> և Գ.Օտտենի<sup>126</sup> դիտարկումների վրա, հեղինակը Խաթթուսասի ավերումը և խեթական պետականության վերացումը դիտում է որպես քնակչության ապստամբության հետևանք: Ավերելով քաղաքը, Խաթթուսասի քնակիչները կարող էին հեռանալ այլ վայրեր՝ գոյության միջոցներ փնտրելու նպատակով:

Գ.Ռոֆները առաջարկում է Խաթթուսասի անկման երկու տարբերակ.

1) «ծովի ժողովուրդները» սկզբում գրավել են Թարխունտասսան, հետո՝ Խաթթուսասը, 2) սկզբում նրանք գրավել են Թարխունտասսան, ստիպելով խեթերին ուժերը կենտրոնացնել այստեղ և, օգտվելով դրանից, կասկերը գրավել են մայրաքաղաքը<sup>127</sup>: Չարկ է նշել, որ այս երկու տարբերակներն էլ ավելի շուտ միգրացիոն քնույթի են, ներծծված տրոհման տարրերով:

Յենվելով կենտրոնական Փոքր Ասիայի՝ 1200 թ. մոտերքում ավերված խեթական քաղաքների տեղաբաշխման քարտեզի<sup>128</sup> վրա, Գ.Գյուտերբրոկը գտնում է, որ խեթերի մայրաքաղաքը և մյուս քաղաքները հարձակման են ենթարկվել ոչ քե արևմուտքից կամ հարավից, այլ, հավանաբար, հյուսիս-

արևելքից կամ արևելքից: Ռամզես III-ի հայտնի արծաճագրության կապակցությամբ նա առաջարկում է բավական ինքնատիպ մեկնաբանություն, որը լուրջ ուշադրության է արժանի. «Արդյոք Կիլիկիայի նվաճումը ուշիելլայայան III C խեցեղենը ստեղծող ժողովրդի կողմից բավական էր խոսելու «խաթթի» մասին: Կամ զուցե Ասիայի տարբեր մասերում տեղի ունեցած տարբեր իրադարձությունները եզիպտացիք միավորել են որպես այդ անուղղելի «ծովի ժողովուրդների» գործ»<sup>129</sup>: Գյուտեբերգի հարցադրումները կարևոր են խնդրի լուծման մեթոդաբանական տեսանկյունից (տես ստորև):

Ջ.Յաքարի տեսակետը ներառում է ներքին և արտաքին պատճառների մի ողջ սպեկտր՝ երաշտից տուժած բնակավայրերի բնակչության հեռացում չտուժած շրջաններ, ծայրամասային մարզերի ինքնուրույնություն, արևելքից և արևմուտքից սկսված նոր ժողովուրդների միգրացիաներ, որոնք կարող էին միավորվել փոքրասիական որոշ շրջանների բնակչության հետ և միասնական ուժերով հարձակվել խաթթի կենտրոնական մասի վրա, ինչպես նաև կասկերի հնարավոր հարձակում<sup>130</sup>:

Չեղինակը առաջարկում է մի առանցքազարգացի, որը նորույթ է և ամենևին չի բացառվում: Ըստ դրա, խաթթուսասի կենտրոնական իշխանությունը կարող էր ծրագրված կերպով փոխադրվել ավելի ապահով Կարգամիս<sup>131</sup>:

Անկասկած, տրոհման տեսությունը հենվում է անհամեմատ ավելի շատ փաստական նյութի վրա: Այնուամենայնիվ, պիտի նշել, որ խաթթի անկման պատճառների մեծ քանակը միաժամանակ որոշակիորեն դժվարացնում է ինչպես այդ խնդրի, այնպես էլ XII դ. անմիջապես հաջորդող ժամանակաշրջանի ընկալումը և վերականգնումը:

#### ԲՆԱԿԱՆՍՅԱՅԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Արևելամիջերկրածովյան ավազանում ուշրրոնզեղարի վերջին սկսված ճգնաժամը, որն իր արտացոլումը գտավ խեթական տերության անկման, Պաղեստինում Եզիպտոսի գերիշխանության վերացման, Միկենյան քաղաքակրթության ավարտի և լայնածավալ միգրացիաների մեջ, փորձում է բացատրել նշված տարածքներում կլիմայական պայմանների աստիճանական վատթարացումով, որը և կարող էր վերոհիշյալ քաղաքական կատակիզմների իրական պատճառը լինել, կամ առնվազն գլխավոր պատճառներից մեկը:

Ինչպիսի փաստական հիմք ունենք փոքրասիական ճգնաժամի խորացման գործում բնակլիմայական գործոնի խաղացած դերի վերաբերյալ:

Բացի սույն գլխի առաջին բաժնում բերված հնակլիմայաբանական ուսումնասիրությունների արդյունքներից, պիտի նշել հետևյալ տեղեկությունները, քաղված եզիպտական փարավոն Մերեմպտաիի տեքստից, որտեղ խոսվում է Եզիպտոսից խաթթի հացահատիկի առաքման մասին<sup>132</sup>, ինչպես նաև Չերոդոտոսի մոտ պահպանված պատմությունը Լիդիայում տիրող 18-ամյա սովի և դրա պատճառով բնակչության մի մասի արտագաղթի վերաբերյալ<sup>133</sup>: Ըստ եզիպտական աղբյուրի, հացահատիկը պիտի ուղարկվեր Պե-

դասսա<sup>134</sup>: Դարկ է նշել, որ հաթթի անկման հարցին նվիրված գրեթե բոլոր ուսումնասիրություններում «ծովի ժողովուրդների»՝ խեթական տերությանը հասցրած գլխավոր վնասը, բացի հաթթուսասի գրավումից, հանգեցվում է Փոքր Ասիա-եգիպտոս հաղորդակցության ուղիների փակմանը (տես նախորդ ենթաբաժինը): Եթե այս տվյալներին ավելացնենք նաև եգիպտական տեքստերում հիշատակվող «ծովի ժողովուրդների» ելակետի մասամբ փոքրասիական բնույթը (տես Գլուխ 2.2), ապա բնակլիմայական գործոնի դերը փոքրասիական ճգնաժամում կդառնա խիստ որոշակի և առարկայական: Միայն կենսապայմանների վատթարացումը, այլ ոչ ենթադրյալ միգրացիաները կարող էին ստիպել փոքրասիական ժողովուրդներին տեղահանվել: խեթական տերության անկման խնդրի մասին տես հաջորդ գլխում:

## ՄԻԿԵՆՅԱՆ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄ

ՄԻԿԵՆՅԱՆ ԱՇԽԱՐԴԸ Մ.Թ.Ա. XIII դ.ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ. ԵԳՆՄԺԱՄԻ ՄԿԻՉԲԸ


Մոտավորապես մինչև XIII դ. կեսերը միկենյան Գունաստանը քաղաքական և տնտեսական վերելք էր ապրում: Դա պարզ երևում է ինչպես միկենյան կենտրոնների պեղումներից ի հայտ եկած հարուստ հնագիտական նյութից, այնպես էլ միկենյան խեցեղենի լայն արտահանման փաստից դեպի արևելամիջերկրածովյան ավազանի երկրներ (տես քարտեզ 3): Միկենյան աշխարհի ակտիվությունը ժամանակի միջազգային առևտրի ասպարեզում, որ սկսվել էր մոտավորապես XVI դ. երկրորդ կեսից և հասել իր ամենաբարձր ծավալմանը ուշիելադյան IIIA2 փուլում (XIV դ. վերջ), հատկապես աշխույժ էր Լեսանտում: Այստեղ միկենյան արտահանվող խեցեղենը վկայված է մոտ 90 բնակավայրում: XIII դ. առաջին կեսին (ուշիելադյան IIIB1) նկատվում է դրա ծավալի մասնակի կրճատում՝ 75 բնակավայր<sup>135</sup>: Ոչ պակաս ծավալի միկենյան նյութ է վկայված նաև արևմտյան Փոքր Ասիայում<sup>136</sup>:

Միկենյան հասարակության զարգացման հաջորդ վկայությունը Պելոպոննեսի բնակչության և բնակավայրերի քանակի զգալի աճն է: Ուշիելադյան IIIA-ում այստեղ վկայված է 90, իսկ IIIB-ում՝ արդեն 143 բնակավայր<sup>137</sup>: Բնակչության աճը հատկապես նշմարելի է Պելոպոննեսի արևմուտքում Մեսսենիայում, որտեղ XIII դ. վերջերին հայտնի է 137 բնակավայր, մոտավորապես 50,000 ընդհանուր բնակչությամբ<sup>138</sup>:

Սակայն մի շարք փաստեր աներկբայելի կերպով վկայում են միկենյան աշխարհի ներսում աստիճանաբար հասունացող ինչ-որ բացասական, քայքայիչ երևույթների մասին, որոնք XIII դ. երկրորդ կեսին գնալով էլ ավելի էին ակնառու դառնում:

Ճգնաժամի առաջին նշանը միկենյան խեցեղենի արտահանման ծավալի կտրուկ նվազումն էր. այն ակնհայտորեն անկում էր ապրում Կիպրոսում և սիրիա-պաղեստինյան ծովափին<sup>139</sup>:

Քարտեզ 3. Փոքր Ասիայում միկենյան իրերի հայտնաբերման վայրերը



Այնուհետև, նախկինում միկենյան արհեստագործությանը բնորոշ նյութական մշակույթի շատ բնագավառներ (մոնումենտալ ճարտարապետություն և քանդակագործություն, փղոսկրի մշակում, ֆայանս, քանկարծեք մետաղներից անոթներ և այլն) այլևս վկայված չեն<sup>140</sup>: Ազնվականական դամբարաններում չեն հանդիպում բրոնզե իրեր<sup>141</sup>:

Եկատվում է որոշ բնակավայրերի պարիսպների ընդարձակում և ամրացում, լքվում է Բերբատի բնակավայրը<sup>142</sup>:

Որոնք են այս փոփոխությունների պատճառները, ինչու երբեմնի բարգավաճող քաղաքակրթությունը մի քանի տասնամյակների ընթացքում համակողմանի վայրէջք ապրեց, իսկ XII դ. կեսերից սկսած ուղղակի իր տեղը զիջեց անհամեմատ ավելի ցածր աստիճանին գտնվող մշակույթին: Ինչպես և Խեթական տերության հարցում, միկենյան քաղաքակրթության անկման խնդիրը կապված է բազմաթիվ բարդությունների հետ, և առ այսօր մասնագետների մոտ լուրջ տարակարծություններ կան դրա պատճառների հարցում: Այստեղ պարզ են միայն հետևանքները և անկման պատկերի որոշ փուլեր, սակայն ոչ գլխավոր դրդապատճառը և ընթացքը:

Վաղ շրջանի ուսումնասիրություններում ընդունված էր միկենյան քաղաքների անկումը վերագրել հյուսիսից դեպի Միջին և Չարավային Չունաստան (Պելոպոննես) ընթացած ցեղերի արշավանքների հետևանքներին<sup>143</sup>: Պելոպոննես ներխուժած հետամնաց դորիացիները կամ այլ ցեղեր, ըստ միգրացիոն տեսության, հիմնովին ավերեցին միկենյան քաղաքները և մոտ երեք-չորս հարյուր տարի երկիրը համատարած մշակութային վայրէջք էր ապրում:

Միկենյան քաղաքակրթությանն առնչվող տեղեկություններ են պահպանվել անտիկ շրջանի պատմիչների և պոետների երկերում<sup>144</sup>: Այստեղ հիշատակություններ կան Միկենքի գլխավորությամբ դեպի Բուտիայի Թեբե քաղաքն ընթացած անհաջող արշավանքի (Տրոյական պատերազմից մեկ սերունդ առաջ), դեպի Պելոպոննես Չերակլեսի որդի Չյուլլոսի անհաջող արշավանքի (սա համարվում է դորիացիների առաջին հարձակումը Պելոպոննեսի վրա), դորիացիների երկրորդ և հաղթական արշավանքի և այլ իրադարձությունների վերաբերյալ: Այս առասպելական պատմությունները վկայում են ուսումնասիրվող դարաշրջանում միկենյան աշխարհի ներսում տիրող ամենևին ոչ բարվոք քաղաքական իրավիճակի մասին: Դժբախտաբար, խիստ ղժվար է այս պատմություններում տեղ գտած իրադարձությունների ճշգրիտ թվագրումը, քանի որ անտիկ հեղինակները բոլոր հաշվարկները կատարում էին ելնելով դրանց հարաբերակցությունից Տրոյական պատերազմի նկատմամբ: Օրինակ, ըստ Թուկիդիդեսի, դորիացիները Չերակլանների հետ միասին գրավել են Պելոպոննեսը Տրոյական պատերազմից 80 տարի հետո<sup>145</sup>: Մեկ այլ տեղում նույն հեղինակը դորիացիների հայտնվելը Պելոպոննեսում տեղադրում է մ.թ.ա. 416 թ. Մելոս կղզու գրավումից 700 տարի առաջ, այսինքն, 1116 թ.<sup>146</sup>: Ստացվում է, որ Տրոյական պատերազմը տեղի է ունեցել մոտավորապես 1220 թ.<sup>147</sup>:



Այնուամենայնիվ, միզրացիոն տեսության կողմնակիցները չեն կարող չարծանագրել մի շարք արտառոց փաստեր, ինչպես, օրինակ, այն, որ Պելոպոննեսի ավերված կամ լքված բնակավայրերում օտար նվաճողների ոչ մի հետք հնագիտորեն առայժմ չի նշմարվում<sup>148</sup>:

XIII դ. երկրորդ կեսին մայրցամաքային Հունաստանում տեղի ունեցած իրադարձությունները վերականգնելու նպատակով փորձենք ի մի բերել առայժմ հայտնի հնագիտական նյութերը:

#### ՄԻԿԵՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Մասնագիտական գրականության մեջ XIII դ. վերջերից մինչև XII դ. կեսերն ընկած ժամանակահատվածում ընդունված է տարբերակել երկու խոշոր ցնցումներ, որոնք պայմանականորեն կոչվում են առաջին և երկրորդ (կամ վերջնական) աղետներ: Առաջին աղետից հետո դեռ մի քանի տասնամյակ միկենյան քաղաքները կարողացան գոյատևել, մինչև այն պահը, երբ վերջնական աղետը վերացրեց ոչ միայն դրանք, այլև ողջ մշակույթը:

ԱՈՒԱՅԻՆ ԱՂԵՏ. Ինչպիսի տվյալների հիման վրա է ենթադրվում, որ XIII երկրորդ կեսի ընթացքում միկենյան քաղաքակրթությունը սկսում է կտրուկ անկում ապրել: Վերը նշված՝ արտաքին առևտրի ծավալի խիստ նվազման և արհեստագործության որոշ բնագավառների վերացման փաստերից զատ կան անհամեմատ ավելի խտուսն հնագիտական նյութեր: Այս ժամանակաշրջանը լուսաբանող հնագիտական նյութերին նվիրված մի շարք աշխատություններում<sup>149</sup> ամփոփված նյութը թույլ է տալիս կատարելու հետևյալ դիտարկումները:

Այսպես, Միկենքում, Տիրինթոսում և Իսթմոսում սկսվում են ամրաշինական լայն աշխատանքներ, որոնք մասնագետները սովորաբար բացատրում են հյուսիսից եկող ռազմական սպառնալիքով: Երանց կարծիքով, այդ սպառնալիքը արտացոլված է անտիկ ավանդության մեջ որպես Հերակլյան Հյուլլոսի գլխավորությամբ կազմակերպված փորձը գրավելու Պելոպոննեսը<sup>150</sup>:

Աղետի հաջորդ վկայությունը միկենյան որոշ բնակավայրերի մասնակի ավերումն է, այդ թվում Կորնթոսից հարավ ընկած Զիգուրիեսը (ավերվել է ամբողջությամբ) և նույնիսկ Միկենքի՝ միջնաբերդից դուրս գտնվող տները: Ավերածություններ կան նաև Տիրինթոսում և Մենելայոնում (Լակոնիկա): Աղետի նշաններ են գրանցված ի դեմս Բեռտիայի Գլա խոշոր ամրոցի և Ֆոկիոյայի Կրիսա բնակավայրի ավերման:

Աղետի վկայություն պիտի համարել նաև մի շարք բնակավայրերի մակերեսի աճը. պարիսպները սկսում են ներառնել շատ ավելի մեծ տարածք, քան անհրաժեշտ էր նախորդ ժամանակահատվածում<sup>151</sup>:

Վերոհիշյալ փաստերը, իհարկե, վկայում են միկենյան աշխարհի ներսում տեղի ունեցող ինչ-որ ճգնաժամային իրադարձությունների ծավալման օգտին: Դրանց պատճառները դեռևս պարզ չեն, սակայն, թվում է, որ արտա-

քին գործոնը հազիվ թե ի վիճակի լինի լիովին բացատրելու նշված փաստերը: Ավելի հավանական է դրանք դիտել միկենյան աշխարհի ներսում սկիզբ առած ինչ-որ քայքայիչ միտումների ֆոնի վրա, ինչի մասին ստորև:

ԵՐԿՐՈՐԴ ԱՂԵՏ. Այն ինչ ընդունված է անվանել երկրորդ կամ վերջնական աղետ, տեղի ունեցավ ուշիելլադյան IIIB-ի եզրափակիչ փուլում (XIII դ. վերջ-XII դ. առաջին կես) և մի քանի տասնամյակում ավարտվեց միկենյան քաղաքակրթության ամբողջական դեգրադացիայով: Այս աղետի հետևանքները կարելի է ներկայացնել հետևյալ դիտարկումների միջոցով:

- 1) Միկենքի և Տիրինթոսի միջնաբերդերը, Արգոլիդայի, Մեսսենիայի, Լակոնիկայի և այլ շրջանների մի շարք բնակավայրեր ավերվում են, զգալի թվով այլ բնակավայրեր՝ էվտրեսիսը (Բեոտիա), Բերրատին և Պրոսիմնան (Արգոս), Ատտիկայի, Լակոնիկայի և Պելոպոննեսի հարավ-արևմուտքում գտնվող որոշ փոքր բնակավայրեր լքվում են<sup>152</sup>:
- 2) Պելոպոննեսի զգալի մասը ապարնակեցվում է<sup>153</sup>, մի փաստ, որը, անկախ մյուս հանգամանքներից, լավ երևում է ուշիելլադյան IIIC-ում վկայված բնակավայրերի քանակից՝ 64 (նախորդ՝ IIIB-ում՝ 143)<sup>154</sup>:
- 3) Պարզորոշ նկատվում է Պելոպոննեսի բնակչության ուժեղ արտահոսք ինչպես դեպի արևելամիջերկրածովյան ավազան, այնպես էլ մայրցամաքային Յունաստանի այլ շրջաններ: Այսպես, միկենցիների արտագաղթ է զրանցված դեպի Կիպրոս<sup>155</sup>, Էգեյան ծովի կղզիներ<sup>156</sup>, Կեֆալլենիա կղզի, Ատտիկայի արևելք և Ախայա<sup>157</sup>:

Վերոհիշյալ երևույթներից հետո դեռ որոշ ժամանակ (մոտ 100 տարի) միկենյան քաղաքակրթության ավանդույթները շարունակում են զարգանալ վայրէջքի ակնհայտ միտումով: Այս ժամանակաշրջանում միկենյան բնակավայրեր են վկայված Ախայայում, Արգոսում, հավանաբար, նաև՝ Ատտիկայում, Բեոտիայում և Թեսսալիայում<sup>158</sup>:

## ԱՆԿՍԱՆ ՊՍԵՆՈՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվեց, մինչև վերջին շրջանը միկենյան քաղաքակրթության անկման պատճառ էր դիտվում հյուսիսից եկող բարբարոսական ցեղերի շարժումը: Այս միգրացիոն տեսությունը մոտավորապես այսպիսի պատկեր է առաջարկում<sup>159</sup>:

Երկրորդ աղետի շրջանում ավերված միկենյան բնակավայրերն ընկած են Ֆոկիդա-Բեոտիա-Կորնթոս-Արգոլիդա-Լակոնիկա-Մեսսենիա գծի վրա, որը թույլ է տալիս ենթադրելու ներխուժման հյուսիս-արևմտյան ելակետ: Այս արշավանքի ընթացքում միկենյան բնակչությունը ստիպված հեռացել է կամ հյուսիս-արևմուտք (Ախայա, Կեֆալլենիա), կամ արևելք (Ատտիկա, Էվբեա և այլ կղզիներ): Գյուսիսից եկող ներխուժման ցամաքային բնույթի օգտին է վկայում այն փաստը, որ կղզիական Յունաստանը չի ենթարկվել հարձակ-

ման և այստեղ ուշիեւլադյան IIIB-ից անցումը IIIC-ի խաղաղ է ընթացել: Եւր-խուժումը կարող էր ընթանալ մի քանի ալիքով: Ըստ այդ տեսության, եկվոր-ները չեն մնացել Պեւոպոնենեսում<sup>160</sup>, քանի որ, ինչպես նշվեց վերը, աղետի գոտու բնակավայրերում նրանց հետքերը չեն պահպանվել<sup>161</sup>: Դեսպրոն բացառում է ներքին գործոնը՝ ապստամբություններ, քաղաքացիական պատերազմ, քանի որ, ըստ նրա, աղետը բոլոր վայրերում միաժամանակ է ծավալվել և լայն աշխարհագրություն ունի:

Դարկ է նշել, որ նույն հեղինակը քիչ ավելի ուշ, լայնածավալ ներխուժման վարկածին այդպիսի կարևոր տեղ չի հատկացնում<sup>162</sup>: Եւ հավասարության նշան է դնում աղետի երեք հնարավոր պատճառների միջև՝ ներքին խժոժություններ (բնակչության ապստամբություն, դինաստիական պայքար), արտաքին հարձակում և բնական աղետ:

Այսօր միկենյան քաղաքակրթության անկման միզրացիոն վարկածը փոքր թվով կողմնակիցներ ունի: Այն ինչ նախկինում դիտվում էր որպես լայնածավալ հարձակման հետևանք (ավերածություններ և ապարնակեցում լավ վկայված արտագաղթի հետ միասին), հեշտությամբ կարելի է բացատրել բուն միկենյան աշխարհի ներսում դեռ XIII դ. կեսերից սկիզբ առած քայքայիչ միտումներով: Դրանց շարքում անհրաժեշտ է առանձնացնել միկենյան քաղաք-պետությունների գերմասնագիտացված տնտեսակարգը, տնտեսության բոլոր ճյուղերի կառավարման կենտրոնացված պալատական մեխանիզմը և բնակչության գերաճը: Կարելի է նշել նաև համայնքի տնտեսական քայքայումը, որը պիտի ծանր անդրադառնար բնակչության վիճակի, ինչպես նաև միկենյան կենտրոնների արտաքին առևտրի վրա<sup>163</sup>:

Վերոհիշյալ երևույթները, իհարկե, ի վիճակի էին անկման հասցնելու միկենյան աշխարհը, բայց ոչ հանկարծակի, ինչպես ենթադրում են միզրացիոն վարկածի կողմնակիցները, այլ աստիճանաբար, XIII դ. երկրորդ կեսի ընթացքում<sup>164</sup>:

Սակայն, մինևույն ժամանակ, որոշակի քանակությամբ նոր բնակչության մուտքը Դարավային Դունաստան չի կարելի բացառել (աղետից քիչ ավելի վաղ կամ ուշ): Այդպիսի ենթադրության հիմքը ոչ այնքան անտիկ ավանդության մեջ հիշատակվող դորիական արշավանքն է, որքան միկենյան որոշ կենտրոններում այսպես կոչված «բարբարոսական» խեցեղենի և հյուսիսային ծագման բրոնզե գեների ու այլ իրերի առկայությունը:

Այսպես, Միկենքից, Տիրինոսից, Լեֆկանդիից, Կորակուից և որոշ այլ վայրերից հայտնաբերված սահմանափակ քանակությամբ ուշիեւլադյան IIIC-ի սկզբով թվագրվող՝ առանց բրոնզի անվի պատրաստված քրծված խեցեղենի<sup>165</sup> համար ենթադրվում է հյուսիսբալկանյան աղբյուր: Մասնավորապես, Կորակուից գտնված երեք անոթները և տասներեք բեկորները կարող էին կապված լինել մի կողմից Տրոյա VIIb1-2-ից հայտնի Coarse Ware-ի և Buckelkeramik-ի, մյուս կողմից՝ Բուլղարիայի և Ռումինիայի ուշբրոնզեդարյան խեցեղենի հետ<sup>166</sup>: Սակայն նույն հեղինակը նշում է, որ այստեղ կարող է խոսք լինել միայն ավերածություններից հետո հյուսիսային բնակչության

ներհոսքի մասին, որոնք կարող էին և կապված չլինել արեւոյի հետ, քանի որ վերոհիշյալ խեցեղենը առկա է միկենյան կենտրոններում դեռ նախքան վերջիններին անկումը:

«Բարբարոսական» խեցեղենի հայտնվելը միկենյան կենտրոններում XIII դ. երկրորդ կեսին, մինչև անկումը, թվում է, հնարավոր է բացատրել երկու եղանակով.

- 1) Եթե այդ օտարածին խեցեղենը դիտվի որպես դրա ստեղծողների առկայության վկայություն, ապա նշանակում է, որ Գլուսիսային Բալկաններից դեպի Գարավային Գունաստան, Կիպրոս և Լևանտ ժողովուրդների տեղաշարժը<sup>167</sup> պիտի սկսվեր դեռ XIII դ. երկրորդ կեսին: Այդ դեպքում նշված շարժումները կարելի է բնութագրել որպես աստիճանական, փոքրածավալ ինֆիլտրացիա տեղական բնակչության գերակշիռ զանգվածի մեջ: Տեսականորեն, նոր տիպի խեցեղենի ստեղծողների նույնացումը «ծովի ժողովուրդների» առաջին ալիքի հետ (XIII դ. վերջին տասնամյակ) անհնար չէ, բայց վերին աստիճանի քիչ հավանական, քանի որ այժմ կարելի է հիմնականում ապացուցված համարել «ծովի ժողովուրդների» միկենյան-փոքրասիական պատկանելությունը.<sup>168</sup>
- 2) «Բարբարոսական» խեցեղենը կարող էր ներմուծվել: Այս տարբերակի դեպքում բավական դժվար է ըմբռնել դրա անհրաժեշտությունը խեցեղործական հիմնալի ավանդույթներ ունեցող միկենյան և լևանտյան քաղաքներում:

Կա մեկ այլ տարբերակ<sup>169</sup>, որը, սակայն, առայժմ չի ընդունվում մասնագետների կողմից: Ըստ դրա, միկենյան կենտրոնների անկման նախօրեին (ուշեիլադյան IIIB-ի վերջ) առանց բրուտի անիվի պատրաստված պարզունակ խեցեղենի հայտնվելը կարելի է բացատրել ոչ թե արտաքին, այլ ներքին հանգամանքներով: Անկման շրջանում, պալատական համակարգի քայքայման պրոցեսում պալատական և տաճարային տնտեսության խեցեղործական խոշոր արհեստանոցների գործունեության մասշտաբների կրճատումը կամ վերացումը պիտի դրդեին բնակչությանը անցնելու պարզ տնայնագործության:

Գարավային Գունաստանում հյուսիսբալկանյան ժողովուրդների թուղած նյութական հուշարձանների հաջորդ խումբը բրոնզե զենքերն ու գործիքներն են: Այս հարցում էլ հյուսիսից ենթադրվող ներխուժման մասին կարծիքը լուրջ հիմք չունի, քանի որ հյուսիսային ծագման երկսայր հատող-ծակող սրերը և ֆիբուլաները վկայված են դեռևս ուշեիլադյան IIIB փուլի զուտ միկենյան թաղումներում: Դրանց առկայությունը կարելի է բացատրել ոչ թե ներխուժումով, այլ միկենյան կենտրոններում օտարերկրացի վարձկանների և առևտրականների առկայությամբ կամ ուղղակի որակյալ օտարածին իրերի ներմուծմամբ:<sup>170</sup>

Ինչպես նշվեց վերը, մասնագետների մեծ մասը միկենյան քաղաքակրթության անկման երկու հիմնական պատճառներ է առանձնացնում՝ ներխու-

ժում հյուսիսից և ներքին գործոն: Սակայն, ինչպես նախկինում, այժմ էլ քիչ չեն այնպիսիք, ովքեր միկենյան աշխարհի անկունը վերագրում են բնակչի-մայական գործոնին:

Ըստ բնակչիմայական տեսության, նշված ժամանակաշրջանում արևելամիջերկրածովյան ավազանում նկատվել է կլիմայի աստիճանական չորացում, որի անմիջական հետևանքը կարող էր լինել Պելուպոննեսի երկրագործական շրջանների տնտեսական քայքայումը և դրանից բխող արտագաղթը<sup>171</sup>: Բնական աղետների մեկ այլ տիպի (երկրաշարժ) օգտին է կարծես վկայում որոշ միկենյան քաղաքների ավերման բնույթը<sup>172</sup>:

Իհարկե, երբ մեր ժամանակներից հազարավոր տարիներ առաջ տեղի ունեցած խոշոր մասշտաբի քաղաքական և տնտեսական-մշակութային աղետների համար վկայակոչվում են բնակչիմայական պատճառներ, ապա մասնագետների մեծ մասը սովորաբար թերահավատություն է դրսևորում: Սակայն 1960-ական թվականներից սկսած տարեցտարի ավելի մեծ թվով փաստեր են կուտակվել, որոնք ստիպում են լրջորեն խորհելու ուսումնասիրվող դարաշրջանում Մերծավոր Արևելքում և էգեյան ծովի ավազանում տեղի ունեցած աղետալի երևույթների իրական ետնախորքի մասին: Այժմ կարելի է վստահորեն խոսել այդ դարաշրջանում նկատվող կլիմայական փոփոխությունների մասին (տես ստորև):

Հաջորդ ենթաբաժնում կփորձենք սիստեմավորել միկենյան կենտրոնների անկման ընթացքում նկատվող բոլոր ընդհանուր և մասնավոր երևույթները, որը թույլ կտա պարզելու այդ բարդ գործընթացի էությունը: Սույն վերլուծության արդյունքները կարող են որոշակի պարզություն մտցնել ինչպես միկենյան, այնպես էլ մերծավորարևելյան ճգնաժամի լուսաբանման հարցում:

*ԱՆԿԱՆ ԸՆԹԱՏՐԸ*

Միկենյան կենտրոնների անկման ընթացքում նկատվող երևույթների համադրումը մտորումների տեղիք է տալիս այն առումով, որ ղժվար է նախապատվությունը տալ նախորդ ենթաբաժնում նշված անկման երեք հնարավոր պատճառներից որևէ մեկին: Կողմնակալ մտածեցման դեպքում հնարավոր է դրանք բացատրել կամ միայն արտաքին գործոնով, կամ ներքին քաղաքական ճգնաժամով, կամ էլ բնակչիմայական գործոնի ազդեցությամբ: Բացառել չի կարելի նաև դրանցից երկուսի կամ նույնիսկ բոլորի միաժամանակյա ներգործությունը: Սակայն խիստ ղժվար է հստակ ժամանակագրական հաջորդականություն հայտնաբերել նկատվող քայքայիչ երևույթների միջև: Օրինակ, Միկենքի և Տիրինթոսի տարածքի և բնակչության աճը տեղի է ունեցել Մեսսենիայի և Լակոնիկայի բնակավայրերի ավերման և լքման պահին, թե դրանք անկման գործընթացի տարրեր փուլեր են: Ստորև ներկայացնենք վերոհիշյալ երևույթները ըստ առայժմ հայտնաբերելի ժամանակագրության:

Այս երևույթը վկայված է զրեթե ողջ Պեղուպոննեսում և Միջին Հունաստանում, և դրա սկիզբը հստակ թվագրվում է դեռ մինչև առաջին աղետն ընկած շրջանով: Ենթադրյալներ են վկայված Միկենցում, Տիրինթոսում (Արգոլիդա), Էվտրեսիսում (Բեոտիա), Կրիսայում (Ֆոկիդա), Պետրայում, Կաուրիում, Արենում (Թեսսալիա), Իսթմոսյան պարանոցում և Աթենքում (Ակրոպոլիսի շրջանում)<sup>173</sup>: Վերոհիշյալ վայրերում կատարված շինարարական աշխատանքների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ոչ թե հին պարիսպներն են վերականգնվել, այլ հիմնականում կառուցվել են նոր, էլ ավելի մեծ տարածք շրջափակող պարիսպներ: Այսինքն, սա միանշանակ վկայում է բնակավայրերի տարածքային աճի օգտին: Հատկանշական է, որ, օրինակ, Տիրինթոսի տարածքի զգալի մասի ընդարձակումը ընկնում է 1200 թ. հետո, այսինքն, երկրորդ աղետի նախօրեին կամ դրա շրջանում<sup>174</sup>:

Որոշակի աշխատանքներ են կատարվել նաև Պիլոսում (Մեսսենիա): Վերակառուցվել է պալատը, ընդարձակվել է պահեստային հարկաբաժինների տարածքը և ամրացվել է պալատի մուտքը. սա առաջին աղետի շրջանում<sup>175</sup>:

Տարածքային աճով ուղեկցվող ամրաշինական աշխատանքները կարող են վկայել բնակչության քանակի զգալի աճի օգտին: Ընդ որում, հաշվի առնելով այս երևույթի աշխարհագրական լայն ընդգրկումը Թեսսալիայից մինչև Արգոլիդա զրեթե նույն ժամանակաշրջանում, հազիվ թե նպատակահարմար լինի այն բացատրել բնակչության ներքին, բնական աճով: Արդ, ինչը կարող էր այսքան մեծ թվով բնակավայրերի բնակչության աճի աղբյուր ծառայել:

Եթե նշված բնակավայրերի բնակչության աճը տեղի է ունեցել հարևան բնակավայրերի հաշվին, այլ ոչ օտար տարրի, ապա բնական է ենթադրել, որ ինչ-ինչ պատճառներով միկենյան աշխարհի քիչ թե շատ աչքի ընկնող քաղաքական կենտրոնները ստիպված են եղել ընդունելու իրենց շրջակա բնակավայրերի բնակչության զգալի քանակություն: Վերջիններս, անկասկած, պիտի ներկայացնեին շրջակայքի երկրագործական բնակչությունը:

Վերոհիշյալ երևույթների պատճառների մասին քիչ ավելի ուշ, իսկ այստեղ անհրաժեշտ է նշել, որ նմանօրինակ ինչ-որ գործընթաց է վկայված նաև կղզիական Հունաստանում, Կիպրոսում և այլուր: Այսպես, նույն ժամանակաշրջանում նկատվում է Յալիսոսի (Հոդոս) բնակչության մեծ աճ կղզու հարավային երկրագործական շրջանի բնակչության հաշվին<sup>176</sup>: Բնակչության մեծ կենտրոնացում է վկայված Կիպրոսում 1200 թ. հետո<sup>177</sup>:

Այս երևույթը, որ կրում է նուկլեացում կամ սինոլիզմ անվանումը<sup>178</sup>, անկասկած, կապված է միկենյան աշխարհում և հարակից տարածքներում սկսված բնակչության շարժունակության հետ:

Միկենյան կենտրոնների մասնակի ավերածությունները քվազրվում են առաջին աղետի շրջանով: Ավերածություններ կան Միկենքի միջնաբերդից դուրս գտնվող կառույցներում: 1950-ական թվականների վերջին կատարված հաշվարկների համաձայն<sup>179</sup>, մայրցամաքային Յունաստանում հաշվվում էր բնակավայրերի մշակութային ընդհատման 14 դեպք, որի պատճառը ավերածություններն էին: Խոշոր ավերածություններ են վկայված Միկենքում, Տիրիմոսում, Մենելայոնում (Լակոնիկա), Պիլոսում, Լիխտրիյայում (Մեսսենիա), Կրիսայում (Ֆոկիդա), Գլայում (Բեոտիա), Զիգուրիեսում (Կորնթոս)<sup>180</sup>, Սիդեայում (Արգոլիդա)<sup>181</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ ավերածությունների պատճառների մասին միասնական կարծիք չկա: Դրանք կարող էին ինչպես արտաքին հարձակման<sup>182</sup>, այնպես էլ բնական աղետի<sup>183</sup> հետևանքը լինել<sup>184</sup>: Իհարկե, հազիվ թե նպատակահարմար լինի բոլոր ավերածությունները վերագրել մեկ որոշակի գործոնի: Ավերածություններից որոշ ժամանակ անց մի շարք բնակավայրերում տարված ամրաշինական աշխատանքները, թվում է, վկայում են արտաքին վտանգին դիմազրավելու ցանկության օգտին (օրինակ, Միկենք, Տիրիմոս, Կրիսա): Բայց, միաժամանակ, չի կարելի անտեսել այն փաստը, որ ավերված Պիլոսը ընդհանրապես պարիսպներ չի ունեցել, որը, անկասկած, վկայում է այն մասին, որ պիլոսցիների համար արտաքին հարձակումը անսպասելի պիտի լիներ<sup>185</sup>:

Միկենյան քաղաքների ավերման արտաքին պատճառի կողմնակիցների գլխավոր փաստարկներից մեկը դեռ աղետի նախօրեին Կորնթոսյան (կամ Իսթոնոսյան) պարանոցում կառուցված ամրությունների գոյությունն է: Քանի որ դրանց մոտակայքում որևէ բնակավայր չկա, ապա ենթադրվում է, որ ամրությունների նպատակը հյուսիսից սպասվող հարձակմանը դիմազրավելն էր<sup>186</sup>:

Այս փաստարկն անտեսել, իհարկե, դժվար է, սակայն հարցն այն է, թե հյուսիսից սպառնացող վտանգի աղբյուրը որն է եղել: Դրանք կարող էին լինել ինչպես Յունաստանի Բալկանների ժողովուրդները, այնպես էլ Միջին Յունաստանի միկենյան քաղաքները: Ավելի ուշ կանդորառնանք այս խնդրին առնչվող նյութին, որ պահպանվել է անտիկ աղբյուրներում:

#### ԱՊՐԱԲԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՇՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ

Այս երևույթը միկենյան աշխարհի անկման առավել աչքի ընկնող դրսևորումն է: Մի քանի տասնամյակի ընթացքում Պելոպոննեսի և Միջին Յունաստանի շատ շրջաններ զրկվեցին իրենց բնակչության զգալի մասից: Լքված բնակավայրերի թիվը հասնում է մի քանի տասնյակի<sup>187</sup>: Վերը նշվեց, որ մոտավոր հաշվարկներով մայրցամաքային Յունաստանում ուշիկադյան IIIB փուլում հնագիտորեն վկայված են շուրջ 200 բնակավայրեր (չհաշ-

ված Ախայան, Ֆոկիդայի և Լոկրիդայի հյուսիսը), իսկ III C-ում՝ հազիվ դրա կեսը: Մեսսենիայում բնակչության քանակի կրճատումը հասնում է 90 տոկոսի, այսինքն, մոտավորապես 50,000 բնակչությունից մնացել է հազիվ 5,000: Ըստ քիչ ավելի ուշ կատարված հաշվարկների<sup>188</sup>, հնագիտորեն վկայված բնակավայրերի, դամբարանադաշտերի և սրբավայրերի ընդհանուր քանակը XIII դ. համար հասնում է 320-ի, իսկ XII դ.՝ ընդամենը 130-ի: XI դ. նվազման պրոցեսը շարունակվում է՝ 40: Չետաքրքիր են նաև Դեսբորոյի հաշվարկները XIII-XII դդ. համար, ըստ առանձին շրջանների<sup>189</sup>.

Շրջաններ	XIII դ.	XII դ.
Պելոպոննեսի հարավ-արևմուտք (Պատկապես Մեսսենիան)	150	14
Լակոնիկա	30	7
Արգոլիդա, Կորինթոսի շրջան	44	14
Ատտիկա	24	12
Բեոտիա	27	3
Ֆոկիդա, Լոկրիդա	19	5

Այս վիճակագրությունն ինքնին արդեն խոսում է և մեկնաբանություն չի պահանջում: Խնդիրը, ինչպես նախորդ երևույթների դեպքում, ապաքնակեցման պատճառների քացահայտումն է: Դեպի ուր կարող էր տեղաշարժվել իրենց բնակավայրերից կամավոր կամ բռնի կերպով տեղահանված բնակչությունը:

Վերը արդեն նշվեց հնարավոր մեկնակետերից մեկը՝ աղետից տուժած շրջանների բնակչության կուտակում մի շարք քաղաքներում (Միկենք, Տիրինթոս, Նան՝ Ասինե և Արգոս)<sup>190</sup>: Սակայն էլ ավելի խոշոր տեղաշարժեր են գրանցված հնագիտորեն և գրավոր աղբյուրներով դեպի այլ, հեռավոր շրջաններ ինչպես մայրցամաքային Գունաստանում, այնպես էլ կղզիներում և Փոքր Ասիայում:

Ենթադրվում է, որ լայն տեղաշարժ է եղել Արգոլիդայից Ախայա և Մեսսենիայից Կեֆալլենիա կղզի ու Ատտիկա. միկենյան բնակչության ներկայությունը վկայված է Կրետեում, Կիպրոսում, Տարսուսում (Կիլիկիա)<sup>191</sup>:

#### ԵՏԱԳԵՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Այս ենթաբաժնում փորձենք ներկայացնել այն իրադրությունը, որ ստեղծվել էր միկենյան աշխարհում առաջին երկու աղետների հետևանքով: Խոսքը ուշիեւլադյան III B-ի ավարտից մինև III C-ի վերջին փուլը (մոտավորապես XII դ. 40-30-ական թվականներ) ընկած ժամանակահատվածի մասին է, որի գլխավոր առանձնահատկությունը աղետից հետո նկատվող մաս-



նակի վերականգնումն է<sup>192</sup>: Այս փուլի վերջում դրան նախորդած աղետի շրջանում գոյատևած միլիոնյան բնակավայրերի զգալի մասը, այդ թվում Միլկենքը, լքվում է:

Ինչու՞մ է արտահայտվում «մասնակի վերականգնումը» և ինչ աստիճանով: Ինչպիսին են աղետին հաջորդած տասնամյակների ընթացքում գոյատևած բնակավայրերի աշխարհագրությունը, միլիոնյան մշակույթի կենսազորունեության մակարդակը և դրա կենտրոնների հնարավոր տեղաշարժերը:

Ըստ Դեսբորոյի<sup>193</sup>, աղետը հիմնականում շրջանցել է Կորնթոսի շրջանը, Ալսալան, Արգոսը, հավանաբար, նաև Ատտիկան, Բեոտիան և Թեսսալիայի մի մասը: Այստեղ շարունակվել է միլիոնյան մշակույթը՝ Արգոսից ծագող ուշհելլադյան III C տիպի խեցեղենով: Վերջինիս բնորոշ գիծը, ի տարբերություն միատարր III B խեցեղենի, զանազան տեղական տարբերակների ամպայությունն է: Այս խեցեղենի պարզ դեկորացիան ժամանակի ընթացքում ավելի պարզունակ է դառնում, որը վկայում է միլիոնյան մշակույթի աստիճանական վայրէջքի մասին: Ընդ որում նկատվում է միլիոնյան քաղաքակրթության ծանրության կենտրոնի տեղաշարժ դեպի Էգեյան ծովի կղզիներ:

Էգեյան ծովի կղզիներում աղետի լուրջ հետքեր չկան: Օրինակ, կյանքը նորմալ հունով է ընթացել Ֆիլակոպիում (Մելոս), Այա Իրինիում (Կեոս)<sup>194</sup>, Կուկունարիեսում (Պարոս)<sup>195</sup>, Էմբորիոյում (Նիոս), Լեֆկանդիում (Էվբեա)<sup>196</sup> և այլուր:

Վերոհիշյալ նյութը ցույց է տալիս III B փուլի ավարտից հետո միլիոնյան մշակույթի շարունակականություն, համեմայնդեպ, խեցեղենի և այլ բնագավառներում, իհարկե, համեմատաբար ավելի ցածր մակարդակի: Այս հանգամանքն իրավացիորեն բացատրվում է միլիոնյան աշխարհի քաղաքական տրոհումով և պալատական համակարգի անկումով<sup>197</sup>: Նոր պայմաններում նախկին «օրինակելի», ստանդարտացված ոճը, որն արդյունք էր վերին աստիճանի մասնագիտացված արքայական արհեստանոցների գործունեության, պիտի իր տեղը զիջեր քաղաքական միասնության բացակայության պայմաններում ձևավորված տեղական ոճերին: Այսինքն, վերացել էր միլիոնյան աշխարհի մշակութային միասնությունը: Նախկինում քաղաքականապես և մշակութային առումով միմյանց հետ սերտորեն կապված շրջանների միջև հարաբերությունների խզման պատճառով առաջ են գալիս նոր կապեր, հաճախ նույնիսկ բավական մեծ տարածքներ ընդգրկող<sup>198</sup>:

Ետադետային շրջանին բնորոշ նոր իրողությունների թվում անհրաժեշտ է նշել հետևյալները՝ 1) պալատական համակարգի անկում (դրա հետ կապված՝ արտադրության և քաշխման եղանակի փոփոխում), 2) մշակութային միասնության վերացում, տեղական ոճերի առաջացում, 3) նոր բնակավայրերի հիմնում աղետից չուժած կամ մասնակիորեն տուժած վայրերում, 4) միլիոնյան աշխարհի ներսում տարբեր կենտրոնների միջև նոր բնույթի փոխհարաբերությունների հաստատում, 5) Գծային գրի վերացում<sup>199</sup>:

Այժմ, երբ վերը ներկայացվեց միլենյան աշխարհի ճգնաժամին և անկմանն առնչվող հնազիտական նյութը, անհրաժեշտ է ի մի բերել դրա վերլուծությունից բխող եզրակացությունները և աղետի շրջանում նկատվող երևույթները, փորձելով առաջարկել վերոհիշյալ պատմական իրադարձությունների գնահատականը դրանց պատճառների տեսանկյունից: Ինչպիսի տրամաբանական բացատրություն կարելի է տալ նախորդ բաժնում քննարկված երևույթներին:

#### ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավերածությունների պատճառները կարելի է տեսնել ինչպես օտար ժողովուրդների հարձակման, այնպես էլ հարևան քաղաքական միավորների միջև պատերազմների և սեփական բնակչության ապստամբության մեջ, չխտսելով արդեն բնական աղետների մասին: Մրանցից որին կարելի է նախապատվություն տալ, հաշվի առնելով միլենյան աշխարհի անկմանն ուղեկցող մյուս երևույթները: Դնարավոր են մի շարք տարբերակներ.

1) Արշավանք Զյուսիսային Դունաստանից: Ավերածությունների շրջան իրոք ձգվում է Բեոտիայից Կորնթոսով դեպի Արգոլիդա, այնուհետև՝ Լակոնիկա և Մեսսենիա: Բնակչությունը կարող էր հանգրվան գտնել այս գծից արևմուտք, արևելք և հյուսիս ընկած շրջաններում (Կեֆալլենիա, Ախայա, Ատտիկա և այլն):

Այս տարբերակը տրամաբանական է քվում, սակայն Դեսքորոյի սխեման ունի մեկ այլ թույլ կողմ, բացի նրա և այլ հեղինակների այն ենթադրությունից, թե նվաճողները կարող էին չմնալ գրավված շրջաններում, այլ ետ վերադառնալ կամ ձեռնարկել ուրիշ նվաճումներ Պելոպոննեսից դուրս (տես վերը):

Խոսքը ետադետային շրջանում այս ենթադրյալ հյուսիսային նվաճողների ճանապարհին ընկած Արգոլիդայի, Կորնթոսի, նաև Բեոտիայի բնակավայրերի կենսագործունեության թեկուզ նվազ չափերով, սակայն, այնուամենայնիվ, շարունակականությունն է: Դա զիվ թե նվաճողների նպատակը միայն Լակոնիկայի և Մեսսենիայի բնակավայրերի ոչնչացումը չիներ: Եվ ինչու Լակոնիկայի և Մեսսենիայի ապարնակեցումը պիտի հաճընկներ Արգոլիդայի բնակավայրերի բնակչության աճի հետ:

Օտար նվաճողների արշավանքի հնարավորության դեմ է վկայում նաև մեկ այլ փաստարկ: Եթե նվաճողները եկել են հյուսիսից, ուրոնց սպառնալիքից դրդված, Թեսսալիայի, Բեոտիայի, Ֆոկիդայի, Կորնթոսյան պարանոցի և Արգոլիդայի բնակչությունը ստիպված է եղել շտապ կերպով ընդարձակելու բնակավայրերի տարածքը՝ վտանգից փախչող բնակչությանը պատսպարելու համար, ապա ինչու Պիլոսի բնակիչները չեն մտահոգվել դրանով: Այս հանգա-

մանքն արդեն նկատվել է մասնագետների կողմից<sup>200</sup>: Հարկ չկա նույնիսկ քննարկել այն հարցը, թե ինչպես կարելի էր կարճ ժամկետում ավարտել զգալի թվով բնակավայրերի ամրաշինական աշխատանքները ավերիչ արշավանքների շրջանում:

Եվ, իհարկե, այն խիստ սակավաթիվ հնագիտական նյութը, որը, որոշ մասնագետների կարծիքով, վկայում է հյուսիսային արշավանքի օգտին (տես վերը), անբավարար է ենթադրելու մեծ մասշտաբի ավերիչ արշավանք:

2) Երկպառակտչական պատերազմներ: Այս բացատրությունն աղետին անհամեմատ ավելի հիմնավոր է հետևյալ պատճառներով.

ա) Տնտեսական անկման շրջանում կարող էր տեղծվել ներքաղաքական անկայուն իրավիճակ, որը, ելնելով պատմական անալոգիայի ընձեռած հնարավորություններից, սովորաբար հանգեցնում է երկպառակտչական պատերազմների:

բ) Հույն պատմիչների (Թուկիդիդես, Հերոդոտոս) երկերում պահպանվել են բազմաթիվ վկայություններ Տրոյական պատերազմի շրջանում տեղի ունեցած երկպառակտչական կռիվների մասին:

Երկպառակտչական պատերազմների դերի հարցը աղետում անմիջականորեն կախված է միկենյան աշխարհի քաղաքական կառուցվածքի խնդրից: Ինչ է իրենից ներկայացնում Պելոպոննեսի և Միջին Հունաստանի մի շարք շրջաններն ընդգրկող և պայմանականորեն «միկենյան» կոչվող տարածքը:

Այսօր մասնագիտական գրականության մեջ չկա միակարծություն: Հաշվի առնելով Հոմերոսի պոեմներում հիշատակվող միացյալ ախայյան արշավանքը Տրոյա, ուշեյլադյան IIIB տիպի խեցեղենի առկայությունը միկենյան աշխարհում, խեթական արքյուններում հիշատակվող Ախիսիայի անանուն արքան, որն ուներ խաթիի արքային հավասար կարգավիճակ (տես Գլուխ 1.3), մասնագետների մի մասը հակված է Ազամեմոնի պետությունը համարելու Միկենքից կառավարվող մի հզոր քաղաքական միավոր<sup>201</sup>: Մյուսները Միկենյան պետություն ասելով հասկանում են դեպից-դեմք, ընդհանուր շահերից դրդված ժամանակավոր և անկայուն ֆեդերացիա՝ Միկենքի գլխավորությամբ<sup>202</sup>: Այս երկրորդ տեսակետը կարծես ավելի լավ է հիմնավորված, քանի որ նույն Հոմերոսի մոտ բազմաթիվ են այնպիսի իրադարձությունների հիշատակությունները, որոց վկայում են տարբեր ախայյան քաղաքների «արքաների» զգալի ինքնուրույնության օգտին նույնիսկ արտաքին հակառակորդի դեմ միասնական ուժերով վարվող պատերազմի ժամանակ<sup>203</sup>:

Ինչնէ, նույնիսկ եթե XIII դ. վերջերին Միկենքը միասնական և կենտրոնացված պետություն էլ լիներ, երկպառակտչական պատերազմները կարող էին տեղ գտնել այս կամ այն հանգամանքի բերումով: Ընդսմին, փորձենք պատկերացնել հետևյալ հնարավոր տարբերակները.

1) Պելոպոննեսի ներսում առանձնանում են երկու տիպի տուժած շր-

ջաններ՝ ա) Արգուլիդա, որտեղ կան ավերածություններ, բայց նաև՝ բնակչության կուտակումներ նույն վայրերում, բ) Լակոնիկա և Մեսսենիա, որտեղ ավերածություններից հետո բնակչությունը լքել է իր բնակավայրերը: Սրան պիտի ավելացնել աղետից գրեթե չտուժած Ախայան:

Կարելի է արդյոք ենթադրել, որ ռազմական բախումներ են եղել մի կողմից Արգուլիդայի, մյուս կողմից՝ Լակոնիկայի և Մեսսենիայի միջև: Մա չի կարելի բացառել, սակայն դրանցից առաջինի հաղթանակի դեպքում (այլ ենթադրությունը տրամաբանական չէ) ա) ինչու պիտի պարտված կողմի բնակիչների ճնշող մասը լքեր իր բնակավայրերը, բ) ինչու, փոխանակ հաստատվելու գրավված բերրի հողերում, հաղթողները ձգտում էին դուրս չգալ իրենց գերբնակեցված բնակավայրերից:

2) Պատերազմ է ընթացել Պելոպոննեսի և Միջին Հունաստանի քաղաքների միջև (Արգուլիդան ընդդեմ, ենթադրենք, Բեոտիայի և Ֆոկիդայի)<sup>204</sup>: Այդպիսի պատերազմը կարող էր հասցնել երկուստեք ավերածությունների, ինչը և լավ վկայված է հնագիտորեն (տես վերը): Սակայն, ինչպես և նախորդ տարբերակի դեպքում, ինչը պիտի ստիպեր Լակոնիկայի և Մեսսենիայի բնակչությանը լքել երկիրը:

3) Սեփական բնակչության ապստամբություն: Այս գործոնը նույնպես հնարավոր է, սակայն հազիվ թե գլխավոր պատճառ դիտվի: Այն գուցե կիրառելի լինի միայն առանձին վայրերի համար: Համենայնդեպս, յուրաքանչյուր ապստամբություն, եթե այն ուղղված է պետական վարչակազմի դեմ, չի կարող հանգեցնել այնպիսի հետևանքների, ինչպիսին նկատվում է Պելոպոննեսում: Օրինակ, Մեսսենիայում աղետից հետո կարծես չեն նշմարվում ոչ պարտվողները, ոչ էլ հաղթողները:

4) Բնական աղետներ: Այնպիսի բնական աղետներ, որոնք ի վիճակի են հասցնելու խոշոր տարածքների ապաբնակեցման, այնքան էլ շատ չեն: Ենթադրենք, որ 1200 թ. մոտերքում միկենյան աշխարհում եղել են ավերիչ երկրաշարժեր: Բայց այդ դեպքում անհասկանալի կլինի բնակչության կենտրոնացումը մեծ բնակավայրերում, դրանց նախորդող շրջանում պարիսպների ամրացման փաստի հետ միասին: Երկրաշարժերը չէին կարող շարժման մեջ դնել նման քանակությամբ բնակչություն: Ավերիչ երկրաշարժերը հազիվ թե աղետալի հետևանքներ չունենային Արգուլիդային, Մեսսենիային ու Լակոնիկային անմիջապես հարող լեռնային Ախայայի համար, որը աղետի շրջանում դարձել էր արտագաղթի մեկնակետերից մեկը:

Այս առումով, թվում է, ուշադրության է արժանի բնակլիմայական պայմանների փոփոխության մասին դեռ 1960-ական թվականներին առաջ քաշված կարծիքը<sup>205</sup>:

Բնակլիմայական պայմանների վատթարացումը, ասեմք, տեղումների քանակի նմազումը կարող էր լինել հենց այն գործոնը, որի բացասական ազ-

դեցուքյունը ենթադրում է տարբերակված հետևանքներ նույնիսկ այնպիսի փոքր աշխարհագրական տարածքի համար, ինչպիսին Պելուպոննեսն է: Այսօր դժվար է խոսել այդ ենթադրվող կլիմայի չորացման չափերի և առանձին շրջանների վրա դրա ազդեցության մասին, սակայն մի շարք փաստարկներ, թվում է, ի վիճակի են վկայելու իրադարձությունների ծավալման նման ընթացքի օգտին:

Նախորդ ենթաբաժիններից մեկում («Ապարնակեցում») նշվեց մի ուշագրավ դիտարկում, արված Գոռոսի և Կիպրոսի առնչությամբ: Ըստ դրա, XIII դ. վերջին-XII դ. սկզբին պարզորոշ նկատվում է այս կղզիների խորքային շրջանների բնակչության մեծ ներհոսք դեպի ծովափնյա բնակավայրեր, որի արդյունքում զգալի թվով բնակավայրեր լքվում են լիովին կամ մասնակիորեն:

Այս երևույթը կարծես լավ զուգահեռ է Պելուպոննեսի երկու կարևորագույն երկրագործական շրջաններին՝ Մեսսենիային և Լակոնիկային: Սույն աշխատության տարբեր բաժիններում (Գլուխ 2.1 և 2.3) նշվեց նման երևույթի մասին արդեն Մերձավոր Արևելքի որոշ այլ շրջաններում (Փոքր Ասիա, Լևանտ, նաև՝ Գյուսիսային Միջագետք):

2) Դնակլիմայաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուշրրոնզեղարի վերջին փուլում արևելամիջերկրածովյան ավազանում և համայն Մերձավոր Արևելքում նկատվում է կլիմայի աստիճանական չորացում, որի հետևանքները զգացվում են այս ընդարձակ տարածաշրջանի շատ վայրերում<sup>206</sup>:

Ամփոփելով բնական աղետի գործոնը, կարելի է ենթադրել, որ կլիմայական պայմանների վատթարացումը իսկապես կարող էր տարբեր հետևանքներ ունենալ միկենյան աշխարհի տարբեր շրջաններում, կախված ջրային բնական ռեսուրսների քանակից, տեղանքի ռելյեֆից, բնակչության կենցաղավարման բնույթից, ինչպես նաև բնակչության խտությունից: Դետագա ուսումնասիրությունները այս տեսանկյունից, անկասկած, կարող են էականորեն պարզել խնդիրը: Դարկ է նշել, որ անկման ժամանակաշրջանում միկենյան աշխարհում նկատվող երևույթները անհամեմատ ավելի հեշտ է բացատրել կլիմայական գործոնով, քան արտաքին աշխարհից ընթացած ներխուժումով:

Միկենյան կենտրոնների քաղաքական և տնտեսական ճգնաժամին նվիրված բոլոր ուսումնասիրություններում<sup>207</sup> ընդգծվում է պալատական խոշոր տնտեսական միավորների աստիճանական անկումը, որի անմիջական հետևանքը մանր արտադրողների (համայնքի) քայքայումն էր և արտաքին առևտրի ծավալի կտրուկ կրճատումը: Պետության տնտեսական մեխանիզմի հիմքի՝ համայնք-պալատ փոխհարաբերության մեջ հավասարակշռության խախտումը, որը հենվում էր գյուղատնտեսական արտադրանքի մի մասի փոխանակման վրա և որի հաշվին պահվում էին վիթխարի վարչական ապարատը և պալատական ու տաճարային տնտեսություններում ներգրավված հազարավոր արհեստավորները, իրոք հղի էր պետության ողջ կենսագործունեությունը կաթվածահարելու սպառնալիքով: Ինչ կարող էր տեղի ու-

ճեմնալ նման իրավիճակում:

Համայնքի տնտեսական քայքայում, որին կհաջորդեր 1) գյուղական բնակչության լրիվ կամ մասնակի արտագաղթ գոյության միջոցներ փնտրելու նպատակով, 2) ապստամբություն կենտրոնական վարչակազմի դեմ իրենց գոյության միջոցներ հատկացնելու պահանջով, 3) կենտրոնական վարչակազմի պատասխան ռեակցիա, որը, հավանաբար, պիտի հանգեր ուժային միջոցների, որպեսզի բույլ չտրվեր պետությանը խիստ անհրաժեշտ նյութական բարիքներ արտադրողների կորուստ: Իրավիճակը կարող էր չտկվել, եթե կլիմայական պայմանների վատթարացումը տներ միայն մեկ երկրագործական սեզոն: Կարելի է միայն պատկերացնել երկու և ավելի տարիներ տևած նման իրավիճակի հետևանքները: Ճզնաժամը, անկասկած, կլիներ համատարած և պիտի վերածվեր իսկական աղետի:

Վերը նկարագրված վարկածը, անշուշտ, ենթադրում է 1) միլենյան կենտրոնների քաղաքական և տնտեսական անկում, 2) արտաքին առևտրի ծավալի կրճատում, 3) ապստամբություններ առանձին շրջաններում, 4) պատերազմներ հարևան քաղաքների միջև, 5) բնակչության արտագաղթ: Այսինքն, դրանում առկա են այն բոլոր ճզնաժամային երևույթները, որոնք վկայված են միլենյան աշխարհում XIII դ. վերջերին-XII դ.: Ինչ վերաբերում է անկման արտաքին գործոնին, ապա այն կարող էր հանդես գալ միայն վերոհիշյալ իրադարձություններից հետո, երբ երկիրը հասել էր համատարած քայքայման: Եվ իրոք, XII դ. երկրորդ կեսին վրա է հասնում եզրափակիչ աղետը, որի ընթացքում նախորդ աղետից տուժած միլենյան կենտրոնները վերջնականապես դադարեցնում են գոյությունը<sup>208</sup>:

\* \* \*

Այսպիսով, եզրափակելով միլենյան քաղաքակրթության անկմանը նվիրված բաժինը, անհրաժեշտ է ի մի բերել հիմնական եզրակացությունները:

- 1) Անկման ընթացքը, կլիմայական պայմանների վատթարացում-տնտեսական բարդություններ-արտաքին առևտրի անկում-բնակչության սոցիալական ընդվզումներ-կենտրոնի անկարողություն վերահսկելու իրավիճակը-երկպառակտչական պատերազմներ:
- 2) Նախորդ կետից բխող լայն ավերածություններ և բնակչության արտագաղթ:
- 3) Զաղաքական, տնտեսական և մշակութային անկում:
- 4) Արտաքին թշնամու արշավանքներ կամ, գերադասելի է՝ ծայրամասային բնակչության աստիճանական ներքափանցում - միլենյան քաղաքակրթության վերջնական անկում:

Ահա մոտավոր գծերով այն մոդելը, որն այսօր հնարավոր է թվում վերականգնելու միլենյան աղետի ընթացքի համար: Որոշ վերապահումներով, թվում է, այն կիրառելի է Մերձավոր Արևելքում նույն ժամանակաշրջանում տեղի ունեցած նման երևույթների նկատմամբ: Այդ նպատակով հնարավոր ենք համարում առանձնացնելու մի օրինակափություն, որն ուրվագծվում է

աշխատության այս բաժնում քննարկված խնդիրների ուսումնասիրության արդյունքում:

Երբ քննվում են միլենյան աշխարհի անկման պրոցեսի ընթացքում տեղ գտած բոլոր քայքայիչ երևույթները մեկ հարթության մեջ, ապա կարելի է պարզորոշ նկատել մի միտում: Այդ երևույթների ներգործությունը միլենյան քաղաքական-մշակութային համալիրի տարբեր շրջանների վրա տարբեր է եղել: Աղետից առավելապես տուժել են (ավերածություններ և ապաքնակեցում) այն տարածքները, որոնք նախորդ շրջանում հանդիսացել են քաղաքային խոշոր կենտրոններ, որոնց կենսագործունեությունը գերազանցապես հիմնվել է զերկենտրոնացված քաղաքական և տնտեսական-մշակութային համալիրի գոյության վրա: Ակնառու կերպով զգացվում է միլենյան աշխարհի ներսում ժողովրդագրական կառույցի վերադասավորում, որը հանգում է հետևյալին.

- 1) Արգոլիդայի մի շարք քաղաքներում բնակչության կուտակում, որից հետո դրա մասնակի արտագաղթ դեպի կղզիներ, Լևանտ և Փոքր Ասիա:
- 2) Մեսսենիայի (զուցե նաև՝ Լակոնիկայի) բնակչության արտագաղթ դեպի գյուղական կենսագործունեությամբ աչքի ընկնող Ախայա, Կեֆալլենիա և արևելյան Ատտիկա:

Վերոհիշյալից անհրաժեշտորեն բխում է մի կարևոր հետևություն՝ քաղաքային մշակույթի անկում, որը հանգեցնում է գյուղական պարզունակ կենսագործունեության ծավալի աճին: Այս է, քերևս, այն գլխավոր միտումը, որով կարելի է ընդհանրացնել միլենյան քաղաքակրթության անկման պրոցեսը և դրա հետևանքները:

Չնայած Մերձավոր Արևելքի մյուս տարածաշրջաններից ճգնաժամի փուլում վկայված երևույթների ուսումնասիրման համար փաստական նյութը ոչ միշտ է բավարար, սակայն միլենյան զուգահեռները, թվում է, թույլ են տալիս ենթադրելու ճգնաժամի ծավալման նման ընթացք:

#### ԵՐԿՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մերձավորարևելյան ճգնաժամի բարձրակետը լուսաբանող գլուխը, անհնար է շրջանցել ընդհանրապես «ճգնաժամ» տերմինով բնորոշվող պրոցեսը: Խոսքը XIII դ. վերջերից սկսված և երկու-երեք դար տևած ժամանակահատվածում տեղ գտած պրոցեսների ակնհայտ նմանության մասին է վաղ բրոնզեդարից մինչև միջին բրոնզեդար և միջինից մինչև ուշբրոնզեդար անցման փուլերում զրանցված համանման երևույթների հետ: Դրանք են՝ 1) քաղաքական անկայունություն, 2) բնակչության շարժունակություն, 3) գոյություն ունեցող քաղաքական միավորների անկում և նորերի կազմավորում, 4) հասարակությունների կենսագործունեության մեջ արմատական փոփոխություններ բոլոր բնագավառներում և այլն: Դին Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունների զարգացման ընթացքում պարզորոշ նկատվող ցիկլայնությունը դեռևս իր համապատասխան բացատրու-

բյուրը չի գտել: Կապված էր դա արդյոք բնակլիմայական պայմանների փոփոխությունների հետ, թե ոչ, կարգեն հատուկ ուսումնասիրությունները: Համենայնդեպս, XII դ. ճգնաժամի առնչակցությունը կլիմայական պայմանների փոփոխությանը բավական զգալի փաստական նյութի վրա է հենվում և արժանի է ուշադրության (տես Գլուխ 2.1):

Այժմ ներկայացնենք մերձավորարևելյան տարածաշրջանի երկրների կենսագործունեության վրա էթնիկական տեղաշարժերի ազդեցության աստիճանը: Կարծիք հայտնվեց, որ ճգնաժամի առավել ակնառու վկայություն համարվող էթնիկական տեղաշարժերը, սկիզբ առնելով XIII դ. վերջին տասնամյակներին, պատճառ պիտի դառնային որոշ երկրներում քաղաքական անկայունության, տարածքային կորուստների և կարևորագույն հաղորդակցության ուղիների կենսագործունեության խափանման: Միաժամանակ նշվեց, որ տեղաշարժերի առաջին ակիբը տարածքային ընդգրկման տեսանկյունից համեմատաբար մեծ չէր:

Սույն գլխում քննարկված խնդիրների և առկա գրավոր ու հնագիտական աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

1) Մ.թ.ա. XIII դ. երկրորդ կեսին Փոքր Ասիայում և մայրցամաքային Հունաստանում սկիզբ առած քաղաքական և տնտեսական խոր ճգնաժամը, որն ավարտվեց նախ միկենյան քաղաքակրթության աստիճանական անկումով, այնուհետև՝ խեթական տերության տրոհումով, գերազանցապես ներքին քայքայիչ պրոցեսների հետևանք էր: Եթե խեթական տերությունը, շնորհիվ մեծ տարածքի ու լայն ռեսուրսների, ճգնաժամի արդյունքում միայն տրոհվեց դեռևս XIII դ. գոյություն ունեցող քաղաքական միավորների (տես Գլուխ 3.1), ապա միկենյան կենտրոններում դրա պատճառած վնասները ճակատագրական եղան: Բնակչության զանգվածային արտահոսքը մայրցամաքային և կղզիական Հունաստանի տարբեր շրջաններ (Աիաա, Ատտիկա, Կեֆալլենիա), Փոքր Ասիա, Լևանտ նշանակում էր ուշիկալայան քաղաքակրթության ստեղծած քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ինստիտուտների կենսագործունեության ավարտ կամ, առնվազն վայրընթաց զարգացում:

2) Փոքր Ասիայում և միկենյան աշխարհում (բացառությամբ կղզիների մի մասի) բնակչության քաղաքական կազմակերպության հիմքերի խարխուլումը ունեցավ իր անխուսափելի հետևանքները.

ա) քաղաքային մշակույթի վայրէջք, իսկ մի շարք դեպքերում՝ ուղղակի անկում: Օրինակ, Տրոյա VIIb2-ը, Գորդիոնի վաղ երկաթեդարյան առաջին փուլը (Յասսըիտյուք 7B), Միկենքը ուշիկալայան III C-ի վերջին, և այլն: Ընդ որում, քաղաքային մշակույթի անկումը անպայմանորեն չպիտի կապվի նոր՝ ցածր մշակույթի կրողների ներկայության հետ: Հիմնական պատճառը, անկասկած, կենտրոն-ժայռագավառ ուղղահայաց կապի վերացումն էր: Կենտրոնից կառավարվող վարչա-քաղաքական մեխանիզմի փլուզումը չէր կարող իր



բացասական հետևանքները չունենալ տեղական վարչական միավորների կենսագործունեության բոլոր բաղադրատարրերի վրա: Այնուամենայնիվ, կենտրոնական պետական ապարատի փլուզմամբ միայն քաղաքային մշակույթի անկումը բացատրել, քերտ, անհնար է: Եթե ենթադրվում է, որ կենտրոնի հետ կապերի խզումը կարող էր պատճառ դառնալ քաղաքային բնակչության հեռացման գյուղական շրջաններ դրանից բխող կենսագործունեության եղանակի փոփոխմամբ (երկրագործություն և անասնապահություն)(տես Գլուխ 2.1), ապա ինչպես բացատրել տարբեր տարածաշրջաններում հնագիտորեն պարզորոշ նկատվող հետևյալ երևույթը՝ գյուղական-երկրագործական շրջանների բնակչության ուժեղ արտահոսք դեպի քաղաքներ՝ պետությունների անկման նախօրեին (օրինակ, Պելոպոննեսում, Հռոդոսում, Կիպրոսում, Խաթթուսասում): Եթե պելոպոննեսյան քաղաքներում կամ Խաթթուսասում հարևան գյուղական բնակչության ներհոսքը տեսականորեն կարելի է բացատրել երկպառակտչական պատերազմներով կամ հակառակորդի հարձակման սպառնալիքով, ապա դժվար է նման հիմնավորում գտնել վերը նշված երկու կողմերի խորքային շրջանների գյուղական բնակչության արտագաղթի համար: Կապված չլին արդյոք այդ տեղաշարժերը երկրագործության համար անհրաժեշտ պայմանների բացակայության (կլիմայի փոփոխություն, ջրային ռեսուրսների պակաս և այլն) հետ: Այս առթիվ անդրադառնալով Գորդիոնին, նշենք, որ վաղ երկաթեդարյան փուլում ու շրոնգեդարյան բնակչության զոյատնման օգտին վկայող որևէ էական հիմք առայժմ չկա: Թվում է, որ այն ուղղակի հեռացել է քաղաքից նախքան նոր բնակչության գալուստը<sup>209</sup>:

- Քաղաքային մշակույթի անկման իրական դրդապատճառների խնդիրը, դրա առնչակցությունը քաղաքային և գյուղական բնակչության տեղաշարժերին դեռևս հատուկ ուսումնասիրման կարիք ունի:
- 3) XII դ. բնակչության շարժունակությունը հասնում է իր բարձրակետին: Ենթադրաբար, գերազանցապես էգեյան ելակետ ունեցող «ծովի ժողովուրդների» տեղաշարժային ալիքները տարածվում են Փոքր-Ասիայի հարավ-արևմտյան, հարավային ծովափնյա շրջաններում և Լևանտում: Նշված շրջանների կենսագործունեության վրա եկվոր բնակչության ազդեցությունը միանշանակ չի եղել: Եթե Կիպրոսի բնակավայրերը, Տարսուսը և որոշ այլ վայրեր ավերածությունից քիչ հետո եկվոր տարրի շնորհիվ արագորեն վերականգնել են իրենց պատճառված վնասները, ապա սիրիա-պաղեստինյան շրջանում պատկերը քիչ այլ է: Ուզաբիտում և դրանից հարավ, մինչև Պաղեստին, ավերված կամ բնակչության կողմից լքված բնակավայրերը կամ ընդհանրապես չեն բնակեցվել, կամ այդ տեղի է ունեցել տևական ընդմիջումից հետո: Ավելի հարավ, հատկապես Պաղեստինում, «ծովի ժողովուրդների» ներկայությունը զգալիորեն

տարբեր է հյուսիսից: Այստեղ գրանցված են միայն մասնակի ավերածություններ և մշակութային ընդհատում գրեթե չկա: Սա կարող է վկայել նոր բնակչության առանձին փոքրաքիվ խմբերի բնակեցում պաղեստինյան քաղաքներում, տեղացիների հետ կողք-կողքի: Չավանաբար, կարելի է համաձայնվել այն տեսակետի հետ, ըստ որի «ծովի ժողովուրդների» մի մասը եգիպտացիների կողմից ուղղակի բնակեցվել է պաղեստինյան քաղաքներում հրեական ցեղերի տեղաշարժերի դեմ արգելապատնեշ ստեղծելու նպատակով (Գլուխ 2.2):

Առաջին գլխի եզրակացություններում նշվեց հյուսիսսրաբականյան ցեղերի միգրացիաների ծավալման աշխարհագրության մասին, որի արդյունքում արևմտյան և արևմտակենտրոնական Փոքր Ասիան, ամենայն հավանականությամբ, պիտի դուրս գար խաթաբի գերիշխանության տակից: Ինչ վերաբերում է խեթերի բնօրրանին, ապա XII դ. սկզբներով թվագրվող խաթաբուսասի և կենտրոնական Փոքր Ասիայի շուրջ մեկ տասնյակ բնակավայրերի հնագիտորեն վերականգնվող ավերածությունները, անկասկած, ոչ «ծովի ժողովուրդների», ոչ էլ հյուսիսսրաբացիների տեղաշարժերի հետևանքը չէին կարող լինել: Այս խնդրում դժվար է միանշանակ եզրակացության գալ: Եթե նույնիսկ խաթաբուսասը ավերված լիներ սեփական բնակչության կողմից, ինչպես ենթադրում էր Կ.Քիտտելը, ապա քաղաքից հյուսիս-արևելք գտնվող մյուս բնակավայրերի ավերումը դժվար կլինի վերագրել նույն պատճառին: Կասկերի և թերակղզու այս շրջանի այլ ժողովուրդների մասնակցությունը նշված իրադարձություններին տրամաբանական է ոչ միայն նախորդ ժամանակաշրջանի անալոգիաների, այլև XII դ. կեսերին կասկերի՝ մեկ այլ ուղղությամբ ընթացած տեղաշարժերի տեսանկյունից: Խոսքը Թիզաթապալասար Ի-ի կողմից Չայկական լեռնաշխարհի արևմուտքում կասկերի և այլ ժողովուրդների շարժումների հիշատակության մասին է: Խաթաբի նախորդ ողջ պատմության ընթացքում կասկական ցեղերի մշտական հարձակումները խեթական բնօրրանի վրա բույլ է տալիս ենթադրելու նրանց ակտիվությունը նաև XII դ.: Եթե կասկերը կարող էին հասնել Ալզի և Պուրուլումզի, ապա հազիվ թե չփորձեին օգտվել խաթաբի տրոհման շրջանում ստեղծված հարմար առիթից:

Ինչևէ, կասկերի ենթադրվող տեղաշարժերի խնդիրը դեռևս ուսումնասիրման կարիք ունի: Ինչ վերաբերում է խաթաբի բնօրրանի բնակչության տեղաշարժերին, ապա այդ մասին հաջորդ գլխում:

XII դ. միգրացիաներից կարևոր դեր են խաղացել արամեական ցեղերի տեղաշարժերը: Ակսվելով դեռ XIII դ. սկզբներից կամ զուցե քիչ ավելի վաղ, դրանք XII դ. հասնում են իրենց բարձրակետին, ընդգրկելով աշխարհագրական լայն տարածք: Այն հատկապես նկատելի է Ասորեստանի հյուսիս-արևմտյան սահմանների երկայնքով և Բաբելոնիայի արևմուտքում: Արամեացիների ընթացքը դեպի Միջագետք ծանր հետևանքներ ունեցավ միջագետքյան պետությունների քաղաքական և տնտեսական վիճակի համար: Եթե Ասորեստանը ուժերի գերագույն լարումով կարողացավ պահպանել իր

զգալիորեն կրճատված տարածքը, ապա Բաքեյոնիայում արամեացիները հասան քաղաքական գերիշխանության, ժամանակի ընթացքում կազմելով բնակչության մեծամասնություն:

Այսպիսով, XII դ. ճգնաժամի ծավալման բարձրակետի շրջանը ավարտվեց մի շարք արձատական տեղաշարժերով Մերձավոր Արևելքի և Էգեիդայի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Այն նշանավորեց հինարևելյան քաղաքակրթության մի ողջ դարաշրջանի ավարտը և նոր փուլի սկիզբը: Հաջորդ գլխում կքննարկվեն ճգնաժամի բարձրակետին հաջորդող ժամանակահատվածը բնորոշող խնդիրները:

## ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԸՆ Մ.Թ.Ա. XII-XI ԴԱՐՆԵՐՈՒՄ

XII դ. սկզբներից Մերձավոր Արևելքի էրնոքադաքական կյանքում տեղի ունեցած խոշոր տեղաշարժերը անմիջապես արտացոլվեցին հետագա մեկերկու դարերի պատմության վրա: Համընդհանուր ճգնաժամի արդյունքում արմատապես փոփոխված վարչա-քաղաքական և էթնիկական իրավիճակի զլխավոր հետևանքներից մեկը քաղաքական վայրիվերումների ընթացքում գոյատևած պետությունների արտաքին քաղաքական ակտիվության ծայրաստիճան նվազումն էր: Ասորեստանը դժվարությամբ էր դիմագրավում արամեական ճնշմանը, իսկ Եգիպտոսը Ռամզես III-ից հետո աստիճանաբար կորցնում էր իր ազդեցությունը Պաղեստինում: Ներքաղաքական խնդիրները ստիպում էին այս պետություններին պարփակվելու սեփական սահմաններում: Միայն Թիզբապալասար I-ի և մասամբ Աշշուրբելկալայի օրոք Ասորեստանը փորձեց ճեղքել արամեական իշխանությունների և հյուսիսային ցեղերի շղթան, սակայն դա լուկ մի դիպված էր, որին հաջորդեց ավելի խոր ներքին ճգնաժամը, որը շարունակվեց մինչև X դ. երկրորդ կեսը: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա XII դ. վերջերին XX դինաստիայի անկումով սկիզբ առած «անցումային երրորդ շրջան» կոչվող շուրջ մեկ և կես դար տևած փուլը ոչ այլ ինչ էր, քան երկրի տրոհում բազմաթիվ մանր իշխանությունների:

Վերը նշված պատճառներով, ինչպես նաև խեթական տերության տրոհման հետևանքով XII-X դդ. Մերձավոր Արևելքի պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրները կտրուկ նվազում են, իսկ եղած սահմանափակ նյութը լուսարանում է զխավորապես ներմիջագետքյան և ներբզիպտական խնդիրները, բացառությամբ XII դ. վերջերի-XI դ. առաջին կեսի ասորեստանյան տեքստերի: Եթե սրան ավելացնենք այն, որ ճգնաժամի ընթացքում տեղ գտած տեղաշարժերի և շատ տարածաշրջանների հասարակությունների կենսագործունեության փոփոխման հետևանքով առաջ են գալիս քաղաքային նոր կենտրոններ, որոնց մասին տեղեկությունները վերաբերում են շատ ավելի ուշ ժամանակաշրջանի, ապա կարելի է ասել, որ ուսումնասիրվող դարաշրջանի պատմության խնդիրների հետազոտումը կապված է խոշոր քարդությունների հետ: Թերևս, գրավոր աղբյուրների տղություն է եղել այն հիմնական պատճառը, որ մասնագիտական զրակականության մեջ մինչև վերջին ժամանակները, հաճախ նաև այսօր, XII-X դդ. ստացել են «խավար դարաշրջան» անվանումը:

Այս տերմինի տակ սովորաբար ենթադրվում է, բացի գրավոր աղբյուրների սակավությունից, նաև կայուն հասարակական-քաղաքական և մշակութային կառույցների բացակայություն: Մասնագիտական զրակականության մեջ երբեմն Փոքր Ասիայի «խավար դարաշրջանը» ներկայացվում է որպես համատարած տևական փլուզման փուլ: Այսպես, ըստ Ռ.Գ.Բարնետի և Է.Ա.կուրգալի<sup>1</sup>, XII դ. սկզբներին Փոքր Ասիա ներխուժած քարքարոս ցեղերի

հարվածների տակ կործանված խեթական տերության փլատակների վրա շուրջ 3-4 դար հաստատվում է քոչվոր կենսազործունեությամբ բնորոշվող իրավիճակ: Այս տեսակետը, որ հիմնականում հենվում է խաթրուսասի և կենտրոնական Փոքր Ասիայի հնավայրերի երկաթեդարյան փուլի ուսումնասիրության վրա, այսօր կարելի է ընդունել միայն մեկ կարևոր վերապահումով:

Կենտրոնական Փոքր Ասիան իրոք XII դ. ապարնակեցվել է, մի հանգամանք, որի իրական պատճառները դեռևս պարզ չեն, սակայն նույնը չի կարելի ասել թերակղզու մյուս շրջանների մասին: Այսօր մասնագետների տրամադրության տակ կան բավարար քանակությամբ գրավոր և հնագիտական նյութեր, որոնք միանշանակ վկայում են Փոքր Ասիայի տարբեր շրջանների վրա ճգնաժամի ոչ միանշանակ ազդեցության օգտին:

Այսպես, թերակղզու արևմուտքում Միլեթը և շատ ծովափնյա բնակավայրեր շարունակում են զոյատեսել վաղ երկաթեդարում (այսպես կոչված «ենթամիկենյան-պրոտոերկրաչափական» փուլ)<sup>2</sup>: Ավերածությունները բացակայում են Չալիսի մեծ ոլորանի և Կիլիկյան Տավրոսի միջև ընկած շրջանում, ինչպես նաև Փոքր Ասիայի արևելքում<sup>3</sup>: Սրանք այն շրջաններն են, որտեղ խաթրիի տրոհումից հետո վկայված են Թարխունտաստա - «խարտապուսի պետությունը» և Մելիդը (տես հաջորդ բաժնում): Ինչ վերաբերում է թերակղզու հյուսիսային Պոնտական շրջաններին, ապա այստեղ իրավիճակը պարզ չէ այն պատճառով, որ առայժմ հայտնաբերված չեն ուսումնասիրվող դարաշրջանի հնավայրեր: Ինչպես արդեն նշվեց, Տրոադայում, Սանգարիոսի հովտում ու հարակից շրջաններում պիտի հաստատվեին հյուսիսբալկանյան ժողովուրդներ: Դաշտային Կիլիկիայում վկայված է ուշհելլադյան III C - խեցեղենի կրողների, այսինքն, միկենյան բնակչության ներկայություն<sup>4</sup>:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով վաղ երկաթեդարյան փուլի Փոքր Ասիայի երևցադաքական իրավիճակը, որը, թվում է, դժվար է մեկնաբանել համատարած փլուզման և քոչվորության տեսանկյունից: Դրա համար լուրջ հիմնավորում չկա: Ստորև կքննարկվեն խեթական տերության տրոհումից հետո նրա տարածքի մի մասում գոյատևած քաղաքական միավորներից առնչվող խնդիրները:

### **ԵՏԽԵԹԱԿԱՆ ԼՈՒՎԻՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎՎՈՐՈՒՄԸ (XII-XI դդ.)**

Այսպիսով, նախորդ գլխում հիմնական գծերով ներկայացվեցին խեթական տերության տրոհման եղանակը և ճգնաժամի հետևանքները Փոքր Ասիայում: Աշխատության այս բաժնում կքննարկվի խաթրիի որպես համափոքրասիական խոշորագույն տերության, անկումից հետո թերակղզու մի մասում և հարակից շրջաններում նրա քաղաքական և մշակութային ավանդույթների շարունակականության խնդիրը: Դետազա հիմնավորում կստանա

այն տեսակետը, ըստ որի խեթական տերության անկումը կարելի է որակել ոչ որպես փոքրասիական պետականության և քաղաքակրթության ընդհատում, այլ դրա զարգացման մի նոր փուլ, իրեն բնորոշ հատկանիշների մի ողջ սպեկտրով, որը իր նախորդի ուղղակի ժառանգորդն էր:

Մայնագիտական գրականության մեջ հաքթի անկումից հետո նրա տարածքի մի մասում ձևավորված քաղաքական միավորները պայմանակա-նորեն կոչվում են «եռլիթեթական», «նոր խեթական» կամ «լուվիական»: Կիրառվող տերմինների բազմազանությունը պայմանավորված է խեթական տերության անկման եղանակի նկատմամբ մասնագետների ունեցած պատկերացումներով:

Այսպես, դրանցից առաջինը ոչինչ չպարտադրող տերմին է, որով միմյանցից տարանջատվում են խեթական տերության և նրա տրոհումից հետո ընկած ժամանակաշրջանները: «Նոր խեթական» անվանումը համեմայդեապ ակնարկում է 1200 թ. հետո հայտնի քաղաքական միավորների ակնհայտ կապը Տերության հետ: Իսկ վերջին տերմինի կիրառությունը հենվում է այս պետություններից մեզ հասած գրավոր աղբյուրների լեզվի լուվիերեն լինելու փաստի վրա: Սրանցից յուրաքանչյուրն էլ գոյության իրավունք ունի և չի կարող սխալ կամ հնացած համարվել: Սակայն, քանի որ այս պետությունները XII-XI դդ., ինչպես ցույց կտրվի ստորև, դեռևս խեթական տերության շրջանում ձևավորված քաղաքական միավորներ են եղել, կառավարվելով հաքթուսասի դինաստիայի տարբեր ճյուղավորումների կողմից, ապա, թերևս, «եռլիթեթական» տերմինը առայժմ ավելի արդարացված կլինի: Ինչ վերաբերում է մյուս երկուսին, ապա դրանք այժմ ոմանց կողմից կիրառվում են ավելի ուշ ժամանակաշրջանի (X-VIII դդ.) համար:

Խեթական տերության տրոհումից հետո նրա տարածքի մի շարք շրջաններում գոյատևած պետությունների առկայությունը դեռ XII դ. հավաստվում է ինչպես Թիզլաթալախար I-ի տեքստերով, այնպես էլ դրանց տարածքից հայտնի մի շարք հիերոգլիֆային լուվիական արձանագրություններով: Ասորեստանյան աղբյուրներում XII դ. վերջերին հիշատակվում են խեթական դարաշրջանից լավ հայտնի երկու քաղաքներ իրենց արքաներով Կարգամիսը (արքան՝ Ինի-Թեշուբ) և Մելիղը (արքան՝ Ալլումարի)<sup>6</sup>: Մինչև վերջին տարիները ենթադրվում էր, որ սրանք հաքթի անկումից հետո գոյատևած փոքր անկլավներ են եղել, որոնք խուսափել են մետրոպոլիայի ճակատագրից<sup>6</sup>: Կարգամիսից, հարավային և հարավ-արևելյան Փոքր Ասիայից հայտնի որոշ արխայիկ հիերոգլիֆային արձանագրությունների ու նույն տարածքներից պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական մշակույթի հուշարձանների թվագրման հետ կապված բարդությունները թույլ չէին տալիս ենթադրելու այստեղ դեռ XII դ. համեմատաբար խոշոր քաղաքական միավորների առկայություն<sup>7</sup>: Սակայն 1980-ական թվականներին հայտնաբերված մի շարք նոր նյութերի և համապատասխան ուսումնասիրությունների շնորհիվ այսօր պատկերը զգալիորեն փոխվել է: Այդ մասին ավելի հանգամանորեն ստորև:

Այն բանից հետո, երբ 1322 թ. (կամ 1318 թ.)<sup>8</sup> Սուլայիլուլիումաս Ի-ը գրավեց Գյուսիսային Սիրիան և այստեղ ստեղծեց Խաթթիից կախյալ Կարգամիս քույր-պետությունը, իր որդիներից մեկին՝ Պիյասսիլիին հռչակելով նրա ժառանգական արքա, Կարգամիսը վերածվում է խեթերի գլխավոր հենակետի այս ռազմավարական և տնտեսական կարևորագույն տարածաշրջանում: Պիյասսիլին և խեթական աղբյուրներով վկայված Կարգամիսի հաջորդ երեք արքաները՝ Սախուրունուվան, Ինի-Թեշուբը և Տալմի-Թեշուբը Խաթթիի ողջ հետագա պատմության ընթացքում<sup>9</sup> հավատարիմ էին Խաթթուսասի արքաներին: Կարգամիսի արքաների ձեռքում լայն ֆունկցիաներ էին կենտրոնացած, մասնավորապես, վերահսկողությունը Խաթթիից կախյալ Ուզարիտի և Ամուրրուի նկատմամբ, անմիջական ռազմական աջակցությունը Միտաննիին՝ Ասորեստանի հնարավոր ուտնձգությունների դեպքում և այլն: Ենթադրվում է, որ հենց այս ժամանակաշրջանում է սկսվել խեթա-լուվիական տարրի որոշակի ներթափանցումը Սիրիա<sup>10</sup>:

Ինչպիսին էր իրավիճակը Գյուսիսային Սիրիայում XII դ. սկզբների քաղաքական ցնցումների ժամանակ: Արդյոք Կարգամիսի թագավորությունը նույնպես ոչնչացել էր «ծովի ժողովուրդների» հարվածների տակ, ինչպես հաղորդում է Ռամզես III-ի տեքստը:

Կարգամիսի (ժամանակակից Ջերաբլուս, թուրք-սիրիական սահմանի վրա՝ Եփրատի ափին) շուրջ մեկդարյա պեղումները որևէ հիմք չեն տալիս ենթադրելու XII դ. ընթացքում եղած ավերածություններ<sup>11</sup>, ի տարբերություն ավելի արևմուտք ընկած սիրիական ծովափնյա բնակավայրերի: Ամենայն հավանականությամբ, «ծովի ժողովուրդների» ալիքը չի հասել Սիրիայի խորքերը (տես Գլուխ 2.2):

Ինչպես հայտնի է, Կարգամիսի խեթական դինաստիայի՝ Սուլայիլուլիումաս II-ի ժամանակակիցը Տալմի-Թեշուբն էր, որից հետո, միայն XII դ. վերջերին Թիզլաթպալասար I-ի տեքստերում հիշատակվում է «Խաթթիի քաղաք Կարգամիսի արքա Ինի-Թեշուբը»<sup>12</sup>: Այսինքն, երկու արքաների միջև ընկած էր շուրջ մեկդարյա ժամանակահատված: Կարգամիսի արքայի խուրրիական անունը թույլ էր տվել ենթադրելու ինչ-որ քաղաքական ավանդույթների շարունակականություն խեթական դարաշրջանից<sup>13</sup>: Որ XII դ. սկզբներից մինչև դարավերջ Կարգամիսի թագավորության կենսագործունեությունը կարող էր և չընդհատվել, հնարավոր էր ենթադրել նաև այլ փաստարկների հիման վրա, սակայն դրանք երկրորդական բնույթ ունեին և կարող էին այլընտրանքի տեղիք տալ:

Վճռական փաստարկը Եփրատի արևելյան ափին գտնվող Լիդար Գյուլքից (Սամսատ քաղաքից ոչ հեռու) հայտնաբերված և նախկինում որպես Կարգամիսի վերջին արքա ենթադրվող Տալմի-Թեշուբի որդու կնիքի երկու դաջվածքներն են<sup>14</sup>: Այս երկվեզվյան (հիերոգլիֆային և սեպագիր) կնիքի վրա պաշտպանված տեքստը հայտնում է հետևյալը<sup>15</sup>.

«Արքա Կուցի-Թեշուք, Կարգամիս երկրի արքա, արքա Տալմի-Թեշուքի՝ Կարգամիս երկրի արքայի՝ աստվածներից ճանաչված որդի»:

Այսպիսով, Տալմի-Թեշուքին Կարգամիսի գահին հաջորդել է որդին՝ Կուցի-Թեշուքը, որի հետնորդները, ինչպես պարզվեց 1987 թ., կառավարել են նաև Փոքր Ասիայի արևելքում Մելիդում: Մելիդի արքայական դինաստիայի կապը Կուցի-Թեշուքի հետ պարզվեց Արալանքեփեից (իին Մալաթիա) վաղուց հայտնի երկու արձանագրություններից, որտեղ մելիդյան արքաներ Ռուստիյասը և Արնուվանտիսը հիշատակում են իրենց պապին՝ Կուցի-Թեշուքին<sup>16</sup>:

Այս հայտնագործության պատմագիտական արժեքը դժվար է գերազանահատել, քանի որ այն միանշանակ վկայում է Կարգամիսում խեթական ժամանակներից եկող թագավորական իշխանության շարունակականության մասին: Որ այս դարաշրջանում Կարգամիսը ամեննին փոքր քաղաքական միավոր՝ չի եղել, փաստվում է Մելիդում կարգամիսյան դինաստիայի մի ճյուղի տիրապետությունը հաստատող մելիդյան արձանագրություններով (տես ստորև):

Այժմ ներկայացնենք Կարգամիսից հայտնի այն հիերոգլիֆային արձանագրությունները, որտեղ որոշ տեղեկություններ կան ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերաբերյալ<sup>17</sup>:

Կարգամիսյան արձանագրությունները պահպանել են շուրջ մեկ տասնյակ արքաների անուններ, ևս երկուսը՝ Ինի-Թեշուքը և Սանգարան հայտնի են ասորեստանյան տեքստերից<sup>18</sup>: Սրանցից XII-XI դդ. քվազրվում են, քացի Ինի-Թեշուքից, ևս երկուսը՝ X-թա-զի-ն և նրա որդի Ուրա-Թարխունտասը: Ըստ Դ. Գոլկինսի, արխայիկ արձանագրություններից մեկում (A 16c) կարելի է ընթերցել «Մեծ արքա Թուղխալիյաս», որին, նկատի ունենալով այս տիտղոսի առկայությունը, նույնպես կարելի է տեղադրել XII-XI դդ.<sup>19</sup>:

Այսպիսով, խաթրիի տրոհումից հետո անցած երկու դարերի ընթացքում Կարգամիսում վկայված են հինգ արքաներ, որոնք բոլորն էլ կրում են խաթրուսասի արքաների «մեծ արքա» տիտղոսը.

1) Կուցի-Թեշուք

2) Ինի-Թեշուք

3) Թուղխալիյաս

4) X-թա-զի

5) Ուրա-Թարխունտաս

Նշված արքաներից վերջին երկուսը, անկասկած, կառավարել են մուսավորապես XI դ. երկրորդ կեսերից-X դ. սկզբներին, և Ուրա-Թարխունտասից հետո, ամենայն հավանականությամբ, Կարգամիսում տեղի է ունեցել իշխող դինաստիայի փոփոխություն<sup>20</sup>: Դաջորդ արքաների տիտղոսաշարերում «մեծ արքան» արդեն բացակայում է, փոխարինվելով «երկրի տեր»<sup>21</sup> և տարվանիս<sup>22</sup> տիտղոսներով: Նշանակում է, Թուղխալիյասը պիտի կառավարեր կամ Կուցի-Թեշուքի և Ինի-Թեշուքի միջև ընկած շրջանում կամ վերջինիս և X-թա-զի-ի միջև: Եթե առաջնորդվենք մասնագիտա-



կան զրականության մեջ նման պարագաներում կիրառվող այն սկզբունքով, ըստ որի յուրաքանչյուր արքայի համար պայմանականորեն սահմանվում է 25-30 տարի, ապա նշված հինգ արքաները կարող էին կառավարել շուրջ 125-150 տարի, սկսած մոտավորապես 1200 թ.: Քանի որ Կարգամիսի հիշյալ «մեծ արքաների» կառավարման վերաբերյալ, ըստ էության, զրավոր աղբյուրները որևէ կոնկրետ տեղեկություն չեն պահպանել, փորձենք, հենվելով մի շարք անուղղակի տվյալների վրա, բնութագրել ուսումնասիրվող ժամանակաշրջանի Կարգամիսի թագավորության տարածքը և տեղը ետխեթական փուլում:

#### **«ՄԵԾ ԱՐՔԱ» ՏԻՏԴՈՍԸ**

Այս տիտղոսը, որ կրում էին խեթական արքաները ընդհուպ մինչև Տերության տրոհումը, ետխեթական դարաշրջանում հիշատակվում է միայն մի քանի արքաների անունների առնչությամբ: Այսպես, «մեծ արքաներ» են որակված Խաթթիի քաղաքական ժառանգորդ պետությունների հետևյալ արքաները.

#### **ԿԱՐԳԱՄԻՍ**

Կուցի-Թեշուք (Lidar Höyük, İspekçür, Gürün)

Թուղխալիյաս (A 16c)

X-pa-ziti (A 4b)

Ուրա-Թարխունտաս (A 4b)

#### **ԹԱՐԽՈՒՆՏԱՍԱՍԱ - «ԽԱՐՏԱՊՈՒՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»<sup>23</sup>**

Մուրսիլիս (Kızıldağ III-IV; Burunkaya)

Խարտապուս (Kızıldağ I-IV; Karadağ I-II; Burunkaya)

Տուվատիս (Topada)

Վասուսարմաս (Topada)

Այս ցուցակի մեջ պիտի մտցնել նաև Յարրի-Թարխունտասին (Karahöyük), որ սովորաբար դիտվել է որպես Մելիդի արքա<sup>24</sup>, սակայն այժմ որոշ կասկածներ կան այս խնդրում (տես «Մելիդ» բաժինը):

Այսպիսով, ինը արքաներ կրում են «մեծ արքա» տիտղոսը: Դրանցից, անկասկած, երկուսը VIII դ. պիտի քվազրվեն<sup>25</sup>, իսկ մնացածները XII-XI դդ.: VIII դ. քաբայյան երկու արքաների՝ Տուվատիսի և Վասուսարմասի այդօրինակ տիտղոսները, ինչպես արդեն նկատվել է, ավելի շուտ ինչ-ինչ մեծապետական նկրտումների արդյունք են, և մնում են որպես մեկուսացած երևույթ տվյալ ժամանակաշրջանի համար<sup>26</sup>: Եվ եթե նկատի ունենանք, որ XII-XI դդ. քվազրվող ոչ մի արժանագրությունում արքաները այլ տիտղոսներ չեն կրում քացի «մեծ արքայից» (Կարգամիս և Թարխունտասսա), ապա պիտի ենթադրել նվազագույնը խեթական կայսերական ավանդույթների շարունա-

կականություն, իսկ առավելագույնը XII դարի սկզբներին տեղի ունեցած քաղաքական վայրիվերումներից հետո նշված երկու պետությունների իրավական և փաստացի գերիշխանություն հարավային, հարավ-արևելյան Փոքր Ասիայի և Յյուսիսային Սիրիայի նկատմամբ:

#### ԿԱՐԳԱՄԻՍԸ ԳՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՍԻՐԻԱՅԻ ԳԵԳԵՍՈՆ

Վերը նշվեց այն մասին, որ դեռ XIV-XIII դդ. Կարգամիսը հատուկ կարգավիճակ ուներ խեթերի սիրիական տիրույթների համակարգում, որի արքաների միջոցով էին իրականացվում հարաբերությունները այս տարածաշրջանի քաղաքական միավորների հետ: Ետխեթական շրջանի մի շարք հիերոգլիֆային արձանագրությունների նյութը թույլ է տալիս ենթադրելու, որ Կարգամիսը խաթթիի տրոհումից հետո դեռ բավական երկար ժամանակ պահպանում էր իր նախկին ֆունկցիաները, իհարկե, այժմ այդքան առանց խաթթուսասի գերակայության: Որոնք են նման ենթադրության կովանները:

- 1) Կարգամիսից հյուսիս, ժամանակակից Մարաշի շրջանում IX-VIII դդ. ասորեստանյան աղբյուրները և այստեղից հայտնի հիերոգլիֆային արձանագրությունները (X-VIII դդ.) հիշատակում են Գուրգում պետությունը<sup>27</sup>: Մարաշից հայտնի ամենավաղ հիերոգլիֆային արձանագրության (Maras VIII) հեղինակ արքա Պալալանը հիշատակում է իր հորը՝ Աստու-[...]՝մանցասին: Մարաշի այս արձանագրությունը թվագրվում է մոտավորապես X դ. կեսերով: Ուշադրության է արժանի հետևյալ փաստը. X դ. առաջին կեսին Կարգամիսի արքան էր Աստուվատամանցասը: Թվում է, որ գուրգումյան արձանագրության անձնանվան միջնամասում վանկային նշանների բացակայությունը փոքր խոչնդոտ է այս երկու անունների նույնացման հարցում: Իսկ ժամանակագրորեն Կարգամիսի և Գուրգումի նույնանուն արքաները կարող էին ներկայացնել միևնույն անձը:
- 2) Վերը նշված Աստուվատամանցասի որդին՝ արքա Սուխիս II-ը իր արձանագրության մեջ<sup>28</sup> հիշատակում է արտաքին հակառակորդի դեմ վարած մի պատերազմ. նրա թշնամին ոմն խատանիմասն է եղել: Պատերազմի պատճառը Պարկա քաղաքի Ամարուպի աստծո արձանի գերեվարումն էր խատանիմասի կողմից: Այն ավարտվում է Սուխիսի հաղթանակով:

Այս տեքստում հիշատակվող Պարկա քաղաքը համադրվել է Սիրիայի Իդլիք քաղաքից մոտ 25 կմ հարավ-արևմուտք գտնվող ժամանակակից Բարկումի հետ<sup>29</sup>: Եթե այս համադրումը հիմնավոր է, ապա X դ. կեսերին Սիրիայի տվյալ շրջանը պիտի գտնվեր Կարգամիսի ենթակայության տակ: Ավելի ուշ, IX-VIII դդ. Իդլիքի շրջանը, ամենայն հավանականությամբ, լուվիական Ունքի (Պատտին) կամ արամեական Արուպա պետության մասն է կազմել:

- 3) Կուցի-Թեուրի կնիքի դաջվածքների անկայությունը Լիդար Յյուրում նույնպես կարող է որոշակիորեն պարզել Կարգամիսի տա-

րածքի խնդիրը այս վաղ շրջանում: Բանն այն է, որ Լիդար Յոյուլքը գտնվում է ժամանակակից Սամսատ (հին հայկական Արշամաշատ, անտիկ Սամոսատա) քաղաքից ոչ հեռու, որը ըստ IX-VIII դդ. ասորեստանյան աղբյուրների<sup>30</sup> և մի շարք հիերոգլիֆային լուսկական արձանագրությունների<sup>31</sup>, հանդիսացել է ետիսեթական փուլի Կումմուխ պետության (անտիկ Կոմմագենե) տարածքը<sup>32</sup>:

- 4) Այս բաժնի սկզբում նշվեց մելիդյան արքաներից երկուսի (Ռունտիյաս և Արնուվանտաս II) արձանագրություններում որպես իրենց դինաստիայի հիմնադիր հիշատակվող «Կարգամիսի հերոս, մեծ արքա» Կուցի-Թեշուբի մասին: Սա կարող է նշանակել, որ, առնվազն XII դ. առաջին կեսին Մելիդը գտնվել է եթե ոչ Կարգամիսի անմիջական գերիշխանության տակ, ապա զոմե դրանց հարաբերությունները կառուցված են եղել վերջինիս գերակայության վրա:

Այսպիսով, վերը բերված նկատառումները թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների:

Խեթական տերության տրոհումից հետո Յուսիսային Սիրիան հիմնականում խուսափել է խեթերի բնօրրանի ճակատագրից: Այստեղ, առանց ընդհատման, շարունակվել է Մուսպիլուլիումաս I-ից սերող Պիյասսիլիի դինաստիայի իշխանությունը: Կարգամիսի արքաների տիրապետությունը տարածվել է Յուսիսային Սիրիայի մի զգալի մասի վրա, հիմնականում Եփրատից արևմուտք ընկած հատվածում, ընդգրկելով ավելի ուշ շրջանից (X-VIII դդ.) ասորեստանյան և տեղական հիերոգլիֆային լուսկական արձանագրություններով վկայված մի շարք լուսկական և արամեական պետությունների տարածքը (Գուրգում, Կումմուխ, Թիլ-Բարսիլ, Արպադ, հնարավոր է, նաև՝ Ունքի-Պատտին և Սամալ): Մելիդի և Գուրգումի արքայական դինաստիաները սերում էին Կարգամիսից: Այսինքն, Խաթթիի տրոհումից հետո խեթերի անդրտափոսյան տիրույթները կամ դրանց զգալի մասը շարունակել է գոյատևել, մնալով Կարգամիսի քաղաքության շրջանակներում:

#### ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՔՐ ԱՄԻԱ ՄԵԼԻԴ

Խաթթիի տրոհման շրջանում արևելյան Փոքր Ասիայի այն հատվածում, որը հանդիսացել է հետագայի Մելիդ պետության տարածքը (Թոխմասուի հովիտ և հարակից շրջաններ), հնագիտորեն ավերածություններ վկայված չեն (տես այս գլխի ներածականը): Յուսիսքալկանյան ժողովուրդների միգրացիաները չեն ընդգրկել այս շրջանը, նույնը նաև ասորեստանյան աղբյուրների հիշատակած մուշկերի, ուրումեացիների և կասկերի տեղաշարժերը<sup>33</sup>:

Ետխեթական շրջանի Մելիդի ամենավաղ, հստակ թվագրված հիշատակությունը գալիս է Թիզլաբպալասար I-ից: Դեպի «Վերին ծով»՝ Նաիրյան արշավանքից վերադառնալիս, ասորեստանյան զորքը ստանում է «Նանի-գալբատ երկրի Մելիդ քաղաքի»<sup>34</sup> հարկը<sup>35</sup>, սա 1112 թ.: Բիչ ավելի ուշ Թիզ-

լարպալասարը երկրորդ անգամ է արչավում դեպի Մելիդ (տեքստում Միլիդիա), ստանալով նրա արքա Ալլումարիի հարկը<sup>36</sup>: Այս պահից մինչև IX դ. երկրորդ կեսերը Մելիդն այլևս չի հիշատակվում ասորեստանյան աղբյուրներում (մինչև Աշշուրնափրպալ II-ը):

Ներկա ուսումնասիրության նպատակների տեսանկյունից անհամեմատ ավելի ընդարձակ նյութ է պահպանված Մելիդից առ այսօր հայտնի շուրջ երկու տասնյակ հիերոգլիֆային արձանագրություններում, որոնց մի մասը, անկասկած, քվազովում է XII-XI դդ.<sup>37</sup>: Դրանք զգալի քանակությամբ տեղեկություններ են հաղորդում ինչպես մելիդյան արքաների, այնպես էլ պետության տարածքի և ռազմա-քաղաքական պատմության վերաբերյալ:

Մելիդի տարածքից հայտնաբերված արձանագրությունների ճնշող մասը անվերապահորեն պատկանում է նրա արքաներին: Միայն երկուսը՝ Karahöyük-ը<sup>38</sup> և Palanga-ն<sup>39</sup> առայժմ դժվար են մտնում ընդհանուր համատեքստ: Սրանցից երկրորդը ակնհայտորեն արքայական տեքստ չէ, իսկ առաջինի մասին տես ստորև:

Տարբեր արձանագրություններում պահպանված ծագումնաբանական ցուցակների համադրության միջոցով ներկայանում են հետևյալ խմբերը, որոնց առնչակցությունը առայժմ հնարավոր չէ պարզել: Սիա դրանք.

I : Կուցի-Ձեշուբ (Lidar Höyük, Ispekçür, Gürün)

PUGNUS - միլի<sup>40</sup> (Ispekçür, Gürün)

Ունուտիյաս (Gürün; Kötükale)

Աոնուվանտիս I (Ispekçür; Darende)

PUGNUS-միլի II (Darende)

Աոնուվանտաս II<sup>41</sup> (Darende)

II : Տարաս<sup>42</sup> (Izgin; Malatya I)

Վալառուստիյաս (Malatya I)

Խալպասուլուպիս (Malatya I, IV)

III : Սուվաիբնիս (Malatya III)

Սաիբատիս<sup>43</sup> (Malatya III)

IV : Սաիտուս (Şirzi)

X-տի-ռուստիյաս (Şirzi)

Բերված չորս ցուցակներից վերջինը, անկասկած, պիտի քվազել շատ ուշ ժամանակաշրջանով (IX դ. վերջ-VIII դ. սկիզբ) ինչպես արձանագրության հիերոգլիֆային նշանների<sup>44</sup>, այնպես էլ Սաիտուսի անվան՝ ուրարտական արքա Սարգուրի II-ի տեքստում<sup>45</sup> որպես Մելիդի արքա Խիլարուադայի հայր հիշատակվող Շաիտի հետ համադրման<sup>46</sup> պատճառով:

Ինչ վերաբերում է մնացած երեքին, ապա դրանցում ներկայացված արքաների կառավարման հաջորդականության խնդրում վճռական նշանակություն ունի երկու արձանագրություններում «Կարգամիսի հերոս, մեծ արքա»

Կուցի-Թեշուրի անվան հիշատակությունը (տես վերը): Դրա շնորհիվ առաջին ցուցակի վեց արքաները կարող են դրվել մյուս երկուսից առաջ և թվագրվել XII-XI դարերով: Սակայն խնդրի նման լուծումը կապված է որոշ բարդությունների հետ, որոնց քննարկումը տես ստորև:

Եթե ենթադրենք, որ առաջին ցուցակի երկրորդ արքան PUGNUS-միլի I-ը եղել է Մելիդի առաջին արքան<sup>47</sup>, ապա, բնականաբար, որպես Կուցի-Թեշուրի որդի, նա պիտի ապրեր առնվազն XII դարի առաջին կեսին կամ քիչ ավելի ուշ, կախված կառավարման տևողությունից: Երանից հետո հիշատակվում են նույն դինաստիայի երեք արքաներ, որոնք, ամենայն հավանականությամբ, փոխարինել են մեկը մյուսին առանց ընդմիջման: Եթե դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսենք 25-30 տարի ( նույնիսկ քիչ պակաս), ապա կհասնենք XI դարի սկզբները: Այնինչ, ինչպես տեսանք վերը, Թիզլաթապալասար I-ը XII դարի վերջերին հիշատակում է Մելիդի արքա Ալլումարիին:

Իրադրությունը ստիպում է ենթադրել երկու այլընտրական մտեցումներ խնդրին:

- 1) Ասորեստանյան տեքստի Ալլումարիի անունը ճիշտ չէ ընթերցված: Այսպիսի հնարավորությունը անհիմն չէ, քանի որ դեպի Մելիդ կազմակերպված արշավանքը նկարագրող տեքստը հավաքված է հինգ բեկորներից, և դրանցից միայն երկուսում են պահպանվել արքայի անունը պարունակող հատվածներ<sup>48</sup>.

Բեկոր N: al-lu-x-[...]

Բեկոր L: [...m]a? - ri

Այստեղից վերականգնվող al-lu[x /ma?] - ri - ն կարող էր ներկայացնել վերը բերված ցուցակի PUGNUS-միլի անունը, որը թույլ կտար Թիզլաթապալասարի Ալլումարիին նույնացնելու հիերոգլիֆային արձանագրությունների PUGNUS-միլի-ի հետ<sup>49</sup>:

- 2) Ալլումարիի անունը ճիշտ է ընթերցված, ուղղակի Մելիդի այս արքան ինչ-ինչ պատճառներով չի հիշատակվում առաջին խմբի արքայացանկերը պարունակող արձանագրություններում:

Երկրորդ տարբերակը քիչ է հավանական, և ներկայումս նախապատվությունը պիտի տալ առաջինին:

Առաջին խմբի արքաների կառավարումը XII դ. առաջին կեսից սկսելու մասին ենթադրության ճանապարհին ընկած հաջորդ բարդությունը Արալան-թեփե-Մալաթիայից հայտնի բարձրաքանդակների և արձանների վաղ թվագրման խնդիրն է: Սովորաբար, դրանք թվագրվում են ավելի ուշ ժամանակաշրջանով (X դ.)<sup>50</sup>: Ենթադրվում է, որ XII-XI դդ. թվագրելու դեպքում կծագի մելիդյան վաղ շրջանի արձանագրությունների խնդիրը: Համեմատած նույնպես XII դ. թվագրվող Karahöyük-ի (տես ստորև) հետ, Gürün-ը, Ispekçür-ը և Köstükkale-ն գրի անհամեմատ ավելի զարգացած փուլ են մատնանշում ինչպես նշանների արտաքին տեսքի հղկվածության, այնպես էլ ներքին բովանդակության առումով<sup>51</sup>:

Նշված բարդությունները հատուկ ուսումնասիրության կարիք ունեն, սակայն ներկայումս դրանք նպատակահարմար չէ հիմք ընդունել կասկածի տակ առնելու համար Մելիդի արքաներ Ռունտիյասի և Արնուվանտիս I-ի տեքստերում հիշատակվող «մեծ արքա» Կուցի-Թեշուբին որպես նրանց պապ դիտելու, մեր կարծիքով, ճիշտ տեսակետը<sup>52</sup>: Ըստ այդմ, հնարավոր ենք՝ համարում առաջին խմբի արքաներին դիտելու որպես Մելիդում XII-XI դդ. կառավարած Կարգամիսի իշխող դինաստիայի ճյուղավորումը: Դժվար է նաև կասկածի տակ առնելու այն, որ Կուցի-Թեշուբը անձամբ չի կառավարել Մելիդում, այսինքն, Մելիդը կարող էր XII դ. սկզբներին հանդիսանալ Կարգամիսի քաղաքական գերակայության ուլորտի մի կարևոր քաղաքական միավոր: Թե որքան կարող էր շարունակվել այս իրավիճակը, առայժմ դժվար է պարզել:

#### **«ՅԱՐՐԻ-ԹԱՐԽՈՒՆՏԱՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»**

Ետխերական դարաշրջանի հիերոգլիֆային արձանագրություններին նվիրված ուսումնասիրություններում սովորաբար հարավ-արևելյան Փոքր Ասիայի ժամանակակից Էլբիստան քաղաքից ոչ հեռու գտնվող Կարահյոյուք բնակավայրից հայտնաբերված և չափազանց արխայիկ առանձնահատկություններ պարունակող այս արձանագրությունը մեծ վերապահումներով է ընդգրկվել մելիդյան արձանագրությունների շարքը: Եվ քանի որ, ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում, Արսլանբեփեի բարձրաքանդակները քվարվում էին X դ. ոչ վաղ շրջանով, ապա Karahöyük-ի տեղադրումը XII դ. որևէ կասկած չէր հարուցում: Միակ խանգարիչ հանգամանքը սույն արձանագրությունում «մեծ արքա» *I(ya+ra/i)-TONITRUS*-ի<sup>53</sup> անվան կողքին Մելիդ քաղաքի հիշատակության բացակայությունն էր: Այժմ, երբ Մելիդի արքայատոհմի ներկայացուցիչները տեղադրվում են Կարգամիսի արքա Կուցի-Թեշուբից անմիջապես հետո, Կարահյոյուքի արձանագրության «մեծ արքան» հայտնվում է անորոշ վիճակում: Նկատի ունենալով արձանագրության խիստ արխայիկ բնույթը Մելիդի մյուս վաղ արձանագրությունների համեմատ, *I(ya+ra/i)-TONITRUS*-ի քվարումը XI դ. կեսերով ուղղակի անհնար է դառնում: Այս հարցին դեռ կանոդադառնանք, իսկ այժմ արձանագրության մեջ հաղորդվող տեղեկությունների մասին: Տեքստը<sup>54</sup> պարունակում է զգալի քվով չվերծանված նշաններ, որի պատճառով ներկայացնենք միայն որոշ հատվածներ:

#### ***Karahöyük, 1-3:***

«POCULUM. PES. 67 երկրի Թարխունտաս աստծո առջև LUNA. FRATER<sub>2</sub>-ը<sup>55</sup>, պիթոսի մարդկանց տերը, դրեց այս հուշայունը այն ժամանակ, երբ «մեծ արքա» *I(ya)ri-TONITRUS*-ը զնաց POCULUM. PES. 67 երկիր»:

Այստեղից կարելի է հանգել հետևյալ ենթադրության: «Մեծ արքայի»

երկիրը անվանապես չի նշված տեքստում, որը կազմված է նրա բարձրաստիճան պաշտոնյայի՝ LUNA. FRATER<sub>2</sub>-ի կողմից: Ավելին, նույնիսկ դժվար է ասել, արդյոք տեքստում հիշատակվող երկիրը հենց արձանագրության հայտնաբերման վայրն է եղել<sup>56</sup>:

Այս հատվածին հաջորդում են դժվար ընթերցվող նախադասություններ, որտեղ երրորդ դեմքով խոսվում է ինչ-որ շինարարական աշխատանքների մասին: Ամենայն հավանականությամբ, արձանագրության կազմողը պատմում է «մեծ արքայի» գործունեության մասին:

Հաջորդ հատվածը հիշատակում է երեք քաղաքներ, որոնք կարծես տրվել են «մեծ արքայի» կողմից LUNA. FRATER<sub>2</sub>-ին՝ կառավարման համար: Դրանք են՝ Lâ/i/u-ka+ra/i-ma, 26-282-րի և 284-maka: Առաջինը, անկասկած, խեթական աղբյուրների Թա/եգարաման է՝ (ժամանակակից Գյուրյուն), մյուսների հնչյունական տեսքը պարզված չէ:

Այժմ ամփոփենք արձանագրության «մեծ արքայի» խնդիրը:

Ինչպես էլ որ լուծվի ապագայում այստեղ հիշատակված արքայի կարգավիճակի հարցը, ակնհայտ է, որ արձանագրությունը պիտի քվազել XII դ.: Այնուհետև, ելնելով տեքստում հաղորդվող տեղեկություններից, արքա I(ya)ri-TONITRUS-ի երկրի մասը պիտի կազմեին ժամանակակից էլբիստան և Գյուրյուն քաղաքների շրջանները, ընդ որում դրանցից ոչ մեկը չէր կարող պետության կենտրոնական մասը լինել:

Այսպիսով, Karahöyük-ի պատկանելությունը Մելիդին, Կարգամիսին կամ մեկ այլ քաղաքության առայժմ բաց է մնում: Սակայն կասկածից վեր է, որ Խաթթիի տրոհումից հետո էլբիստան-Գյուրյուն հատվածը նույնպես կազմել է ետիսթական շրջանի լուվիական պետականության ծավալման մի հատվածը<sup>57</sup>:

## ՄԵԼԻԴԸ XII-X ԴԱՐԵՐՈՍ

Ետիսթական փուլի առաջին երկու դարերի ընթացքում, շնորհիվ արքայացանկերի վերոհիշյալ ճշգրտումների, կարելի է մասնակիորեն վերականգնել Մելիդի քաղաքական պատմության որոշ հարցեր:

Երեք արքաներից մեկ հասած արձանագրությունները հնարավորություն են ընձեռում որոշակիորեն պարզելու Մելիդի տարածքը և ռազմաքաղաքական պատմության մի շարք խնդիրներ:

Մելիդյան դինաստիայի երկրորդ ներկայացուցիչ Ռունտիյասի երկու արձանագրությունները (Gürün, Kötükale) վկայում են հօգուտ այն բանի, որ արդեն XII դ. կեսերին արևելափոքրասիական այս պետությունը զգալի քաղաքական ակտիվություն է ցուցաբերել, հատկապես Թոխմասուից արևմուտք ընկած շրջաններում: Ասվածը հաստատելու համար բերենք մի հատված Gürün-ից<sup>58</sup>.

B3+B4) «428-ta(i) քաղաքից [...] լեռը և դրեցի(») Խարխար լեռը (և) Մուցի լեռը ես arha lis(a)-,

B4) և ինձ համար X-linazi (կամ X-lizina) քաղաքը [.....]

B51) [.....] քաղաքում ես նստեցրի»:

Բերված հատվածից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1) Տեքստում հաղորդվում է ինչ-որ արշավանքի մասին:

2) Արշավանքը սկսվել է (՝) 428-տ(ի) քաղաքից:

3) Գրավվել են խարխար և Մուցի լեռները<sup>59</sup> կամ այստեղ ինչ-որ գործողություն է կատարվել:

Քանի որ գաղափարագրով գրված 428-տ(ի) և x-linazi քաղաքների հնչյունական գրությունը պարզ չէ, փորձենք հենվել երկու լեռնանունների վրա:

Մ.թ.ա. VIII դ. երկրորդ կեսով թվագրվող երեք հիերոգլիֆային արձանագրություններում (Hisarcik I-II, Tekirderbent I)<sup>60</sup>, որոնք հայտնաբերվել են ժամանակակից Երջիյաս հրաբխային լեռան լանջերին (անտիկ շրջանի Արգեոս), հիշատակվում է խարխար լեռը, որը մասնագետները համարում են Երջիյաս-Արգեոսի հին անվանումը<sup>61</sup>: Մուցի լեռան համար կարելի է առաջարկել նույն VIII դ. Կիլիկյան Դարաբասների շրջանից հայտնի հիերոգլիֆային մեկ այլ արձանագրության (Bolkarmaden)<sup>62</sup> մեջ հիշատակվող Մուտի լեռը, որը համադրվել է Սալմանասար III-ի կողմից հիշվող Muli լեռան հետ<sup>63</sup>: Այս Մուտի/Մուլի լեռը նույնացվում է Կիլիկյան Տավրոսի մի հատվածի՝ Բուկարդաղլարը կոչվող լեռնազանգվածի հետ:

Այսպիսով, կարող ենք առաջարկել Մուցի լեռան նույնացումը Մուտի/Մուլիի հետ<sup>64</sup>:

Հենվելով Ռուստիյասի արձանագրության մեջ հաղորդվող տեղեկությունների վրա, հնարավոր է հանգել մի կարևոր եզրակացության, այն է, արդեն այս ժամանակաշրջանում Մելիդը դրսևորել է արտաքին քաղաքական մեծ ակտիվություն, երե Ռուստիյասը ի վիճակի է եղել ռազմական արշավանք կազմակերպելու դեպի ժամանակակից Կասերիի շրջան և հարակից տարածքներ: Սա այն շրջանն է, որի անմիջական հարևանությամբ է ենթադրվում Թարխունտասսա - «խարտապուսի պետությունը»:

Ռուստիյասի մյուս արձանագրությունը հաղորդում է «մեծ ճանապարհի» շինարարության մասին:

Երե ընդունենք, որ Մելիդի տիրույթներն արևելքում սահմանափակվել են Եփրատով, ապա Ռուստիյասի արևմտյան արշավանքի տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ նրա օրոք այս պետությունն ունեցել է քավական խոշոր տարածք՝ շուրջ 300 կմ արևելքից արևմուտք:

Առնուվանտիս I-ի և PUGNUS-միլի II-ի արձանագրությունները կամ խիստ վնասված են կամ որևէ կարևոր տեղեկություն չեն պահպանել այս արքաների կառավարման վերաբերյալ: Իսկ Առնուվանտաս II-ի հակիրճ արձանագրությունը (Darende)<sup>65</sup> հայտնում է իր կողմից 57-րան քաղաքում կանգնեցված հուշասյան մասին:

Մելիդի արքա Տարասի զգալիորեն տուժած մեծ արձանագրությունը (Izgin)<sup>66</sup> պահպանել է մի շարք կարևոր տեղեկություններ.



- B3+A3+A4+B4) «Եվ ես [«գետային երկրները»] «գետային երկրներին»  
 (և) սահմանները սահմաններին դարձրեցի,  
 B5) և 428-տա քաղաքը ես կառուցեցի,  
 B5+C5+C6) [և Մելիդին] (այնտեղ) ես հիմնավորեցի,  
 C6+B6) [...] գերագույն(“) X-liyanis-ին քաղաքների վրա ես նստեցրի,  
 A6+A7+B7) և 343-120 քաղաքը իմ իշխանության համար ես hatatarati-  
 A16+B16) և ինը աստվածներ օգնում էին ինձ  
 D3+D4) Եվ սահմանները նա ընդարձակեց,  
 D4+D6) և [...] -երի քաղաքը/երկիրը նա սահման դարձրեց,  
 D6+D7) իսկ մյուս կողմից Սալի-[...] -երի քաղաքը/երկիրը նա սահման  
 դարձրեց:  
 D18+D19) Եվ այդ Ացամիսը [...]»:

Այստեղից կարելի է եզրակացնել հետևյալը.

- 1) Տարասի կողմից տարածքային նվաճումներ («գետային երկրներ» = գետահովիտներ):
- 2) 428-տա քաղաքի (վերա)կառուցումը և այն Մելիդի կազմի մեջ մտցնելը:
- 3) Տարասի կողմից նվաճված երկրում իր կառավարչի նշանակումը (ենթադրաբար, տեքստի վերջում հիշատակվող Ացամիսը):
- 4) Տարասի նշանակած կառավարիչը իր հերթին որոշ նվաճումներ է կատարել (նշվում են նրա երկրի սահմանները):

Տարասի արտաքին քաղաքական ազդեցության սահմանները կարելի էր պարզել միայն հենվելով 428-տա քաղաքի և Izgin-ի հայտնաբերման վայրի հիման վրա: Դրանք, իհարկե, լուրջ կովաններ չեն, քանի որ, ինչպես տեսանք Ռունտիյասի արշավանքներին նվիրված հատվածում, 428-տա(i) քաղաքը հնարավոր չէ տեղադրել: Տարասի արձանագրությունը գտնվել է Էլբիստանից արևմուտք՝ Կարահյոյուքից ոչ հեռու:

Ասվածը թույլ է տալիս ենթադրելու, որ XI դ. կեսերին ոչ միայն Թոխմասուի հովիտը, այլև դրանից հարավ-արևմուտք ընկած շրջանը գտնվել է Մելիդի քաղաքական ազդեցության ոլորտում:

Ամփոփելով Մելիդին նվիրված բաժինը, անհրաժեշտ է նշել հետևյալը:

Խաթթիի տրոհումից հետո Մելիդը հանդիսացել է խեթական պետականության ժառանգորդը հարավ-արևելյան Փոքր Ասիայում: Կարգամիսից ժազող տեղական դինաստիայի արքաները XII-XI դդ. ստեղծել են մի զգալի տարածք ունեցող պետություն: Դատելով Մելիդի ավելի ուշ շրջանի պատմությունից ըստ ասորեստանյան և ուրարտական աղբյուրների, այս քաղաքական միավորը զգալի դեր է խաղացել լուվիական քաղաքական-մշակութային համակարգում:

Ետխեթական դարաշրջանի Փոքր Ասիայի լուվիական պետականության աշխարհագրական ծավալման մասշտաբները մինչև 1980-ական թվականների կեսերը սովորաբար առաջարկվում էր սահմանափակել Հյուսիսային Աիրիայով (Կարգամիս) և արևելյան Փոքր Ասիայով (Մելիդ): Ինչ վերաբերում է թերակղզու հարավում IX-VII դդ. ասորեստանյան, ուրարտական և հիեթոզլիֆային լուվիական աղբյուրներով վկայված Թարալի մանր պետություններին և Կունին (երկրորդը՝ Դաշտային Կիլիկիայում), ապա նշված ժամանակաշրջանից ավելի վաղ թվագրվող սկզբնաղբյուրների բացակայությունը թույլ չէր տալիս եզրակացնելու այստեղ խաթթիի տրոհումից անմիջապես հետո պետականության ավանդույթների շարունակականություն: Այդպիսի ենթադրություն առաջարկվել էր<sup>67</sup>, սակայն պարզ չէր, թե քաղաքական ինչպիսի միավոր կարող էր հիմք ծառայել խաթթուսասի անկումից հետո Չալիսի մեծ ուղղանկյուն հարավ ընկած տարածքում XII դ. էթնիկական տեղաշարժերի շրջանում քաղաքական շարունակականության համար: Որոնք էին նշված դարաշրջանում Փոքր Ասիայում վաղ պետականության գոյության մասին ենթադրության հիմքերը:

Առաջինը Կոնյայի հարթավայրի երկու կետերից՝ Կարադաղից (Կոնյա քաղաքից շուրջ 40 կմ հարավ-արևելք), Կըզըլդաղից (Կարադաղից մոտ 15 կմ հյուսիս-արևմուտք), իսկ ավելի ուշ՝ Բուրունկայայից (Ակսարայ քաղաքից ոչ հեռու) հայտնաբերված թվով ուշ հիեթոզլիֆային արձանագրություններն էին<sup>68</sup>, կազմված «մեծ արքա» խարտապուսի կողմից: Արձանագրությունների ընդգծված արխայիկ հատկանիշները և խարտապուսի արքայական տիտղոսը ստիպում էին ենթադրել դրանց շատ վաղ թվագրություն<sup>69</sup>:

Երկրորդը IX-VIII դդ. գրավոր աղբյուրներում հիշատակվող Թարալի մեծաքանակ պետությունների ավալությունն էր, որը անուղղակիորեն վկայում էր այս տարածքում խեթա-լուվիական քաղաքական ավանդույթների գոյություն ավելի վաղ շրջանում<sup>70</sup>: Մանավանդ, որ VIII դ. երկրորդ կեսի թաբայան պետություններից մեկի՝ Բիթ-Բուրունտաշի երկու արքաներ նույնպես կրում էին «մեծ արքա» տիտղոսը:

1986 թ. Բողազքոյից հայտնաբերված «Բրոնզե տախտակը» (Գլուխ 1.2) հնարավորություն տվեց պարզելու հարավային Փոքր Ասիայում խաթթիի տրոհումից հետո զոյատևած քաղաքական միավորի ինքնությունը:

Աշխատության առաջին գլխում հանգամանորեն ներկայացվեց դեռ խաթթուսիլիս III-ի կողմից Տեթոսյան հարավում նախորդ արքա Ուրիսի-Թեշուբի ժառանգների համար Թարխունտաստայի պետության ստեղծման պատմությունը: Տույց տրվեց նաև, որ Թուրխալիյաս IV-ի օրոք Թարխունտաստայի արքա Կուրունտան ապստամբել էր և նույնիսկ ժամանակավորապես տիրել խաթթուսասին: Թուրխալիյասին հաջողվել էր ճնշել Կուրունտայի ապստամբությունը, սակայն Թարխունտաստայի պետությունը չէր վերացվել. այնտեղ արքա էր հռչակվել Կուրունտայի եղբայր Ումի-Թեշուբը: Չավանա-

քար, Խաթթիի վերջին արքա Սուպսիլուլիումաս II-ի օրոք Թարխունտասսան կրկին ապստամբել էր, քանի որ մի նորահայտ հիերոգլիֆային արձանագրության մեջ (Südburg) հիշատակվում է այս երկրի գրավման մասին (Գլուխ 1.2):

Ասվածը վկայում է այն մասին, որ դեռևս XIII դ. 60-ական թվականներից Կոնյայի հարթավայրում և հարակից շրջաններում գոյություն ունեւ խեթական արքայատոհմի մի ճյուղի (Մուվատալլիս II-ի բոռ Կուրունտան) կողմից կառավարվող և Կարգամիսին հավասար կարգավիճակ ունեցող քազավորություն<sup>71</sup>: Այս ետնախորքի վրա «մեծ արքա» Խարտապուսի պետության խնդիրը զգալիորեն պարզվում է<sup>72</sup>: Չնայած դրան, մասնագետների մոտ դեռ լուրջ տարակարծություններ կան Խարտապուսի կառավարման ժամանակի շուրջ:

Խարտապուսի առնչակցությունը Թարխունտասայի դինաստիային չի վիճարկվում, սակայն խնդիրը հետևյալն է. արդյոք Մուրսիլիսը և Խարտապուսը իշխել են այստեղ խեթական աղբյուրներով վկայված Ուլմի-Թեշուբից հետո, թե ավելի ուշ շրջանում: Այս առթիվ առաջարկվել են մի քանի տարբերակներ:

Դեռ 1974 թ. Ջ.Մելլաարտը առաջարկել էր Խարտապուսի հայր «մեծ արքա» Մուրսիլիսին նույնացնել խեթական արքա Մուրսիլիս III-ի (Ուրսի-Թեշուբ) հետ<sup>73</sup>: Ավելի վաղ Յ.Գ.Գյուտերբրոկը ենթադրում էր, որ Խարտապուսը նույն ինքը Կուրունտան է՝ Թարխունտասայի արքան<sup>74</sup>: Յ.Բյորկեր-Կլեյնը Մուրսիլիս-Խարտապուս գույգին տեղադրում է Խաթթիի անկումից հետո ինչ-որ անորոշ ժամանակահատվածում<sup>75</sup>:

Ինչ կարելի է ասել վերը նշված կարծիքների մասին, և արդյոք ներկայումս հնարավոր է պարզել Խարտապուսի ինքնության խնդիրը:

Խարտապուսի հոր նույնացումը Մուրսիլիս III-ի հետ պիտի նշանակեր Խարտապուսի նույնացում Կուրունտայի հետ, մի բան, որ նպատակահարմար չէ. Խարտապուսի անունը հստակ գրված է ամբողջությամբ՝ վանկային նշաններով (Há+ra/i-ta-pu-sa), և ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ այդպես կարող էր հիերոգլիֆային գրով փոխանցվել Կուրունտայի անունը: Իսկ եթե Խարտապուսը այնուամենայնիվ Մուրսիլիս III-ի որդին է եղել, ապա չափազանց դժվար է ենթադրել, որ նա կարող էր կառավարել իր ավագ եղբայրներից՝ Կուրունտայից և Ուլմի-Թեշուբից հետո<sup>76</sup>: Այդ իսկ պատճառով ավելի հավանական է Խարտապուսին և Մուրսիլիսին թվագրել Ուլմի-Թեշուբին հաջորդող ինչ-որ ժամանակաշրջանով, մոտավորապես XIII դ. վերջերով-XII դ. առաջին կեսով: Այս խնդիրը կարոտ է նոր փաստական նյութի<sup>77</sup>:

#### *ԽԱՐՏԱՊՈՒՍԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Ինչպես նշվեց վերը, «մեծ արքա» Խարտապուսի անունը պահպանած թվով ութ արձանագրություններ են հայտնի: Դրանք խիստ համառոտ բովանդակություն ունեցող տեքստեր են, և դրանց հիման վրա դժվար է որևէ կերպ ներկայացնել Խարտապուսի պետության պատմության թեկուզ մասնակի վերականգնումը:

Այսպես, հաղորդվում է<sup>78</sup> ինչ-որ քաղաքի կառուցման (Kızıldağ III), «բո-

լոր երկրների նվաճման» (Kızıladağ IV, Karadağ I), ինչ-որ «լեռնային երկրի նվաճման» (Burunkaya) մասին:

Այս արձանագրություններում չեն պահպանվել կոնկրետ տեղեկություններ խարտապուսի նվաճումների մասին. բացակայում է նույնիսկ պետության և նրա մայրաքաղաքի անվանումը: Միայն մի տեքստում (Kızıladağ IV) հիշատակվում է Ma-sâ-ka?-na երկրի նվաճման մասին: Դեռ ժամանակին Պ.Մերիջին ենթադրում էր, որ այս տեղանունը վերարտադրում է մուշկերի (արևմտյան փոյուզացիներ) անվանումը<sup>79</sup>: Եթե նույնիսկ այս տեղանվան երրորդ նշանը (ka) ճիշտ է ընթերցված, ապա դրա նույնացումը «մուշկերի երկրի» հետ մեծ կասկածներ է հարուցում:


Եթե խոսքը Փոյուզիայի տարածքի մասին է, ապա խարտապուսին XII դ. քվարթելու դեպքում դժվար թե Սանգարիոսի հովիտը հասցներ ստանալ այն անվանումը, որ հայտնի է միայն VIII դ. երկրորդ կեսից. այս խնդրի շուրջ տես ստորև (Գլուխ 3.3): Իսկ եթե խարտապուսը նկատի ունի «արևելյան» մուշկերին՝ Վերին Եփրատի ավազանը, ապա խիստ դժվար է պատկերացնել այդ թեկուզև աշխարհագրորեն Կոնյայի հարթավայրի և Եփրատի միջև գտնվող Մելիդի գոյությամբ:

Ամփոփելով «խարտապուսի պետությանը» նվիրված բաժինը, անհրաժեշտ է նշել հետևյալը:

- 1) Այսօր առկա փաստական նյութի ընձեռած հնարավորությունների շրջանակներում կարելի է միանշանակ ենթադրել, որ խեթական տերության տրոհման շրջանում Փոքր Ասիայի հարավային մասերում (Կոնյայի հարթավայր և Հալիսի ոլորանից հարավ՝ մինչև Տավրոս) դեռ XIII դ. կեսերին ստեղծված Թարխունտասսան պահպանել է իր գոյությունը, որտեղ շարունակվել է Մուրսիլիս III-ի (Ուրտի-Թեշուբ) դինաստիան:
- 2) Նախորդ կետից բխում է, որ այս ընդարձակ տարածքը XII դ. ճգնաժամի շրջանում քիչ է տուժել էթնիկական տեղաշարժերի և այլ երևույթների բացասական ազդեցությունից:
- 3) «խարտապուսի պետությունը», Կարգամիսի և Մելիդի հետ միասին, հանդիսացել է խեթական տերության քաղաքական ավանդույթների երեք ժառանգորդներից մեկը:

### **ՀԱՅՎԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ Մ.Թ.Ա. XII-XI ԴԱՐԵՐՈՒՄ**

Մ.թ.ա. XIII դ. երկրորդ կեսին, ինչպես ցույց տրվեց նախորդ գլխում (Գլուխ 1.5), Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և հարավային շրջանների երկրները Իսուվան, Ալզին, Կադմուխին և այլք ներգրավված էին խեթա-ասորեստանյան հակամարտության ոլորտում: Այս երկրների վերջին հիշատակությունները թե խեթական, թե ասորեստանյան աղբյուրներում վկայում են մի շարք քաղաքական բնույթի երևույթների առկայության օգտին:



Քարտեզ 4. Իսուվա-Ծոփքի հնավայրերը

Առաջինը խեթական տերության՝ նախկինում հավատարիմ կախյալ Իսուվայի անջատողական միտումներն են, որ լավ վկայված են 1234/3 թ. Նիխրիայայի ճակատամարտի շրջանում: Այնուամենայնիվ, չնայած խեթերի կրած անհաջողությանը, Իսուվան, հավանաբար, դրանից հետո դեռ շարունակել է մնալ խաթթիի ազդեցության ոլորտում<sup>80</sup>:

Երկրորդ «Սուբարի երկրների» (Կադմուխի, Ալզի, Պուրուլունգի և այլն) ակնհայտ հակաստրեստանյան քաղաքական դիրքորոշումն է, որը արդյունքում վերածել էր դրանց միավորմանը Թուկուլթի-Նինուրտա Ի-ի կառավարման սկզբներին:

Եվ, վերջապես, Թուկուլթի-Նինուրտայի կառավարման առաջին տարում դեպի հյուսիս ձեռնարկված արշավանքները, ամենայն հավանականությամբ, անցողիկ հաջողություն պիտի ունենային, եթե նկատի ունենանք, որ հետագայում Ասորեստանն այլևս ի վիճակի չէր ակտիվորեն զբաղվելու այս տարածքով:

Ահա այսպիսին էր Հայկական լեռնաշխարհի հարավային, հարավարևմտյան շրջանների երկրներում տիրող իրավիճակը XIII դ. երկրորդ կեսին:

Նշված տարածքի վերաբերյալ գրավոր նյութերը կրկին հայտնվում են արդեն XII դ. երկրորդ կեսից: Ասորես փորձենք ներկայացնել դրանք և ցույց տանք, թե ինչպիսի իրադարձություններ են տեղի ունեցել այստեղ, ինչու է արտահայտվել մերձավորարևելյան ճգնաժամը Հայկական լեռնաշխարհի հասարակությունների կենսազործունեության վրա:

#### ԹԵՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՏՈՐԺԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

##### ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում մերձավորարևելյան ճգնաժամի փուլում ընթացած էքնիկական լայն տեղաշարժերի մասին գիտությանը վաղուց էր հայտնի շնորհիվ Թիզլաթալա-լասար Ի-ի տեքստերում պահպանված տեղեկությունների: Ներկայացնենք դրանք.

*«Իմ զահակալման տարում 20,000 մուշկերը իրենց հինգ արքաներով, ուլքեր 50 տարի պահում էին Ալզին և Պուրուլունգին, իմ աստված Աշշուրի տիրոջը հարկատուներին, (մուշկերը) որոնց ոչ մի արքա երբևէ ետ չի մղել, իրենց ուժերին վստահ, եկան (և) նվաճեցին Կադմուխի երկիրը ...»<sup>81</sup>:*

*«Ես նվաճեցի մուշկերի ընդարձակ երկրի 12,000 զորքը: Ես նետ ու աղեղով սփռեցի նրանց կուլոդների դիակները ողջ դաշտով»<sup>82</sup>:*

*«... [Ես պարտության մատնեցի] մուշկերի ընդարձակ երկրի 12,000 [զորքը]: Մնացած զորքը ես տեղահանեցի և բերեցի իմ երկիրը: (Այդպիսով) ես դարձա [մուշկերի ողջ երկրի] տերը և (այն) միացրի իմ երկրի սահմաններին»<sup>83</sup>:*

Վերը բերված տեքստային նյութից կարելի է բխեցնել հետևյալ եզրակացությունները.

- 1) Եթե տառացիորեն հետևենք տեքստին, ապա 1164 թ. մուշկերն ինչ-որ տեղից մուտք են գործել Ալզի և Պուրուլումզի և հաստատվել այնտեղ:
- 2) Նախկինում ոչ մի արքա մուշկերի նկատմամբ գերիշխանություն չի ունեցել:
- 3) Մ.թ.ա. 1114 թ. մուշկերը (հավանաբար, Ալզիում և Պուրուլումզիում հաստատվածների մի մասը) տեղաշարժվել է Կադմուխի, որտեղ էլ թիզլաթպալասարը կանգնեցրել է նրանց:
- 4) Տեղաշարժվող մուշկերի դեմ թիզլաթպալասարը հանդես է եկել երկու անգամ: Առաջինը 1114 թ. Կադմուխի ներքալիանցած 20,000-ը, հաջորդը՝ 12,000 մուշկերի դեմ արդեն «մուշկերի ընդարձակ երկրում»:

Այսպիսով, XII դ. 60-ական թվականներին Վերին Տիգրիսի ավազանում (Ալզի, Պուրուլումզի) ինչ-որ տեղից հայտնվել է մի բազմաքանակ էթնիկական խումբ, որը կես դար հետո ծավալվել է դեպի Ասորեստանի հյուսիսային մատույցները, բնակություն հաստատելով Քաշիյարի լեռների շրջանում: Վերը հղված երկրորդ և երրորդ տեքստերը կարծես վկայում են այն մասին, որ մուշկերի զբաղեցրած տարածքը չէր սահմանափակվում միայն Ալզիով, Պուրուլումզիով և Կադմուխի մի մասով: Մուշկերի երկրի խնդրի շուրջ կիսալի հաջորդ բաժնում, իսկ այստեղ նշված տարածաշրջանում ասորեստանյան աղբյուրներով վկայված մեկ այլ նորանուտ էթնիկական խմբի մասին:

*«Ես հնազանդեցրի ապստամբ և անհնազանդ Սուբարին: Ես իմ տիրապետության ժամը լուծող դրեցի Ալզի և Պուրուլումզի երկրների վրա, որոնք դադարեցրել էին հարկը .... Նա (Աշշուր աստվածը - Ա.Ք.) հրամայեց ինձ ընդարձակել իր երկրի սահմանը: 4,000 կասկերն (ու) ուրումուները՝ խեթական անհնազանդ զորքերը, ուլքեր ուժով գրավել էին Սուբարտուի քաղաքները, որ իմ տիրոջ Աշշուր աստծո ենթականերն էին, լսեցին իմ զայտոյան մասին Սուբարտու: Իմ քաջության փառքը ճնշեց նրանց: Վախենալով կովից, նրանք հնազանդվեցին ինձ: Ես վերցրեցի նրանց իրենց ունեցվածքի և 120 մարտակազքերի (և) սանձված ձիերի հետ: Ես նրանց դարձրեցի իմ երկրի մարդիկ»<sup>84</sup>:*

Նույն իրադարձության մասին են պատմում թիզլաթպալասարի ևս երկու տեքստեր<sup>85</sup>, որտեղ կասկերի փոխարեն հիշատակվում են ապիշլուները:

Ի տարբերություն մուշկերի, կասկ-ապիշլուները և ուրումուները ուղղակի հիշատակվում են որպես խեթական տարածքի բնակչություն: Այս երկու էթնիկական խմբերին միավորում է այն, որ նրանք հանդես են գալիս նույն ժամանակներում և միևնույն տարածքում (Ալզի և Պուրուլումզի): Սուբարի աշխարհագրական տերմինի անորոշ բնույթը<sup>86</sup> հազիվ թե խանգարի պարզելու կասկ-ապիշլուների և ուրումուների տեղաշարժի մեկնակետը: Վերը բերված տեքստում նրանց հիշատակությանը անմիջապես նախորդում է Ալ-

զիւն և Դուրուլունձզիի նկատմամբ ծեռնարկված միջոցառումը:

Այսպիսով, պարզվում է, որ XII դ. ընթացքում, մինչև Թիզլաքալախասար I-ի գահակալումը, Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում ընթացել են երկու տեղաշարժային ալիքներ: Եթե կասկածալիչում ենք ուրումունների շարժումը կարող էր սահմանափակվել միայն Ալզիով, նկատի ունենալով նրանց փոքրաքանակ լինելը, ապա մուշկերի միգրացիան, անկասկած, բավական խոշոր պիտի լիներ, ընթացած մի քանի տասնամյակում՝ տարբեր փուլերով:

Այժմ ներկայացնենք ուսումնասիրվող էթնիկական տեղաշարժերին մասնակից ժողովուրդների և նրանց ելակետերի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ մինչև վերջին ժամանակները գերիշխող տեսակետերը:

*Կասկ-ապիշլուներ.* Այս էթնիկական խմբի լեզվական պատկանելության և ելակետի խնդիրը մեծ տարածայնություններ չի կարող հարուցել, քանի որ դրանք լավ վկայված են խեթական աղբյուրներում որպես խոշոր ցեղամիություն խեթերի բնօրրանից հյուսիս և հյուսիս-արևելք՝ հարավմերձսևծովյան գոտում (մոտավորապես ժամանակակից Օրդու-Սինուպ հատվածում)<sup>87</sup>: Կասկերի բնակության տարածքի տեղանունները և նրանց անձնանունները նշում են դրանց առնչակցությունը արխագա-աղոյան լեզուներին<sup>88</sup>:

*Ուրումուներ.* Ս.Երեմյանի կարծիքով<sup>89</sup>, ուրումուները հայալեզու ցեղ են եղել, համարժեք հոմերոսյան արիմների: Ի.Ղյակոնովը չի բացառում նրանց ինչպես կասկական, այնպես էլ թրակա-փոյուզական ծագումը<sup>90</sup>: Վերջին շրջանում առաջ են քաշվել ուրումունների հյուսիսային՝ հայաստական ելակետը հիմնավորող երկու վարկածներ:

Ըստ առաջինի<sup>91</sup>, ուրումուններին Հայաստաի տարածքի բնակչություն կարելի է համարել մի շարք նկատառումներով.

- 1) «խեթական երկիր» տերմինը պարտադիր չէ հասկանալ որպես բուն խաթթիի տարածք: Դա կարող էր լինել խաթթիի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող ցանկացած շրջան:
- 2) Նկատի ունենալով խեթական աղբյուրներում պահպանված տեղեկությունները կասկերի և Հայասա-Ազգիի ավանդական հակախեթական դիրքորոշման մասին, կարելի է ենթադրել նման իրավիճակ նաև XII դ.: Դրանից կարծես բխում է ուրումունների ելակետը կասկերի հարևանությամբ փնտրելու մասին ենթադրությունը:

Երկրորդ վարկածի հիմքը կասկ-ապիշլուներին հիշատակող ասորեստանյան տեքստի կրկնօրինակներից մեկում առկա ուրումացիներ (<sup>KUR</sup>U-ru-ia<sup>MES</sup>) տարբերակն է: Այս երկրանուն-ցեղանունը կարող էր նշանակել դեռ XIV դ. վերջին քառորդում Մուրսիլիս II-ի կողմից հիշատակվող Հայաստաի Ուրա քաղաքի անունը<sup>92</sup>:

*Մուշկեր.* Այս ցեղանվան կրողների թե էթնիկական պատկանելությունը, թե աշխարհագրական ընդգրկման խնդիրը անհամեմատ ավելի բարդ է նախորդ երկուսից:



Վաղ շրջանի ուսումնասիրողների, նաև մեր օրերի շատ մասնագետների կարծիքները տատանվում են երկու հնարավոր լուծումների միջև: Մուշկերի հյուսիսքալկանյան-հնդեվրոպական ծագման կողմնակիցների կարծիքով<sup>93</sup>, այս թրակա-փոյուզական ցեղերը Փոքր Ասիա են ներթափանցել խեթական տերության տրոհման շրջանում և հասել են մինչև Չայկական լեռնաշխարհ: Մի շարք մասնագետներ մուշկերին համարում են անտիկ-հեղինակների կողմից Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում հիշատակվող մոսխոի (Moschoi) մի ճյուղը<sup>94</sup>:

Ներկա աշխատության նախորդ գլխում հնագիտական նորագույն տվյալների հիման վրա ցույց տրվեց XII դարում Չյուսիսային Բալկաններից Փոքր Ասիայով դեպի Չայկական լեռնաշխարհ ենթադրվող մուշկական միգրացիայի անհնարինությունը<sup>95</sup>: Այս եզրակացությունը ստիպում է վերանայել մուշկերի տեղաշարժի ընթացքը և էթնիկական պատկանելության խնդիրը (այդ մասին ստորև, սույն գլխի վերջում):

### ՉԼԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1960-ական թվականների երկրորդ կեսին Կեբանի շինարարության նպատակով Եփրատի առափնյա շրջաններում (Էյլազղի շրջան) սկսված հնագիտական փրկարար աշխատանքների ընթացքում պեղվեցին մի շարք հնավայրեր, որտեղից հայտնաբերված հարուստ նյութը<sup>96</sup> թույլ տվեց նորովի մեկնաբանելու տարածաշրջանի պատմության որոշ անկյունաքարային խնդիրներ:

Դեռ 1980 թ. Էյլազղի հնավայրերից հայտնաբերված խեցեղենի ուսումնասիրության հիման վրա Չ. Բըրնին առաջ քաշեց մի տեսակետ, ըստ որի ուշ բրոնզից վաղ երկաթ անցման փուլում այս շրջանում պիտի տեղի ունենար նոր էթնիկական տարրի ներհոսք. վերջիններս, ըստ նրա, մուշկերն են եղել<sup>97</sup>: Էյլազղի և հարևան Մալաթիայի շրջաններում, ինչպես նաև մի շարք այլ վայրերում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերի հետազոտությունների արդյունքում<sup>98</sup> հնարավոր դարձավ պարզելու XII դ. վերինեփրատյան շրջանում տեղ գտած էթնոմշակութային գործընթացների ուրվագծերը (տե՛ս քարտեզ 4):

Էյլազղի և Մալաթիայի շրջանների հնավայրերի ու շրոնգեղարյան մշակույթը կրում է կենտրոնական Փոքր Ասիայի մշակութային ուժեղ ազդեցության հետքեր, որը բացատրվում է նշված դարաշրջանում այս տարածքի վրա խեթերի ունեցած քաղաքական գերիշխանությամբ<sup>99</sup>: Սակայն ուշ բրոնզից վաղ երկաթ անցման փուլում Էյլազղի բազմաթիվ հնավայրերում (Նորչունթեփե, Կորուջութեփե, Թեփեջիկ, Դեղիրմենթեփե, Իմիկուշաղը, Թյուլինթեփե և այլն) տեղի են ունենում արմատական փոփոխություններ, որոնք պիտի նոր մշակույթի կրողների ներկայության հետևանքը լինեին: Ուշ բրոնզից վաղ երկաթ անցումը և նշված ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում հայտնված մշակույթը բնորոշվում է հետևյալ առանձնահատ-

## կություններով<sup>100</sup>.

- 1) ուշքրոնգեղարյան բնակավայրերի և բնակչության քանակի կտրուկ նվազում:
- 2) որոշ բնակավայրերում կան փոքր ավերածություններ (Նորշունքփե, Կորուջուքփե):
- 3) վաղ երկաթեղարյան բնակավայրերի քանակական աճ նախորդ շրջանի համեմատ (շուրջ 50%):
- 4) նոր, պարզունակ մշակույթի կրողների զանգվածային ներհոսք:
- 5) նոր մշակույթի բնորոշ առանձնահատկություններն են ա) գերազանցապես անորակ կավից, առանց բրուտի անիվի կամ դանդաղ անիվի վրա պատրաստված և փոքր տեսականիով ներկայացված խեցեղեն<sup>101</sup>, բ) շինությունների պարզունակություն (կառուցման միասնական պլանավորման բացակայություն), Նորշունքփեում ծիսական և վարչական կառույցների բացակայություն<sup>102</sup>:

Վաղ երկաթեղարյան վերոհիշյալ շերտը տևել է շուրջ 150 տարի<sup>103</sup>:

Ելյազղի տարածքում (սեպագրական Իսուվա/Իշուա/Օուպա, հին հայկական Օուիք) XII դ. կեսերին հայտնված նոր մշակույթի աղբյուրի խնդիրն առայժմ վերջնական լուծումից հեռու է, չնայած արդեն այսօր բավական հիմնավոր ուսումնասիրություններ են կատարված այս ուղղությամբ: Մասնավորապես, պարզ է, որ նոր խեցեղենի ստեղծողները չէին կարող այստեղ հայտնվել Եփրատից արևմուտք ընկած շրջաններից, այսինքն, Փոքր Ասիայից<sup>104</sup>: Այդ խեցեղենի ամենամոտ զուգահեռները հնագետները հավկած են փնտրելու Հայկական լեռնաշխարհի ամենատարբեր շրջանների մինչուրարտական շերտերում (վաղ և միջին երկաթեղար - XII-VIII դդ.)<sup>105</sup>: Այսպես, նմանատիպ խեցեղեն է վկայված այսօրվա Հայաստանի Հանրապետությունում (Կարմիր բլուր, Մեծամոր), Դիլկայա Հյույսքում (Վանա լճի հարավարևելյան ափին), Տիլլե Հյույսքում (Աղղյամանի մոտ), Գյուզելվայում և Պուլուրում (երզրումի մոտ) Գեոյ թեփում (հյուսիս-արևմտյան Իրան), Հասանլուում:

Այսպիսով, Ելյազղի երկաթեղարյան մշակույթի զուգահեռները ցրված են ողջ Հայկական լեռնաշխարհով: Ինչպես կարելի է մեկնաբանել այս իրավիճակը: Արդյոք տվյալ պարագայում հնարավոր է ենթադրել մի ինչ-որ հիպոթետիկ ելակետից XII դ. ընթացած լայնածավալ միգրացիա, ինչպես արդեն առաջարկվել է<sup>106</sup>: Իսկ եթե ոչ, ապա կարելի է արդյոք ենթադրել, որ խնդրո առարկա մշակույթի կրողները XII դ. շատ ավելի վաղ են բնակվել վերոհիշյալ խեցեղենի հայտնաբերման վայրերում, բացի, իհարկե, Ելյազղի շրջանից: Երկրորդ դեպքում Ելյազղի բնակավայրերում նոր բնակչության մուտքը հնարավոր կլինի դիտել որպես սահմանափակ միգրացիա ինչ-որ հարևան տարածքից:

Այս խնդրի պարզաբանումը համակողմանի ուսումնասիրման կարիք ունի թեկուզ այն պատճառով, որ, բացի Ելյազղի և, թերևս, Գեոյ թեփի նյութերից, մյուս հնավայրերի համապատասխան շերտերը դեռևս հստակ

թվագրված չեն, չխոսելով արդեն քանգարաններում պահվող մեծ քանակությամբ անհայտ ծագման խեցեղենի առկայության մասին:

Այս բաժնում քննարկված խնդրի առնչությամբ ներկայացնենք գրավոր և հնագիտական աղբյուրների միջոցով վերականգնվող XII դ. ընթացքում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում ծավալված էթնիկական տեղաշարժերի աշխարհագրությունը: Այդ շրջաններն են՝ Էյսազդ-Իսուվա, Ալզի-Աղծնիք, Պուրուլումզի, Ուրումու<sup>107</sup>, Կադմուլի (Քաշիյարի-Տուր Արդին լեռների շրջան):

Ամփոփելով այս բաժնում քննարկված հարցերը, կատարենք դրանց ուսումնասիրությունից բխող եզրակացություններ:

Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան հատվածում վկայված իրադարձությունները դժվար է որակել այլ կերպ, քան քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային վայրէջք, որը բնորոշվում է ուշքրոնգեղարյան քաղաքակրթության շատ երևույթների անկումով: Այստեղ վկայված երևույթները, անկասկած, պիտի դիտել Մերձավոր Արևելքի և Էգեյան ծովի համաժամանակյա երևույթների հետ մի համատեքստում (տես Գլուխ 4):

#### ՄՈՒՇԿԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Նախորդ բաժնում ներկայացված գրավոր և հնագիտական նյութերը վկայում են XII դ. Հայկական լեռնաշխարհում ընթացած լայն ժողովրդագրական արոցեսների ծավալման օգտին, որոնցում մուշկերի անվան տակ հանդես եկող էթնիկական խումբը, անկասկած, կարևոր դեր է խաղացել: Նկատի ունենալով այդ հանգամանքը, ինչպես նաև նշված ցեղանվան կենսունակությունը հետագա դարերի գրավոր աղբյուրներում (ասորեստանյան, հիերոգլիֆային լուվիական, ուրարտական, աստիկ, ինչպես նաև Աստվածաշնչում), հնարավոր ենք համարում ժամանակագրական մեծ շեղում թույլ տալ ներկա աշխատության շրջանակներից, որպեսզի ավելի ամբողջական պատկերացում կազմվի մուշկերի մասին:

#### ՄՈՒՇԿԵՐԻ ԵՐԿԻՐԸ

Ժամանակագրորեն թիզլաբպալասար Ի-ի հետ ունեցած երկու բախումներից (գուցե և ավելի շատ) հետո վերջիններիս առաջին հիշատակությունը վերաբերում է ճրա հաջորդներից մեկին՝ Աշշուրբեկալային (1073-1056 թթ.): Գինգեբորդ (կամ վեցերորդ) տարվա իրադարձությունների շարքում հիշատակվում է «Մուշկերի ...» քաղաքը<sup>108</sup>:

Անհամեմատ ավելի հանգամանալի տեղեկություններ են հաղորդվում Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտա II-ի (890-884 թթ.) տեքստում IX դ. 80-ական թվականների առնչությամբ<sup>109</sup>: Այստեղ ներկայացված է արքայի արշավանքի երթուղին դեպի մեծ թվով կախյալ երկրներ, որի ընթացքում հիշատակվում է նաև «մուշկերի երկիրը»: Ահա այդ երթուղու վերջին մասում

հիշատակվող քաղաքների հաջորդական ցուցակը.

«Սազ(ա)րիսու - Գուրետու - Տարիտու - [.....] - Նածիբինա - խուզիրինա - [.....]: Սրանցից հետո ասվում է. «Ես [նոտեցա ...] լեռների միջով, դժվար տեղանքով, արշավեցի մուշկերի երկրի [.....] անհարթ շրջանը: Չորրորդ օրը [.....] Պիր[ու ...] քաղաքը, նրանց ավարը, ունեցվածքը, նրանց եզները, [նրանց] ոչխարները, [... ես] նվաճեցի: Ես կոտորեցի նրանց անհաշիվ: Ավերեցի նրանց քաղաքները, [կտրեցի նրանց] այգիների բերքը [...]: Ես նրանց բույլ տվեցի մնալ իրենց քաղաքներում (բայց) նրանց [վրա] դրեցի հարկ [(ն) պարտականություններ] »:

Աշշուրնածիրպալ II-ի (883-859 թթ.) մոտ մուշկերի երկիրը հիշատակվում է Կադմուխի հետ նույն ենթատեքստում<sup>110</sup>.

«Ես դուրս եկա Նինվեից (ն) արշավեցի դեպի Նիպուր և Պածատե հզոր լեռների ստորոտին ընկած քաղաքները: Ես նվաճեցի Ատկուն, Ուշխու, Պիլազի քաղաքները (ն) 20 քաղաքներ դրանց մերձակայքում .....: Դուրս գալով Նիպուր և Պածատե լեռների ստորոտին գտնվող քաղաքներից, ես անցա Տիզբիսը (ն) մոտեցա Կադմուխի երկրին: Ես ընդունեցի Կադմուխի (ն) Մուշկի երկրների հարկը ...»:

Վերուհիշյալ տեղեկություններից հնարավոր է եզրակացնել, որ 1) «մուշկերի երկիրը» գտնվել է Կադմուխիում կամ դրա հարևանությամբ (տես ստորև), 2) XII-IX դդ. ընթացքում մուշկերը շարունակել են ապրել այն տարածքում, ուր հաստատվել էին իրենց տեղաշարժերի շրջանում, 3) «մուշկերի երկիրը» ունեցել է դժվարամատչ լեռնային տեղանք (ըստ Թուկուլթի-Նի-Նուրտա II-ի), 4) XII դ. վերջերին Կադմուխիում հաստատված մուշկերը չեն ձուլվել տեղական բնակչության մեջ, պահպանելով իրենց էթնիկական բնութագիրը:

Եթե XII-IX դդ. ասորեստանյան աղբյուրները հստակ տեղեկություններ են պահպանել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքի ինչ-որ հատվածում գտնվող «մուշկերի երկրի» մասին, ապա ավելի ուշ շրջանի մյուս գրավոր աղբյուրների համապատասխան նյութը այլընտրական ենթադրությունների տեղիք է տալիս:

Այսպես, 800-ական թվականներով թվագրվող Կարգամիսի արքա Յարիբիսի մի արձանագրություն հիշատակում է երկու՝ միմյանց արտաքնապես նման տեղանուններ<sup>111</sup>.

«Իմ մասին լսել են այդ Եգիպտոսում, լսել են այդ Բաբելոնում, այդ մուսերի, մուս(ա)կաների և սուրաների երկրներում»:

Զնայած այս արձանագրությունը որևէ հիմք չի տալիս ենթադրելու, որ ճշված Մուսա կամ Մուս(ա)կա երկրներից մեկը կարող էր լինել մեզ հետաքրքրող «մուշկերի երկիրը», սակայն նման տարբերակը այնքան էլ անհավանական չէ:

Բանն այն է, որ Սարգոն II-ը (721-705 թթ.) քաղմիցս հիշատակում է «Մուշկի երկիրը» և նրա արքա Միտային 717-710/09 թթ. ընթացքում, որը մասնագետները դիտում են որպես Սանգարիոսի հովտում գտնվող Մեծ Փոյուզիայի և նրա արքա Միդասի անունների սեպագրական տարբերակնե-

րը<sup>112</sup>: Այսինքն, ուսումնասիրվող դարաշրջանում Մերծավոր Արևելքի տարբեր շրջաններում գոյություն են ունեցել երկու տարբեր քաղաքական միավորներ, որոնք ինչ-ինչ պատճառներով նման անվանումներով են հանդես եկել, որը և արտացոլված է կարգամիսյան արծանագրությունում: Ի.Մ. Դյակոնովի կարծիքով<sup>113</sup>, հիերոզկիֆային աղբյուրի Մուս(ա)կան պիտի դիտել որպես Դայկական լեռնաշխարհի արևմուտքում XII-IX դդ. հիշատակվող «մուշկերի երկիր» անվանում, իսկ Մուսան պատմական Մեծ Փոյուզիան է: Դամապատասխանաբար, դրանցից առաջինի բնակչությանը նա պայմանականորեն անվանում է «արևելյան», իսկ երկրորդի բնակչությանը՝ «արևմտյան» մուշկեր:

Մուշկերին հիշատակող հաջորդ սեպագիր աղբյուրը գալիս է VII դ. առաջին կեսից:

Ուրարտուի արքա Ռուսա II-ի (մոտավորապես 685-645 թթ.) Աղլընագի արծանագրությունում<sup>114</sup> հիշատակվում են Դայկական լեռնաշխարհի արևմուտքում և դրա հարևանությամբ գտնվող երեք երկրներ՝ Մուշկինի, Խաթն և Խալիտու: Մրանցից վերջին երկուսի նույնացումը անդրեփրատյան Մելիդի և հին հայկական Խաղտիքի հետ<sup>115</sup>, թվում է, լուրջ առարկության չի կարող հանդիպել: Ինչ վերաբերում է Մուշկինիին, ապա այս հարցում կարծիքները բաժանվում են: Մասնագետների մեծ մասը այն դիտում է որպես Մեծ Փոյուզիայի ասորեստանյան-ուրարտական անվանում<sup>116</sup>, մյուսները հակված են այս երկիրը տեղայնացնելու վերինեփրատյան շրջանում<sup>117</sup>: Ուրարտական Մուշկինիի արևելյան տեղորոշումը շատ ավելի հավանական է, ինչի մասին ավելի ուշ:

Վերջապես, մուշկերի զբաղեցրած տարածքի առնչությամբ անհնար է անտեսել անտիկ աղբյուրներին հայտնի պոնտական մոսխերին (Moschoi)<sup>118</sup>: Ի թիվս աքեմենյան XIX սատրապության մյուս ժողովուրդների, սրանք մոտավորապես տեղադրվում են Սև ծովի հարավ-արևելյան ափին հարող շրջանում<sup>119</sup>:

Այսպիսով, վերը բերված նյութերը անվերապահորեն վկայում են հոգուտ այն ենթադրության, որ «մուշկ-մոսխ» ցեղանունը կրող էթնիկական տարրը XII դ. սկսած հայտնի է եղել հարևաններին Դայկական լեռնաշխարհի ողջ արևմտյան հատվածում՝ Սև ծովից մինչև Դյուսիսային Միջագետք: Սա, իհարկե, չի նշանակում, որ նշված տարածքը կարող էր կազմել էթնոշակութային և քաղաքական մի միավոր ետիսեթական դարաշրջանում: Դավանաբար, ավելի նպատակահարմար կլինի ենթադրել այս ընդարձակ տարածքում ժամանակի ընթացքում ձևավորված մուշկական անկլավների գոյություն: Այնուամենայնիվ, «մուշկերի երկիր» կոչվող քաղաքական միավորի գոյությունը նույնպես ղեկավար է վիճարկել, քանզի այն հիշվում է երեք տարբեր աղբյուրներում (ասորեստանյան, կարգամիսյան, ուրարտական), չիաշված անտիկ հեղինակների մոսխերին:

Առաջնորդվելով բացասման մեթոդով, կարելի է առաջարկել հետևյալ եզրակացությունները.

1) Կաղմուխիում հիշատակվող «մուշկերի երկիրը» հազիվ թե ներկայացնի այս երևիական տարրի բնակության հիմնական տարածքը: Այստեղ կարող էր գտնվել ընդամենը մուշկական տեղաշարժերի ընթացքում գոյացած մի խոշոր անկլավ, ինչը և հավաստվում է Թիզլաքալաքասար I-ի տեքստերով:

2) Կաղմուխից հյուսիս մ.թ.ա. I հազարամյակի աղբյուրները հիշատակում են Մելիդ-Մալաթիան, Իսուվա-Շոփքը և Ալզի-Աղծնիքը: Չնայած վերջին երկուսում, ինչպես ցույց տրվեց վերը, գրավոր աղբյուրներով և հնագիտորեն վկայված է մուշկերի (նաև մյուս խմբերի) ներկայությունը, սակայն այդ երկրները ակնհայտորեն «մուշկերի երկիր» չեն կոչվել<sup>120</sup>: Սրանց տարածքում նույնպես պիտի գոյություն ունենային մուշկական ընդարձակ անկլավներ: Ի տարբերություն դրա, ուրումուների զբաղեցրած տարածքը Աշշուրնածիրալալ II-ի օրոք արդեն հարևանների կողմից գիտակցվում էր որպես առանձին քաղաքական միավոր՝ Ուրումու<sup>121</sup>:

3) «Մուշկերի երկիրը» կարող էր գտնվել Իսուվայից և Ալզիից հյուսիս կամ արևելք: Այս ենթադրության համար որոշ հիմքեր կան: Առաջինը Ռուսա II-ի Աղլըջնազի արձանագրությունում խաթե-Մելիդի և Խալիտու-Խադտիքի հետ միասին Մուշկինի երկրի հիշատակությունն է: Այն կարող է վկայել Մուշկինիի առավելապես հյուսիսային տեղադրման օգտին:

Երկրորդը Թիզլաքալաքասար I-ի տեքստերում նույն տարածքում (Ալզի և Պուրուլումզի) հաջորդաբար մեկ մուշկերի, մեկ կասկ-ապիշլուների և ուրումուների հիշատակությունն է: Չնայած այս երեք երևիական խմբերը, ըստ աղբյուրի, հանդես չեն գալիս որպես միևնույն ելակետից տեղաշարժված ժողովուրդներ, սակայն դրանց ելակետերի մերձավորությունը չի բացառվում անտիկ աղբյուրների տեղեկությունների լույսի տակ:

Հայտնի է, որ կասկերը հյուսիս-արևելյան Փոքր Ասիայի բնակիչներ են եղել, այսինքն, այն շրջանի, որը հետագայում մտել է արքեմենյան XIX սատրապության կազմի մեջ: Այս սատրապության ժողովուրդներից էին տիրերենները, որոնց անվանումն ընդունված է քիտցնել խեթական աղբյուրներում հիշատակվող կասկական Տիպիյա (կամ Տիթիյա) քաղաքի անվանումից<sup>122</sup>: Սա նշանակում է, որ XIX սատրապության բնակչության կազմում պիտի լինեին նաև կասկեր: Իսկ ըստ Դերոդոտոսի (III 94; VII 78), այս սատրապության ժողովուրդներից էին մոսխերը: Անտիկ աղբյուրների տեղեկությունները թույլ են տալիս ենթադրելու, որ այս մոսխերը պիտի զբաղեցնեին բավական զգալի տարածք հյուսիս-արևելյան Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում<sup>123</sup>: Նույն աղբյուրները հաղորդում են «Մոսխական լեռների» մասին<sup>124</sup>, որն ընդգրկել է Պարթսարի լեռները, ինչպես նաև դրանցից ճյուղավորվող լեռնաշղթաները<sup>125</sup>:

Եթե սեպագիր և հիեթոգլիֆային աղբյուրների մուշկերը կապ ունեն ան-

տիկ աղբյուրների մոսխերի հետ, ապա իրոք մուշկերի ելակետը կարելի է մոտավորապես տեղադրել Հայկական լեռնաշխարհի արևմուտքում, հյուսիս-արևմուտքում<sup>126</sup>, այն շրջաններում, որտեղ խեթական աղբյուրները հիշատակում են Հայասա-Ազգին:

Առկա սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա հնարավոր ենք համարում առաջարկելու «մուշկերի երկիր» հետևյալ մեկնաբանությունը:

Մ.թ.ա. XII-IX դդ. ասորեստանյան աղբյուրներում «մուշկերի երկիր» տերմինը կիրառվել է նշելու համար Կադմուխի տարածքում հաստատված մուշկերի բնակության շրջանը: Քիչ հավանական է ենթադրել այս «երկիր» մեջ Ալզին, Իսուվան, Պուրուլումզին և հարևան այլ շրջաններ ներգրավելու մասին վաղուց առաջարկված կարծիքը<sup>127</sup>: Սա, իհարկե, չի նշանակում, որ վերոհիշյալ տարածքում մուշկեր չեն եղել: Խնդիրը միայն այն է, թե ինչ են նկատի ունեցել ասորեստանցիք քննարկվող տերմինի տակ: Մուշկերին առնչվող գրավոր և հնագիտական նյութերը թույլ չեն տալիս ենթադրելու մի կոմպակտ քաղաքական միավորի առկայություն XII դ. և դրանից հետո, որ կարող էր ներառնել Իսուվան, Ալզին, Սուխմուն, կադմուխյան մուշկերի տարածքը և մի շարք այլ շրջաններ:

Հիերոգլիֆային լուսնիական աղբյուրի տեղեկությունը որևէ հիմք չի տալիս տեղորոշելու «մուշկերի երկիրը»: Թերևս, Ուսա II-ի արձանագրության «մուշկերի երկիրը» որևէ կերպ կապված չէ Կադմուխի մուշկերի հետ. այն պիտի գտնվեր շատ ավելի հյուսիս, XII դ. տեղաշարժված մուշկերի ելակետի շրջանում:

Մուշկերի խնդրի ուսումնասիրման նման ընթացքը հուշում է, որ այս երևիական խումբը ինչ-որ կերպ առնչվում է մերձպոնտական մոսխերին: Այս հարցը մասնագիտական գրականության մեջ երկու հակադիր մեկնաբանություններ է առաջ բերել.

- 1) Մուշկերը և մոսխերը նույն երևիական խումբն են ներկայացնում: Սա քարթվելալեզու ժողովուրդ է, որի անվանումը հետագայում պահպանվել է մեսխերի անվան մեջ<sup>128</sup>: Դեռ Հեկատեոս Միլեթցին էր մոսխերին համարում «կոլխական ժողովուրդ»<sup>129</sup>:
- 2) Մուշկերը և մոսխերը տարբեր երևիական խմբեր են<sup>130</sup>: Առաջինները թրակա-փոյուզական ժողովուրդ են<sup>131</sup>: Ի. Ղյակունովը «արեւելյան» մուշկերին դիտում է որպես հայ ժողովրդի հնդեվրոպական բաղադրատարրի կրողներ, որոնք Հայկական լեռնաշխարհ են ներթափանցել XII դ. սկզբի թրակա-փոյուզական խոշոր միգրացիայի շրջանում<sup>132</sup>:

Հարկ է նշել, որ մուշկ-մոսխերի քարթվելական պատկանելության մասին տեսակետը գլխավորապես ուշ ժամանակների իրողությունների վրա է հենվում: Գրավոր և հնագիտական աղբյուրների միջոցով վերականգնվող մուշկերի տարածման աշխարհագրական լայն արեալը, ինչպես նաև Մեծ Փոյուզիայի Մուշկի, Տրոադայի Միսիա և Գյուսիսային Բալկանների Մեզիա անվանումները ոչ մի կերպ չեն կարող բացատրվել քարթվելալեզու մուշկ-

մոսխերի ներկայությամբ<sup>133</sup>: Սակայն տրամագծորեն հակադիր բացատրու-  
թյունը անհամեմատ ավելի հեշտ կարող է պարզել իրավիճակը: Մոսխերը  
կամ նրանց մի հատվածը ավելի ուշ ժամանակներում կարող էր ծուլվել  
քարթվեական եթնոսի մեջ, պահպանելով իր (ինքն)անվանումը ի դեմս մես-  
խերի: Ի. Դյակոնովի կարծիքով<sup>134</sup>, թրակա-փոյուզական մուշկերի մի խումբը  
կարող էր հայտնվել պոնտական գոտում XII դ. սկզբին Բալկաններից դեպի  
Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ ընթացած տեղաշարժերի փուլում:

Մուշկերի և նրանց հետ առնչվող պոնտական մոսխերի էթնիկական  
պատկանելության խնդիրը այսօր դեռևս վերջնական գիտական լուծման  
ակնկալիք չի կարող ունենալ: Նկատի ունենալով այս ցեղանվան տարած-  
ման լայն աշխարհագրությունը Հյուսիսային Բալկաններից մինչև Հայկա-  
կան լեռնաշխարհի և նշված տարածքի գերակշիռ մասում նույն ժամանակնե-  
րում, նաև հետագայում հնդեվրոպական ժողովուրդների առկայությունը,  
կարելի է հավաստել ուսումնասիրվող էթնիկական խմբերի հնդեվրոպական  
բնույթը: Նույն պատճառներից դրդված, հազիվ թե կասկածի տեղիք տա այն  
ենթադրությունը, որ այս ցեղանունը կարող էր նշանակել մի կոնկրետ էթնի-  
կական խումբ: Մուշկերի անվան տակ գրավոր աղբյուրները պիտի հասկա-  
նային էթնոշակութային առումով միմյանց մոտ կանգնած ժողովուրդների  
շարժունակ խմբեր<sup>135</sup>:

Ասվածին կարելի է ավելացնել այն, որ մուշկերի հետ վերջին շրջանում  
կապվող էլյազդի շրջանի և այլ հնավայրերի վաղ երկաթեդարյան խեցեղե-  
նի լայն աշխարհագրությունը ծանրակշիռ փաստարկ է այս էթնիկական խմ-  
բի հնդեվրոպական ծագման մասին տեսակետի օգտին: XII դ. մուշկական  
միգրացիայի լույսի տակ անհրաժեշտություն է ծագում նորովի ուսումնասի-  
րելու Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների տարբեր հատված-  
ներում միջին բրոնզեդարից մինչև վաղ երկաթեդար տևած մշակութային է-  
վոլյուցիան, որի արդյունքների համադրումը թույլ կտա զգալիորեն պարզե-  
լու այստեղ ընթացած էթնիկական և այլ պրոցեսները:



**ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԱԿՆԱՐԿ**

Աշխատության այս գլխում փորձ կարվի ի մի բերելու Մերձավոր Արևելքի և Էգեիդայի ուշբրոնզեդարյան հասարակությունների զարգացման եզրափակիչ փուլի ընթացքում տեղ գտած երևույթները, որոնք արդյունքում հասցրեցին այդ քաղաքակրթության կենսազործունեության մեջ արմատական վերափոխումների: Այդ երևույթների հիմնական մասի ընդհանրությունը ուսումնասիրվող տարածաշրջանի բոլոր հատվածների համար արդեն իսկ լուրջ կռվան է «XII դ. ճգնաժամ» տերմինի կիրառության արդարացվածության համար: Առկա փաստական նյութի և դրանից բխող եզրակացությունների հիման վրա ընդհանուր գծերով կարելի է վերականգնել ճգնաժամային տարբեր գոտիների միջև եղած փոխազդեցությունների բնույթը, ճգնաժամի սկզբնավորման պատճառների ու ժամանակի, դրա ծավալման և հետևանքների գլխավոր ուղեների: Հատուկ ուսումնասիրության առարկա կլինի ճգնաժամի հասունացման և ծավալման շրջանում տարբեր քաղաքական-մշակութային միավորների միջև եղած փոխազդեցությունների քաջասական հետևանքները ճգնաժամի խորացման գործում: Նման վերակառուցման անհրաժեշտությունը կասկածից վեր է, քանի որ թույլ կտա յուրաքանչյուր առանձին երևույթ ինչպես ողջ տարածաշրջանում, այնպես էլ կոնկրետ քաղաքական միավորի շրջանակներում դիտելու պատմական լայն ետնախորքի վրա:

**ՃԳՆԱԺԱՄԻ ՄԻՋՈՒԳԻՈՆԱԼ ՓՈԽԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ**

ՄԻԿԵՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ - ՓՈՔՐ ԱՄՍԻ

Հենվելով խեթական տեղության և միկենյան աշխարհի փոխհարաբերությունների պատմության վրա (Գլուխ 1.3), փորձենք լուսաբանել դրանց հետևանքները հետևյալ հարցադրումների միջոցով.

- 1) Ինչպիսի անդրադարձ կարող էր ունենալ միկենյան աշխարհի վրա խեթա-աիտիյական փոխհարաբերությունների սրումը խաթթուսիլիս III-Թուդիսալիյաս IV ժամանակահատվածում:
- 2) Ինչպիսին էր միկենյան բնակչության մասնակցությունը XIII դ. վերջի-XII դ. միգրացիաներում և, համապատասխանաբար, խեթական տեղության տրոհման պրոցեսում:

Հնարավոր է արդյոք անմիջական կապ տեսնել վերոհիշյալ երկու ժամանակահատվածների ընթացքում այս քաղաքական-մշակութային աշխարհները համակած ճգնաժամի և դրանցում կողմերի մասնակցության միջև: Եվ եթե այո, ապա ինչպես և ինչ չափով:

**Միկենյան աշխարհ - Մերձավոր Արևելք.**

Համապատասխան բաժնում բերված պատկանելի փաստական նյութը թույլ է տալիս առանձնացնելու միկենյան քաղաքակրթության անկման պրոցեսի հետևյալ դրսևորումները՝ բնակավայրերի ավերածություններ, ամրաշինական աշխատանքներ, խոշոր տարածքների ապարնակեցում, բնակչության լայն զանգվածների հեռացում մայրցամաքային Հունաստանի այլ շրջաններ, կղզիներ և Մերձավոր Արևելքի ծովափնյա շրջաններ, և այլն: Ցույց տրվեց նաև, որ արտաքին աշխարհից նախկինում ենթադրվող արշավանքի մասին տեսակետը ունի մի լուրջ խոցելի կետ՝ եվկորների հետքերի բացակայությունը ապարնակեցված շրջաններում: Եթե մի կողմ թողնենք միկենյան կենտրոնների անկման միգրացիոն տեսությունը, որի դեմ վկայում են այլ փաստեր և փաստարկներ նս, ապա ինչպես կարելի է պատկերացնել վերոհիշյալ երևույթները: Թվում է, որ խնդրի պարզաբանումը անմիջականորեն առնչվում է միկենյան հասարակության զարգացման առանձնահատկություններին: Դժվար է վիճարկել այն փաստը, որ ուշհելլադյան Հունաստանի հասարակության զարգացման գլխավոր բնորոշ գծերից մեկը նրա էքստենսիվ բնույթն էր: Մ.թ.ա. XVI-XIV դդ. պարզորոշ նկատվում է միկենյան աշխարհի քաղաքական և մշակութային ուժեղ «էքսպանսիա», որը չէր սահմանափակվում միայն առևտրական գործունեությամբ: Մայրցամաքից եկող մշակութային իմպուլսներն, անկասկած, շատ դեպքերում դրա կողմերի ֆիզիկական ներկայության արգասիքն էին էգեյան ծովի կղզիներում և արևմտափոքրասիական ծովափի շատ կետերում (օրինակ, Միլեթում, Կլազոմենեում և այլն): Ինչպես կարելի է բացատրել այս իրադրությունը:

Պատճառները, հավանաբար, պիտի փնտրել ինչպես 1) Հարավային Բալկանների բնակլիմայական առանձնահատկություններում, այնպես էլ 2) XIV-XIII դդ. հնագիտորեն նկատվող բնակչության մեծ աճի մեջ: Մասնագիտական գրականության մեջ նշված դարաշրջանում Հունաստանից բնակչության արտագաղթի հիմնական պատճառ է դիտվում ժողովրդագրական գործոնը<sup>1</sup>: Երկրի հողային ռեսուրսների սահմանափակությունը<sup>2</sup> և բնակչության մեծ աճը պիտի մշտապես գործող ազդակ դառնային բնակչության պարբերական արտահոսքի համար: Միկենյան բնակչության արտահոսքի ուղղությունները հնագիտորեն լավ վկայված են դեռ XV դ.<sup>3</sup>: Սկզբնական շրջանում այն ուղղված էր դեպի Կրետե, էգեյան ծովի կղզիներ, որից հետո գալիս է Փոքր Ասիայի հերթը: Խեթական «Մադդուվատտասի մեղանշանքը» տեքստում (XV դ. վերջին քառորդ, տես Գլուխ 1.3) հիշատակվող «այսիսիյացի» Ատտար(իս)իյասի հարձակումները արևմտյան Փոքր Ասիայի շրջանների և Ալասիայի վրա, անկասկած, պիտի դիտել այս պատմական պրոցեսի ենթատեքստում:

Միկենյան աշխարհի արտաքին հարաբերություններում, բնակչության արտահոսքից ոչ պակաս, հավանաբար, էլ ավելի կարևոր դեր ունեւր զուտ տնտեսական շահը: Արտահանվող միկենյան խեցեղենի վիթսարի քանակությունը ստիպում է ենթադրել, որ արտաքին շուկայից ակնկալվող եկամուտը կենսական կարևոր նշանակություն է ունեցել միկենյան կենտրոնների կյանքում: Պիլոսյան արյուսակներում հիշատակվող արևմտափոքրասիական

ստրուկ-արհեստավորների առկայությունը Մեսսենիայի արքայական տնտեսությունում, ինչպես նաև Տիրինոսի պարիսպների շինարարությունը լիկիացի հսկաներին վերագրող անտիկ ավանդության տեղեկությունը նշում են միլենցիների արևելյան հետաքրքրությունների ևս մեկ ուղղություն՝ որակյալ աշխատուժի կարիք տնտեսության որոշ բնագավառներում: Միլենյան աշխարհ - Արևելք փոխհարաբերություններում առաջինի մասնակցության վերը նշված ոչ լրիվ սպեկտրը հիմք է տալիս վերականգնելու XIII դ. կեսի-XII դ. իրադարձությունները:

Այսպիսով, շուրջ երկու հարյուր տարի տևած միլենյան կենտրոնների բնակչության արտահոսքի արդյունքում էգեյան ծովի արևելյան ավազանում պիտի որոշակիորեն փոփոխվեր ժողովրդագրական իրավիճակը: Ժամանակի ընթացքում միլենցիները պիտի վերածվեին քաղաքական լուրջ գործոնի արևմտյան Փոքր Ասիայում, մի բան, որ կասկածից վեր է խեթական տեքստերում հաղորդվող տեղեկությունների լույսի ներքո: Չավանաբար, հենց մայրցամաքից հովանավորվող միլենյան անկլավների ներկայությունն էր դառնալու խաթրիից կախյալ արևմտափոքրասիական երկրների կենտրոնախույս նկրտումների խթաններից առավել կարևորը: Առնվազն դաս I-ից մինչև Թուրխալիյաս IV ընկած ժամանակահատվածում ուղղակիորեն հիշատակվում են Ախիսիյավայի հետ այստեղի որոշ երկրների դաշնակցային հարաբերությունները:

Ահա այսպիսի իրավիճակում, XIII դ. 70-ական թվականներից սկսվում է միլենյան արտահանման կտրուկ նվազման պրոցեսը Մերծավոր Արևելքում, մի բան, որ ժամանակագրորեն համընկնում է Մուվատալլիս II-խաթրուսիլիս III ժամանակահատվածի ընթացքում արևմտյան Փոքր Ասիայում մի շարք խեթահպատակ երկրների անջատողական ելույթների և այստեղ Ախիսիյավայի քաղաքական ակտիվության բարձրակետի հետ: Խաթրուսիլիս III-ի և հատկապես Թուրխալիյաս IV-ի օրոք խեթերն արևմուտքում տևական պայքար էին մղում իրենց սասանված ազդեցության վերականգնման համար, որն ավարտվեց Ախիսիյավայի գլխավոր հենակետ Միլլավանդայի նվաճմամբ և Ախիսիյավայի նկատմամբ կիրառության մեջ դրված քաղաքական ու տնտեսական շրջափակումով (տես Գլուխ 1.2): Խեթա-ախիսիյավյան փոխհարաբերությունների նման զարգացումը, անկասկած, պիտի համապատասխան կերպով անդրադառնար միլենյան կենտրոնների կենսագործունեության դինամիկայի վրա: Շահավետ արտաքին շուկայի եկամուտների անկումը չէր կարող աննկատ անցնել: XIII դ. կեսերից, այսինքն, խաթրուսիլիս III-Թուրխալիյաս IV ժամանակահատվածում միլենյան կենտրոններում հնազիտորեն վկայված են վերահաս աղետի առաջին նշանները՝ մասնակի ավերածություններ, ամրաշինական աշխատանքներ: Թվում է, որ նշված երևույթները անմիջականորեն կապված էին Արևելքում դրամից քիչ առաջ տեղի ունեցած իրադարձությունների հետ: Էլ ավելի խոսում են այս առումով միլենյան աշխարհի ներսում նշմարվող «առաջին աղետից» անմիջապես հետո կամ նույնիսկ նույն շրջանում Լևանտում «ծովի ժողովուրդների» առաջին ալիքի, իսկ քիչ անց՝ նաև երկրորդ ալիքի հայտնվելու փաստերը:

Եզրափակելով այս հարցը, նշենք, որ միկենյան աշխարհում անկման շրջանում վկայված երևույթները դժվար չէ բխեցնել արտաքին անհաջողություններից: Այսպես, տարբեր կենտրոններում կատարված ավերածությունները ավելի հեշտ է բացատրել հավելյալ բնակչության առկայությամբ և լայն արտաքին առևտրից ստացվող եկամուտների նվազումով կամ դադարեցմամբ, քան հյուսիսի «բարբարոսական» ցեղերի արշավանքներով: Եկամտաբեր արտաքին կապերի ավարտը կարող էր ծնել ինչպես արքայական խոշոր տնտեսական համալիրների գործունեության մեջ շահույթների կտրուկ նվազում (օրինակ, ուշիելլադյան IIIB խեցեղենի պահանջարկի նվազում), այնպես էլ ակտիվացնել տարբեր կենտրոնների միջև եկած հակասությունները:

### **Միկենյան միգրացիայի խնդիրը.**

Մերոավորարևելյան ճգնաժամի բարձրակետին նվիրված բաժնում բերված գրավոր և հնագիտական նյութը (Գլուխ 2.2) միանշանակ վկայում է արևելամիջերկրածովյան ավազանի որջ առափնյա գոտում տեղ գտած բավական լայն ավերածությունների մասին: Տրոադայից մինչև Պաղեստին ներառյալ: Տույց տրվեց նաև, որ նշված ավերածությունների հեղինակները, համեմայնդեաք, դրանց մի զգալի մասի, ակնհայտորեն որպես ելակետ պիտի ունենային Էգեյան ծովի ավազանը, այդ թվում՝ մայրցամաքային Դունաստանը: Ընդ որում, միկենցիների մասնակցության լուրջ փաստարկ պիտի դիտել ավերածություններին անմիջականորեն հաջորդող շերտերում հայտնվող ուշիելլադյան IIIC խեցեղենը, որն այժմ, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի (IIIB), ոչ թե ներմուծման արդյունք էր, այլ պատրաստված էր տեղում: Այսպիսով, «ծովի ժողովուրդների» միգրացիաներում միկենյան բնակչության ակտիվ մասնակցությունը հնագիտորեն լավ է արտացոլված: Նույնը չի կարելի ասել եգիպտական աղբյուրներում «ծովի ժողովուրդներին» տրված ցեղանունների մեկնաբանության մասին: Բացառությամբ Մերենպտահի մոտ հիշատակվող *kwš*-ի, որը կարելի է դիտել որպես ախայացիների անվանում, մյուսներն առայժմ թույլ չեն տալիս առաջարկելու որևէ հիմնավոր աղբյուր միկենյան աշխարհի հետ: Ավելին, «ծովի ժողովուրդների» ցեղանունների մեծ մասը հետազոտողները հակված են փնտրելու արևմտյան և հարավային Փոքր Ասիայում:

Քանի որ ներկայումս «ծովի ժողովուրդների» ելակետի ավելի ճշգրիտ տեղադրությունը դժվար է բացահայտել, այստեղ փորձենք ընդհանրացնել առկա աղբյուրների նյութը հետևյալ միտումով: Ինչպիսին է փոքրասիական-լեանտյան տարածաշրջանում XII դ. տեղի ունեցած քաղաքական-մշակութային փոփոխությունների բնույթը: Որպես ելակետ պիտի ունենալ այն տարածքների նյութը, որտեղ տվյալ դարաշրջանում հայտնվում են միկենյան-էգեյան ծագման խեցեղենը և թաղումները:

Այսպես, Էգեյան ծովի ավազանի բնակչության տեղաշարժերը առավել հստակ են արտացոլված առաջին հերթին Կիպրոսում (Էնկոմի, Կիտիոն և այլն), այնուհետև՝ Կիլիկիայում (Տարսուս) և Պաղեստինում (տես Գլուխ 2.2):

Միկենյան արտագաղթի՝ գերազանցապես պելոպոննեսյան ելակետի

օգտին և վկայում նաև այս նույն շրջանում դեպի էգեյան ծովի կղզիներ և Ատտիկա ընթացած տեղաշարժի փաստը<sup>4</sup>: Ավերածությունները հատկապես զգալի են Կիպրոսում, որի մի շարք բնակավայրեր դրանից հետո վերականգնվում են և հաջորդող շերտերում միկենյան նյութի քանակը (խեցեղեն և այլ իրեր, շինարարական տեխնիկա) պատկառելի է: Մոտավորապես մեծան փոփոխություններ են վկայված նաև Տարսուսում և Պաղեստինում, իհարկե, ավելի նվազ չափերով: Դատելով XII դ. պաղեստինյան բնակավայրերի ավերածությունների բնույթից, այստեղ պիտի ենթադրել նոր բնակչության հաստատման երկու հիմնական եղանակ. 1) եկվորների կողմից բնակավայրերի զավթում և բնակեցում, 2) նոր բնակչության խաղաղ ներթափանցում: Պիտի նշել նաև, որ պաղեստինյան բնակավայրերի ավերածությունները համատարած չեն, այլ մասնակի: Շատ դեպքերում ավերածությանը համատարած չեն, այլ մասնակի: Շատ դեպքերում ավերածությանը հաջորդող շերտերը վկայում են եկվոր և տեղաբնիկ՝ քանաանյան բնակչության խաղաղ համագոյակցության օգտին:

Վերը նշված նյութը թույլ է տալիս քիչ քե շատ հիմնավոր կապ նշմարելու «ծովի ժողովուրդների» տեղաշարժերի հնագիտորեն վկայված երթուղիների և խեթական, ուգարիտյան ու եգիպտական աղբյուրների տեղեկությունների միջև:

Այսպես, Մուպիլուլիումսա II-ի ժամանակաշրջանից եկող երկու արձանագրություններում (KBo XII 38 և Südburg, տես Գլուխ 1.2) հաղորդվում է դեպի Լուսկա կազմակերպված արշավանքի մասին, որն ակնհայտորեն աղերսվում է Ուգարիտի վերջին արքա Ամմուրապիի՝ Ալասիա առաքած նամակի մի տեղեկության հետ, ըստ որի ուգարիտյան նախատորմը ուղարկվել էր Լուսկայի ամերը օգնելու խեթական արքային: Վերոհիշյալ KBo XII 38-ը հաղորդում է Ալասիա-Կիպրոսում (կամ կղզու մի մասում) հաստատված անանուն հակառակորդի դեմ մղած երեք ծովային և մեկ ցամաքային ճակատամարտերի մասին: Սրան կարելի է ավելացնել Ռամգես III-ի հայտնի արձանագրությունը, որտեղ խոսվում է Խաթթիի, Արցավայի, Կողե-Կիլիկիայի, Կարգամիսի և Ամուրուի կործանման մասին:

Վերոհիշյալ տեղեկությունները վկայում են XIII դ. վերջին տարիներին-XII դ. սկզբներին Միջերկրական ծովի արևելյան, հյուսիս-արևելյան ծովափնյա շրջաններն ընդգրկած շարունակական միգրացիաների մասին:

Ինչպիսին էր այս միգրացիաների ներգործությունը փոքրասիական տարածաշրջանի, մասնավորապես, խեթական տերության կենսագործունեության վրա: Վերջին շրջանի ուսումնասիրությունների լուսի ներքո այն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

Վերոհիշյալ տեղաշարժերը չեն ընդգրկել Փոքր Ասիայի կենտրոնական շրջանները, այլ ընթացել են Տերության հարավ-արևմտյան և հարավային ծայրամասային գոտիներով: Այս տեղաշարժերի հիմնական բացասական հետևանքը պիտի համարել Փոքր Ասիայի և եգիպտոսի միջև ցամաքային և ծովային հաղորդակցության ուղիների շրջափակումը, որը, հաշվի առնելով Խաթթիի առջև ծառայած տնտեսական բարդությունները (երաշտ, սով), պիտի ծանր անդրադառնային վերջինիս կենսագործունեության վրա: Բավա-

կան է ենթադրել, որ տնտեսական բարդություններից դրդված բնակության նոր վայրեր փնտրող միգրանտների սովոր գանգվածների հայտնվելը խեթերի համար ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող կիլիկյան-սիրիական շրջանում կարող էր հասցնել աղետալի վիճակի: Փաստորեն, «ծովի ժողովուրդների» ընթացքը Խաթթիի համար ոչ այնքան ռազմական, որքան տնտեսական սպառնալիք էր պարունակում: Ձգալի քանակությամբ նոր բնակչության մուտքը խիտ բնակեցված լևանտյան քաղաքներ, ընդ որում հաճախ ռազմական բախումներով ուղեկցվող, ապակայունացնող ներգործություն պիտի ունենար հաղորդակցության ուղիների և տեղական վարչական կառույցների գործունեության վրա, խափանելով բնակչության նորմալ կենսագործունեությունը: Արդյունքում Խաթթուսասի արքայի տիրապետությունը Տավրոսից հարավ ընկած կիլիկյան-սիրիական շրջանում կարող էր լրջորեն սասանվել, եթե ոչ ընդհանրապես վերանալ:

Իհարկե, իրադարձությունների վերոհիշյալ վերականգնումը կարելի է ընդունել միայն որպես աշխատանքային վարկած: Հատկապես եթե նկատի ունենանք, որ Խաթթիի հյուսիսսիրիական տիրույթների մի մասը, ի դեմս Կարգամիսի թագավորության, XII դ. սկզբների քաղաքական վայրկյանումների շրջանում գոյատևել է (տես Գլուխ 3.1):

Ամիրաժեշտ է նշել, որ միկենյան աշխարհի դերը մերծավորարևելյան ճգնաժամի խորացման գործում, բացի փոքրասիական պատմամշակութային համալիրից, նման, գուցե և ավելի մեծ ազդեցություն է թողել Լևանտում: Դրա խոսուն վկայությունները լիովի արտացոլված են սիրիա-պաղեստինյան ծովափնյա շրջանների հնավայրերում (տես Գլուխ 2.2), այդ իսկ պատճառով հատուկ քննարկման կարիք չունեն:

#### ՓՈՐՔ ԱՍԻԱ - ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԱԼԿԱՆՆԵՐ

Ի տարբերություն Փոքր Ասիայի և միկենյան աշխարհի փոխհարաբերությունների, որի բնույթը և եվոլյուցիան համեմատաբար լավ է ուսումնասիրված շնորհիվ գրավոր և հնագիտական նյութերի, փոքրասիական-հյուսիսբալկանյան առնչությունները ուշորոնգեդարի ընթացքում հիմնականում հանգում են դրա եզրափակիչ փուլում ընթացած էթնիկական տեղաշարժերին:

Այս խնդրում հատկապես կարևոր է Հյուսիսային Բալկաններին անմիջականորեն հարող հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայի դերը, որը յուրատեսակ բնական կամուրջ է եղել Ասիայի և Եվրոպայի միջև:

Ներկայումս, եթե ընդունենք, որ խեթական աղբյուրների Ախիյավան Հյուսիսային Բալկաններում չի գտնվել (տես Գլուխ 1.3), ապա այս տարածաշրջանի հասարակությունների քաղաքական կառուցվածքի վերաբերյալ գիտության տրամադրության տակ որևէ փաստ չկա: Ինչ վերաբերում է այստեղի էթնոլեզվական իրավիճակին, ապա, հենվելով անտիկ շրջանի անվանաբանական զգալի նյութի վրա<sup>5</sup>, կարելի է ենթադրել Հյուսիսային Բալկանների, առաջին հերթին՝ Թրակիայի և Տրոադայի բնակչության էթնիկական

միատարրություն: Տրոսդայում թրակյան խոշոր էքնիկական զանգվածի առկայությունը ուշերոնգեդարում հավաստվում է հոմերոսյան «Իլիականի» նյութերով: Այստեղ զգալի է նաև լուվիական տարրի դերը<sup>6</sup>:

XIV-XIII դդ. ընթացքում Տրոսդայի գլխավոր քաղաքական միավորը՝ Վիլուսան ունեցել է հստակ խեթամետ դիրքորոշում, քացառությամբ Թուդ-խալիյաս IV-ի կառավարման ժամանակ տեղի ունեցած հեղաշրջման հետ կապված իրադարձությունների (Գլուխ 1.2): Այս ժամանակահատվածում Վիլուսան վերահսկում էր Փոքր Ասիայից Եվրոպա տանող ցամաքային ուղին, որով էլ, ըստ մասնագետների<sup>7</sup>, պայմանավորված էր նրա կարևոր նշանակությունը խեթական տերության համար: Հավանաբար, XIII դ. առաջին կեսին Փոքր Ասիայի արևմուտքում խաթթիի գլխավոր խնդիրներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, Տրոսդայի նկատմամբ ունեցած վերահսկողության ապահովումն էր, որը հիմնովին սասանվել էր խաթթուսիլիս III-ի օրոք՝ Պիլամարդուսի գործունեության հետևանքով:

Փոքր Ասիա - Հյուսիսային Բալկաններ հարաբերությունների դերը ճգնաժամում սովորաբար դիտվում է էքնիկական տեղաշարժերի հետ փոխկապակցության մեջ: Բալկաններից Փոքր Ասիա XIII դ. վերջերին Տրոսդայով ընթացած միգրացիան, ինչպես ցույց տրվեց համապատասխան բաժնում (Գլուխ 2.2), ակնհայտորեն սահմանափակ բնույթ է ունեցել: Այն առավելապես ընդգրկել է մինչև Հալիսի արևմտյան, հարավ-արևմտյան հոսանքի շրջանը: Ընդ որում միգրացիայի այս առաջին ալիքը, որի գոյության նյութեր են վկայությունը Գորդիոնի վաղ երկաթի առաջին փուլի (Յասսըիոյուք 7B) պարզունակ խեցեղենն է, պարտադիր չէ անպայման կապել Հյուսիսային Բալկաններից բնակչության ներհոսքի հետ: Գորդիոնի այս փուլի բնակիչները կարող էին տեղաշարժվել հենց Տրոսդայից:

Ասվածը բույլ է տալիս ենթադրելու, որ հյուսիսբալկանյան արեալի գործոնը ճգնաժամում ակնհայտորեն չափազանցեցվում է: Բացառությամբ Տրոսյա VIII փուլի, այլևս ոչ մի հնավայր ավերիչ միգրացիայի մասին ենթադրության հիմք չի տալիս:

#### ՓՈՔՐ ԱՍԻԱ - ՍԻՐԻԱ

Քննարկելով այս երկու տարածաշրջանների փոխազդեցությունների խնդիրը, անհրաժեշտ է հիշել, որ դրանցից երկրորդը, ընդհուպ մինչև խաթթիի տրոհումը, առաջինի առավել ապահով տիրույթներից է եղել: Խեթա-եգիպտական դաշնագրից հետո այստեղ ստեղծվել էին բոլոր պայմանները խաթթիի սիրիական հատվածում քաղաքական կայունության ապահովման համար: Դրան մեծապես նպաստում էին Կարգամիսի ավանդական լոյալությունը և Ամուրրուի իշխող դիանաստիայի հետ խնամիական կապերի հաստատումը խաթթուսիլիս III-ի օրոք: Հատկանշական է նաև այն, որ «ծովի ժողովուրդների» տեղաշարժերի շրջանում սիրիական քաղաքական միավորները հավատարիմ էին իրենց կախյալ կարգավիճակից բխող պարտավորություններին (օրինակ, Ուգարիտի ցամաքային ուժերի և նավատորմի մաս-

նակցությունը Մուսպիլուլիումաս II-ի ռազմական գործողություններին Լուկայում):

Առկա նյութը քույլ է տալիս առանձնացնելու փոքրասիական-սիրիական տարածաշրջանների միջև ճգնաժամի շրջանում նկատվող հետևյալ փոխառնչությունները.

- 1) «Օռլի ժողովուրդների» տեղաշարժերի հետևանքով Ուզարիտի և Անուրրուի կորուստը Խաթթիի կենտրոնական շրջանները պիտի զրկեր Եգիպտոսի հետ ունեցած հաղորդակցության ուղիներից:
- 2) ճգնաժամի ծավալման շրջանում փոքրասիական բնակչության զանգվածային տեղաշարժի մի ալիքը պիտի հասներ Յուսիսային Սիրիա, որի հետևանքով արդեն ետխեթական դարաշրջանում այստեղ վկայված է խեթա-լուվիական տարրի զգալի քանակություն (տես Գլուխ 3.1):

#### ՓՈՔՐ ԱՄՐԱ - ԳԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇՈՒՄՅ

Գամալատասիան բաժիններում քննարկված զրավոր և հնագիտական նյութերը հնարավորություն են ընձեռում այս տարածաշրջանների միջև ճգնաժամի բարձրակետի ընթացքում եղած փոխազդեցությունների մոտավոր ուրվագծման համար: Քանի որ սույն նյութի անբավարար քանակը և բնույթը չի կարող հիմք ծառայել քննարկվող խնդրի խոր ուսումնասիրման համար, ապա առայժմ կարելի է առաջարկել միայն հետևյալ նախնական ենթադրությունները.

- 1) Խաթթիի տրոհման շրջանում Փոքր Ասիայի հյուսիս-արևելքից (կասկա-հայաստական տարածքից) որոշ քանակությամբ բնակչության տեղաշարժ է ընթացել դեպի Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազաններ: Դժվար է ասել, արդյոք ասորեստանյան աղբյուրում նշված 4,000-ը այս տեղաշարժի մասնակիցների իրական քիվն է եղել, թե միայն Ալզիում և դրա հարևանությամբ հաստատվածների քանակը:

- 2) Վերոհիշյալ միգրանտների ներկայությունը Լեոնաշխարհի արևմուտքում, ամենայն հավանականությամբ, չէր կարող լուրջ ներգործություն ունենալ այս տարածաշրջանի բնակչության կենսագործունեության վրա: Նախ այն պատճառով, որ նույն տարածքում և դրա հարևանությամբ զրավոր աղբյուրներով և հնագիտորեն վկայված է անհամեմատ ավելի լայն՝ մուշկական միգրացիան, որի ետնախորքի վրա կասկերի և ուրումունների ներկայությանը նպատակահարմար չէ մեծ նշանակություն տալ:

Այս խնդրում, սակայն, դեռևս վաղ է հեռուն գնացող եզրակացություններ անել հետևյալ պատճառով: Չնայած ասորեստանյան աղբյուրը մուշկերին չի անվանում «Խաթթի երկրի ժողովուրդ», ինչպես այդ արվում է կասկերի և ուրումունների առնչությամբ, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ առաջինները նույնպես կարող էին լինել հայա-



սական արեալի բնակչութիւն՝ մշակութային առումով կապւած միմյանց հետ: Այս դեպքում էլյազդ-Իսուվայի հնաւայրերից հայտնաբերուած մեծաքանակ երկաթեղարայան խեցեղենը և մյուս նյութերը կարող էին վկայել հօգուտ այն ենթադրութեան, որ ժողովուրդները տեղաշարժը հյուսիս-արևելյան Փոքր Ասիայից անհամեմատ ավելի մեծ է եղել, քան կարելի էր դիտել ասորեստանյան աղբյուրի տվյալների հիման վրա:

- 3) Մուշկերի տեղաշարժերը մերձեփրատյան գոտում, իրենց հերթին, քվում է, էական ազդեցություն չեն ունեցել Եփրատի աջափնյակի վրա: Արսլանթեփե-Մալաթիայի վաղերկաթեղարայան շերտում խիստ ահմանափակ քանակությամբ «մուշկական» խեցեղենի առկայությունը, քերես, լավազույն դեպքում կարող է վկայել դրա ստեղծողների փոքրաքիվ խմբերի ներկայության մասին ետխեթական Մելիդի տարածքում: Մուշկերի արտահոսքը Եփրատից արևմուտք պիտի սկիզբ առներ շատ ավելի ուշ՝ Մելիդի լուվիական դինաստիայի անկման շրջանում կամ դրա նախօրեին (VIII դ.):

Եկատի ունենալով վերոհիշյալը, ինչպես նաև XIII դ. երկրորդ կեսին Գայկական լեռնաշխարհի արևմուտքի քաղաքական միավորների փաստական անկախացումը խեթական գերիշխանությունից, նաև խաթթի տրոհումից անմիջապէս հետո Մելիդում խեթական տերության քաղաքական ավանդույթների շարունակումը, պիտի ենթադրել, որ ուսումնասիրվող տարածաշրջանների փոխազդեցությունը, հավանաբար, մեծ չի եղել:

## **ԳՆԱԺԱՄԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ**

Աշխատության համապատասխան բաժիններում ցույց տրվեց, որ ճգնաժամային որոշ երևույթներ առկա էին դեռ XIII դ. կեսերին, եթե ոչ ավելի վաղ:

Պետականության կենսազործունեության մեխանիզմում քայքայիչ գործոնների ձևավորումը այն բնագավառն է, որի բացահայտումը ուշքրոնզեղարայան Մերձավոր Արևելքի և էգեիդայի պարագայում դժվար լուծելի խնդիր է: Երբ և ինչպէս հարցերին հնարավոր կլինի որոշակի պատասխան տալ միայն զգալի քանակությամբ բազմարևույթ սկզբնաղբյուրների առկայության դեպքում: Այդ իսկ պատճառով, նշված քայքայիչ երևույթների և միտումների բացահայտումը հնարավոր է միայն դրանց ծավալման մի որոշակի փուլից սկսած, երբ տեսանելի են դառնում հետևանքները: Ստորև ներկայացնենք այն նյութերը, որոնք կարող են ինչ-որ չափով լուսաբանել ճգնաժամի սկզբնավորման խնդիրը:

### **ՓՈՐՐ ԱՄԻՎ**

Փոքրասիական քաղաքական-մշակութային աշխարհը միատարր չի եղել ոչ XIII դ., ոչ էլ դրանից առաջ և հետո: Այն բաղկացած էր կենտրոնական

Փոքր Ասիայում գտնվող խեթական տերության միջուկից (Խաթթուսաս մայրաքաղաքով) և մի շարք քաղաքական միավորներից բերակալու տարբեր շրջաններում, չհաշված Գյուսիսային Սիրիան: Կերջիններս գտնվում էին պետականության զարգացման ամենատարբեր աստիճանների վրա: Եթե Կարգամիսը և Միտաննի-Խանիզալբատը ունեին կենտրոնացված պետականության լավ ավանդույթներ, ապա հյուսիսի կասկական գոտին կամ արևմուտքի՝ Լուկկա կոչվող շրջանը ակնհայտորեն դեռևս ապրում էին պետականության ձևավորման փուլ:

Նմանապես, բազմազան էր Փոքր Ասիայի տարածքի երևույթաբանական պատկերը: Այս է պատճառը, որ, քննարկելով փոքրասիական ճգնաժամը, անհրաժեշտ է խնդրին մոտենալ տարբերակված եղանակով: Ուշերոնգեղարյան Փոքր Ասիայի տարբեր շրջանների վրա ճգնաժամի ազդեցությունը տարբեր պիտի լիներ:

### *ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ*

XIII դ. վկայված ճգնաժամային երևույթներից հստակ առանձնանում է ներքաղաքական անկայունությունը, որի անմիջական հետևանքը կենտրոնական իշխանության հեղինակության նվազման միտումն էր և Տերության փաստական տրոհումը դեռևս XIII դ. կեսերին: Այս գործոնի սկզբնավորման ժամանակը և ընթացքը համեմատաբար հեշտ է նշմարվում շնորհիվ Մուվատալլիս II-ից մինչև Մուպպիլուլիումաս II ընկած ժամանակաշրջանին վերաբերող խեթական տեքստերի: Չխորանալով մանրամասների մեջ (տես Գլուխ 1.2), ստորև ներկայացնենք ներքաղաքական ճգնաժամի հասունացման մասին աներկբայորեն վկայող տեղեկությունները ժամանակագրական հաջորդականությամբ:

- *Մուվատալլիս II.* Մայրաքաղաքի փոխադրում Խաթթուսասից Թարխունտասաս: Խաթթիի նախկին բնօրրանը Խաթթուսասով հանդերձ հանձնվում է Մուվատալլիսի կրտսեր եղբայր Խաթթուսիլիսին:
- *Ուրխի-Թեշուբ.* Մայրաքաղաքը կրկին Խաթթուսասն է, որը պատճառ է դառնում Խաթթուսիլիսի և Ուրխի-Թեշուբի միջև գահակալական պայքարի:
- *Խաթթուսիլիս III.* Թարխունտասասայի քույր-թագավորության ստեղծում. Ուրխի-Թեշուբի կրտսեր եղբայր Կուրունտան Թարխունտասայի ժառանգական արքա:
- *Թուդխալիյաս IV.* Թարխունտասասայի կարգավիճակի հաստատագրում, քիչ անց՝ քաղաքացիական պատերազմ Կուրունտայի և Թուդխալիյասի միջև: Կուրունտայի փոխարեն Թարխունտասասայի գահին նշանակվում է նրա եղբայր Ուլմի-Թեշուբը:
- *Մուպպիլուլիումաս II.* Ներքաղաքական անհանգիստ իրավիճակ Խաթթիում, Թարխունտասասայի նոր ապստամբություն և դրա ճնշում:

Ինչպես կարելի է մեկնաբանել վերոհիշյալ իրադարձությունների շղ-

քան:

Առաջին եզրակացությունը, որին կարելի է հանգել, հաքթիի բնօրրանի երկատուում էր Մուրսիլիս II-ի դինաստիայի երկու ճյուղավորումների՝ Մուվատալլիսի և հաքթուսիլիսի միջև: Դժվար է ասել, թե ինչն էր դրդել Մուվատալլիսին զնալու այդ քայլին, սակայն դրա հետևանքները հետագայում վերածվեցին Տերոսյան քաղաքական անկայունությունը պայմանավորող զլխավոր գործոնի: Արդեն Ուրլի-Ձեշուր-հաքթուսիլիս պայքարի ընթացքում խեթերից կախյալ երկրները հարեցին մասամբ առաջինին, մասամբ՝ երկրորդին: Գահակալական պայքարը փաստորեն վերածվեց քաղաքացիական մեծ պատերազմի, որի անմիջական հետևանքը երրորդ ուժի ակտիվացումն էր հաքթիի ժայռամասային տիրույթներում: Արևմուտքում աննախնթաց լայն ծավալում են ստանում Ախիյալայի հովանավորությամբ գործող հակախեթական ուժերը, հարավ-արևելքում ակտիվանում է Ասորեստանը (Սալմանասար I-ի արշավանքները Ուրուտտրի և Միտաննի-հանիզալքատ):

Ինչպես նշվեց աշխատության առաջին գլխում, հաքթուսիլիսին մեծ ջանքերի գնով հաջողվեց հասնել ներքաղաքական կայունության վերականգնմանը (խեթա-եգիպտական: դաշնագիրը, արևմուտքում Պիլամարադուսի հետ կապված ձեռնարկումները): Կուրունտային թարխունտասայի ժառանգական արքա հռչակելը ակնհայտորեն նույն նպատակն էր հետապնդում՝ զիջումների զնալ Մուվատալլիսի տոհմի քաղաքական կողմնակիցներին: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ հաքթուսաս-թարխունտասա հակամարտությունը ամենևին ավարտված չէր: 1230-ական թվականների առաջին կեսին, Կուրունտայի ապստամբության սկզբում Թուդիալիյասը նույնիսկ ժամանակավորապես կորցրեց մայրաքաղաքը: Տերոսյան ներսում տեղի ունեցող իրադարձությունները չէին կարող չարտացոլվել հաքթիի քաղաքական իրավիճակի վրա: 1234/3 թ. Ախիյալայի ճակատամարտը, Սեխայի արքա Թարխունարադուի ապստամբությունը և Վիլուսայի խեթամետ արքա Վալմուի գահազրկումը զգալի հարված էին հաքթուսասի արքայի հեղինակությանը: Ինչևէ, Թուդիալիյասին հաջողվեց հիմնականում վերականգնել Տերոսյան վարչաքաղաքական միասնությունը:

Հաքթիի վերջին երկու արքաների՝ Առնուվանդաս III-ի և Մուպպիլուլիունաս II-ի կառավարման վերաբերյալ եղած սուղ տեղեկությունները վկայում են վերը նշված հաքթուսաս-թարխունտասա հակամարտության շարունակման օգտին:

Ամփոփելով վերոհիշյալը, կարելի է հավանականության մեծ տոկոսով ասել, որ Թարխունտասայի թագավորության ստեղծումը հաքթիի հետագա ողջ պատմության ընթացքում վերածվեց մշտապես առկա ներքաղաքական անկայունությունը խթանող գործոնի:

Բնականաբար, զգալիորեն նաև դրանով էր պայմանավորված հաքթիից կախյալ ժայռամասային տիրույթների լոյալության նվազումը: Դրա

վառ օրինակներն են՝ 1) Նիխրիյայի ճակատամարտի շրջանում Իսուվայի արքա էլսլի-չարրումայի դիրքորոշումը, 2) Ուզարիտի արքա Ամնուրապիի նամակագրությունը Թուկուլթի-Նինուրտա I-ի հետ, 3) Սեխայում հակախեթական ուժերի իշխանության գալը և այլն: Ստեղծված իրավիճակը լիովին համապատասխանում է «թույլ կենտրոն - ուժեղ ծայրագավառ» բնորոշմանը:

#### *ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆ.*

Նկատի ունենալով նախորդ ենթաբաժնի եզրակացությունները, դժվար չէ ենթադրել, որ արտաքին գործոնը որոշ դեպքերում տեսականորեն իսկապես կարող էր զգալի դեր խաղալ: Սակայն, այնուամենայնիվ, դրա ներգործությունը ամօր սկզբնաղբյուրների լույսի տակ առանձնապես մեծ չէր կարող լինել: Ինչպես ցույց տրվեց առաջին գլխում, համենայնդեպս, Խաթթուսիլիա III-ի և հատկապես Թուղխալիյաս IV-ի օրոք խեթական տերության տարբեր սահմանային գոտիներում արտաքին ուժերի կամ նրանց կողմից հովանավորվող հակառակորդների դեմ վարած պատերազմները չավարտվեցին տարածքային լուրջ կորուստներով: Այս առումով դժվար է նույնը ենթադրել Սուպպիլուլիումաս II-ի շրջանի համար տեքստային նյութի սակավության պատճառով:

Եվ ընդհանրապես, չափազանց դժվար է որոշել, թե հատկապես որ արտաքին հակառակորդի գործունեությունը կարող էր լրջորեն սասանել խեթական տերությունը: Բացի, իհարկե, XIII դ. վերջերից սկիզբ առած էթնիկական տեղաշարժերը, որոնց մասին ավելի ուշ:

#### *ՄԻԿԵՆՅԱՆ ԱՇԽՄԻՂ*

Չամապատասխան բաժնում (Գլուխ 2.4) քննարկված նյութերը թույլ են տալիս ենթադրելու միկենյան կենտրոններում սկիզբ առած քայքայիչ գործոնների առկայություն XIII դ. կեսերից: Այդ մասին կարելի է վստահորեն եզրակացնել մի շարք երևույթների հիման վրա՝ 1) միկենյան արտահանման կտրուկ նվազում կամ անկում դեպի Մերծավոր Արևելքի երկրներ, 2) միկենյան արհեստագործությանը բնորոշ որոշ արտադրանքների վերացում, 3) ամրաշինական աշխատանքներ Արգուլիդայում և Իսթմոսում, 4) մասնակի ավերածություններ: Նշվեց նաև այն մասին, որ, ինչպես ուշեիլադյան IIIB փուլում, այնպես էլ հետո՝ միկենյան կենտրոնների անկման եզրափակիչ փուլում, արտաքին գործոնի դերը պիտի փոքր լիներ:

Այսպիսով, միկենյան աշխարհում սկսված ճգնաժամային երևույթները նշմարվում են XIII դ. կեսերից, այսինքն, դրանց սկզբնավորումը կարելի է տրամաբանորեն տեղադրել ուշեիլադյան IIIB-ի վերջին շրջանում, մոտավորապես XIII դ. երկրորդ քառորդում: Անհամեմատ ավելի բարդ է ճգնաժամի սկզբնավորման պատճառների խնդիրը: Այս առնչությամբ մասնագիտական գրականության մեջ առաջարկվել են մի շարք վարկածներ՝ 1) հարձակում-

ներ արտաքին աշխարհի, 2) պալատական գերկենտրոնացված համակարգի քայքայում, 3) երկաթառակտչական պատերազմներ, 4) բնակլիմայական պայմանների վատթարացում:

Եկատի ունենալով միկենյան կենտրոնների անկման տևական պրոցեսին ուղեկցող մի շարք երևույթների առկայությունը (ապարնակեցում, որոշ բնակավայրերի գերբնակեցում, լայն արտագաղթ, հիպոթետիկ նորանուտ բնակչության ներկայության հետքերի բացակայություն և այլն), առայժմ ավելի տրամաբանական պիտի համարել տնտեսական լուրջ խնդիրներով պայմանավորված ներքաղաքական անկայունության գործոնը. այն իսկապես կարող էր վճռական դեր կատարել միկենյան կենտրոնների վայրէջքաց զարգացման գործում: Ընդ որում, միկենյան կենտրոնների տնտեսական ճգնաժամի խորացման գործում զգալի ազդեցություն պիտի ունենար Թուդ-խալիյաս IV-ի կողմից Ախխյավայի քաղաքական և տնտեսական շրջափակումը, որով ծանր հարված պիտի հասցվեր արհեստագործական արտադրանքի իրացման և հումքի ձեռքբերման մեխանիզմին (տես վերը, սույն գլխի առաջին բաժինը):

#### *ԲՆԱՎՈՒԹՅԱՆ ԸՄՐԺՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ*

Այս երևույթը ճգնաժամի առավել ակնառու արտահայտություններից է, որը պիտի դիտել իր երկմիասնության մեջ՝ 1) ճգնաժամի հետևանք և 2) ճգնաժամի հարուցիչ:

Աշխատության մեջ քննարկված էթնիկական տարբեր տեղաշարժերի համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու դրանց ծավալման ընթացքում վկայված հետևյալ երևույթները.

1) Միգրացիաներն ընթացել են ոչ թե դեպի ճգնաժամային գոտիների միջուկ, այլ ընդհակառակը՝ միջուկից ծայրագավառ: Այսինքն, միգրանտները ճգնաժամից տուժած երկրների բնակիչներն են, այլ ոչ արտաքին աշխարհից եկած ժողովուրդները:

Այս դիտարկման ուսանելի օրինակը Պելոպոննեսի միկենյան կենտրոնների բնակչության արտագաղթն է դեպի թերակղզու հյուսիս՝ Ախայա, Ատտիկա, կղզիներ, այնուհետև՝ Մերձավոր Արևելք: Նման ուղղվածություն պիտի ունենար կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության արտագաղթը հաթթուսասից և մյուս քաղաքներից, ինչպես նաև, թերևս, Իսուվայի բնակչության շարժումը:

2) Առաջին կետից բխող և հնագիտական լավ հիմնավորում ունեցող հետևյալ դիտարկումը՝ ելակետային տարածքի լրիվ կամ մասնակի ապարնակեցում, որի հետևանքը պիտի լիներ այնտեղ գոյություն ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային համակարգի համընդհանուր դեգրադացիան:

Այս երևույթը, բացի առաջին կետում նշված տարածքներից, կարելի է նշմարել նաև Գորդիոնում և Ուզարիտում: Վերջինիս ապարնակեցումը տևել է մի քանի դար: Այս առումով հատկապես բնութագրա-

կան է կենտրոնական Փոքր Ասիայի օրինակը, որտեղ XII դ. սկզբին ընթացած ապարնակեցումից հետո մինչև VIII-VII դդ. քիչ քե շատ աչքի ընկնող բնակավայրեր վկայված չեն:

- 3) Մեկնակետի և դրա ճանապարհին գտնվող շրջանների գերբնակեցում դրանից օբյեկտիվորեն բխող հետևանքներով.  
ա) տեղական բնակչության դիմադրություն, որն ավարտվել է ավերածություններով (Տրոյա VIIb1, Տարսուս, Կիտինո, Սալամիս, Ուզարիտ՝ և այլն):  
բ) խաղաղ ներթափանցում, երկու մշակութների կրողների համագոյակցություն (Պաղեստինի բնակավայրերի մի մասը, մուշկերը, կասկ-ապիշլունները և ուրումունները՝ Ալզիում և Պուրուլումզիում, առանձնացիները՝ Դյուսիսային Միջագետքում):

Վերոհիշյալ դիտարկումներին, անկասկած, պիտի ավելացնել նաև մեծ թվով փոքրածավալ, տեղական նշանակություն ունեցող տեղաշարժերը, որոնցից այսօր կարելի է նշմարել ընդամենը մի քանիսը: Գարկ է նշել, որ ստորև ներկայացվող տեղաշարժերի ուղղվածությունը անհամեմատ ավելի մեծ պատմագիտական արժեք ունի, քան դրանց հետևանքները:

Այսպես, XIII դ. երկրորդ կեսի ընթացքում Դոդոդոսում և Կիպրոսում հնագիտորեն վկայված է սույն կղզիների երկրագործական շրջանների բնակչության կենտրոնացում մի շարք ծովափնյա քաղաքներում՝ Յալիսոսում (Դոդոդոս), Կիտինոսում և Սալամիսում (Կիպրոս): Կենտրոնացմանը մի որոշ ժամանակ անց հաջորդում է այդ բնակավայրերի անկումը (բացի Յալիսոսից):

Ուշագրավ է, որ նման երևույթ է վկայված նաև Պելոպոննեսի որոշ կենտրոններում ուշիելլադյան IIIB-ից IIIC անցման փուլում (Միկենք, Տիրինթոս և այլն), ինչպես նաև նույն ժամանակաշրջանի Խաթրոսասում: Կարելի է արդյոք այս բոլոր շրջաններում բնակչության կենտրոնացումը բացատրել արտաքին վտանգով, որը պիտի ստիպեր գյուղական բնակչությանը բացատրել արտաքին վտանգով, այդ ենթադրությունը կարող է հիմնավորվել (օրինակ, Տրոյա VIIb1-ի անկման նախօրեին), սակայն, թվում է, չի կարելի անտեսել մեկ այլ հնարավոր բացատրություն:

Յալիսոսի, Կիտինոսի և Սալամիսի եկամուտ բնակչության աճը տեղի է ունեցել այս կղզիների երկրագործական շրջանների բնակավայրերի հաշվին: Եթե մայրցամաքային տարածքների (Պելոպոննես և Փոքր Ասիա) նշված բնակչության աճը կարելի է տեսականորեն հիմնավորել արտաքին վտանգի առկայությամբ, ապա նույնը հազիվ քե հնարավոր լինի Դոդոդոսի և Կիպրոսի խնդրում: Դոդոսի հետ սերտորեն կապված մարդկանց կողմից իրենց գոյության հիմնական աղբյուրի լքումը և քաղաք տեղափոխվելը շատ ավելի լուրջ պատճառ պիտի ունենար:

Այս երևույթի պարզաբանման համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում միկենյան կենտրոնների անկման պրոցեսում հստակ տարբերակվող հետևյալ հաջորդական փուլերի առանձնացումը.

- 1) Մասնակի ավերածություններ (IIIB-ի ընթացքում, որի շրջանում կամ

անմիջապես հետո կատարվում են ամրաշինական աշխատանքներ: 2) խոշոր ավերածություններ և ապարնակեցում (III B-III C անցման փուլ), որի ընթացքում մի շարք բնակավայրեր տարածապես աճում են, իսկ որոշ ժամանակ անց սկսվում է վերջիններիս բնակչության արտահոսքը: Ընդ որում, նշված բնակավայրերում ներհոսքն ու արտահոսքը տեղի են ունեցել մի քանի տասնամյակի ընթացքում:

Ինչպես և միկենյան կենտրոններում, կենտրոնական Փոքր Ասիայում նկատվում է բնակչության կենտրոնացում, որին հետևում է զանգվածային արտահոսքը: Չնայած այստեղ մասնագետները սովորաբար ենթադրում են հյուսիս-արևելքից կասկական ցեղերի հարձակում, սակայն տվյալ պարագայում էլ եկվորների հետքերը հավաստող որևէ նյութ չկա: Եթե կասկերը կարող էին վերադառնալ իրենց ելակետ, ապա Պեյուպոնենսը տասնամյակների ընթացքում ավերողների մասին դժվար է նույնը պնդել այդպիսիների բացակայության պատճառով:

Այս խնդրի լուծումը ներկայումս լրացուցիչ փաստական նյութի կարիք ունի, այդ իսկ պատճառով սահմանափակվենք միայն մի կարևոր դիտարկումով, որն անմիջականորեն առնչվում է մեր ուսումնասիրության առարկային:

Որոշ հիմքեր կան ենթադրելու, որ XII դ. սկզբներին առնվազն երկու փոքրասիական քաղաքներ ոչ թե ավերվել են, այլ լքվել՝ Ալաջահյոյուքը (խեթական Արիննա)<sup>8</sup> և Գորդիոնը<sup>9</sup>:

Միգրացիաների բնույթի ընկալման համար կարևոր է նշել մի հարցադրում, այն է, ինչպես պատկերացնել դրանք: Արդյոք բնակչության քիչ թե շատ խոշոր զանգվածների շարժումը պիտի դիտել որպես միաժամանակյա ավերիչ ընթացք մի տարածաշրջանից մյուսը: Այս հարցին, թվում է, կարելի է բացասական պատասխան տալ: Մերձավոր Արևելքի և Էգեիդայի տարբեր շրջաններում վկայված բնակչության տեղաշարժերից և ոչ մեկի համար հնարավոր չէ ենթադրել միաժամանակյա շարժում: «Շուվի ժողովուրդների» տեղաշարժերը ընդգրկել են շուրջ 30-40 տարի (ըստ եգիպտական աղբյուրների), եթե ոչ ավելի, միկենյան աշխարհում ընթացած տեղաշարժերը վկայված են XII դ. ողջ առաջին կեսի ընթացքում, մուշկերը և մյուս ժողովուրդները՝ շուրջ կես դար (ըստ ասորեստանյան աղբյուրների), արամեացիները՝ անհամեմատ ավելի երկար ժամանակ: Ասվածը թույլ է տալիս ենթադրելու, որ ճգնաժամային փուլի միգրացիաները, թերևս, կարելի է որակել որպես տասնամյակներ տևած աստիճանական ինֆիլտրացիա, այլ ոչ լայնածավալ զանգվածային հարձակում, որի հետևանքով պիտի ավերվեին և պատմության ասպարեզից հեռանային Մերձավոր Արևելքի և Էգեիդայի ուշերոնգեղարյան պետությունները:

#### *ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄՆԿՈՒՄ*

Այս երևույթը ճգնաժամի առավել բնութագրական հետևանքներից է, որ լիուլի վկայված է ճգնաժամային բոլոր գոտիներում:

Առկա աղբյուրները միանշանակ վկայում են հոգուտ այն փաստի, որ ուշքրոնզեղարյան քաղաքային կենտրոնների մեծ մասը՝ Պելուպոննեսից մինչև Հայկական լեռնաշխարհի և սիրիա-պաղեստինյան շրջան, ցույց են տալիս քաղաքային մշակույթի անկում դրանից բխող հետևանքներով: Այդ պրոցեսն ընթանում է երկու եղանակով:

- 1) Բնակավայրերի մասնակի լքում. Նախկին խոշոր քաղաքային կենտրոնների տեղում վաղ երկաթեդարյան շերտը հիմնականում ներկայացված է նոսր բնակչություն ունեցող գյուղատիպ բնակավայրերով: Օրինակ, Միկենքը, Տիրիներսը՝ Պելուպոննեսում ուշիել-լադյան III C-ի վերջում, Տրոյա VII B 2-ը, Յասսըիյուք-Գորդիոնի 7 B շերտը, Խաթթուսասի ետիսեթական շերտերը՝ Բյուլոքլայա և Բյուլոքլալե, Նորչուներսիեն և Կորուջուբեփեն՝ Իսուվայում և այլն:
- 2) Բնակավայրերի լիակատար լքում. Բնակավայրերի վերաբնակեցումը կարող էր տեղի ունենալ մեծ ընդհատումից հետո կամ ընդհանրապես չլինել: Օրինակ, Պելուպոննեսի տասնյակ բնակավայրերը, Ալաջաիյուք-Արիննան՝ կենտրոնական Փոքր Ասիայում, Ուզարիտը՝ Սիրիայում և այլն:

Վերջ նշված բնակավայրերի բնակչության լրիվ կամ մասնակի արտահոսքը, եթե նույնիսկ որոշ դեպքերում այն հետևանք էր արտաքին գործոնի, դժվար է ներկայացնել որպես քաղաքային մի կենտրոնի բնակչության մեխանիկական տեղաշարժ մեկ այլ կենտրոն: Անկասկած, ապաբնակեցման և բնակչության զանգվածային տեղաշարժի մեկ միասնական մեխանիզմ ճգնաժամային բոլոր գոտիների համար նպատակահարմար չէ առաջարկել: Մ.Լիվերանիի կողմից ճգնաժամի ընթացքում Սիրիայում վկայված ժողովրդագրական պրոցեսների ուսումնասիրությունը (տես Գլուխ 2.1) ցույց է տալիս, որ սիրիա-պաղեստինյան ծովափի և խորքային շրջանների բնակավայրերի ապաբնակեցումը ուղեկցվել է քաղաքային բնակչության մի մասի կենսագործունեության եղանակի փոփոխումով: Աճում է շարժունակ անասնապահական տարրի տեսակարար կշիռը:

Հարկ է նշել, որ այս պրոցեսը բավական դժվար է նշմարել հնագիտորեն, քանի որ նման կենցաղավարման դեպքում պրակտիկորեն անհնար է հայտնաբերել քիչ թե շատ կայուն բնակչության հետքեր: Ասվածի լավագույն օրինակը Հյուսիսային Միջագետքում գրավոր աղբյուրներով լավ վկայված արամեացիների նյութական մշակույթի հետքերի բացակայությունն է ճգնաժամային փուլում: Նույնը նաև կենտրոնական Փոքր Ասիայի խնդրում:

Եզրափակելով այս ենթաբաժինը, պիտի նշել, ճգնաժամի ընթացքում վկայված վերոհիշյալ երևույթը իր մեջ պայմանականության տարրեր է պարունակում:

Առաջին, քաղաքային մշակույթի անկումը համատարած չի եղել: Զգալի թվով ուշքրոնզեղարյան քաղաքների կենսագործունեությունը շարունակվել է (օրինակ, Կարգամիսը, Մալդիա-Մելիդը, Կիպրոսի ծովափնյա մի շարք քաղաքներ և այլն):



Երկրորդ, քաղաքային մշակույթի ծանրության կենտրոնը տեղափոխվում է նոր վայրեր. ուշրոնզեղարյան առաջատար քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնների կենսագործունեության մարման հետ միաժամանակ կամ քիչ ավելի ուշ առաջ են գալիս մեծ թվով նոր կենտրոններ: Օրինակ, կենտրոնական Փոքր Ասիայի քաղաքական-մշակութային վայրէջքից քիչ անց սկսվում է հարավային Փոքր Ասիայի վերելքը, պելոպոննեսյան կենտրոնների անկմանը հաջորդում է Էգեյան ծովի կղզիների և Ատտիկայի վերընթաց զարգացումը: Այսինքն, որոշակիորեն կարելի է խոսել մետրոպոլիա-ծայրագավառ հարաբերությունների փոխակերպման մասին: Առաջինների կենսագործունեության մասնակի կամ լրիվ անկումն ուղեկցվել է երկրորդների վերընթաց զարգացումով:

## **ԵԳՆԱԺՄՍԻ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Այսպիսով, ամփոփելով XII դ. մերձավորարևելյան ճգնաժամի ուսումնասիրության արդյունքները, ներկայացնենք դրա ընթացքում տեղի ունեցած քաղաքական, էթնիկական, սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերն ու փոփոխությունները:

### **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՅԵՑԱԿԵՏ**

Ճգնաժամի ընթացքում ուշրոնզեղարյան քաղաքական միավորների մի մասը անկում է ապրում, մյուս մասի քաղաքական ակտիվությունը նկատելիորեն նվազում է: Երկայացնենք այս պրոցեսը ըստ տարածաշրջանների:

Փոքր Ասիայում, XII դ. առաջին տասնամյակների ընթացքում վերանում է Խաթրուսասից կառավարվող Խեթական տերության վարչա-քաղաքական կառույցը: Խեթական պետականության ավանդույթները շարունակվում են Դյուսիսային Սիրիայում, հարավային և արևելյան Փոքր Ասիայում (Կարգամիս, Թարխունտասսա և Մելիդ): Ինչ վերաբերում է թերակղզու մյուս նախկինում Խաթթիից կախյալ կամ հարաբերակաճորեն անկախ քաղաքական միավորներին, ապա այս խնդրում հավանական են հետևյալ ենթադրությունները:

- 1) Տրոադայում դեռ թուրքալիյաս IV-ի շրջանում հիշատակվող Կիլուսան պիտի անկում ապրեր. հիմքը՝ Տրոյա VIIa և VIIb1 շերտերի ավերումներից բխող հետևությունները:
- 2) Սանգարիոսի հովտում գտնվող քաղաքական միավորի (Գորդիոն կենտրոնով) անկում՝ ապարնակեցման և նոր, պարզունակ բնակչության ներհոսքի հետևանքով:
- 3) Դաշտային Կիլիկիայի վարչա-քաղաքական կազմակերպության անկում. հիմքը՝ Տարսուսի և Մերսինի ավերումները և այստեղ մեծ քանակությամբ նոր բնակչության ներհոսքը (ուշիելլադյան III C խցեղենի կրողները):

Ասվածին, թերևս, կարելի է ավելացնել արևմտյան Փոքր Ասիայի այլ, խեթական տեքստերից հայտնի քաղաքական միավորների հնարավոր անկումը այս շրջաններում զրավոր աղբյուրներով և հնագիտորեն վկայված ապաքնակեցման և միզրացիաների հետևանքով:

Միկենյան աշխարհում դեռ XIII դ. երկրորդ կեսից սկսված համընդհանուր ճգնաժամն ավարտվեց Պելոպոննեսի և Միջին Հունաստանի միկենյան կենտրոնների աստիճանական անկումով: Այս պրոցեսի առաջին փուլում պիտի ասպարեզից հեռանային Պիլոսյան թագավորությունը և Լակոնիկայում գտնվող քաղաքական կառույց(ներ)ը: Հաջորդ փուլը Արգոլիդայի և Արգոսի քաղաքական միավորների անկումն էր, արդեն ուշիելադյան III C-ի վերջերին (XII դ. 40-30-ական թվականներ):

Միրիա-պաղեստիկյան տարածաշրջանում վերանում է Ուգարիտի թագավորությունը, հիմքը՝ ավերածությունից (կամ երկրաշարժից) հետո ընթացած ապաքնակեցումը: Նույնը նաև Ամուրրուի հարցում: Ավերածությամբ է ավարտվում խեթերից կախյալ Էմարի կենսագործունեությունը: Պաղեստինում շարունակվում է Եգիպտոսից կախյալ քաղաքների կենսագործունեությունը:

Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և հարավ-արևմուտքում ապաքնակեցման և նոր բնակչության ներհոսքի հետևանքով պիտի անկում ապրեր Իսուվայի թագավորությունը, հարևան Ալզիի և մյուս քաղաքական միավորների տարածքներում եկվոր էքնիկական խմբերի կողմից պիտի ձևավորվեին անկլավային իշխանություններ:

Ամփոփելով ճգնաժամի քաղաքական հայեցակետը, պիտի նշել, որ քաղաքական վայրէջքը Մերձավոր Արևելքում և Էգեիդայում համատարած բնույթ չի կրել: Պարզորոշ նկատվում է քաղաքական շարունակականություն, իհարկե, տարածքային ավելի փոքր ընդգրկմամբ՝ քաղաքական միավորների տրոհման ակնհայտ միտումով: Վերջինս առկա է նաև ավելի ուշ շրջանում, երբ ետխեթական արեալում ձևավորվում են մի քանի տասնյակ համեմատաբար մանր քաղաքական միավորներ:

#### ԷՅՆԻՎԱԿԱՆ ԳԱՅԵԳԱԿԵՏ

Ճգնաժամային փուլում նկատելիորեն փոփոխվում է ուսումնասիրվող տարածաշրջանի էքնիկական քարտեզը, որն արդյունք էր լայն և տեղական բնույթի էքնիկական տեղաշարժերի: Սակայն, ի տարբերություն քաղաքական փոփոխությունների, էքնիկական փոփոխությունները անհամեմատ ավելի դժվար է լուսաբանել այն պատճառով, որ շատ դեպքերում հայտնի չէ ուշերոնգեդարյան փուլի այս կամ այն տարածքում տիրող էքնիկական պատկերը: Ելնելով ասվածից, տեղաշարժերի հետևանքների էքնիկական հայեցակետը կարելի է ներկայացնել երկու ելակետերի միջոցով:

- 1) էքնիկական տեղաշարժեր միևնույն էքնոքաղաքական միավորի ներսում սահմանափակ միզրացիաներ: Այսպիսին էին կենտրոնական Փոքր Ասիայի խեթական բնակչության տեղաշարժը հարավ,

Մեսսենիայի և Լակոնիկայի բնակչության մի մասի հեռացումը Ախայա, Ուգարիտի և հարևան բնակավայրերի բնակչության մասնակի տեղաշարժը Սիրիայի խորքային շրջաններ և այլն:

- ✓ 2) Էթնիկական տեղաշարժեր մի էթնոքաղաքական միավորից մեկ այլ միավոր՝ միջոնգիտնալ միգրացիաներ: Այդպիսին էին մայրցամաքային Յունաստանից Կիլիկիա, Կիպրոս և սիրիա-պաղեստինյան շրջան ընթացած տեղաշարժերը, մուշկեթի, կասկերի և ուրումունեթի շարժումները Իսուվա, Ալզի և Կադմուխի, հյուսիսբալկանյան տարրի ներթափանցումը Տրոաս և արևմտակենտրոնական Փոքր Ասիա: Այս տիպի տեղաշարժերից էին նաև սույն աշխատության մեջ չքննարկված, սակայն անտիկ աղբյուրներով լավ վկայված տիրոնյան-պելասգյան միգրացիաները արևելամիջերկրածովյան ավազանից դեպի արևմուտք (Մաքենիյան թերակղզի, Սիցիլիա, Սարդինիա և այլն)<sup>10</sup>:

Առաջին տիպի տեղաշարժերի մի զգալի մասի աշխարհագրական ընդգրկման շրջանակները սովորաբար դժվար է պարզել, կապված քաղաքային բնակչության կենսագործունեության եղանակի փոփոխման հետ: Դրանք կարող էին ընդգրկել ինչպես զգալի տարածքներ, այնպես էլ՝ սահմանափակվել քաղաքներին անմիջականորեն հարող շրջաններով:

#### ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՄՅԵՑԱԿԵՏ

Մերծավորարևելյան հասարակությունների քաղաքական կառուցվածքի կրած արմատական վերափոխումների հետ միաժամանակ նույնպիսի վերակառուցում ապրեց նաև տարածաշրջանի սոցիալ-տնտեսական համակարգը: Այստեղ փոփոխություններն ակնհայտ են:

- 1) Ներտարածաշրջանային սոցիալ-տնտեսական համակարգի փլուզում, տնտեսավարման մեխանիզմի կենսագործունեության խափանում: Ուշերոնգեղարի վերջին փուլում խոշոր պետությունների գոյությամբ պայմանավորված և կենտրոնական վարչակազմի կողմից ուղղահայաց սկզբունքով գործող տնտեսական և սոցիալական կառույցի տրոհումը պիտի հանգեցներ վերևից կանոնավորող գործոնի վերացմանը, որի անմիջական հետևանքը արտադրություն-սպառում, արտադրող-սպառող կապերի սասանումն էր, իսկ ժամանակի ընթացքում նաև՝ աստիճանական մարումը: Քաղաքական միավորների սոցիալ-տնտեսական հիմքի քայքայման հաջորդ, ոչ պակաս վճռորոշ պատճառը բնակչության շարժունակությունն էր: Նախկինում նորմալ կենսագործունեությամբ աչքի ընկնող խոշոր տարածքների լրիվ կամ մասնակի ապաբնակեցումը չէր կարող բացասաբար չանդրադառնալ այս կամ այն տարածաշրջանի հետագա ճակատագրի վրա:
- 2) Բնակչության լայն զանգվածների տեղաշարժերը և քաղաքական վակուումը պիտի պայմանավորեին ոչ միայն կենսագործունեու-

քյան մասնակի վերափոխումը, այլև, դրա հետ կապված, սոցիալական կազմակերպման բնույթը: Քաղաքային մշակույթի վայրը նաև զարգացման միտումը, որ նկատվում է ճգնաժամի առաջին փուլում, ապացուցում է ասվածը:

- 3) Ուշերոնգեղարի վերջերին գոյություն ունեցող զարգացած միջտարածաշրջանային առևտրի անկում: Փաստորեն, XIII դ. վերջերից սկսած, դադարում են կանոնավոր տնտեսական փոխհարաբերությունները հարևան տարածաշրջանների միջև:

Մերծավորարևելյան ճգնաժամի ընթացքում հասարակությունների սոցիալ-տնտեսական կյանքում ընթացած պրոցեսների հետևանքները, հաշվի առնելով նախորդ գլուխներում քննարկված նյութերը, հատկապես ծանր էին կենտրոնական, հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայում, մայրցամաքային Հունաստանում և Սիրիայի արևմուտքում: Դրանք իրենց զգացնել են տալիս շուրջ երկու-երեք դար, մինչև այն պահը, երբ X-IX դդ. սկսվում է մերծավորարևելյան տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքի նոր փուլը, կապված քաղաքական միավորների կայունացման պրոցեսի հետ:

Ա.ք.ա. XII դ. մերձավորարևելյան ճգնաժամի ուսումնասիրությունը քույլ է տալիս առաջարկելու Մերձավոր Արևելքի և Էգեյան ծովի ավազանի՝ ուշքրոնզեդարից վաղ երկաթեդար անցման փուլում ի հայտ եկող մի շարք համընդհանուր պոդոցեսներ, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն այս դարաշրջանի պատմության օբյեկտիվ գնահատման գործում: Աշխատության աշխարհագրական և ժամանակագրական ընդգրկումը հնարավորություն է ընձեռել պատմական լայն ետնախորքում դիտելու Գայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների համաժամանակյա պատմության խնդիրները: Ուսումնասիրության հիմնական արդյունքները կարելի է ամփոփել ստորև բերվող եզրակացությունների ձևով.

- 1) XIII դ. երկրորդ կեսին Մերձավոր Արևելքի երկրներում և Էգեյան ծովի ավազանում (մայրցամաքային Գունաստան և կղզիներ) սկիզբ է առնում քաղաքական և տնտեսական ճգնաժամ, որը դարավերջին և XII դ. հանգեցրեց արմատական փոփոխությունների գոյություն ունեցող քաղաքակրթությունների կենսագործունեության մեջ:
- ✓ 2) ճգնաժամային հիմնական երևույթներն են՝
  - ա) Բնակչության շարժունակության աճը, որն արտահայտվում էր մի շարք խոշոր և փոքր միգրացիաներով՝ «ծովի ժողովուրդներ» (էգեյան ծովի ավազանի և հարավ-արևմտյան Փոքր Ասիայի բնակչություն), հյուսիսբալկանյան ժողովուրդներ, մուշկեր, կասկեր, ուրումնացիներ, արամեացիներ, խեթա-լուվիական ժողովուրդներ, հրեական ցեղեր և այլն: Շարժունակության հիմնական հետևանքներից էր վարչա-քաղաքական և տնտեսական-մշակութային միավորների կենսագործունեության ծանրության կենտրոնի տեղաշարժը մետրոպոլիսային ծայրագավառ:
  - բ) Մի շարք տարածքների ապսքանկեցում: Դրա պատճառները կարող էին լինել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնները՝ քաղաքական և սոցիալ-տնտեսական մեխանիզմի փլուզումը, երկպառակտչական պատերազմները, բնական աղետները, բնակլիմայական պայմանների փոփոխությունները: Վերջինիս դերը ճգնաժամի խորացման գործում պիտի զգալի լիներ, հատկապես Փոքր Ասիայի և միկենյան աշխարհի պետությունների համար:
  - գ) Քաղաքային մշակույթի անկում, որը կապված էր հասարակությունների քաղաքական մեխանիզմի անկման կամ թուլացման հետ: Փոխվում է նախկինում քաղաքային մշակույթի կրողների մի մասի կենսագործունեության եղանակը:
- 3) ճգնաժամի հետևանքները.
  - ա) խեթական տերության տրոհում, խեթական պետականության ավանդույթների շարունակում հարավային և արևելյան Փոքր Ասիայում (Թարխունասաս և Մելիդ-Մալաթիա), ինչպես նաև Գյուսիսային Սիրիայում (Կարգամիս): Փոքրասիական որոշ քաղաքական

միավորների, (Վիլուսա, Իսուվա, Սանգարիոսի հովտի և Դաշտային Կիլիկիայի քաղաքական կառույցներ) անկում: Միկենյան պետականության և մշակույթի աստիճանական վայրէջք XII դ. առաջին կեսի ընթացքում: Միդիայի ծովափնյա քաղաքական միավորների անկում (Ուզարիտ, Ամուրրու):

- բ) Էթնիկական տեղաշարժերի և տեղական բնույթի ապարնակեցման արդյունքում Մեծավոր Արևելքի էթնիկական քարտեզի արձատական վերածնունդ:
- գ) Մինչճգնաժամային փուլի քաղաքական միավորների սոցիալ-տնտեսական համակարգի անկում, լայն միջտարածաշրջանային առևտրի վերացում:

Լորագույն փաստական նյութերի և հարևան տարածաշրջանների՝ ճգնաժամային փուլի պատմության խնդիրների լույսի տակ վերանայվում են Գայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների վերաբերյալ գոյություն ունեցող նախկին պատկերացումները:

- 1) XIII դ. վերջին տասնամյակների ընթացքում Վերին Եփրատի ավազանի քաղաքական միավորների նկատմամբ խեթական տերության գերիշխանությունը արդեն սասանվել էր: Գայասա-Ազգին դուրս էր եկել խեթերից կախյալ վիճակից. նման միտումներ էր դրսևորում նաև Իսուվան: 1230-ական թվականների խեթա-ասորեստանյան հակամարտության արդյունքում Գայկական լեռնաշխարհի արևմուտքի և հարավ-արևմուտքի երկրները պիտի զգալի ինքնուրույնություն ձեռք բերեին:

- 2) XII-IX դդ. ասորեստանյան աղբյուրներում վկայված մուշկերը ոչ մի առնչություն չունեն Գյուսիսային Բալկաններից Փոքր Ասիա մուտք գործած ժողովուրդների հետ: Մուշկերը Գայկական լեռնաշխարհի ուշքրոնգեղարյան (նաև՝ միջին քրոնգեղարյան) բնակչության մի հատվածն են, որը ճգնաժամի շրջանում մասնակի տեղաշարժ էր կատարել սկզբում դեպի Իսուվա, Ալզի, այնուհետև հարավ Կադմուխի: Մուշկերի ելակետը պիտի գտնվեր Եփրատի ակունքների շրջանում՝ խեթական աղբյուրների Գայասայի տարածքում կամ հարևանությամբ:

- 3) Մուշկերի, ուրումեացիների և կասկերի տեղաշարժերը գերադասելի է դիտել ոչ որպես ռազմական արշավանքներ, այլ աստիճանական ինֆիլտրացիա տեղական բնակչության զանգվածի մեջ:

- 4) Մուշկերի և մյուս ժողովուրդների տեղաշարժերին նախորդել են ճգնաժամի շրջանում անձնուր վկայված մի շարք երևույթներ՝ ապարնակեցում և քաղաքային մշակույթի անկում Իսուվայում:

Աշխատության մեջ քննարկվել և համապատասխան մեկնաբանություններ են ստացել XIII-XII դդ. Մեծավոր Արևելքի և միկենյան քաղաքակրթության պատմության բազմաթիվ մասնավոր հարցեր:

1. Barnett, 1967: 3.
2. Snodgrass, 1971: 2; Desborough, 1972: 11.
3. Bittel, 1950: 73f.; von Schuler, 1965: 65; Desborough, 1964: 222ff.; Barnett, 1967: 3ff.; Lehmann, 1970: 39ff.; Cornelius, 1973: 277ff.; Bouzek, 1973: 169ff.; Blegen, 1975: 161ff.; Sandars, 1978: 61ff., և այլն:
4. Crossland, 1964: 824ff.; Дьяконов, 1968: 102 сн.; Lehmann, 1970; Bronze Age Migrations, 1973; Albright, 1975: 507ff.; Sandars, 1978: 83ff., և այլն:
5. Տես ծանոթ. 1 և 2.
6. Singer, 1987: 413ff.; Քոսյան, 1994: 247-248, և այլն:
7. Տես Գլուխ 2.2.
8. Boese und Wilhelm, 1979: 19ff.; Wilhelm und Boese, 1987: 74ff.; Helck, 1987: 18ff.; Kitchen, 1987: 37ff.

**ԳԼՈՒԽ 1**

1. Götze, 1965a: 18ff.
2. Խեթական տեղության և Եգիպտոսի միջև կնքված «Չավերժական դաշնագրի» կենսական անհրաժեշտության մասին կարելի է դատել Եգիպտոսի թագուհի Նոֆրետարիի՝ խեթական թագուհի Պուդոլխեպային (Խաթթուսիլիս III-ի կինը) հղված նամակի հետևյալ տողերից. «Եգիպտոսը և Խաթթին կդառնան մեկ երկիր» (KUB XXI 38 V 13 f.): Նույն գաղափարը մեկ այլ նամակից. «(Արևի աստվածը) կհավերժացնի Մեծ արքա՝ Եգիպտոսի արքայի և նրա եղբոր՝ Խաթթիի արքայի զեղեցիկ եղբայրությունը» (KBo I 29, 8-11):
3. Խաթթուսիլիսի և Ուրխի-Թեշուբի փոխհարաբերությունների շուրջ տես Houwink ten Cate, 1974: 123ff.; idem, 1993: 234ff.
4. Otten, 1988: Kol.I 6ff.
5. Պրանք էին, արևմուտքում՝ Միտաննին, հյուսիսում՝ Ալզին, Իսուվան և մի շարք ավելի մանր քաղաքական միավորներ:
6. Չայտնի է Խաթթուսիլիս III-ի և Բաբելոնիայի կասսիտական արքա Կադաշման-Տուրգուի միջև կնքված պայմանագիրը (KUB XXIII 102), որը, սակայն, որևէ արդյունք չտվեց նախ Բաբելոնիայի թուլության, այնուհետև՝ Կադաշման-Տուրգուին հաջորդած նրա փոքրահասակ որդու՝ Կադաշման-Էնլիլ II-ի օրոք այդ դաշինքից փաստական հրաժարման պատճառով (Götze, 1965b: 4):
7. Grayson, 1972: 773; Munn-Rankin, 1967: 13ff.; Lackenbacher, 1982: 141ff.; Singer, 1985: 100ff.
8. Տես Գլուխ 3.2.

9. Grayson, 1972: 530ff.
10. ՎՃԹ II, 1988: 151.
11. Munn-Rankin, 1967: 15ff.
12. Տես Գլուխ 1.3.
13. Տես Գլուխ 1.3 և 2.4.
14. Տես Գլուխ 1.3.
15. Արտաքին քաղաքական ասպարեզում այս գործնակաները վկայված է նաև Ասորեստանի հետ փոխհարաբերություններում:
16. Տես Գլուխ 2.2.
17. ՎՃԹ II, 1988: 102տ.
18. Թուղխալիյաս IV-ի ավագ որդու՝ Առնուվանդաս III-ի կարճատև կառավարման մասին տեղեկությունները խիստ սահմանափակ են (տես Götze, 1965: 52f.):
19. Տես Գլուխ 2.3.
20. Այստեղ չի քննարկվի Թուղխալիյասի շինարարական գործունեությունը, քանի որ այն կարող էր ընթանալ նրա ողջ կառավարման ընթացքում և ուղղակի առնչություն չունի ներկա ուսումնասիրության հետ:
21. Այս մասին ավելի հանգամանորեն տես Գլուխ 1.5.
22. Նիխրիյան նույնն է, ինչ հին ասորեստանյան Nihria, Nahria, Niharia-ն, ավելի ուշ շրջանի Ni'ri և Na'iri և ուրարտական Nihiriani-ն: Այս կարևոր քաղաքի համար առաջարկվել է երկու տեղադրություն. 1) Խարուրի կամ Բալիխի վերին հոսանքների շրջանում (Götze, 1953: 61f.; Faulkner, 1957/58: 20ff.) կամ Վերին Տիգրիսի հովտում (Astour, 1979: 5; Diakonoff and Kashkai, 1981: 60f.; Singer, 1985: 106):
23. Grayson, 1972: 688ff.
24. Lackenbacher, 1976: 141ff. (= RŠ 34: 165).
25. KBo IV 14 (= CTH 123, տեքստի հրատարակությունը՝ Stefanini, 1965: 39ff.).
26. Grayson, 1972: 773, 783.
27. Singer, 1985: 100ff.
28. KBo IV 14. Այս տեքստը սովորաբար վերագրվել է Մուսայիլուլիումաս II-ին (Laroche, 1953: 76; Götze, 1965: 53f.; Otten, 1963: 5):
29. Singer, 1985: 101f.
30. Նիխրիյայի ճակատամարտի հնարավոր հետևանքների մասին վերիննախնդրության երկրների վրա տես Գլուխ 1.5:
31. KUB XIX 23 (հրատարակությունը՝ Hagenbuchner, 1989: 18):
32. Այս երկրանունը նույնացվում է անտիկ աղբյուրների Larand/ta-ի հետ՝ Գյոկսունից դեպի Ջեյհանի հոսանքն ընկած հատվածում (Forrer, 1926: 71f.) կամ Lalandos-ի հետ՝ Աֆյունից հյուսիս-արևմուտք (Garstang and Gurney, 1959: 99):
33. KBo XIX 55 + KUB XLVIII 90 (հրատարակությունը՝ Hoffner, 1982: 130ff.)
34. KBo XVIII 18. Güterbock, 1992 b: 242. Hawkins, 1995: 68 ff.
35. Poetto, 1993: 14; Hawkins, 1995: 80 f.



36. Singer, 1983: 216; Güterbock, 1986: 38.
37. Թարգմանությունը տրվում է ըստ Hoffner, 1982.
38. Bryce, 1985: 15 ff.
39. Bryce, 1985: 22; idem, 1989: 304.
40. Bryce, 1985: 23.
41. Singer, 1983: 215; Güterbock, 1984: 120.
42. Singer, 1983: 215f.
43. «Քո հայրը, ով շարունակաբար կամենում էր իմ դժբախտությունը, և ով [Արևիս] համար գլխավոր գործոնն էր չար գործոնների շարքում» (Hoffner, 1982): Այստեղ ilališ- «ցանկանալ» բայը օգտագործված է ներկա ժամանակով, սակայն Չ.Չոֆները ենթադրում է, որ հնարավոր է այն բարզմանել պատմական անցյալով: Թ.Բրայսի կարծիքով, եթե այս բայը բարզմանվի ինչպես որ կա (ներկա ժամանակով), ապա կստացվի, որ հասցեատիրոջ հայրը կենդանի է, բայց գտնվում է խեթական արքայի հասանելիությունից դուրս (Bryce, 1985: 22 n.32):
44. Այդ տեղի էր ունեցել Մուվատալլիս II-ի օրոք Պիյամարադուսի ծավալած հակախեթական գործունեության ժամանակաշրջանում (Գլուխ 1.3):
45. Otten, 1988: IV 32.
46. KUB XXIII 13.
47. Կարելի է, իհարկե, զուտ տեսականորեն ենթադրել նման հնարավորություն: Օրինակ, «Մուվավալվիի որդու» կառավարումից հետո տեղադրել Թարխունարադուսի որդուն, սակայն, քվում է, այս տարբերակը այնքան էլ հավանական չէ:
48. Singer, 1983: 216.
49. Այս պատերազմի հավաստիությունը կասկածից վեր է, քանի որ այն վկայված է նաև արևմտյան Փոքր Ասիայից հայտնի Թուդիալիյաս IV-ի հիեռոգլիֆային արձանագրությունից (Emirgazi V, A 3. Հրատարակությունը Meriggi, 1975: 22): Արձանագրության հատվածներից մեկի ճշգրտված ընթերցումը թույլ է տալիս վերականգնելու մեզ հետաքրքրող քաղաքների անվանումները. Pi-na-s[a(“)] (REGIO) DOMUS+RA/i-nu-wa/i-ha à-pa-wa/i Wa/i+ra/i-na (REGIO) 93 «Ես ոչնչացրի Պինա երկիրը և գնացի(“) Վարնա երկիրը» (Masson, 1979b: 539): Ներկայացված գրադարձումը ըստ Դ.Ֆոլկինսի և այլոց համակարգի (Hawkins, Morpurgo-Davies and Neumann, 1973): Փոքրասիական հիեռոգլիֆիկայում հաճախակի են գրության մեջ բառասկզբի ծայնավորի անկման դեպքերը. այդ է պատճառը, որ սեպագիր Ավարնան տրված է Վարնա ձևով: Թուդիալիյասի մեկ այլ հիեռոգլիֆային արձանագրության մեջ (Yalbur) այս երկու քաղաքները նույնպես հիշատակվում են որպես ռազմական արշավանքի օբյեկտներ (Hawkins, 1990: 313, n.60), նաև «Լուկկա երկրները և Վիյանավանդան» (տեղադրման մասին del Monte und Tischler, 1978: 249 f., 482f.):
50. Տես Գլուխ 1.3.
51. Այնուամենայնիվ, «Նամակի» հասցեատիրոջ և KBo XVIII 18-ում հիշա-

տալվոլդ Մասխուխտայի նույնության մասին ենթադրությունը դեռևս չի կարելի անվերապահորեն ընդունել:

52. Bryce, 1985: 15ff.

53. Kühne und Otten, 1971: Rs.IV 3,23. Թուղխալիյասի օրոք արևմուտքում խեթերի գերիշխանության կորստյան մասին տեսակետը (Singer, 1983: 216) հենվում է միայն «Նամակի» հասցեատիրոջը Սեխայի արքայի հետ նույնացնելու վրա և որևէ իրական հիմք չունի:

54. KUB XXIII 13, 5: «[Մյուռեխտև Թարխունաբադուն] պատերազմ սկսեց և հույսը դրեց Ախխիյավայի արքայի վրա»:

55. Bryce, 1985: 23.

56. Kühne und Otten, 1971.

57. Սա լուրջ փաստարկ է հօգուտ «Պայմանագրի» թվագրման Նիխրիյայի ճակատամարտից հետո ընկած ժամանակաշրջանով (տես ստորև):

58. Ի.Ջինգերի կարծիքով, «Պայմանագիրը» պիտի նախորդեր Նիխրիյայի ճակատամարտին (1985: 108 f.): Այսպիսի ենթադրությունը, ըստ նրա, հենվում է տեքստի այն հատվածի վրա, որտեղ Թուղխալիյասը պարտավորեցնում է Սաուսգամուվային Ստրեստանի հետ ոչ մի հարաբերություն չունենալ ապագայում: Սակայն այս ենթադրությունը դժվար է ապացուցել: Ավելի նպատակահարմար է Սմուրրուի և Ստրեստանի միջև հարաբերությունների վրա դրված արգելքը թվագրել ճակատամարտից հետո ընկած շրջանով, երբ իսկապես Խաթթիի և Ստրեստանի հարաբերությունները պիտի վերջնականապես խզվեին, քան ճակատամարտի նախօրյակով:

59. KUB XXIII 1, Rs.IV 1-3. «Եվ արքաները, որոնք ինձ հավասար են Եզիպտոսի արքան, Բաբելոնի արքան, Ստրեստանի արքան և Ախխիյավայի արքան»:

60. Güterbock, 1983: 136. Պիտի բացառել նաև Ախխիյավայի հանդեպ Թուղխալիյաս IV-ի ունեցած քչնամական վերաբերմունքը. այդ դեպքում ցուցակից կհանվեր նաև Ստրեստանի արքան:

61. Թ.Բրայսի կարծիքով, այդպիսի իրադարձություն կարելի է համարել Թուղխալիյասի ակտիվ գործողությունները արևմտյան Փոքր Ասիայում, օրինակ, Միլլավանդայի գրավումը, որով Ախխիյավան պիտի զրկվեր այստեղ ունեցած իր ավանդական հենակետերից (1985: 16f.):

62. KBo XII 38 (հրատարակությունը և մեկնաբանությունը՝ Otten, 1963: 13ff.; Güterbock, 1967: 73ff.):

63. Güterbock, 1967: 75. ըստ տեքստի, Թուղխալիյասի արծանը պատրաստվել է Սուպալիլուլիումասի հրամանով (II 4-21):

64. Տեքստի բարձրագույնությունը ըստ Lehmann, 1970: 54.

65. Կարգամիսի հատուկ կարգավիճակի մասին տես Hawkins, 1980: 429ff.

66. Otten, 1988.

67. Otten, 1988: 4 f., Abb.1.

68. KBo IV 10. Տեքստի կրկնօրինակի մի քնկորի հրատարակությունը Hoffner, 1989: 199ff.

69. Պայմանագիրը կնքող խեթական արքայի ինքնության հարցի շուրջ (Խաթթուսիլիս III թե Թուղխալիյաս IV) տես van den Hout, 1984: 89.
70. Կուրունտան հիշատակվում է նաև Խաթթուսիլիս III-ի «Տավազալավասի նամակում» (տես Գլուխ 1.3):
71. Neve, 1989/90: 8; Hoffner, 1992: 48; Hawkins, 1994: 91.
72. Neve, 1989/90: 9.
73. Hoffner, 1992: 48; Hawkins, 1994: 91.
74. van den Hout, 1989: 114.
75. Hoffner, 1992: 48.
76. Ասվածը չի բացառում մյուս կախյալ երկրների լոյալությունը: Անկասկած, զոնե Ուզարիտը պիտի դասել այդպիսիների շարքում: Հավանաբար, Խաթթուսաս են հրավիրվել առավել կարևոր երկրների արքաները: Սակայն այդ դեպքում բավական զարմանալի է Իսուվայի արքայի բացակայությունը: Վերը բնութագրված չորս երկրներից երեքի արքաները կամ Խաթթուսասի արքայատոհմի ներկայացուցիչներն էին (Կարգամիս), կամ կապված էին նրա հետ ազգակցական կապերով (Սեխա և Ամուրու): Սա զոնե բույլ է տալիս ենթադրելու, որ Խաթթուսաս են հրավիրվել այն երկրների արքաները, ովքեր կապված էին Խաթթուսասի դինաստիայի հետ ազգակցական կապերով: Իսկ այդ դեպքում Իսուվայի արքայի բացակայությունը տարօրինակ է, քանի որ նրա դինաստիան Խաթթուսասի դինաստիայի մի ճյուղավորումն էր (տես Գլուխ 1.5):
77. Գ.Ռոնների կարծիքով, «Բրոնզե տախտակի» և «Ուլմի-Թեշուրի» ոճը և լեզուն բացարձակապես նույնն են (1989: 199): Ուլմի-Թեշուրի հետ պայմանագիրը Խաթթուսիլիսին էին վերագրում Forrer, 1926: 32; Cavaignac, 1933: 72f.
78. Այս կարծիքը (Güterbock, 1961: 86 n.3) հենվում է այն մտայնության վրա, թե Ուլմի-Թեշուրը կարող էր Կուրունտայի իսկական անունը լինել, և միայն Թարխունտասայում գահ բարձրանալուց հետո այդ անունը պիտի ստանար Կուրունտա գահակալական անունը: Այդպիսի նախադեպեր վկայված են նաև ավելի վաղ՝ Ուրիտի-Թեշուր-Մուրսիլիս III, Խիսմի-Հարրումա -Թուղխալիյաս IV, Շարրե-կուշուխ -Պիլասսիլի: Այն կարծիքը, թե Կուրունտան կարող էր լինել հիերոգլիֆային արձանագրությունների հեղինակ Խարտապուսը (Hawkins, 1992: 270), ղոժվար է ապացուցել (տես Գլուխ 3.1): Վերջերս Կուրունտային Ուլմի-Թեշուրի հետ նույնացնելու օգտին բերվել են որոշ փաստարկներ (Gurney, 1993: 13f.), որոնք ընդունվում են նաև Գ.Ռոննիսի կողմից (Hawkins, 1995: 62):
79. Hoffner, 1992: 48.
80. Այս իրադարձության բնագրունը Նիխրիյային նախորդող շրջանով հենվում է հետևյալի վրա: Նիխրիյայի ճակատամարտի շրջանում Իսուվայի արքան արդեն էլի-Հարրուման էր (տես Singer, 1985: 114 ff.), այնինչ «Ուլմի-Թեշուրի պայմանագրում» դրա կնքմանը վկա բարձրաստիճան անձանց թվում որպես Իսուվայի արքա է հիշատակվում նրա հայրը՝ Արի-Հարրուման (KBo IV 10 Rs.29): Սա նշանակում է, որ Նիխրիյայի ճակա-

- տամարտը տեղի է ունեցել Ուրխի-Թեշուբի գահակալումից հետո:
81. KBo IV 14.
  82. Հակառակ կարծիքի էին KBo IV 14 տեքստը Սուպպիլուլիումաս II-ին վերագրողները (Götze, 1965: 53f.; Munn-Rankin, 1967: 21): Թուլուբի-Լինուրտայի քաղաքական ակտիվությունը հյուսիսում երկար չի տևել: Երա կառավարման հետագա շրջանը ամբողջապես նվիրված էր Բաբելոնիայի գրավմանը և ներքաղաքական խնդիրներին (Munn-Rankin, 1967: 15ff.): Այն կարծիքը, թե Խեթական տերության անկման շրջանում, Սուպպիլուլիումաս II-ի օրոք, խեթերն իրենց անվտանգության սպառնալիք էին դիտում Ասորեստանը (Astour, 1965a: 253ff.), ոչնչով հնարավոր չէ հիմնավորել: Վերջինս ինքը տարեցտարի խորացող ճգնաժամ էր ապրում, որպեսզի կարողանար սպառնալ խեթերին:
  83. Տես Գլուխ 1.3.
  84. Տես Գլուխ 2.4.
  85. KUB XXI 11; KUB V 1. Տեքստերի հրատարակությունը՝ Uenal, 1974: I, Bd.2: 14ff.
  86. Götze, 1965: 52f.
  87. Laroche, 1953: 70ff.; Steiner, 1962: 130ff.; Güterbock, 1967: 73ff.; Barnett, 1975: 265f., և այլն:
  88. Տեքստի առաջին հրատարակությունը՝ Otten, 1989: 333ff.; ընթերցման հատվածների հրատարակությունը՝ Hawkins, 1990: 305ff.: Այս արձանագրության վերագրումը Սուպպիլուլիումաս II-ին՝ Otten, 1989: 336; Hawkins, 1990: 310ff.
  89. Hawkins, 1990: 308ff.: Արձանագրության վերջին, ճշգրտված հրատարակության մեջ Դ.Հոլինսը ընթերցել է մի քանի տեղանուններ ևս, որոնք, սակայն, չեն առնչվում նրա նվաճումներին: Այսպես, հիշատակվում է բվով վեց քաղաքների և մեկ երկրի վերադառուցման մասին, որոնցից առայժմ մեկնաբանելի են միայն երկուսի անունները (Tihhasa և Tarahna):
  90. Mellaart, 1984: 79.
  91. Դ.Հոլինսը առաջարկում է համարել Tumana-ի կամ Tim(m)ana-ի հետ. առաջինը Պալայի հարևան երկիր է (del Monte und Tischler, 1978: 437f.), երկրորդը հիշատակվում է Իսուվայի հետ միասին (idem: 423):
  92. Forrer, 1926: 68.
  93. Kinal, 1953: 21.
  94. Garstang and Gurney, 1959: 92.
  95. Cornelius, 1958a: 9f.; 1958b: 395.
  96. Cornelius, 1967: 71.
  97. Վերին Կայունադնուսի շրջանում (ժամանակակից Գյոկսու)(Forrer, 1926: 80), Ըսպարտայի մոտ (Ranoszek, 1933: 107; Garstang and Gurney, 1959: 108f.), Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում (Otten, 1961: 112f. von Schuler, 1965: 8, Anm.80), դասական Իսալոթիայում (Laroche, 1966: 270), Ադապազարի մոտ (Macquoen, 1968: 169ff.), Սեանդրոս և

- Չերմոս գետերի միջև ընկած շրջանում (Houwink ten Cate, 1970: 73; Bryce, 1974: 402f., n.79):
98. Իսավրիայում (Ranoszek, 1933: 76f. ), Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում (Gurney, 1940: 102; Houwink ten Cate, 1970: 72f., n.104-106), Լիկիայում և Կարիայում (Garstang and Gurney, 1959: 75ff.), Լիկատնիայում և Քարոտ Կիլիկիայում (Cornelius, 1958b: 382; 1963: 243), Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում, Մարմարա ծովից հարավ Բուրսայի, Կարաջաբենջի և Գյոնենի շրջանում (Otten, 1961: 112f.; Macqueen, 1968: 169ff.):
99. Cornelius, 1958b: 388; 1963: 244; 1973: 123.
100. Օրինակ, ABoT 56-ում խոսվում է այն մասին, որ Խաթրիի ժողովուրդը այլևս հաշվի չի նստում մահացած արքաների հոգիներին նվիրված կավածքների անձեռնմխելիության սովորույթի հետ: Մեկ այլ տեքստում (KUB XXVI 32) փայտի վրա գրիչների գլխավորը երդվում է արքային իր հավատարմության մեջ, ինչ էլ որ լինի: Յ.Օտտենը KUB XXVI 32-ի հաղորդումը մեկնաբանում է որպես Սուլայիլուլիումասի և գահի մյուս հավակնորդների միջև ընթացած պայքարի վկայություն:
101. Hoffner, 1992: 49.
102. RS 20.238 (իրատարակությունը՝ Lehmann, 1970: 54).
103. Ամնուրապին հայտնում է, որ իր երկիրը մնացել է անպաշտպան և հակառակորդի 7 նավեր ավերածություններ են գործել:
104. RS 20.18. Նամակի հեղինակը էշուվարան է՝ «Ալասիա երկրների LÜ.MAŠGIM.GAL-ը, ռազմա-վարչական բարձր տիտղոս կողմի անձնավորություն, որը առաջարկվել է բարձրմանել որպես «գեներալ-կվարտիրմայստեր» (Lehmann, 1970: 59):
105. RS L 1 (= Lehmann, 1970: 54) . Այս նամակը պիտի գրված լիներ Նախորդ երկուսից (RS 20.238 և 20.18) ավելի վաղ:
106. Lehmann, 1970: 63f.
107. Արձանագրության եզրափակիչ մասում հայտնվում է, որ տեքստը գրված է «այդ նույն տարում»: Սա կարող է վկայել հոգուտ այն ենթադրության, որ տեքստում հիշատակված Սուլայիլուլիումասի նվաճումները պիտի տեղի ունենային մեկ տարվա ընթացքում (այս կարծիքին է Գ.Դոկինսը՝ 1990: 310 ff.): Նման տարբերակ, իհարկե, չի բացառվում, սակայն դժվար է ասել, թե որքանով կարելի է վերոհիշյալ արտահայտությունը մեկնաբանել բառացիորեն:
108. Այս տարբերակը հավանական է համարում Յ.Դոֆենը (1992: 48f.):
109. Թարգմանությունը ըստ Յ.Գ.Գյուտեբրոկի (1967: 78):
110. Lehmann, 1970: 63f.
111. Առաջինը Ամնուրապիի և Ալասիայի արքայի նամակագրությունն է, երկրորդը արդեն նշված երեք ծովային ճակատամարտերի հիշատակությունը, երրորդը նույն ժամանակաշրջանում Կիպրոսի տարբեր բնակավայրերի ուժեղ ավերածություններն են, որոնք դրանից քիչ անց վերակառուցվել են, բայց արդեն LH III C խեցեղենի կրողների կողմից, որը ակնհայտ էզբյան ծագում ունի, չորրորդը Արևելյան Միջերկրականում

- «ծովի ժողովուրդների» լայն տեղաշարժերի մասին եղած գրավոր և հնագիտական այլ տեղեկություններն են (վերջին երկուսի մասին տես Գլուխ 2.2):
112. Չուտ ժամանակագրական տեսանկյունից այս իրադարձությունը հնարավոր է կապել Մերենալտաիի հինգերորդ տարում (1208 թ.) հիշատակվող «ծովի ժողովուրդների» հետ (տես Գլուխ 2.2): Լեմանը ենթադրում է, որ կղզու կամ գոնե դրա մի մասի գրավումը «ծովի ժողովուրդների» կողմից պիտի տեղի ունենար Ուգարիտ-Ալասիա մամակագրական կապի (RS 20.238 և RS 20.18) և Սուպալիլուլիումասի արևմտական արշավանքի միջև ընկած ժամանակահատվածում (Lehmann, 1970: 63):
113. ABoT 56. Այստեղ իսկապես խոսքը սոցիալական անհնազանդության, այլ ոչ կախյալ երկրի ասպտամբության մասին է (տես ժանոթ. 100):
114. Klengel, 1974: 167ff.
115. Այս մասին տես Գլուխ 2.3.
116. Բալկանյան միգրացիայի աշխարհագրական ընդգրկման մասին տես Գլուխ 2.2:
117. Garstang and Gurney, 1959: 101f.
118. KUB XXIII 11 և 12 (հրատարակությունը՝ Garstang and Gurney, 1959: 120ff.; Carruba, 1977: 158f.).
119. KBo VI 28 Obv.8-9.
120. Gurney, 1966: 24f.
121. KUB XIV 15 I 23-26; KBo III 4 II 28-32.
122. Տեղադրվում է Կայստրոսի (ժամանակակից Ալարչայ) և Սինդրոսի (ժամանակակից Բանազայ) միջև (Garstang and Gurney, 1959: 90ff.), Կարիայի մի մասում՝ Մեանդրոսի (ժամանակակից Բյույուք Սեդեքես) և Ինդոսի (ժամանակակից Էմիր) միջև (Cornelius, 1958b: 394f.; 1973: 38):
123. Տեղադրվում է Մեանդրոսի (Götze, 1957: 228) կամ Կաիլոսի (ժամանակակից Բաքրչայ) հովտում, այսինքն, Սիսիայում (Garstang and Gurney, 1959: 96; Гиндин и Цымбурский, 1986: 85сл.):
124. Կոնյայից հարավ-արևմուտք (Ranoszek, 1933: 74f.; Götze, 1940: 22f.; Garstang, 1944: 19), Սանգարիոսի ստորին հոսանքի շրջանում (Garstang and Gurney, 1959: 97ff.), անտիկ Կարալիայի շրջանում՝ Ըսպարտայից արևմուտք (Cornelius, 1958b: 396; 1973: 147), Դերմոսի (ժամանակակից Գեդիզ) շրջանում (Houwink ten Cate, 1970: 64 n.45):
125. Ժամանակակից Սիվրիհիսարի շրջանում (Kinal, 1953: 31ff.) կամ ժամանակակից Ալշեհիբից հյուսիս (Otten, 1973: 121):
126. Վիլուսայի տեղադրման մասին հանգամանորեն ստորև:
127. Ենթադրվում է, որ Արցալան ուղղակի դադարում է գոյություն ունենալ և նրա տարածքը բաժանվում է հարևան Սեխայի և Միրայի միջև (Singer, 1983: 206): Մուրսիլիսից հետո Արցալա անունը այլևս որևէ կոնկրետ քաղաքական իմաստ չունի, այլ ընդամենը նախկին Արցալա միության տարածքի ընդհանուր անվանումն է (Heinhold-Krahmer, 1977: 136ff.):
128. The Trojan War, 1984; Troy and the Trojan War, 1986.

129. ՏՊ ժամանակագրությանն առնչվող տեսակետների տեսությունը տես Hiller, 1991: 145ff.; Bryce, 1991: 1ff.
130. Mellink, 1986: 93 (հնագիտական զրականության մեջ կիրառվող LH հապավումը նշանակում է ուշիելլադյան):
131. Mee, 1984: 4ff.
132. Հմմտ. Podzuweit, 1982 (Տրոյա VII = LH III C, այսինքն, XII դ.):
133. Blegen, 1958: 5, 11; 1963: 153. Կ.Բլեյզենը այս շերտի համար առաջարկում էր խիստ բարձր ժամանակագրություն՝ 1300-1260 թթ., որն այսօր չի ընդունվում:
134. Blegen, 1975: 164.
135. Blegen, 1975: 162 f. Տրոյա VIIa-ի անկման պահին լայնորեն կիրառվել է LH IIIB տիպի խեցեղեն, իսկ LH III C-ն դեռ հայտնի չի եղել: Սակայն տես Mee, 1984: 45f. (Տրոյա VIIa-ում LH III C խեցեղենի 8 քեկորների առկայության մասին):
136. Blegen, 1975: 163.
137. Blegen, 1975: 163.
138. Hiller, 1991: 146.
139. Կարելի է քարզմաննել որպես «ելունդավոր»:
140. Blegen, 1975: 164.
141. Հոմերոսի կողմից Տրոյային տրվող մակդիրների մասին տես Клейн, 1986: 89сл.
142. Meyer, 1975: 163.
143. «Իլիականի» տեքստում տեղ չգտած՝ ՏՊ պատմության տարբերակներում խոսվում է ոչ թե տասնամյա, այլ քսանամյա պատերազմի մասին (տես Гиндин, 1991: 32сл. и 51):
144. Nylander, 1963: 9f.; Finley, 1964: 5ff. և այլն: Այս փաստարկը միայն արտաքննապես է ամուր թվում: «Ողիսականում» և Nostoi-ում նկարագրվող հույն հերոսների տանջալի վերադարձի պատկերները, նրանց զգալի մասին զոհվելը Տրոյայի պարիսպների տակ, Մոսսի, Տեկրոսի և այլոց առաջին հայացքից անբացատրելի ընթացքը դեպի հեռավոր Կիլիկիա, Կիպրոս ու Պաղեստին կարող են վկայել ոչ թե հզոր միկենյան աշխարհի, այլ ավելի շուտ անկում ապրող հասարակության օգտին (տես ստորև):
145. Фукидид, I, 12.
146. Mee, 1984: 58.
147. Vermeule, 1964: 276f.; Mylonas, 1964: 363; Desborough, 1964: 164 և այլն:
148. Stu Hammond, 1975: 686ff.
149. Blegen, 1958: 13; Andrews, 1955: 34; Page, 1959: 27. Այս առումով բավական կարևոր զուգահեռներ կարելի է անցկացնել խեքերի մայրաքաղաք Խաթրուսասի և Պելոպոննեսի միկենյան քաղաքների միջև, որտեղ այս նույն երևույթը պարզորոշ նշմարվում է նույն ժամանակներում (տես Գլուխ 2):

150. Blegen, 1963: 143f. Երկրաշարժից Տրոյա VIII-ի կործանումը ընդունվում է ոճանց կողմից (Rapp, 1982: 58; Akurgal, 1983: 68) և վիճարկվում մյուսներից (Easton, 1985: 195; Mellink, 1986: 100; Bryce, 1989c: 18; 1991: 9):
151. Blegen, 1975: 164.
152. Hiller, 1991: 145ff.
153. Որպես պատմական զուգահեռ է բերվում Ալկիվիադեսի գլխավորած սիցիլիական արշավանքը մ.թ.ա. 415 թ., Պելոպոննեսյան պատերազմում Աթենքի կրած ծանր պարտությունից 11 տարի առաջ (Hiller, 1991: 147): Պետության քաղաքական և մշակութային անկմանը անմիջականորեն նախորդող մեծ պատերազմների (այդ թվում հաղթական) օրինակները շատ են Չին Արևելքի պատմության ողջ ընթացքում: Օրինակ, Ուրի III դինաստիայի վերջին արքա Իբբի-Մուենի հաղթական արշավանքը էլամ պետության անկման նախօրեին, Մերեմպտահի հաջող պատերազմները Լիբիայում և Պաղեստինում, որին հետևեց շուրջ տասնհինգամյա համընդհանուր քաղաքական և տնտեսական անկման շրջանը, և, վերջապես, Սուլպիլուլիումաս II-ի հաջող արշավանքները Ալասիա և արևմտյան Փոքր Ասիա՝ խաթրի անկումից քիչ ավելի վաղ:
154. Արան պիտի ավելացնել նաև որոշ հերոսների սպանությունը վերադարձից հետո (Ազամեմնոն) և հայրենիքում կրած դժվարությունները ու նույնքան տանջալի վերադարձը (Ռդիսես, Մենելայոս):
155. Նկատվել է նաև, որ, ըստ ավանդության, *կերոսը* սնամեջ էակ է եղել, ինչպիսին էր Տրոյական ծին (Schachermeyr, 1950: 202):
156. Sommer, 1932.
157. Macqueen, 1968: 182ff.; Muhly, 1974: 134; Mellaart, 1978: 58; Easton, 1984: 34f.
158. Դեռ է.Ֆորերի կողմից առաջարկված այս համադրման (Forrer, 1924a: 1ff.; 1924b: 113ff.) վերաբերյալ կարծիքների մասին տես Houwink ten Cate, 1973: 153.
159. Muhly, 1974: 129ff.; (Սնալ, 1989: 285f.
160. Easton, 1984: 34.
161. Podzuweit, 1982: 80; Bloedow, 1988: 30ff.; Muhly, 1992: 17.
162. Այս անվան Ախիսիյա տարբերակը վկայված է միայն մեկ անգամ «Մադդուվատտասի» տեքստում (Götze, 1928), որը բլագրվում է XV դ. երկրորդ կեսով (Առնուվանդաս I), և մյուս բոլոր վկայություններից շատ ավելի վաղ է:
163. Ախիսիյավա և Achai(w)oi տերմինների լեզվաբանական համադրման մասին տես Houwink ten Cate, 1973: 143ff.; Finkelberg, 1988: 127ff.
164. Տես ծանոթ. 158.
165. Friedrich, 1927: 87ff.
166. Götze, 1930: 285ff.
167. Schachermeyr, 1935; 1982.
168. Völkl, 1952: 329ff.; Dussaud, 1953: 75ff.; Heubeck, 1955: 131ff.;



- Aitchison, 1964: 28; Bryce, 1989c: 3ff. և այլն:
169. Sommer, 1932.
170. Sommer, 1937: 169ff. Լիակատար ժխտողական մոտեցումը առկա է նաև Գ.Շտայների մոտ (Steiner, 1964: 365ff.):
